

ՌՌԻԲԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ
ՄԻՋՑԱՄԱՔԱՅԻՆ
ՈՒՂԻՆԵՐԻ ՎՐԱ

ԵՐԵՎԱՆ 2021

ՀՏԴ 93/94:32
ԳՄԴ 63.3+66.0
S 465

Արևմտահայերենից արևելահայերեն դարձրեցին
Աննա Գաբրիելյանը
Գազիկ Սարգսյանը

S 465 Տեր-Մինասյան Ռուբեն

«Հայաստանը միջցամաքային ուղիների վրա»/Ռ. Տեր-Մինասյան.-
Եր.: Իրանագիտական Կովկասյան կենտրոն, 2021.-184 էջ, A5 ֆորմատ:

Ռուբեն Տեր-Մինասյանի սույն աշխատությունը հատկապես կարևոր է աշխարհաքաղաքական կողմնորոշումների առումով: Այն, կարելի է ասել, ամբողջական պատկերացում է տալիս մեր տարածաշրջանի ու Հայկական լեռնաշխարհի պատմաքաղաքական անցյալի ու ընթացող իրադարձությունների մասին: Աշխատությունը հասկանալի ու մատչելի դարձնելու նպատակով հրատարակվում է արևելահայերենով ու ժամանակակից ուղղագրությամբ:

Նախատեսված է պատմաբանների, քաղաքագետների և ընթերցասեր լայն շրջանակների համար:

ՀՏԴ 93/94:32
ԳՄԴ 63.3+66.0

ISBN 978-9939-1-1396-8
© Սարգսյան Գ., 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երրորդ հրատարակության առթիվ	9
ԴԵՊՒ ԱՐԵՎԵԼՔ	
ՆԱԽԱԲԱՆ	11
ԱՐԵՎԵԼՔԻ ԵՒ ԱՐԵՎՄՈՒՏՔԻ	
ՊԱՏՄԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ	15
Հին աշխարհի սիբիրյան ճանապարհը	15
Մոնղոլ - պոլսական ճանապարհը	17
Լոնդոն-Սուեզ-Հնդկաստան-Հեռավոր Արեւելք ճանապարհը	21
ԿԱՅՍԵՐԱՊԱՇՏԱԿԱՆ ՄՐՅԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
ԱՍԻԱՅԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎՐԱ	25
Գերմանիայի ճակատագրական սխալը	31
Զուգակշիռ Պոլիս եւ Լոնդոն - Մոսկվա ճանապարհները միջեւ	33
Մրցակցություն Պոլսի ճանապարհները համար	35
Աշխարհակալական մրցակցություններ	39
Տնտեսական-հաղորդակցական շահագրգռություններ	43
ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՓՈՔՐ ԱՍԻԱՅԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ	45
Փոքր Ասիայի ճանապարհները խտացման վայրերը էրզրում - Ալեքսանդրեթ	47
Հայաստանի աշխարհագրական բնութագիրը	48
էրզրումը (Կարին) Հայաստանի միջնաբերդ	50
էրզրումի միջազգային ուղիները	54
Քաղաքական եւ ռազմական բախումներ	59
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ	
ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ (1800-1946)	63
Առաջին արար	63
Երկրորդ արար	65

<i>Երրորդ արար</i>	67
<i>Զորրորդ արար</i>	68
<i>Հինգերորդ արար</i>	69
<i>Վեցերորդ արար</i>	70
<i>Յոթերորդ արար</i>	72
<i>Ութերորդ արար</i>	78
<i>Իններորդ արար</i>	84
<i>Տասներորդ արար</i>	86

ԱՍԻԱՅԻ ԵՐԵՔ ԺԱՆԱՊԱՐ ՀՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ 1945 ԹՎԱԿԱՆԻՑ ՀԵՏՈ	91
<i>Մեծ Բրիտանիա</i>	91
<i>Խորհրդային Միություն</i>	95
<i>Միացյալ Նահանգներ</i>	101

ՀԱՅԱՍՏԱՆԸ, ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	105
<i>Հայաստանի աշխարհագրական ազդեցությունը</i>	
<i>Իր բնակչություն վրա</i>	105
<i>Հայաստանի ամբողջականությունը</i>	109

ՄԻԱՅՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՀԱՅ ՀՈՍԱՆՔՆԵՐԸ	116
<i>Արտասահմանյան ազգային հոսանք</i>	116
<i>Արտասահմանյան միջազգային հոսանք</i>	
<i>Կամ ձախեր</i>	118
<i>Հայությունը եւ Հ.Յ. Դաշնակցությունը</i>	119

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԻՐ ՀԱՐԵՎԱՆՆԵՐԸ	121
<i>Հայաստանի կնճիռը եւ լուծման եղանակները</i>	125

ԹՈՒՐՔԻԱՆ ԵՎ ԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ	129
<i>Թուրքիայի բաղկացուցիչ տարրերի ուղղությունը</i>	132

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՂԵՏԸ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ	135
<i>Թուրքական կողմնորոշում (օրինատացիա)</i>	135
<i>Լազերը</i>	135
<i>Քրդերը</i>	136
<i>Հայերը</i>	136
<i>Ռուսական կողմնորոշում</i>	137
<i>Անգլիական կողմնորոշում</i>	153
<i>Ամերիկյան կողմնորոշում</i>	163
ԻՐԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՍԻԱՅԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՆԱԼԻ	171
<i>ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵԼՔԸ</i>	179
<i>ԵԶՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ</i>	179
ԲՅՈՒՉԱՆԴԱԿԱՆ ՀԱՅ ԿԱՅՍՐԵՐԻ ՑԱՆԿԸ 582-1028	181
Գլխավոր աղբյուրներ	183

ԵՐՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Ռուբեն Տեր-Մինասյանի «Հայաստանը միջցամաքային ուղիներին վրա» աշխատությունը գրվել է Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից անմիջապես հետո: Այն առաջին անգամ տպագրվել է Բեյրութում՝ 1948 թվականին, իսկ երկրորդ անգամ՝ 1982 թվականին՝ Թեհրանում:

Հեղինակի սույն աշխատությունը, ըստ էության, հանդիսանում է մեր տարածաշրջանի, մասավորապես Հայաստան աշխարհի, աշխարհաքաղաքական վերլուծության առաջին հաջողված փորձը: Ռուբենը նախքան հայկական լեռնաշխարհին անդրադառնալը մանրամասն ներկայացնում է Եվրոպական և Ասիական երկրների, հիմնականում հզոր խաղացողների շահերն ու նկրտումները, Ասիան Եվրոպային կապող ճանապարհների, Արևելքի և Արևմուտքի պատմաքաղաքական անցյալի, հակադրության, մրցակցության հիմնական պատճառներն ու շեշտադրումները և այդ ամենի համատեքստում մեր՝ հայկական շահերն ու անելիքները:

Հայկական լեռնաշխարհը Ռուբենը ներկայացնում է որպես բերդ-ամրոց և գիտականորեն հիմնավորում է այդ բերդ-ամրոցի կարևորությունը նրան շրջապատող Մերձավոր Արևելյան ու կովկասյան երկրների անվտանգության հարցում: Կա հայկական բերդը, որը անվտանգության պատնեշ է հարևան երկրների համար, ուրեմն կա խաղաղություն հարևան երկրներում, կա խաղաղ գոյակցություն Մերձավոր Արևելքում ընդհանրապես:

Ռուբենի կատարած աշխարհաքաղաքական վերլուծությամբ գիտականորեն հիմնավորվում է Միացյալ Հայաստանի ստեղծման ու աշխարհասփյուռ հայությանը նույն հարկի տակ միավորելու մեր անքակտելի իրավունքը, և դա էլ այս բարձրարժեք աշխատության հիմնական մեխն է ու նպատակը:

Գրված լինելով 75 տարի առաջ, այն այսօր էլ ավելի քան արդիական է. նույն խաղացողները, գրեթե նույն շահերն ու նպատակները:

Գ. Ս.

ԴԵՊԻ ԱՐԵՎԵԼՔ

ՆԱԽԱԲԱՆ

Արեւելյան ռազմաճակատում հազարավոր վիրավորներ ու դիակներ տեսած գինվորական մի բժիշկ իր ճակատագրապաշտ տեսությունը բացատրում էր այսպես.

- Ժողովուրդների պատերազմներն ու արշավանքները կախում չունեն մեր գիտակցությունից ու հաշիվներից: Գիտակցությունն ու հաշիվը, ի վերջո, գալիս են փաստելու եղածը, որը հիմնականում մնում է անհասկանալի: Երկու պատճառներ կարելի է թվարկել, որոնք մարդկությանը մղում են դեպի մահ կամ հաղթանակ: Առաջինը մտածել է տալիս վարակիչ մի միկրոբի մասին, որը պատերազմի պատճառ է դառնում՝ նախ անասնացնելով մարդուն, ապա զետեղում է նրան հակառակորդ բանակներում, որպեսզի անխնա հոշոտեն իրար: Երկրորդ պատճառը թաքնված է մեր ենթագիտակցության եւ բնազդների մեջ, որոնք գործում են անկախ մեր կամքից եւ նույնիսկ այնքան են զորանում, որ իրենց են ծառայեցնում մեր գիտակցական, բարոյական, կրոնական աշխարհները: Այսպիսով ստեղծվում է մարդ անասունը, որն ինքն իրեն զգում է անզուսպ գերմարդ եւ չի նմանվում ո՛չ ներքին բնազդով, ո՛չ էլ գիտակցությամբ օժտված էակի՝ ինքն իր մեջ երկպառակտված, ինքն իրեն հակակշռելու ձգտող:

Հիպոկրատի ճակատագրապաշտ աշակերտը եզրակացնում էր.

- Պատերազմներն անխուսափելի կդառնան, եթե մարդը անձանոթ մնա պատերազմի միկրոբին ու նրա շիճուկին: Իսկ երբ այն չենք գտնում մեր շրջապատում, պետք է մտածել, որ այն լուծվել ու մի մարմին է դարձել մեր ներքին ու թաքուն աշխարհի՝ մեր ենթագիտակցության հետ, տիրապետող դառնալով մեր ողջ էությանը: Երկու պարագաներում էլ դարմանը հոգեբուժական կամ մանրէաբանական լաբորատորիաներում պետք է փնտրել:

Վերոհիշյալ մտքերը՝ ընդհանրապես պատերազմի պատճառների եւ պատասխանատվությունների վերաբերյալ, ապացույց են միայն բժշկի համար: Տրված բացատրությունը թվում է մակերեսային, ոչ լրիվ եւ ոչ էլ սպառնիչ օսմոգի կամ էնտոսմոգի, գազերի դիֆուզիայի կամ վանողական եւ ձգողական ուժերի օրենքների նման: Պատմության թելադրած

օրենքները վիճելի եւ խորհրդավոր են մնում: Օրինակ՝ ասում են.

- Կենսատարածքի պահպան է պատերազմի պատճառը.

Այս օրենքը, որ արդարացնում է հիտլերիզմի եւ Ֆաշիզմի գործելակերպը, չի համապատասխանում Ռուսաստանի գործելակերպին, որն ամենից շատն է ձգտում երկրներ գրավել: Թեպետ կենսատարածքի կարիք չունի, սակայն մնում է ազգերի մեջ ամենակոպարը:

- Կարիք եւ աղքատությունը պատերազմների աղբյուր են.

Եթե կարիքավորները իրենք իրենց արդարացնում են պատերազմելով, ապա հարուստ ազգերն էլ իրավացիորեն առարկում են, որ ախորժակը ուտելուց է բացվում: Եվ նկատելի է, որ հարուստ երկրները ավելի ռազմատենչ են, քան աղքատ ազգերը:

-Քաղաքակրթական գերակայության տենչն է պատճառը.

Բայց քաղաքակրթության տենչ չունեցող մոնղոլները, թաթարները, թուրքերը ավելի ռազմատենչ են, քան իրանը, Չինաստանը եւ ուրիշ ժողովուրդներ:

-Կրոնական-բարոյական դաստիարակությունն է պատճառը.

Թեպետ քրիստոնեական դաստիարակությունը, բարոյականությունը դեմ են պատերազմին, բայց Նագովրեցու հետեւորդները ավելի բարբարոս եղան, ավելի ռազմատենչ, քան իսլամադավանները, որոնք չեն ժխտում պատերազմը: Ո՛չ մի կրոն, ո՛չ մի դաստիարակություն ծնունդ չտվեցին իսպանական, գերմանական պատերազմի այնպիսի դաժանության, որ ցույց տվեցին վերոհիշյալ կաթոլիկ եւ բողոքական երկրները իրենց մարդասիրական վարդապետություններով:

- Ցեղային հատկանիշներն են պատերազմի պատճառը...

Այս վարկածն էլ իր հիմքում իսխուտ է, որովհետեւ արհեստով գինվորական նորվեգացները, սկանդինավցիները, չվեցարացիները դարձել են պատերազմների հանդիսատես, իսկ լամաների օրինակով դաստիարակված խաղաղ եւ բարի մոնղոլները եղան ամենահզոր եւ ռազմատենչ աշխարհակալներ:

Մյուսներն էլ ասում են.

- Անհատները, ժողովուրդներին առաջնորդներն են պատերազմների, հեղաշրջումների պատճառը:

Իհարկե անհատի դերը արհամարհելի չէ, բայց այն չի կարելի համարել միակ պատճառը. մեկ Չինգիզ, Հիտլեր, Լենին եւ կամ մի Մակեդոնացի եղել են միայն կատալիզատոր եւ առաջ են բերել ժողովուրդների շերտավորումներ, բյուրեղացումներ եւ հակամարտություններ: Բայց ամեն մի կատալիզատոր անկարող ու անարժեք է, եթե գոյություն չունի անհրաժեշտ պայմանը եւ տարրը. վերոհիշյալները անկարող եղան տարրը ստեղծել: Նրանց

առավելելու թյուրընդացի սովորական մարդկանցից այն է, որ պիտի հստակ են լսում անծանոթ տարրի ձայնը: Պետք է կեղծ համարել Հիտլերի խոստովանությունը, թե ինքը առաջնորդվում է ներշնչումով: Բայց ո՞վ է ներշնչողը, ո՞ւր է առաջնորդում եւ ինչո՞ւ,- այդ արդեն իրենից չի կախված:

Եթե փորձենք ընդհանուր հայտարարի բերել հին աշխարհի ամբողջ պատմությունը, կարելի է հանգել հետեւյալ եզրակացությանը, որ այն հաշտ ու համերաշխ ընթանում է Ֆրիդրիխի օրենքների, միջնորդության կամ ծովային հոսանքների հետ:

ա.- Մի աշխարհամաս, որը լցված է տարասեռ տարրերով, խռովահոգ վիճակ կունենա այնքան ժամանակ, մինչեւ այդ բազմացեղ տարրերը ունենան մեկ տեսակարար կշիռ, ինչպես տեսնում ենք գազերի մեջ:

բ.- Երկու աշխարհամասեր: Մեկը ինքնաբավ ու երջանիկ, որ հարեւան է մեկ այլ աշխարհամասի, որը դժբախտ է եւ ուր տորիչեյյան դատարկություն է տիրում: Առաջինը ձգտում է լցնել երկրորդը եւ իր երջանկությունը բաժանում է դժբախտի հետ՝ իր տեսակարար կշիռը նվազեցնելու գնով:

գ.- Բոլոր ցամաքամասերը միասին վերցրած, որոնք կազմում են հին աշխարհը՝ Ասիան եւ Եվրոպան, ենթակվում են մեկ օրենքի-Եվրոպան ձգտում է «Դեպի Արեւելք տարածվելու», իսկ Ասիան «Դեպի Արեւմուտք», ինչպես երկու հակառակ հոսանքներ:

դ. - Այդ հոսանքները գնում են ճշտված ուղիներով:

ե. - Այս հոսանքներին չի կարող արգելք լինել ո՛չ դատողությունը եւ ո՛չ էլ ցանկությունը: Արգելքներ են անապատները, անմատչելի լեռները, խորը գետերը, ծովերը եւ մարդկային կորովը:

Աշխարհի պատմությունը, ազգերի տնտեսական կյանքը, նրանց պատերազմները եւ մրցակցությունները կատարվել են եւ կատարվելու են 3-4 ճանապարհների վրա, որոնք էլ դառնալու են մեր խորհրդածությունների նյութը:

Իհարկե, եթե մենք այս ակնոցով մոտենանք հարցին, պատերազմների ու ազգերի տեղաշարժը եւ նրանց պատասխանատվության հարցերը ոչ միայն կդառնան դժվար լուծելի, այլեւ ձեռք կբերեն միստիկ կերպարանք՝ անլուծելի, անըմբռնելի, ճակատագրային եւ անպատասխանատու: Իրականում պատերազմները եւ ժողովուրդների տեղաշարժերը նույնքան միստիկ եւ անբացատրելի են, որքան ձկների եւ թռչունների տեղաշարժերը, կենդանիների պատերազմները եւ արշավանքները, որոնք հաճախ նույնքան կատաստրոֆիկ են, նույնքան արյունահեղ, որքան մարդկանց մոտ: Գուցե մենք էլ նրանց պես ենք

պատերազմների ու տեղաշարժերի ժամանակ, այն տարբերությամբ միայն, որ նրանք գործում են առանց գիտակցելու եւ վերլուծելու, կամ փորձեր անելու. իսկ մենք փորձում ենք՝ առանց գտնելու բուն պատճառը, որովհետեւ, եթե ցանկանանք գտնել, կարողանալու ենք վերջ տալ պատերազմներին եւ վերջնականապես խաղաղություն հաստատել աշխարհի վրա:

Հին աշխարհի պատերազմների պատմությունը իր ընդհանուր գծերով վերացական նկարագիր է ստանում, երբ ազատագրվում ենք հին ժամանակների հոգեբանությունից: Ակամա հարց ենք տալիս.

- Ինչո՞ւ եւ ի՞նչ նպատակի հասնելու համար եղավ այս բոլորը: Թեպետ այս հարցերի շուրջ է, որ մատենագիրները ամենից շատ են խոսում եւ փաստում, սակայն այդ փաստերի մեջ մենք տեսնում ենք պակաս բաներ՝ խորհրդավոր եւ ոչ սպառիչ: Դրա համար է գուցե, որ ստեղծվում են ավանդություններ, աստվածացման պաշտամունքներ բոլոր այն առաջնորդների շուրջ, որոնք առաջնորդել են ժողովուրդներին անծանոթ պատճառներով, անծանոթ նպատակների համար: Ալեքսանդր Մակեդոնացին սովորական մարդ է մինչեւ օրս ժողովուրդների երեւակայության մեջ, այլ մի Աստված, որ եկել էր առաջնորդելու ազգերին: Չինգիզ խանը՝ աստծո պատուհաս է մինչեւ օրս, իսկ Հիտլերը, որը նույնպես աստվածացավ կենդանության օրոք..., ով գիտի, թե իր մահից հետո ժողովուրդների երեւակայության մեջ չի համարվելու որպես աստծո պատուհաս: Այս աստվածացումները միայն հետեւանք չեն մարդկային հոգու ծարավի, ուժի երկրպագության, այլեւ նրա համար են, որ այդ ուժերի բարբարոսությունները ներդաշնակ են անցած մարդու ենթագիտակցության բնագրի մղումների հետ, որոնք թաքնված են մեր գիտակցական աշխարհի քողի տակ:

Մենք պատմությունից կարող ենք ճշգրիտ փաստեր հավաքել, թե որտեղից, ինչպես եւ ում միջոցով այս կամ այն կարեւոր պատմական դեպքը կատարվեց, թե որ ճանապարհներով այն զարգացավ, թե որտեղ ձախողվեց կամ հաջողեց: Իսկ թե ինչո՞ւ այն ստեղծվեց եւ ո՞վ ստեղծեց, թե ի՞նչն էր նրա ստեղծման նպատակը՝ մնում է վիճելի եւ խորհրդավոր:

ԱՐԵՎԵԼՔԻ ԵՎ ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՈւՂԻՆԵՐԸ

Եվրոպական եւ ասիական տափաստանները մեկ ամբողջություն են կազմում: Ուրալյան լեռնաշղթան այն անջրպետը չէ, որ կարողանա նրանց բաժանել երկու մասի: Երկու ցամաքների ինքնորոշումը աշխարհագրական չէ, այլ մարդկային-պայմանական: Ուրալյան լեռնաշղթան ցամաքային մի օվկիանոս է 50 միլիոն քառ. հեկտար տարածությամբ: Ինչպես օվկիանոսում մշտական կամ պարբերական հոսանքներ կան տարբեր ուղղություններով, այնպես էլ հիշյալ ցամաքամասերի վրա կան պատմական ճանապարհներ, որոնց շուրջ հյուսված է մարդկային հին եւ նոր պատմությունը:

Երկու ճակատ է գոյություն ունեցել հին աշխարհում. մեկը՝ Հեռավոր Արեւելքից, Ալթայի լեռնաշղթայի երկայնքով, հասնում է մինչեւ Իրան եւ Արաբիա՝ Թուրանա - արաբական հորջորջումով: Մյուս ճակատը՝ Սլավոնա-եվրոպականն է, որը երկարում է Մոսկվայից Վիեննա-Պոլիս: Այս ճակատների մեջ ընկած 20 միլիոն քառ. կիլոմետր տարածությունը այն ասպարեզն է, ուր իրար են բախվում ճակատները՝ փոփոխական հաջողություններով եւ ձախողումներով: Այս տարածության վրա են գտնվում այն բոլոր ուղիները, որոնց վրայով Ասիան եւ Եվրոպան զարնվում են իրարու, մեկը՝ «դեպի արեւմուտք», մյուսը՝ «դեպի արեւելք» նշանաբանով: Այս առճակատումների հետ համեմատած մյուս պատերազմները տնավեճեր են միայն: Այս ճակատների մրցակցությունները աշխարհի հիմնովին փոփոխության ազդակ են հանդիսացել: Հին պետությունների կործանումը, հին ազգերի եւ քաղաքակրթությունների ոչնչացումը, նոր ու հզոր կայսրությունների, նոր ժողովուրդների եւ նոր բարքերի գալուստը այս ճանապարհներով է եղել:

ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՍԻՖԻՐՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Սիբիրյան ճանապարհը, որ Բայկալից հետո Ալթայի լեռնաշղթային զուգահեռ մտնում է Արեւմտյան Սիբիրի տափաստանները եւ անցնում Ուրալը, հասնում է մինչեւ Վոլգա, ապա մտնելով Եվրոպայի տափաստանները անցնում է Մոսկվան՝ հասնելով Կարպատներ եւ Բյուզանդիա:

Այս ճանապարհով էր, որ եկան աշխարհասասան հոները, ջնջեցին իրենց հանդիպած ազգերն ու պետութիւնները, իսկ մի մասին էլ քշեցին դեպի Արեւմուտք եւ փոթորիկի նման տակնուվրա արին ողջ հին աշխարհը: Կարպատների մեջ նրանց թափը կտորվեց, կանգ առան՝ Հունգարիան իբրեւ վկա թողնելով իրենց անցած երկար ճամփորդութիւն: Արեւելքից, այդ ճանապարհով, նրանց հաջորդեցին շատերը. խազարները, որոնք դեպի հյուսիսի անտառները քշեցին սլավոններին, բուլղարները, որոնք, հեռանալով Վուլգայից, եկան կանգնեցին Բյուզանդիայի պատերի տակ, ալանները, որոնք հասան Կարլոս Մեծի երկրները: Ղաչաղները, պեչենեգները նույն ճանապարհներով առաջնորդվեցին եւ Ռուսաստանում մեծ կայսրութիւն ստեղծեցին: Մոնղոլների առաջնորդը՝ Չինգիզ Խանը, իր ազդեցութեան տակ առնելով թաթարներին, նույն հետքերով տարավ իր Ջուջի անունով զավակին, որպեսզի ոչնչացնի Կանկալիս, Կաչակ իշխանութիւնները եւ սլավոնական պետութիւնները, որոնք իբր ստվեր մնում էին Կիեւի, Մոսկվայի շրջաններում: Վուլգայի փեթերի մոտ, ներկայիս Ստալինգրադի մոտակայքում, Բաթուն կառուցեց անիվները վրա ամրացած իր տարօրինակ մայրաքաղաքը: Ոսկե Հորդայի (որի իշխանութիւնը հասնում էր այրված Մոսկվայից եւ Կիեւից ավելի հեռու մինչեւ Վարշավա) ոտքերի առջեւ բոլորը ստրուկ էին, մինչեւ մոնղոլների աշխարհածավալ կայսրութեան տապալումը՝ Դոնից մինչեւ Բալթիան ջրերը:

13-րդ դարում մոնղոլական կայսրութիւնը ոչնչացավ, բայց Արեւելքի առաջխաղացումը դեպի արեւմուտք կանգ չառավ: Ոսկե Հորդայի ժառանգորդը՝ Լենկ Թեմուրը, իշխեց Չինգիզի պետութեան վրա մինչեւ 14-րդ դարի կեսերը: Այդ թվականներից հետո, առաջին անգամը լինելով, անտառներում ապաստանած սլավոն ցեղերը «դեպի արեւելք» նշանաբանը վերցնելով՝ նույն ճանապարհներով, որտեղից եկել էին մոնղոլները իրենց ստրկացնելու, արշավեցին՝ կոզակ Երմակների առաջնորդութեամբ: Իվան Ահեղից հետո մինչեւ այսօր այս ճանապարհը աստիճանաբար ռուսացվում է. նրանով երթեւեկողները եվրոպական ցեղերն են: Հիշյալ ուղին արդիականացած է: Երկաթուղու երկու ժանիքներից մեկը հասնում է մինչեւ Վլադիվոստոկ, մյուսը՝ մինչեւ Շանհայ: Այս ճանապարհը իրավամբ պետք է համարել զուտ ռուսական, քանի որ նրա 10.000 կիլոմետրի վրա ռուսներն են գերակշռողը՝ թե՛ թվով, թե՛ որակով: Այդ ճանապարհի միայն մի անկյունը, որ անցնում է Մանջուրիայով, մնացել է իսցելի, Դեղին ցեղի բազուկների մեջ: Եթե այդ բազուկը այնքան ուժեղ լինի, որքան Իվան Ահեղինը, «դեպի արեւելք» ռուսական նշանաբանը

կարժեգրկվի: Իսկ եթե Ռուսաստանը այնքան հզորանա, որ կարողանա չեզոքացնել Մանջուրիայի, Չինաստանի, Կորեայի ուժերը այդ ճանապարհի վրա, այլևս «դեպի Արեւմուտք» սարսափելի վտանգը ընդմիջտ վերացած կարելի է համարել:

ՄՈՆՂՈՒ-ՊՈԼՍԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Երկրորդ ճանապարհը Մոնղոլ-Ալթայյան լեռնաշղթային զուգահեռ հասնում է մինչեւ Մամարղանդ եւ Մերվ (այժմյան՝ Մարի), ապա երկու մասի բաժանվելով, մեկը գնում է Աֆղանստանի վրայով դեպի Հնդկաստան, մյուսը դեպի Թեհրան եւ էրզրումի կամ Բաղդադի վրայով հասնում է Պոլիս: Այսօր Մերվը երկաթգծերով կապված է մի կողմից սիբիրյան մայր գծին, մյուս կողմից՝ Կասպից ծովին եւ հյուսիսից ուղղակի Մոսկվային, որով երեք կարեւոր երակներով միացված է ռուսական կենտրոնին:

Մոնղոլ- պոլսական ճանապարհը ընթանում է Սեւ եւ Կասպից ծովերի հարավային մասով: Իր կլիմայով եւ փոխադրական միջոցներով ավելի հարմար է, քան սիբիրյան ճանապարհը եւ այս առավելության համար, շատ հին ժամանակներից սկսած ամենից շատ գործածվածն է ոչ միայն հեռավոր Ասիայի խորքերի, այլև Հնդկաստանի հետ կապ պահելու համար: Այս ճանապարհի վրա են բարգավաճել հին աշխարհի քաղաքակրթությունը եւ կայսրությունները: Ով տիրել է այս ճանապարհներին, դարձել է ամենահզորը, ամենաբարգավաճը եւ ամենաքաղաքակրթվածը:

Այս ճանապարհների վրա է զարգացել Բաբելոնը, Ասորեստանը եւ Պարսկաստանի Աքեմենյան հարստությունը: Վերջինս մեծացավ, զարգացավ եւ տարածվեց Չինաստանից, Հնդկաստանից սկսած մինչեւ Պոլիս, մինչեւ ողջ Արաբիա ու Կասպից ծովը դարձրեց ներքին լճակ: Հետո երեւան եկան մակեդոնացիները, որոնք առաջին եւ վերջին անգամը լինելով, Ք.Ա. 333 թվականին Իսոսի ճակատամարտում պարտության մատնեցին Արեւելքին: Այնուհետեւ մակեդոնացիներին հաջորդած Սելեւկյան հարստությունը տիրեց Եվրոպայից սկսած մինչեւ Հնդկաստան եւ Չինական պարիսպներ ընկած հատվածը:

Սելեւկյաններին հաջորդած ո՛չ Հայաստանը, ո՛չ Հռոմը եւ ո՛չ էլ Բյուզանդիան (թեեւ ջանացին տիրել Արեւելքի հիշյալ ճանապարհին) չհաջողեցին անցնել Եփրատն ու Տիգրիսը: Մինչդեռ Պարթեական եւ Սասանյան հարստությունները այս ծանոթ ճանապարհով վերականգնեցին իրենց տիրապետության սահմանները Թուրանի եւ Իրանի վրա, մինչեւ Եգիպտոս ու Հաբեշստան, մինչեւ Հնդկաստան ու Չինաստան,

սակայն չկարողացան հասնել ճանապարհի վերջում գետեղված Պոլիս քաղաքին:

Նախապատմական ժամանակներից մինչև 7-րդ դարը արիական ժողովուրդներն էին միայն այդ ճանապարհի տերն ու տնօրենը: Անապատներից դուրս եկող արաբները խորտակեցին Սասանյան իշխանությունը, տիրեցին ճանապարհներին եւ շուտով հասան Կենտրոնական Ասիա եւ ավելի հեռուներ, իսկ մյուս կողմից՝ Հնդկաստան: Մի մեծ կայսրություն ստեղծեցին եւ ուղղվեցին Արեւելքից դեպի Արեւմուտք, տիրեցին մինչև Պոլսի դռները եւ Աֆրիկայի վրայով հասան մինչև Ֆրանսիայի հարավը: Հիշյալ ճանապարհը արաբական աշխարհի առանցքն էր կազմում, որի պաշտպանության համար արաբները Ալթայի թուրանական ժողովուրդներից որպես զինվոր առատորեն կամավորներ բերեցին՝ Կայսրության ապահովության համար: Այդ զինվորները հետագայում ներսից պիտի պայթեցնեին սեմական վիթխարի կայսրությունը: Իրանական ժողովուրդներին հակադրուելու համար, նրանք խրախուսեցին իսլամ ընդունած թուրանական տարրերին, որոնք լեռներից պոկված ձնազնդերի նման ողողեցին ճանապարհի ողջ երկայնքը:

1000-ական թվականներին, արաբների քարոզչության հետեւանքով, Կենտրոնական Ասիայում իսլամի անվան տակ կազմվում էին թուրանական պետություններ, որոնցից Խորեզմի իշխանությունն արդեն սկսել էր կլանել ողջ Կենտրոնական Ասիան եւ Իրանը: Սելջուկները, Բաղդադի եւ էրզրումի ճանապարհների վրա նստած, հեղեղի նման առաջանում են՝ սրբելով Հայաստանը, Անդրկովկասը, ապա մտնում են Բյուզանդական կայսրության սահմանները եւ ողողում Փոքր Ասիան: Բացի Պոլիսից ու նրա շրջակայքից դառնում են նրանց կալվածքները: Ստեղծվում են Իկոնիայի, Գարամանի սուլթանությունները: Արաբները այլեւս ներկա չեն այս ճանապարհ վրա: Նրանք ընկել են սելջուկների դանակի տակ: Ճանապարհի վրա, որպես հին-հին դարերի հիշատակ, մնացել են միայն կղզիացած հայկական իշխանությունները: Անդրկովկասում, մոտովորապես նույն խարխուլ վիճակի մեջ, իր գոյությունն էր պահպանում նաեւ Վրաստանը:

11-րդ դարի վերջերին Բյուզանդիան իր մահվան օրերն էր ապրում: Նրա անկումը համազոր պետք է համարել Եվրոպայի թե՛ ծովային, թե՛ ցամաքային դռները լայն բացելուն եւ՝ իսլամի, եւ՝ թուրանականության առջև: Սուրբ Երկրների փրկության հարցը համախմբում է բաժանբաժան եղած Եվրոպան, որը վտանգը դիմագրավելու համար որդեգրեց «դեպի Սուրբ երկրներ, դեպի Արեւելք» նշանաբառը:

Այդ շարժումը, որ հայտնի է Խաչակրաց արշավանք անունով, ոտքի հանեց ավելի քան մեկ միլիոն մարդ: Այդ թիվը մի քանի անգամ ավելին էր, քան մոնղոլականը, եւ բավական էր ավելի երկարատեւ եւ հաստատուն ապահով վիճակ ստեղծելու Արեւելքի արշավանքների դեմ, եթե այն նվազ եսասիրական նպատակներ ունենար եւ ընդգրկեր ավելի լայն հորիզոններ: Ետեւում թողնելով մեկ խարխլված կամուրջ՝ Բյուզանդիան՝ սխոլաստիկ վեճերով, եւ իր կողքին թողնելով՝ իբրեւ վտանգ, թուրանական դարձած էրզրումը, հագիվ կարողացավ 150 տարի գոյատեւել՝ սահմանափակվելով Միջերկրականի ծովափերով մինչեւ Եփրատ, ուր 1264-ին պիտի կուլ գնար մի կողմից մամուլքներին, մյուս կողմից՝ սելջուկներին:

Հեռավոր Մոնղոլիայում մի նոր ուժ է ծնունդ առնում եւ հենված ճանապարհի գլխին՝ հասնում է մինչեւ ծայրամաս՝ Պոլիս: Չիբիգ Խանը դեմ է կրոնական նախապաշարումներին՝ թեւեւ ո՛չ իսլամադավան է եւ ո՛չ էլ քրիստոնյա, սակայն նպատակ ունի քանդել եղածը՝ երկրագնդի վրա իր հասկացած պետական կարգը ստեղծելու համար: Դեպի Արեւելք տանող ճանապարհների վրայից չինական պետութիւններ՝ Կիտան, Տանգուտ, Սունգ, Յունան եւ Կորեան վերացնելու գործը թողեց Ջակատային, Օգատային եւ Թուլուհին՝ այնտեղ մոնղոլական իշխանութիւն հաստատելու առաջադրանքով: Ջուջի գավազին եւ թուանը՝ Բաթուին, հանձնեց հյուսիսային ճանապարհը, որը հասնում է Մոսկվա: Նրանք լրիվ իրագործեցին Չինգիզ Խանի բաղձանքը՝ մոնղոլական աշխարհին միացնելով Խաղաղ օվկիանոսի փերից մինչեւ Կենտրոնական Եվրոպա ընկած հատվածը: Չինգիզն ինքն անձամբ ընտրեց միջին ճանապարհը, որը Միջերկրականի վրայով տանում է մինչեւ Հնդկաստան: Արշավանքի ընթացքում նա ոչնչացրեց եւ ջարդեց Թաթարստանը, վերապրողներին տեղահանեց եւ իբրեւ ստրուկ օգտագործեց իր բանակում: Իր բանակների առջեւ կանգնող Կարա Կիթա կայսրութիւնը, որն ընդգրկում էր Ուլղուր Թուրքեստանը (Թուրքերի բնօրրանը), արմատախիլ արեց եւ ժողովրդի մեծ մասին ջարդեց, մտավ Խորեզմի մեծ կայսրութեան սահմաններից ներս, որը արաբներից հետո իսլամական դիմագիծ էր ստացել, գրավեց եւ իր հողերին կցեց Սասանյան երկրները: Ապա անցավ Հնդկաստան: Բանակների մի մասն ուղարկեց Արեւմուտք՝ դեպի Թեհրան, էրզրում եւ Բաղդադ: Արեւմտյան պետութիւններից եւ ոչ մեկը չըմբռնեց օրըստօրե ուռճացող ուժի միջազգային արժեքը: Քրիստոնյա պետութիւններն զբաղված էին միսիոներներ առաքելով, որպէսզի Ավետարան բացատրեն անկրոն այս ժողովրդին: Մահմեդականները նույնպէս հոգեւորականներ էին ուղարկում Ղուրանի իմաստ

տուլթյունները քարոզելու անկրոններին:

Բացառուլթյուն էին կազմում միայն Կրիկիայի Սմբատ եւ Հեթում իշխանները, հյուսիսային Հայաստանից՝ Ավագ եւ Վրաստանից մի շարք իշխաններ, որոնք ի սկզբանէ լավ հասկացել էին մոնղոլական ազդակի կարեւորությունը: Քաղաքական հողի վրա մոնղոլների հետ դաշինք կնքեցին եւ զինակից դարձան անհավատ, Աստծո պատուհասների հետ: Շնորհիվ իրենց քաղաքական իմաստության, նվազագույն վնասով ազատվեցին, հակառակ այն իրողության, որ վերոհիշյալները բնակություն էին հաստատել ներխուժողների խաչածեւման կետերի վրա:

Այս դրությունը Ասիայում տեւեց մինչեւ Լենկ թեմուրը, որից հետո գլխավոր ճանապարհը անցավ երեք նոր տերերի ձեռքը: Պոլսից մինչեւ Իրանի սահմանը, իր կարեւոր կայաններով՝ Էրզրումի ու Բաղդադի հետ միասին, մնացին թուրքիային: Պարսկաստանին բաժին ընկավ բովանդակ Իրանը մինչեւ Մերվ՝ թեհրան կայանով, իսկ Մերվից արեւելք ընկած ճանապարհի հատվածը մինչեւ Չինաստանի սահմանը, բաժին ընկավ թուրանական եւ մոնղոլական իշխանություններին:

Ղրիմի պարտությունից հետո, 19-րդ դարի կեսերից սկսած, Ռուսաստանը դեպի Պոլիս առաջանալու ամեն հույս կորցրեց: Իրանից հետո նա ուշադրությունը կենտրոնացրեց Պոլսի ճանապարհների արեւելյան ծայրամասերի վրա: Իր տիրապետությունը Մոնղոլիայից մինչեւ Սեմիպալատինսկ (նախկին Կարա Կիթա) հաստատուն հիմքերի վրա դնելուց հետո, իջավ դեպի հարավ՝ արեւմուտք՝ թուրքմենական Բուխարա, Խիվա խանությունները, գրավեց ողջ թուրքեստանը եւ հասավ Պամիր, մինչեւ Աֆղանստանի ու Իրանի սահմանները: Երբ կանգնած էր Հնդկաստանի սահմաններից մի քանի քայլ հեռավորության վրա, նրա առջեւ ցցվեցին ոչ միայն Աֆղանստանի եւ Իրանի դժվարությունները, այլ նրանց կողքին՝ իր առջեւ կանգնած տեսավ Բրիտանական կայսրությանը: Նույն դժվարություններն ու արգելքները ծառայան նրա առջեւ Հնդկաստանի դռների մոտ, ինչի որ հանդիպել էր Պոլսի պատերի տակ: Բայց այս ճակատի վրա արդեն ունեցել էր մեկ կարեւոր հաջողություն: Նրա ձեռքում էին Չինգիզ Խանի ու Լենկ թեմուրի գրաված տարածքները, այսինքն՝ Պոլիս-Մոնղոլիա ճանապարհի երեք քառորդը: Իրեն չէին ուզում տալ մեկ քառորդը՝ թեհրան-էրզրում-Պոլիս եւ Կանդախար՝ Հնդկաստան տարածքը: Անգլիայի հետ չկռվելու համար հարկադրված ընդունեց Աֆղանստանի, Իրանի անձեռնմխելիությունը: Աֆղանստանի ու Իրանի անկախության եւ հողային ամբողջականության պահպանման

գաղտնիքը գտնվում է ստեղծված կացութային մեջ: Այլ բառերով, հիշյալ երկրներն իրենց անկախութային համար պարտական են Անգլիայի ներկայութայինը Հնդկաստանում:

Այսօր Սովետները այս երկրորդ ճանապարհի վրա հիմնել են Թուրքմենստանի, Ուզբեկստանի, Ղազախստանի, Տաջիկստանի հանրապետությունները, որոնք որպես Խորհրդային Միության մաս, վեճի առարկա չեն: Այնպես որ Պոլիս-Մոնղոլիա ճանապարհի երկարությունը երեք քառորդը կարելի է մարաված համարել Սովետների կողմից: Վեճի եւ պայքարի առարկա մնացել է միայն ճանապարհի մեկ քառորդը՝ Իրանի սահմանից մինչեւ Թեհրան, մինչեւ Պոլիս, ուղիղ գծով շուրջ 2000 կիլոմետր երկարությամբ, որի կենտրոնում գտնվում է էրզրումի շրջանը:

ԼՈՆԴՈՆ-ՍՈՒԵՋ-ՇՆԴԱՍՏԱՆ-ՇԵՌԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ ՃԱՆԱՊԱՐՀԸ

13-րդ դարից սկսած խաչակիրները ծովն են թափվել եւ հեռացել ասիական ցամաքամասից: Կիլիկյան Հայաստանը 1376-ին արդեն գոյություն չուներ, եւ Եվրոպայի առևտրական կապերը Ասիայի հետ խզվել էին: 1453-ին Մուհամեդ Բ սուլթանը գրավեց Պոլիսը: Այսպիսով Եվրոպան կորցրեց իր վերջին կայանը Ասիայում: Եվրոպայի առաջ փակվեցին Ասիայի դռները, եւ Արեւելքը հաղթականորեն կանգնեց Վիեննայի պատերի առաջ: Հյուսիսային՝ Մոսկվա-Սիբիր ասիական ճանապարհները, որտեղից սլավոնական ցեղերը քայլ առ քայլ առաջանում էին դեպի արեւելք, ոչ մի օգուտ չէին բերում Արեւմտյան եւ կենտրոնական Եվրոպային: Ռուսաստանը իր հաշվին, առանց որեւէ պետություն, օգնություն, բացում է իր ճանապարհը դեպի Արեւելք, որը նույնքան ամրացված էր, որքան Պոլիսը՝ Թուրքերի կողմից:

Կենտրոնական Եվրոպան պարտված է իր «Դեպի Արեւելք» նշանաբանով, բայց ոչ վերջնականապես: Առասպելական Ասիային տիրելու տենչը խոռովում է նրա հոգին: Փակ ճանապարհները Եվրոպայի ժողովուրդներին մղում են ճարտարություն: Եվ ահա դուրս եկավ մի հանդուգն Կոլումբոս, որն արհամարհելով երկրագնդի ձևի մասին եղած նախապաշարումները, փորձում է միշտ դեպի արեւմուտք նավարկելով արեւելք գնալ՝ Հնդկաստանի ճանապարհը գտնելու համար: Վերջապես հասնում է երազած ցամաքամասին՝ ավելի ընդարձակ, ավելի հարուստ, քան իր երեւակայածը: Բայց դա Հնդկաստանը չէր, այլ նոր մի աշխարհ, որ հետագայում կոչվեց Ամերիկա:

Կոլումբոսի ձեռնարկը Եվրոպային տվեց ոչ միայն կենսատարածք, այլև ծառայեց որպես կտրուկ միջոց՝ խորտակելու ծովերի մասին գոյություն ունեցող նախապաշարումները: Պորտուգալական, Ֆրանսիական, իսպանական, իսկ հետագայում էլ անգլիական նավերը բախտ որոնելու համար սկսում են ճամփորդել Բարեհուսո հրվանդանի վրայով դեպի Հնդկաստան եւ ավելի հեռուներ՝ մինչեւ Չինաստանի արևելք, մինչեւ Ավստրալիա, Զելանդիա, որոնք անծանոթ էին նույնիսկ Չինգիզ խանին: Այս երկրները հյուսիսից պաշտպանված են Տիբեթի եւ Հիմալայի անանցանելի լեռնաշղթաներով եւ Գոբի անապատներով: Ասիայի ժողովուրդների հարստությունը, ուրույն քաղաքակրթությունը, ցամաքային այն ճանապարհներով, որոնք մատնանշեցինք վերելում, համարյա թե անհասանելի են եղել հին ու նոր մարդկության համար:

Ասիական այս երկրները տեսել էին սելեւկյաններին, մոնղոլներին եւ արաբներին, բայց չէին տեսել եվրոպական բազմալեզու ժողովուրդներին, որոնք ցամաքը թողած գալիս էին ծովային ճանապարհով եւ որոնք դեմ չէին կարող կռվել ո՛չ փղերով, ո՛չ էլ նետ ու աղեղով: Եկել էին անկուշտ վաճառականների նման. ամեն մի գրասենյակ սպայակույտի հավաքատեղի էր, ամեն նավահանգիստ մի բերդ, ուր չնչին զներով ձեռք բերված ապրանքներն ուղարկում էին իրենց երկրները:

Եվրոպան հարստանում, հզորանում էր ի հաշիվ Ասիայում ունեցած բազմամիլիոն նոր հպատակների: Բայց այս դրությունը վերջ գտավ Ֆրանսիական հեղափոխությունից հետո: Եվրոպան հարկադրված եղավ իր իրավունքները փոխանցել Անգլիային, որը հետեւողական կերպով, իրար ետեւից Ասիայից դուրս քշեց մյուս պետություններին՝ նրանց նվաճած տարածքների վրա ստեղծելով Բրիտանական կայսրությունը:

Անգլիան առանց ցամաքային որեւէ ճանապարհ ունենալու, ծովային ճանապարհներով կարողացավ ասիական մի մեծ կայսրություն ստեղծել, որի տարածությունը 7 միլիոն քառ. կիլոմետրի է հասնում, ազգաբնակչությունը՝ շուրջ 400 միլիոն: Փաստորեն նա մնաց անմրցելի: Եթե Ասիայի հարավում դեռեւս կան Ֆրանսիական, հոլանդական եւ պորտուգալական գաղութներ, շուրջ 100 միլիոն հպատակներով, դա միայն Անգլիայի բարյացկամություն չնորհիվ է: Իրենց գոյություն պահպանման համար նրանք կամա՛ականապես պարտավոր են դառնալ Բրիտանական կայսրության արբանյակները: Հնդկական օվկիանոսը դարձել է անգլիական լիճ:

Անգլիայի մտահոգությունն առաջին առարկան գաղութապետություն հեռավորությունն է մայր երկրից: Բարեհուսո հրվանդանի

ճանապարհով, որն ամենակարճը պետք է համարել, կայսրության ծայրամասը կարելի է հասնել երեսուցն հազար կիլոմետր կտրելով: Ժամանակի եւ միջոցների անհաշիվ վատնում...

Այս մտահոգությունը փարատելու գաղափարը պարզեց Ֆերդինանդ Լեսեփսը: Տարօրինակ ճակատագրով, լատին ցեղերին հատուկ հախուռն երեւակայությամբ եւ հանդգնությամբ, նա գտել էր Ասիայի ծովային ճամփան: Անգլիան, շնորհիվ իր կազմակերպչական տաղանդի, կարողացավ սեփականացնել ձեռնարկը, որի հետեւանքով Ֆրանսիացիներն ու ուրիշները կղզիացան՝ հեռու մնալով Հնդկաստանից եւ Արեւելքից: Լեսեփսը, հակառակ անգլիացիների ցանկության եւ թշնամական վերաբերմունքի, նախաձեռնեց Սուեզի ջրանցքի բացումը: Խտիվի իսմայիլը եւ Նուբար Փաշան իրենց բարյացկամությամբ օժանդակեցին Լեսեփսին: Մեկի նպատակն էր Ֆրանսիական շահերի ապահովումը, մյուսինը՝ Եգիպտոսի բարգավաճումը: Եթե նախապես իմանային, որ ջրանցքի բացումը ի վերջո ծառայելու է Բրիտանական կայսրության ամրապնդմանը, թերեւս չձեռնարկեին...

Ի՞նչ արժեք գրչուծից... Սուեզի ջրանցքը փաստորեն դարձել է Բրիտանական կայսրության առանցքը: Եգիպտոսը ձեռք բերեց տնտեսական առավելություններ, բայց կորցրեց իր վեհապետությունը:

Սուեզի ջրանցքը պետությունների կազմավորման, տնտեսական, քաղաքական եւ կուլտուրական կյանքի մեջ ավելի մեծ հեղափոխություն առաջ բերեց, քան բոլոր հեղափոխությունները միասին վերցրած: Միջերկրական ծովը, որ նախապես մի լիճ էր, կույրաղիքի պես երկարած, դարձավ կամուրջ հեռավոր Արեւելքի ու Արեւմուտքի միջեւ: Հին աշխարհի մեկ միլիարդ մարդկությունը կապվեց կես միլիարդ եվրոպական եւ աֆրիկյան բնակչության հետ:

Սուեզով անցնող ճանապարհը երկու անգամ ավելի կարճ է, քան Հնդկաստանի նախկին ճանապարհը: Լեսեփսի ճամփան կարելի է համարել Ասիայի ճանապարհների թագուհին: Նույնիսկ Չինգիզ խանի ճանապարհները ընկան ստվերի տակ: Ճանապարհների թագուհին Բրիտանական գաղութապետության առանցքն է:

ԿԱՅՍԵՐԱՊԱՇՏԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՍԻԱՅԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎՐԱ

Տեսանք, որ երեք մայր գծեր կան Ասիայի հետ կապվելու, կամ էլ այն իր տիրապետութեան տակ առնելու համար.

ա. Մոսկվա-Վոլգա-Հեռավոր Արեւելք գծի մի ժանիքը հասնում է Սախալին, Ճապոնիա, իսկ մյուսը՝ Պեկին, Հոնկոնգ:

բ. Լոնդոն-Սուեզ-Հնդկաստան-Սինգապուր ճանապարհի մի ծայրը մի կողմից հասնում է Ջեյլանդիա, իսկ մյուսը՝ Պեկին, Հոնկոնգ:

Մի կողմ թողնենք երրորդ ճանապարհը, սակայն ընդգծենք հետեւյալ ուշագրավ կետերը առաջին երկուսի մասին.

Առաջին ճանապարհը ամբողջովին գտնվում է Մոսկվայի տրամադրութեան տակ: Սառուցյալ գոտու եւ Գոբի անապատների արանքով առաջանալու շնորհիվ այն ոչ մի արտաքին վտանգի ենթակա չէ եւ ոչ էլ իր ընթացքով կարող է սպառնալիք հադիսանալ որեւէ ժողովրդի համար, բացի Դեղին ցեղի՝ Ճապոնիայի եւ Չինաստանի:

Երկրորդ ճանապարհը՝ Լոնդոն - Հեռավոր Արեւելք, որն ամբողջութեամբ ծովերի վրա է, գտնվում է Անգլիայի ձեռքում: Եվ քանի որ Անգլիայի նավատորմն է ամենաուժեղը, ուրեմն այդ ճանապարհը որեւէ արտաքին վտանգի ենթակա չէ: Նրա միակ հավանական թշնամին Դեղին ցեղն է: Այստեղից պետք է եզրակացնել, որ հիշյալ ճանապարհները իրար լրացնող են, ոչ թե՛ հակասող: Հետեւաբար նրանց տերերը բնական դաշնակիցներ պիտի լինեն, քանի որ երկուսին էլ սպառնացող վտանգը նույն է՝ Դեղին ցեղը, թվով շուրջ 500 միլիոն թշնամի բանակ:

Հեռավոր Արեւելքում անգլո-ռուսական քաղաքական փոխհարաբերութեանը համապատասխանում են հիշյալ աշխարհագրական պայմանների տրամաբանական թեւադրանքին: Անգլո-ռուսական գործակցութեանը Հեռավոր Արեւելքում ճշմարիտ մի դաշնակցութեան է, իսկ հակամարտութեանը՝ երեւութական: Դարերի ընթացքում, ռուսների առաջխաղացումը Սիբիրի վրայով դեպի Հեռավոր Արեւելք, Անգլիայի կողմից երբեք արգելքի չի հանդիպել, այլ նույնիսկ խրախուսվել է: Նույն վերաբերմունքը ցույց է տրվել Ռուսաստանի կողմից դեպի Հեռավոր Արեւելք Անգլիայի առաջխաղացման հանդեպ: Բոքսեռների շարժումը, որը հիմքում հակառուս եւ հակաանգլիական բնույթ ունեւոր, եւ Դեղին ցեղի ազատագրումն էր պահանջում անգլո-ռուսական աքցանից, խեղդվեց անգլո-ռուս նախաձեռնութեամբ եւ ուժով: Թեեւ 1905 թվականին Անգլիան

Ճապոնիայի դաշնակիրքն էր, բայց ռուս- ճապոնական պատերազմի ժամանակ Ճապոնիայի հետ նույնքան բարյացկամ էր, որքան որ Ռուսաստանի:

1914 թվականի պատերազմի ավարտին կարգադրություններ եղան ի վնաս Չինաստանի եւ հօգուտ ռուս-անգլիական առաջխաղացման. 1939 թվականի պատերազմի ժամանակ եւս թեեւ Ռուսաստանը չէր պատերազմում Ճապոնիայի հետ, բայց 1943 թվականի Կահիրեի ժողովում, չնայած Ռուսաստանը բացակայում էր, հաշվի առնվեցին ռուսական շահերը Հեռավոր Արեւելքում՝ Պորտ Արթուրի, Մանջուրիայի եւ Կորեայի հարցում: Սա միայն Մոսկվային սիրաշահելու համար չէր, այլ նրա համար, որ Ճապոնիան Դեղին վտանգի առանցքն էր դարձել, եւ չինական հողերում Ռուսաստանի ներկայությունը զսպիչ ուժ էր, մասամբ անգլիական ու ամերիկյան շահերին զուգահեռ: Հեռավոր Արեւելքում, մեր հիշատակած ասիական երկու ճանապարհների վրա, ռուս-անգլիական թշնամություն չի կարող գոյություն ունենալ այնքան ժամանակ, որքան կա ու կմնա Դեղին ցեղի վտանգը:

Դեղին վտանգը երեւակայական չէ, այլ իրական: Այն կազմակերպված է, իսկ կազմակերպիչների գլխավոր ազդակներն են այն ճնշիչ ազդեցությունները, որոնք դալիս են երկու կայսրություններին՝ այդ երկու ծովային ու ցամաքային ճանապարհների վրայով: Արդյոք այդ ճանապարհով հնարավոր է չեզոքացնել վտանգը: Տարակուսելի է, եւ երբ դա անհնար լինի, այդ պարագայում սպասելի է, որ մի օր այդ ուժը ծնելու է մի նոր Չինգիզ խան, որը կարողանալու է հոսանքը հետ դարձնել: Այդ ժամանակ այդ երկու ճանապարհները գործիք են դառնալու Արեւմուտքի դեմ: Թե Մոսկովիսիի, թե Հիտլերի ծրագիրը դա էր, ճապոնացիներին դարձնել «արիական» ծագում ունեցող, եւ այս երկու առաջնորդները, Հաբեշտանի լեռների վրա կանգնած, դիտում էին «արիական» նոր ցեղերի գալուստը մինչեւ Աֆրիկա եւ Սուեզի ջրանցք:

Երբ ասում ենք, թե Մոսկվայի ու Լոնդոնի ձեռքում եղած Ասիայի այդ երկու ճանապարհների վրա արտաքին վտանգ չկա, բացի Դեղին ցեղից, պետք է հասկանալ այն իմաստով, թե արտաքին ուժերը դո՞հ են եղած իրավիճակից եւ վտանգ չկա Անգլիայի եւ Ռուսաստանի համար: Այն հանգամանքը, որ Ասիայի ճանապարհների մենաշնորհը վերցրել են երկու կայսրությունները՝ Մոսկվան եւ Լոնդոնը իրենց վրա, դեմ է ողջ Եվրոպան:

Երկու դասի կարելի է բաժանել Անգլիայի եւ Ռուսաստանի հակառակորդներին.

ա. Պետուլթյուններ, որոնք առավել կամ պակաս չափով իրենք եւս ունեն աշխարհակալական միտումներ:

բ. Ժողովուրդներ, որոնք ընկած են այդ ճանապարհների վրա եւ ճնշված՝ ստեղծված երկու կայսրուլթյունների միջեւ:

Առաջինների մեջ պետք է դասել Ֆրանսիան, որ դեռեւս Սուեզի ջրանցքի բացվելուց առաջ, հանձինս Նապոլեոնի հասկացավ, որ Անգլիայի ուժը Արեւելքի մեջ է, ուրեմն նախ եւ առաջ պետք էր վտանգել Անգլիայի արեւելյան ուղիները: Այդ մտահոգությամբ էլ կազմակերպեց արշավանք դեպի Եգիպտոս, ցամաքային ճանապարհով Հնդկաստան հասնելու համար, սակայն ձախողվեց: Զանազ իսպանիայում վտանգել Ջիբրալթարը, նույնպես ձախողվեց: Ռուսաստանին առաջարկեց գրավել Հնդկաստանը՝ սա էլ ձախողվեց: Փորձեց գրավել Աքհան՝ Հայֆայի մոտ՝ արեւելք անցնելու համար, բայց պարտվեց Ահմետ Բուշեին: Անհաջողությունների հետ Ֆրանսիան չհամարեց վերստին մինչեւ օրս էլ շարունակում է իր պայքարը Անգլիայի՝ ճանապարհների մենատիրության եւ Ասիային միայնակ տիրելու իրականության դեմ: Այս պայքարի ընթացքում Ֆրանսիան Ասիայում ձեռք բերեց Հնդկաչինը եւ նրա հարակից տարածքները, այդպիսով դառնալով առաջապահ Չինաստանի դեմ: Կարողացավ անգլիական լիճ դարձած Հնդկական օվկիանոսի մեջ ձեռք բերել Մադագասկարը եւ Զիբուլթին, թեեւ արգելվեց նրանց հաստատվել Սուդանի մեջ՝ Տաշոգայի դեպքը «թյուրմացություն» համարելով: Կարողացավ հաստատվել Թունիսում, Ալժիրում, Ռիֆում եւ Մարոկկոյում, եւ իրավունքներ ունենալ Դանստում (Տանսեր), Ալժեիրասում (Ալժիր), իբր հակակշիռ Ջիբրալթարի ռազմական մենատիրության: Բայց այս բոլորը, որ Անգլիան զիջեց բարյացկամությամբ, չէին կարող նվազեցնել նորին վեհության մենիչխանությունը Ասիայի ճանապարհների վրա: Ֆրանսիան իր հակակշռով եւ կայսրություն ստեղծելու տենչով մտավ այնպիսի բաժնետիրական ընկերության մեջ, ուր հարցերը լուծվում են ակցիաների թվին համաձայն, որոնցից սակայն նա մեծ քանակությամբ ունենալ չէր կարող: Արդյունքում՝ Ֆրանսիայի դրամագլուխը ծառայելու է միայն մեծ բաժին ունեցողին: Մեծ բաժինը անգլիական նավատորմի եւ բոլոր ռազմական հենակետերի գերակայությունն էր, որին չկարողացավ հասնել եվրոպական նավաչինարարական վազքը:

Ֆրանսիայի օրինակով Գերմանիան, Ալստրիան, Իտալիան եւ այլուք, փորձել են բաժնետեր դառնալ կամ վերցնել Անգլիայի մենաշնորհը Սուեզի ճանապարհներից:

Գերմանիան էր, որ նախորդ պատերազմի ժամանակ փորձեց թուրքիայի օժանդակութեամբ հասնել մի կողմից Հնդկաստան, մյուս կողմից՝ Սուեզ, բայց ձախողվեց: Այս պատերազմի ընթացքում՝ երկրորդ անգամ, ջանաց իսպանիայի օգնութեամբ վտանգել Ջիբրալթարը, նույնպես ձախողվեց: Իտալիայի օգնութեամբ փորձեց վտանգի ենթարկել Մալթան, բայց ձախողվեց: Բենդագին, Տրիպոլին հենակետ վերցնելով երկու ուժերը միասնաբար արշավեցին դեպի Սուեզ, բայց չարաչար ձախողվեցին: Որպես հենակետ ընտրելով Հաբեշստանը, ցանկացան հարավից փակել Կարմիր ծովը, բայց ժամանակավոր հաջողութունն չհետո, ի վերջո ձախողվեցին: Լուրջ հաջողութունների հասավ Գերմանիայի դաշնակից Ճապոնիան՝ արշավելով մինչև Հնդկաստանի դռները, գրավելով Ավստրալիայից տարածքներ, Սինգապուր դուռը, բայց նա էլ ձախողվեց:

Ինչպես ցույց են տալիս Մոլոտովի եւ մամուլի հայտարարութունները, այսօր Արեւելյան Եվրոպան հանձինս Սովետների շահագրգռութուն ունի Դանժեի (Տանժեր), Բենգազի, Սուեզի եւ իտալական գաղութների նկատմամբ: Բայց այն դեռեւս գործնականից հեռու է, եւ այդ հայտարարութունները քաղաքական բլեֆներ են, որպեսզի Ռուսաստանը այլ ասպարեզներում կարողանա ճշումներով հարկադրել Անգլիային զիջումների դնալ:

Այս հիշեցումները ցույց են տալիս, որ Անգլիան իր ձեռքում եղած ճանապարհների վրա իր դեմ ունի ողջ Եվրոպան: Այս միասնական ճակատն առ այսօր անկարող է եղել վնասել Բրիտանական կայսրութեան առանցքին, ընդհակառակը, այդ ճակատը պատճառ է կարծես, որ Անգլիան միշտ աչալուրջ լինի: Եվ ամեն մի վտանգ անցնելուց հետո, նա սեփական «առանցքի» թերութուններն ստուգելով, նոր փոփոխութուններ է մտցնում, էլ ավելի ամրացնելով այն՝ անխոցելի դառնալու համար:

Անխոցելի դառնալու համար առաջին պայմանը նավերի գերակշռութունն է ջրային ճանապարհների վրա, արագութունն ու հեռահար թնդանոթներ ունենալը: Եվ սրա վրա է Անգլիան կենտրոնացրել ուշադրութունը: Նա ավելի ուժեղ է, քան նրա հակառակորդները՝ բոլոր միասին վերցրած: Երկրորդ, որպեսզի ջրային ճանապարհները ցամաքից սպառնացող վտանգներից հեռու պահի, նրա հիմնական մտահոգութունը եղել է իսկ բոլոր այն կետերը, որոնք հեռվից կամ մոտիկից կարող են վտանգել ջրային ճանապարհները եւ նրանց զուգահեռ գնացող տարածքները՝ բավարարելով տեղացիներին եւ իր հակառակորդներին, պայմանով, որ նրանք որեւէ վնաս բերելու հնարավորութուն չունենան կայսրութեան առանցքին: Օսմանյան

կայսրութեանը, բարեկամ մնալով հանդերձ, չհանդուրժեց Թուրքիայի՝ Գերմանիայի հետ բարեկամութեանը: Երբ Սուեզի ջրանցքի հարցում վտանգը պարզ դարձավ, պատժեց իր բարեկամին՝ նրանից անջատելով արաբական երկրները՝ որպես անկախ պետութիւններ:

Ֆրանսիան փոխեց իր սպառնալի դիրքը Անգլիայի հանդէպ, երբ ցանկացավ սահմանափակել իր պահանջները՝ «բաժնետեր» լինելու ձգտումով: Նա շահեց անգլիական ճամփաների վրա բազմաթիվ հարուստ գաղութներ, նույնիսկ Սիրիան, Լիբանանն ու Կիլիկիան: Բայց երբ Ֆրանսիական (Վիչի) կայսերական ձգտումներն արթնացան եւ Գերմանիայի հետ համագործակցելու նշաններ ի հայտ եկան, հիշյալ գաղութները այս կամ այն ձեւով խլվեցին ու հանձնվեցին տեղացի ժողովուրդներին տնօրինութեանը: Իտալիայից, որը Ֆրանսիան եւ Կենտրոնական Եվրոպան հավասարակշռելու համար Անգլիայի թուլտուլութեամբ մեծացավ, խլվեցին Տոտեգանեզյան (Դոդեկանեսյան) կղզիները եւ հանձնվեցին Հունաստանին: Պատճառն այն էր, որ նա վերջին պատերազմի ընթացքում ապացուցեց, որ կարող է վտանգավոր դառնալ իր առանցքի համար: Իսկ մնացածներն էլ (իրենը լինեն, թե մեկ ուրիշինը) անպայման այնպիսի բնույթ պետք է ունենան, որ չկարողանան վտանգավոր դառնալ կայսերական ճանապարհների համար: Այս շարքի մեջ են թե Սուդանի եւ թե Պաղեստինի հարցերը, որոնք անշուշտ իրենց լուծումը պիտի ստանան: Բայց լուծում կարող են ստանալ միայն այն պարագայում, երբ նպաստեն Անգլիայի առանցքի ապահովութեանը:

Ռուսաստանն էլ հետագայում կարող է վտանգավոր դառնալ, թեեւ մինչեւ այսօր, գործնականորեն, թշնամանք ցույց չի տվել: Միայն մի հանցանք է գործել Ռուսաստանը..., որ իջել է Կովկասյան լեռներից եւ հասել Արաքս՝ դրացի դառնալով Անգլիայի առանցքին: Եվ սրա համար է, որ երբ 1878-ին Ռուսաստանին հաջողեց գրավել Կարսն ու Արդահանը, ապահովութեան համար, իբրեւ հակակշիռ այդ առաջխաղացման, Անգլիան էլ Կիպրոսը գրավեց՝ հակառակ ազգերի ինքնորոշման սկզբունքի, քանի որ Կիպրոսը հունական է, եւ Հունաստանի ազատագրողն էլ Անգլիան է՝ ազգերի ինքնորոշման սկզբունքով: Այդ սկզբունքը Կիպրոսի մեջ չէր կարող իրագործվել, քանի որ Ռուսաստանը Միջերկրականի արեւելյան ավազանում սպառնում էր Անգլիայի առանցքին:

Բնիկ ժողովուրդների (որոնք գտնվում են Բրիտանական կայսրութեան առանցքի վրա) ճակատագիրը որոշված պետք է համարել: Նրանք պիտի գտնվեն թույլ վիճակում, այնքան ուժ չպետք է ունենան սեփական կարողութեամբ առանցքը խորտակելու համար, որի վրա

հենված է 500 միլիոնանոց գաղութապետությունը, սակայն, նաև նրանք պետք է լինեն այնքան ուժեղ, որ կարողանան պաշտպանել իրենց պետության սահմանները, առանց Անգլիայի հակառակորդներին հենարան դառնալու: Թույլատրվում է իրենց ներքին կյանքում ազատություններ ունենալ՝ միայն երկու վերապահությամբ. բոլոր ռազմական հենակետերը անմիջականորեն պետք է գիջվեն կայսրության առանցքին՝ իբրև ապահովություն, եւ իրենց արտաքին քաղաքականության մեջ պետք է դառնան Անգլիայի արբանյակը: Այս վիճակը ձեռնտու է թույլերին, բայց տհաճ՝ մեծ ախորժակ ունեցողների համար:

Ուրիշ ճակատագիր ունի ռուսական Մոսկվա-Հեռավոր Արեւելք ճանապարհը: Ոչ մի արտաքին ուժ նրան տիրելու ցանկություն չի դրսևորում, որովհետեւ բացի իր երկու ծայրամասերից, անմատչելի է բոլորի համար: Այն կարելի է գրավել Մոսկվան եւ Վոլգան կամ էլ Ջինաստանը ձեռք գցելով: 1812-ին Բոնապարտը, Անգլիային ծնկի բերելու համար, փորձեց գրավել Մոսկվան: Գրավեց Մոսկվան, բայց Վոլգան չառնելու պատճառով պարտվեց: Երկրորդ փորձը կատարեց Ճապոնիան՝ 1905-ին մտնելով Մանջուրիա, բայց չհամարձակվեց Մոսկվայի ճանապարհով ավելի առաջ գնալ: Ձախողվեց իր թիկունքի թուլության պատճառով: Երրորդ փորձը կատարեց Հիտլերը՝ հակառակ Բիսմարկի կտակի: Հասավ Մոսկվա, հասավ Վոլգա, բայց պարտվեց զորավոր ցրտին ու ցեխին: Այսպիսով, Ռուսաստանի ճանապարհը ապահով է այնքան ժամանակ, քանի գործում է: Նրա գլխավոր պաշտպանը տարածություն է ու բնությունը: Այդ ճանապարհի երկայնքի վրա ապրող բնիկները կարող էին վտանգ ներկայացնել: Ռուսաստանը դրա դեմ ունի իր ներքին քաղաքականությունը, որը մահաբեր է նման փորձերի հանդեպ: Նրա նշանաբանը կարելի է բնորոշել մեկ խոսքով՝ «ՌՈՒՍԱՅՈՒՄ»: Շատ թե քիչ մնացած ժողովուրդները միայն մեկ ելք ունեն ապրելու՝ ռուսանալ եւ դառնալ Ռուսաստանի առաջապահը: Այդպիսին էր Ջինգիզ խանի քաղաքականությունը, որը դրական արդյունք տվեց... ներկայումս այն ժառանգաբար շարունակվում է Ռուսաստանի կողմից:

Ասիայի եւ Եվրոպայի երկու մայր ճանապարհների վիճակի նկարագրությունը, իրական կացությունը եւ մրցակցությունները, մեզ բերում են հետեւյալ եզրակացությունների.

ա. Որ «Դեպի Արեւելք» նշանաբանը երկու ճանապարհների վրա լրիվ իրագործված է: Եվ Արեւելքը իր «Դեպի Արեւմուտք» նշանաբանով պարտված է:

բ. Հաղթություն արդյունքը մնացել է հյուսիսային կողմում՝

Ռուսաստանի, հարավային կողմում՝ Անգլիայի ձեռքում:

դ. Որ այս երկու կայսրությունները փոխադարձաբար ո՛չ շահ, ո՛չ էլ հնարավորություն ունեն երկու ճանապարհների տիրապետության համար մրցելու, եւ նրանց շահերը համընկնում են այդ երկու ճանապարհների վերջավորության վրա:

դ. Որ, թեեւ ամբողջ Եվրոպան դեմ է երկու կայսրությունների մենատիրությանը՝ երկու մայր ճանապարհների վրա, բայց անկարողության է մատնված, եւ տվյալ պայմաններում իրերի վիճակը կմնա այն, ինչ որ ներկայումս կա:

ե. Որ, իրերի վիճակը կարող է փոխվել, երբ երկու կայսրությունները ներքին պատճառներով փլուզվեն, երբ նրանք իրար բախվեն, երբ Դեղին ցեղը կարողանա գլուխ բարձրացնել անցյալի նման, երբ գիտությունը անարժեք դարձնի ծովային եւ օդային ուժը:

Բայց այս եզրակացությունները ճիշտ պիտի լինեին, եթե միայն այդ երկու մայր ճամփաները նկատի առնենք եւ հաշվի չառնենք երրորդ ճանապարհը, որի մասին ոչինչ չխոսեցինք, բայց որը փոխում է թե՛ ընդհանուր կացությունը, թե՛ փոխհարաբերություններն այդ երկու կայսրությունների միջեւ:

Աշխարհի կարգերի փոփոխության, երկու կայսրությունների կայունության եւ տապալման բանալին գտնվում է Պոլիս-էրզրում-Թեհրան-Հեռավոր Արեւելք եւ Հնդկաստան ճանապարհի վրա, որին առանձին կանդրադառնանք:

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ՍԽԱԼԸ

1940 թվականի սկզբներին ծանր օրեր էին, քանի որ Անգլիան միայնակ էր մնացել: Օրերի հարց էր համարվում Եգիպտոսի անկումը: Հունաստանում ծովն էին թափվել անգլիական ուժերը, Մալթան, Ջիբրալթարը հուսահատ պայքարի մեջ էին, եւ Կահիրեի փոքրիկ բանակը ավելի մահվան էր սպասում, քան հաղթանակի: Անգլիական սպայակույտի անդամ եւ ինձ բարեկամ մի գնդապետ ընդհանուր մտահոգության մեջ կասկածով էր նայում իմ հանգստությանը, եւ երբ ես նրան հավաստիացնում էի, որ նույնիսկ, եթե ձեզ քչեն Եգիպտոսից ու ծովը թափեն, ինչպես Դունքերքում (Դյունքերք) կամ Սինգապուրում, դարձյալ ոչ մի աղետ... քանի որ ձեզ դաշնակից է Հիտլերին ներշնչող «նախախնամությունը», որը սխալ ճանապարհ է ցույց տալիս Ֆյուրերին: Ի վերջո նա կործանվելու է, իսկ դուք հաղթելու եք, եթե

եղած «բլիցներին» չահաբեկվեք:

Մայիս ամսին ինձ կանչեցին գլխավոր շտաբից եւ հետեւյալ հարցերն ուղղեցին.

-Ենթադրենք, թե օգոստոս ամիսն է... թե Ռուսաստանը մեզ հետ է, դուք էլ Հիտլերի տեղն եք՝ առանց աստվածային ներշնչման: Ի՞նչ ճամփով կջանայիք մեզ եւ Ռուսաստանին խորտակել:

Հարցերը վերացական էին, քանի որ այլ տվյալներ, բացի Ռուսաստանի հավանական դաշնակցությունից, չէր տրվել:

Տրված գրավոր գեկուցմանս մտքերը հետեւյալներն էին.

ա. Եթե Հիտլերի տեղը լինեի կզգուշանայ մտնել Ռուսաստան, այլ կպաշտպանվեի

բ. Ամբողջ Եվրոպան, որ գրավել էի, կաշխատեի սիրաշահել եւ բանակներս այնտեղ թեթեւացնել

գ. Անգլիա չէի մտնի, այլ կգբաղեցնեի

դ. ԱՖրիկայից զորքերս դուրս կբերեի՝ թողնելով այն Իտալիայի տնօրինությանը

ե. Ուժերս կկենտրոնացնեի Բալկաններում եւ առաջին հերթին կմտնեի Պոլիս

զ. Առաջխաղացման երկրորդ քայլս կանեի դեպի Էրզրում

է. Երրորդ քայլով կհաստատվեի Ամանոսում, Քիրքուկում, Թավրիզում, Բաքվում

ը. Չորրորդով հասնելու էի Թեհրան, Քարբուլ, Մերվ, եւ երբ դա հաջողեի, նոր պետք է մտածեի Ամանոսից Սուեզ, Բասրա եւ Քարբուլից Հնդկաստան իջնելու մասին: Իսկ երբ Մերվից հասնեի Վոլգա, նոր միայն հրաման կտայի մտնել Ռուսաստան:

Իհարկե այս երթուղին նորություն չէ, եւ ես չեմ այն հնարել: Այն համապատասխանում է նախորդ պատերազմի ժամանակ հետապնդած ծրագրին, որը թույլ կերպով իրագործվեց թուրքական եւ գերմանական հրամանատարության կողմից: Այդ ճանապարհով առաջնորդվել էին նախորդ աշխարհակալները՝ մակեդոնացիներից ու պարսիկներից սկսած, մինչեւ լենկթեմուրները: Բարեբախտաբար Հիտլերը այդ ճանապարհը չբռնեց եւ, բարեբախտաբար, փորձանքից խուսափեցին ոչ միայն երկու հակամարտող կայսրությունները, այլեւ մարդկությունը:

Թեպետ այս ամենը նկատի առնվեց ու վերջին պատերազմի ժամանակ չգործադրվեց, բայց նրա կարեւորությունը մնում է նույնը: Ուստի ինչ որ պիտի նկարագրեմ, վերոհիշյալ տեղեկագրի բացատրականը պետք է համարել:

ՃՈՒԳԱԿՇԻՌ ՊՈԼԻՍ ԵՎ ԼՈՆԴՈՆ-ՄՈՍԿՎԱ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Տեսանք, որ Ասիայի երկու ճանապարհներից մեկը՝ Մոսկվա-Միբիր-Հեռավոր Արեւելք, գուտ ցամաքային ուղի է, իսկ մյուսը՝ Լոնդոն-Սուեզ-Հեռավոր Արեւելք, գուտ ծովային: Եվ այս երկու մայր ճանապարհները միշտ Արեւելքից տանելու են Արեւմուտք, կամ հակառակը, առանց հնարավորություն ունենալու շեղվելու ո՛չ հարավ, ո՛չ հյուսիս, քանզի առաջինը հյուսիսից պաշարված է Սառուցյալ օվկիանոսով, իսկ հարավից՝ Գոբի անապատներով, իսկ երկրորդը՝ Միջերկրականի եւ Կարմիր ծովի օվկիանոսի անապատներով:

Պոլսի ասիական ճանապարհների նկարագիրը նման չէ ո՛չ առաջինին, ո՛չ երկրորդին: Այն ընկած լինելով երկու ճանապարհների միջեւ (Մոսկվայի եւ Լոնդոնի), Սեւ եւ Միջերկրական ծովերի ավազանների միացման կետում՝ իր Բոսֆորի ու Դարդանելի նեղուցներով, իրենից ներկայացնում է Եվրոպայի միակ ծովային ուղին, որը հյուսիսից - հարավ խաչաձևվում է Լոնդոն-Սուեզ-Հեռավոր Արեւելք ճանապարհի վրա:

Պետք չէ մոռանալ, որ այս ուղին համարյա ամբողջ Եվրոպայի տնտեսական ու քաղաքական կյանքի երակն է, որովհետեւ նրա վրա են հենված պետութայինների ու ժողովուրդների մեծամասնությունը: Սեւ ծովի ավազան ասելով պետք է հասկանալ ոչ միայն այդ ծովի օվկիանոս, այլև Ազովի ծովի, Դոնի, Դնեպրի, Բուգի եւ այլոց գետահովիտները, որոնք նավարկելի են եւ միացված Ռուսաստանի խորքերի հետ: Պետք է հասկանալ եւ Դանուբի հովիտը, որ նավարկելի է եւ որի վրա է հենված Բալկանների մեծ մասը, ողջ Կենտրոնական Եվրոպան, մինչեւ Բեռլին եւ այլն: Այս տարածքները, որտեղ 300 միլիոն ժողովուրդ է ապրում, իրենց ամբողջ տնտեսական կյանքով, հաղորդակցական եւ քաղաքական հաշիվներով՝ գալիս են խտանալու Բոսֆորի առջեւ: Իսկ Միջերկրականի մնացած ժողովուրդները՝ թվով շուրջ 200 միլիոն, իրենց շահերով միանում են Դարդանելի առջեւ: Այսպիսով այդ նեղուցների հարցը Եվրոպայի համար ավելի մեծ կարեւորություն է ստանում, քան Զիբրալթարը, Սուեզը, կամ էլ Մոսկվա-Հեռավոր Արեւելքի ճանապարհները:

Հարցը ավելի է բարդանում, եթե նկատի առնենք երկու նեղուցների միջեւ գտնվող, Պոլսի վրայով անցնող ցամաքային ճանապարհները: Արեւմտյան եւ Կենտրոնական Եվրոպայի բոլոր ցամաքային ճանապարհները Բալկանների վրայով գալիս են խտանալու Պոլսում:

Ուրեմն 400-500 միլիոն ժողովուրդների համար Պոլիս կետը, իր ցամաքային ուղիներով, խիստ կենսական է: Ինչպես նշեցինք սկզբում, այդ կետից սկսած ցամաքային ուղին անցնում է երկու ճյուղով, մեկը ուղիղ դեպի Արեւելք՝ էրզրում - Թեհրան - Մերվ՝ Մոնղոլիա հասնելու համար, կտրելով Մոսկվա-Միբիրյան ճանապարհը, իսկ մյուսը՝ Ալեքսանդրեթի վրայով հարավարեւելք՝ Հնդկաստան հասնելու համար:

Այսպիսով՝ Պոլսի ճանապարհը հետեւյալ առավել լուծյուններն ունի մնացած ճանապարհների համեմատ.

ա. Ավելի կարճ է՝ մինչեւ Հեռավոր Արեւելք եւ Հնդկաստան

բ. Բարեխառն է եւ անցնում է մարդաշատ շրջաններով

գ. Մառայում է երկու ճանապարհների (Լոնդոնի եւ Մոսկվայի) միջեւ որպես շաղկապող

դ. Կարող է Մոսկվայի ճանապարհը կտրել եւ Ռուսաստանի թիկունքը անցնել

ե. Կարող է ցամաքով Հնդկաստան մտնել եւ Լոնդոնի ճանապարհը կտրել:

Այս հինգ առավել լուծյունները Պոլսի ցամաքային ուղիներին տալիս են այնպիսի ռազմավարական դիրք, որը կարող է սպառնալիք դառնալ մյուս երկու ճանապարհների գոյության համար: Այստեղից դժվար չէ եզրակացնել, որ Պոլսի կարեւորությունը պետք է չափել ոչ միայն իր նեղուցների առավել լուծյուններով, այլեւ նրա ցամաքային ճանապարհներով:

Լոնդոնի ու Մոսկվայի ասիական ուղիների հետ համեմատած մի երրորդ տարբերություն էլ ունի Պոլսի ասիական ճանապարհը: Մոսկվայի ճանապարհը միապաղաղ է. նույն կլիման, նույն անտառները, նույն հարթավայրերը՝ երբեմն-երբեմն գետերով կտրված, որտեղով անցնողը իր առջեւ կտեսնի անվերջանալի տարածություններ, որոնք առանց խոչընդոտի ձգվում են մինչեւ Բայկալ լիճը: Պոլսի ճանապարհը ընդմիջվում է տարբեր կլիմաներով, այլազան տեսարաններով, արգելքներով ու բազմազգ բնակչութամբ: Ճանապարհի ամբողջ երկայնքը զրահանավերի նման բաժանված է անջատ մասերի՝ իրար կապված միայն մի քանի անցքերով, որոնք կարող են բացվել եւ փակվել ըստ մարդկային բարյացկամության եւ կամքի: Այդ կամքը Մոսկվայի նման կենտրոնաձիգ ուժ չի կարող լինել, այլ ապակենտրոն ուժերի հավաքականութամբ միայն, քանի որ յուրաքանչյուր բաժանմունք ունի եւ ունեցել է սեփական իշխանությունը եւ իր բնույթը:

Այս բնական վիճակի թերությունն այն է, որ ճանապարհի ամբողջականությունը կենտրոնաձիգ ղեկավարութամբ անհնար է

օգտագործել, այլ հնարավոր է միայն ապակենտրոն համաձայնուլթյամբ: Իսկ առավելուլթյունն այն է, որ եթե ճանապարհի մի մասը վտանգվի, մյուս մասը կմնա անխորտակելի՝ վտանգված զրահանավի նման: Առավելուլթյունն այն է, որ Մոսկվայի ճանապարհը կարելի է դիակ դարձնել միայն Մոսկվան կործանելով, իսկ այս ճանապարհը նման է անձրեւորդի, որին սպանելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր օղակն առանձին-առանձին սպանել, որպեսզի այլեւս չկենդանանա: Ամեն մի մասը, մինչեւ լրիվ զարգացումը, առանձին կարող է շարունակել իր կյանքը՝ երկարելով Պոլսից մինչեւ Հնդկաստան:

Այս դրուլթյան պատճառով Պոլսի ցամաքային ուղիները պետք է քննել մաս առ մաս՝ իրենց գլխավոր բաժանումներով: Այդ բաժանումներից գլխավորներն են.

- ա. Պոլսի եւ Անատոլիայի զույգ ճանապարհները
- բ. Հայաստանի եւ շրջակայքի ճանապարհները
- գ. Ամանոսի եւ Կիլիկիայի ճանապարհները
- դ. Թուրքեստանի եւ Միջագետքի ճանապարհները
- ե. Թեհրանի եւ Իրանի ճանապարհները
- զ. Կենտրոնական Ասիայի եւ Հեռավոր Արեւելքի ճանապարհները
- է. Աֆղանստանի եւ Հնդկաստանի ճանապարհները
- ը. Ամանոսի եւ Եգիպտոսի ճանապարհները

Մրանց ամբողջուլթյունն է, որ միասնաբար կազմում է Պոլսի ճանապարհը դեպի Արեւելք, որոնցից երեքի՝ Պոլիս, Ամանոս եւ Հայաստան ճանապարհների վրա պիտի ծանրանանք:

ՄՐՅԱԿՅՈՒԹՅՈՒՆ ՊՈԼՍԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Բոսֆորի դռների տակ են կենտրոնանում թվով 300 միլիոն հյուսիսային ժողովուրդների շահերը, իսկ Դարդանեղոս՝ 200 միլիոնի հասնող Միջերկրականի երկրների ժողովուրդների շահերը: Պոլիսը Եվրոպայի ժողովուրդների եւ Ասիայի բնակչուլթյան հաղորդակցուլթյան կենտրոնն է ու միակ միջանցքը: Մյուս կողմից, այս շրջանը լինելով բազմաթիվ ժողովուրդների շահերի առանցքը, բնական է, պիտի կորցնեւ գուտ ազգային կերպարանքը, եւ բնակչուլթյունը պետք է լինեւ բազմազգ ու խառնիճաղանջ կերպարանք պիտի ստանար:

Պոլսի շուրջ եղած մրցակցուլթյունները հռոմիացիներից դեռ շատ առաջ էլ գոյուլթյուն ունեին: 395 թվականին, երբ Հռոմեական

կայսրությունը բաժանվեց երկու մասի, այն դարձավ Հռոմեական Արեւելյան կայսրության մայրաքաղաքը: Մինչեւ այսօր ազգերի պայքարը Պոլսի համար շարունակվում է եւ պայքարողներին կարելի է բաժանել հետեւյալ խմբերի.

- ա. Պատմական տվյալներով ժառանգորդ ներկայացողներ
- բ. Աշխարհակալական նպատակներով գրավել փորձողներ
- գ. Տնտեսական եւ հաղորդակցական նպատակներ հետապնդողներ:

Պատմական թեկնածուներ

395 թվականին Հռոմեական կայսրության կենտոնը մինչեւ 582 թվականը դարձավ Բյուզանդիոնը կամ Կոստանդնուպոլիսը: Հռոմը կարողացավ պահել իր հռոմեական կերպարանքը, թեեւ օր օրի աղճատվում էր նրա դիմագիծը, հիմնականում հայ եւ հույն տարրերով: Այս 187 տարիների հռոմեական կյանքը պատճառներից գլխավորն է, որ իտալացիների մեջ մի հոսանք կա, որ իրենք իրենց դիտում են որպես Հռոմի ժառանգորդ եւ այս պատճառով էլ մի նոր ձգտում՝ դեպի Պոլիս: Հավանական է, որ Փաշչիգմի անկումով այս հոսանքը իր թափը կկորցնի:

Երբ Հռոմը կորցրել էր իր ուժը, մայրաքաղաքն ու կայսրությունը դեռեւս պահում էին իրենց գոյությունը, չնորհիվ հայ ղեկավարների եւ Հայաստանից եկող հայ կամավորական բանակների: Այդ ղեկավարներից Մորիկը խլեց հռոմեական գահը եւ ժառանգեց կայսրությունը: Դրանից հետո մի քանի տասնյակ տարիների ընդմիջումով (582-1028) Բյուզանդական գահի վրա բազմեցին հայ կայսրեր: 446 տարիների ընթացքում հայ կայսրերի իշխանության հենարանը թեեւ հիմնականում հայ կամավորներն են եղել, բայց նրանք միշտ գործել են բյուզանդական եւ օրթոդոքս կրոնական շահերի տեսանկյունից: Նրանք ջանացել են միջազգային բնույթ տալ իրենց իշխանությանը, քանի որ մայրաքաղաքն ու կայսրությունն արդեն ունեին այդ նկարագիրը: Հայկական տիրապետությունը վերացավ այն ժամանակ, երբ Հայաստանը սելջուկների արշավանքների կենտրոն դարձավ: Սա զուգադիպություն էր. այս ամենի բուն պատճառը այն էր, որ հայ կայսրերի պաշտպանողական ուժը թուլացել էր Հայաստանի իշխանությունների քայքայումով եւ նրանց կամավորների թվի նվազեցումով: (Տէս հատորի վերջում հայ կայսրերի անվանացանկը թվականներով):

Թեպետ Բյուզանդական կայսրության կյանքի տեւողության մեկ երրորդը հայերն են եղել, բայց այդ կարեւոր պարագան մոռացել է հայությունը եւ իրեն չի համարում այդ կայսրության ժառանգորդ եւ

չահագրգռված է իր այդ կենտրոնի առեւտրական եւ քաղաքական ազատությամբ միայն՝ տնտեսական շահերից թելադրված:

Սելջուկների ճնշումը հայության վրա հույների համար Բյուզանդական կայսրությունը ժառանգելու ճանապարհ բացեց:

1028-ից մինչեւ 1453 թվականը Բյուզանդիայի մեջ գերակշիռ է դառնում հույների եւ մասամբ էլ սլավոնների դերը: Կայսրական գահին հույներ են նստած, բայց այս կայսրերն ու նրանց իշխանությունը, ինչպես հայերի ժամանակ, նույնպես խուսափում են իշխանությանը հունական ազգային կերպարանք տալ: Ապավինում են օրթոդոքս դավանանքին եւ նրա միջոցով միավորում կայսրության տարամերժ հատվածները: Բայց սլավոնականությունը, որը նույնպես օրթոդոքս էր, իր ազգային, տնտեսական եւ հոգային ճնշումներով, մանավանդ Բալկաններում թուլացնում է հույների ուժը: Թուլացած Բյուզանդիան կորցնում է իր տիրապետությունը եւ հանձնում է կայսրական գահը նոր իսլամադավան տարրին՝ Օսմանյան կայսրությանը:

Հույները 425 տարի իշխելուց հետո, թեեւ 495 տարի է արդեն կորցրել են Բյուզանդիան, բայց չեն մոռացել իրենց անցյալը եւ ձգտում են կրկին տիրել այդ գահին:

Մուհամեդ օսմանյան սուլթանը տիրեց Պոլսին: Թուրք էր, բայց իր իշխանությունը, նախորդ հայ եւ հույն կայսրերի նման, չհենեց թուրք ազգային տարրի վրա: Կայսրությունը պահելու տեսակետից դա կործանարար կլիներ: Նրա սերունդը, որ իշխեց մինչեւ 1921-ը, կայսրության պահպանման ու ձուլման համար խարխսի համարեց եւ կառավարման հիմնական գիծ ընդունեց կրոնական աղանդավորությունը: Ընդունեցին իսլամը, սուննի դավանանքը: Դա էր, որ միացրեց կայսրությունը ու թեեւ միջոտ պատերազմների մեջ էին գտնվում շիաների ու քրիստոնյաների դեմ, սակայն պահեց իր գահը 464 տարի: Թուրք ժողովուրդը, ինչպես նաեւ իսլամադավան այլ ազգեր, տիրելու համար, սուննի աղանդը դարձրեցին իրենց հիմնական գենքը՝ առանց խրախուսելու որեւէ ազգային վերագարթոնք եւ հենվելով միայն նրանց կրոնական զգացմունքների վրա:

Այս աստվածապետական ուժի օգտագործումը պատճառ էր, որ Բյուզանդիական կայսրությունը տիրական լինի սկզբից մինչեւ միջնադարի կեսերը ոչ միայն Պոլսի եւ ցամաքային ու ծովային ճանապարհների, այլեւ ամբողջ Միջերկրական եւ Սեւծովյան ավազանների վրա, որոնք լճեր էին դարձել կայսրության սահմանների ներսում: Այս հանգամանքը լրիվ իրավունք էր տալիս Բյուզանդական երեք տեսակի կայսրություններին Պոլսը համարելու իրենց

մայրաքաղաքը, իսկ նրա կողքերով եւ միջով անցնող նեղուցներն ու ցամաքային ճամփաները՝ իրենց սեփականությունը: Սրան արժանի էին Բյուզանդական եւ Նալիֆայական կայսրությունները, քանի որ Արեւելքի եւ Արեւմուտքի ճակատագիրը իրենց ձեռքում էր եւ պետք էր, որ նրանց հանգուցյ Պոլիսն էլ իր բոլոր անցքերով դառնար իրենց մայրաքաղաքը:

Նախորդ պատերազմի ավարտին հեռատես ու հանդուգն Մուստաֆա Քեմալ փաշան հասկացավ, որ նման իրավիճակը այլեւս չի համապատասխանում ընդհանուր կացության հետ եւ պետք է հիմնովին փոխել հին կարգերը՝ նորը հաստատելու համար, որ թուրք ժողովուրդի ապագան ավելին արժե, քան գոյություն ունեցող նախապաշարումները: Նա նկատեց, որ.

Ա. Կրոնական, ազանդավորական (քրիստոնյա թե մահմեդական) ուժը ստեղծել էր հսկա մի կայսրություն՝ իր մեջ առնելով Եվրոպայի եւ Ասիայի կարեւոր շրջանները: Թեոկրատիկ իշխանությունը արդեն դարձել էր ժամանակավրեպ, այնինչ ազգային զգացմունքը միայն կարող էր դառնալ պետության հենարանը: Եվ որպես հետեւանք այս համոզման հրաժարվեց օսմանյան եւ իսլամական հին գաղափարներից: Գահընկեց արեց խալիֆին՝ պետական նոր կառույցի հիմք ընդունելով թուրք ազգությունը:

Բ. Ըմբռնեց, որ Բյուզանդիան մայրաքաղաք էր, որովհետեւ իր սահմանների մեջ էր ներառում բազմաթիվ ժողովուրդների ընդարձակ տարածքներ՝ դառնալով միջազգային կենտրոն: Ներկայումս, երբ նրանք բոլորը ինքնորոշված են եւ առանձնացած, նույնիսկ իսլամական երկրներն են բաժանված, Պոլիսը չէր կարող մնալ թուրքիայի մայրաքաղաքը: Այն դարձել էր գավառական կենտրոն: Մայրաքաղաքը փոխադրվեց Անկարա:

Այս կարգադրությունների տրամաբանական շարունակությունը պետք է լիներ այն հաստատումը, թե թուրք ազգի շահերից չէր բխում եւ կարողություններից վեր էր իր ներսում պահել մի կենտրոն, որ միջազգային մրցակցության առարկա է, եւ որտեղ իրենից ավելի ուրիշ շահագրգիռ կողմեր էլ կան: Չպահանջեց, որ առանձնանա այն ձեռով, որպեսզի իր անվտանգությունը չվտանգվի, բայց այդ արդեն հասկանալի պիտի լիներ, եթե ավանդապաշտությունն ու սնափառությունը չհակառակվեին:

Ինչպես տեսնում ենք պատմական ավանդություններ ունեցող ժողովուրդների համար իրական դժվարություններ չկան լուծելու համար Պոլսի, Բոսֆորի ու Դարդանեղի կնճիռները: Նրանց բացասական վերաբերմունքն էլ անարժեք է, որովհետեւ ուժ չունեն

դիմադրելու միջազգային կամքին ու շահերին: Կամա թե ակամա պետք է ընթանան այն ուղղությամբ, որ կամքը թելադրում է: Բայց այդ կամքը գոյություն չունի, այդ կամքը իմպերիալիստական պետությունների ձեռքին է, որոնք իրար հակառակ են:

ԱՇԽԱՐՀԱԿԱԼԱԿԱՆ ՄՐՅԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեծ պետություններից առաջին գծի վրա է գալիս Ռուսաստանը, որն աշխարհակալական միտումներով ձգտում էր տիրանալ Պոլսի նեղուցներին ու ցամաքային ճանապարհներին: Այդ ձգտումը այնքան հին է, որքան Ռուսաստանը աշխարհակալ պետություն է: Նա Պոլիսը համարում է ցարգրադ եւ նրա ուղիները՝ բնական ճանապարհներ, որոնք խլվել են իրենից: Ինքնիրեն համարում է Բյուզանդիայի ժառանգորդը, քանի որ ինքն էլ դավանանքով ուղղափառ է, օծված պատրիարքի կողմից, բյուզանդական կայսրերի հաճությամբ: Ուղղափառությունը մի գենք է աշխարհակալական ձգտումներ իրագործելու համար: Նեկայումս, չնայած Ռուսաստանը պաշտոնապես անկրոն է, բայցեւայնպես բոլշևիկները օրթոդոքս պատրիարքարանը համարում են հենարան եւ դյուրին միջոց՝ ցարական իդեալները իրականություն դարձնելու համար: Բայց այս բոլորը, իհարկե, ամբոխի զգացմունքները շոյելու համար են. բուն պատճառը պաշտպանողական եւ հարձակողական նպատակների մեջ է, որոնք հետեւյալներն են.

Ա. Նա տերն է Մոսկվա - Սիբիր արեւելյան ճանապարհի: Պոլիսը կամրջագլուխ է, երկրորդ, բայց պվելի հարմար մի ճանապարհ է: Եթե այնպես պատահի, որ այդ կամրջագլուխը ընկնի կենտրոնական կամ էլ արեւմտյան Եվրոպայի որեւէ մի հզոր ուժի ձեռքը, այդ ժամանակ իրեն պատկանող ճանապարհը կարժեգրկվի:

Բ. Պոլիս-Հեռավոր Արեւելք ճանապարհի երկու մասերը արդեն արեւելքում, մինչեւ Պարսկական սահմանը, գտնվում են նրա ձեռքում: Ջի տիրացել միայն Պոլիս-էրզրում-Թեհրան ճանապարհին: Բնական է համարում այն, որ այդ մեկ երրորդ մասն էլ իրեն պատկանի, այն մտավախությամբ, որ կարող է ընկնել կենտրոնական կամ արեւմտյան Եվրոպայի պետություններից որեւէ մեկի ձեռքը՝ դրանով վտանգելով ոչ միայն իր ունեցած մասը մինչեւ Մերվ, այլեւ Կասպից ծովի թիկունքից, կղառնա խոցելի:

Գ. Ռուսաստանը հենված է Սեւ եւ Ազովի ծովերի վրա, որոնք առանց

Բոսֆորի փակ են: Տնտեսական եւ պաշտպանողական տեսակետից հսկայական վնասներ կունենա Ռուսաստանը, եթե Թուրքիայի փոխարեն նեղուցները գրավվեն կենտրոնական կամ արեւմտյան Եվրոպայի պետութիւնների կողմից: Այդ պարագայում ինքը դառնում է բանտարկված ու ենթակա հարձակման:

Դ. Ինքն ազատագրել է Սերբիան, Բուլղարիան, որպեսզի Բալկաններում իր ազդեցութիւնը մեծանա: Ուզում է ազդեցութիւն ու հակակշիռ ունենալ կենտրոնական Եվրոպայի վրա: Անհրաժեշտ է, որ հիշյալ պետութիւնները բանտարկված մնան Ս եւ Տ ու Ք ու Բալկանների մեջ: Այս ամենը իրականացնելու եւ պահելու միակ միջոցը Պոլսի վրա հաստատ հակակշիռ ունենալու կամ նրան տեր դառնալու մեջ է: Իսկ հարձակողական տեսակետից խնդիրը պարզ է: Եթե Պոլսը պատկանում է իրեն, ապա մինչեւ Թեհրան կարելի է համարել իրենը: Երբ այդ գիծը գտնվում է իր ձեռքում, ուրեմն Բրիտանական Կայսրութիւնը իր հարվածի տակ է: Եթե անկարող է ծովերից հարվածել նրան, պետք է հաջողացնի ցամաքից գրավել արաբական երկրները կամ Աֆղանստանի վրայով Հնդկաստան իջնել: Իսկ մյուս կողմից կենտրոնական Եվրոպան պիտի մնա իր արբանյակը եւ այդ ժամանակ է, որ նա կկարողանա դառնալ համաշխարհային պետութիւն:

Նման հաշիվների պատճառով է, որ Ռուսաստանի եւ Անգլիայի բոլոր կառավարութիւնները դաշնակիցներ են, երբ հարցը վերաբերում է կենտրոնական Եվրոպային: Երբ Անգլիան, հեռվից կամ մոտիկից ձգտում է հաստատվել Պոլսի ճամփաների վրա, դառնում է Ռուսաստանի ռիսերիմ թշնամին: Այս հարցում Անգլիան եւ Ռուսաստանը մահացու թշնամիներ են: Այս իրողութեամբ պետք է բացատրել Թուրքիայի, Իրանի ու Աֆղանստանի անկախութեան փաստը եւ նրանց ճանապարհների անգործածելի մնալը: Հայկական, մակեդոնական, քրդական հարցերի միշտ հրատապ լինելը, բայց միշտ անլուծելի մնալու պատճառը, պետք է փնտրել երկու մեծերի մրցակցութեան մեջ:

Երկրորդ կայսրապաշտ ուժը կենտրոնական Եվրոպան է՝ Գերմանիայի գլխավորութեամբ: Դանուբի վրա հենված ազգերի ելքը Ս եւ Տ ու Ք է, որը փակ է նեղուցներով: Ուրեմն նեղուցների հարցը նրանց համար նույնքան կենսական է, որքան Ռուսաստանի համար: Չունեն ոչ մի ճանապարհ Ասիայի հետ, չունեն ո՛չ մի դադուր եւ ո՛չ մի շուկա: Իրենց քաջութեամբ, կրթութեամբ եւ թվով ետ չեն մնում մնացածներից, որոնց օրինակով նրանք եւս կայսրապաշտական ձգտումներ ունեն, որը բացառապէս ուղղված է «Դեպի Արեւելք»՝ Պոլսի հետ համաձայնութեան կամ նրա նվաճման միջոցով: Այս ուժն

է, որ ամենից ավելի կոպիտ եւ պարզ կերպով ձգտել է տիրել, կամ իր ազդեցութեան գոտի դարձնել Պոլիսը եւ նրա ճանապարհները: Վերջին երկու համաշխարհային պատերազմների բուն պատճառը Պոլսին եւ նրա ճանապարհներին տիրելու հարցն է եղել: Այդ հոսանքը իր մեջ ներառել է նաեւ Բալկանները, որոնք թեեւ սլավոնական ծագում ունեն, բայց նյութական եւ այլ պատճառներով, մեծ մասով, հիմնականում, համընթաց են քայլել Կենտրոնական Եվրոպայի տարածողական քաղաքականութեան հետ: Ներկայումս այդ ուժը պարտված է: Նրա առաջ «պատնէշ» է քաշված մի կողմից սլավոնական, մյուս կողմից Անգլո-սաքսոնական ուժերով: Արդյո՞ք ամուր է այդ «պատնէշը» եւ տեւական. դա ցույց կտա ապագան: Բայց մի բան ակներեւ է, որ այդ ուժը թեկուզ արգելքի տակ առնված լինի, օրեցօր իր ուժով ճնշող կդառնա «պատնէշի» ամրությունների վրա, եւ եթե բնականոն ելք չգտնի, նոր պատերազմի առիթ կդառնա, եւ «Դեպի Արեւելք» նշանաբանը նորից հարուժյուն առնելով՝ ոտնակոխ կանի Պոլիսը: Այս ուժը թե Անգլիայի եւ թե Ռուսաստանի բնական հակառակորդն է:

Երրորդ կայսրապաշտ ուժը Անգլիան է՝ նույնքան հզոր, որքան Ռուսաստանը կամ Գերմանիան: Նա էլ Պոլսի նկատմամբ նույն պաշտպանողական ու հարձակողական ծրագրերն ու մտահոգություններն ունի: Եթե Ռուսաստանը իր առաջապահն է համարում Սերբիան կամ Բուլղարիան, Անգլիան նույն բանի համար ունի Հունաստանը: Նախորդ պատերազմի ժամանակ, թուրք-հունական բախումները եւ Դարդանեղի գրավումը անգլիացիների կողմից, ապացույց պետք է համարել Անգլիայի թե՛ պաշտպանողական, թե՛ հարձակողական նպատակների, որոնք առաջ են գալիս իր ինքնապաշտպանական ձգտումից: Ոչ միայն Ռուսաստանը, այլեւ Կենտրոնական եւ ամբողջ Եվրոպան դեմ է այս ձգտումների իրագործմանը, որովհետեւ հաջողութեան պարագայում ամենքը կընկնեն Անգլիայի հակակշռի տակ: Այս բանին հակազդելու համար Սովետները կարախանի եւ Չիչեքիին միջոցով ոտքի հանեցին Թուրքիան, ամեն աջակցութեամբ տալով՝ Մուստաֆա Քեմալին տեր ու տիրական դարձրին, միայն մեկ պայմանով, որ հեռացնի Անգլիային Պոլսի ջրերից: Այդպես էլ եղավ. Քեյ Ալիները Դարդանեղից իրենց անկանոն հեծելագործով եւ թրերով կարողացան քշել զրահանավերը, իսկ Իսթեթը Լոզանում պարտութեան մատնեց Լորդ Քերզոնին, որովհետեւ նրա թիկունքին կանգնած էր ժողովին չմասնակցող Չիչեքիին: Անգլիան հեռացավ այն մտքով, որ Պոլիս չպիտի գա նաեւ Ռուսաստանը: Այսօր Սովետական Ռուսաստանը մտածելով երեւի, որ իր ժամանումը Պոլիս եւ Նեղոսներ անհնար է առանց Անգլիայի համաձայնութեան, ջանում

է Թուրքիայի հետ առանձին բանակցություններով, գլուխ գլխի խոսակցություններով ստանալ գոնե բացառիկ իրավունքներ այնտեղ գինվորական հենակետեր ունենալու համար: Ապարդյուն փորձ, որովհետեւ, եթե Թուրքիան սրտանց էլ ցանկանա, այդ տաղտուկից ազատվելու համար Ռուսաստանին գիջումներ անել, չի կարող, քանի որ ոչ միայն Լոզանի, այլեւ Մոնթրոյի համաձայնագիրը կա, ուր Թուրքիան ճանաչվել է Պոլսի եւ նրա շրջակայքի ձեւական տերը, բայց իրական տերը ծանոթ դաշնագիրը ստորագրող պետություններն են: Թուրքիայի միակողմանի համաձայնությունը Ռուսաստանի հետ համազոր կլինի նրա արբանյակը դառնալուն՝ թշնամի դառնալով ոչ միայն Անգլիային, Արեւմտյան եւ Կենտրոնական Եվրոպային, այլ նաեւ հեռավոր Ամերիկային, եւ այդ բանը կարող է նոր պատերազմի դուռ բացել: Իսկ մյուս կողմից, Թուրքիայի գոյության հարցը դառնում է հարցական:

Մեծ պետությունների գլխավոր շարժառիթները վերոհիշյալները լինելով, պարզ է դառնում, որ նրանցից յուրաքանչյուրը չի ցանկանա Պոլսի եւ նրա նեղուցների մեջ տեսնել իրենցից մեկի հաստատվելը. ուրեմն այս երեք ուժերի միջեւ ոչ մի արմատական համաձայնության եզր չի կարող լինել:

Երեք շահագրգիռ ուժերը իրար հավասար կշիռ ունեն, եւ եթե նրանցից մեկը որոշի գեներլ ուժով իրագործել իր ծրագիրը, մնացած երկու ուժերը կդաշնակցեն՝ այդ ուժը խորտակելու համար, ինչպես պատահեց վերջին երկու պատերազմների ժամանակ:

Ներկայումս, երբ Կենտրոնական Եվրոպան պարտված է եւ ասպարեզի վրա մնացել են միայն երկու ուժերը, համաձայնության գալը ավելի է դժվարացել, որովհետեւ հարցը վերաբերում է երկու կայսրությունների լինել-չլինելուն: Դա կարող է լուծվել միայն նոր պատերազմով, բայց այդ բանին դեռեւս այս պետությունները պատրաստ չեն:

Ուրեմն, կայսրապաշտական ուժերի կողմից խաղաղության հաստատում, ապահովություն ու ճանապարհների զարգացում պետք չէ սպասել: Ամեն ինչ կընթանա հին կարգով, եւ Թուրքիան կամա թե ակամա պետք է հսկի այդ ճանապարհները:

Թուրքիան, նստած լինելով կամրջագլուխ Պոլսի եւ նեղուցների մեջ, այնքան ուժ չունի, որ միջազգային այդ ճանապարհների վրայից կարողանա երեք ուժերն էլ չեզոքացնել: Ուրեմն բացահայտ կամ թաքուն երեքից մեկի կողմը պիտի լինի, ինչպես եղավ վերջին երկու պատերազմների ժամանակ Գերմանիայի կողմից, եթե ոչ իրավական, գոնե փաստացի:

Խաղաղության ժամանակ նա չի կարողանալու Ասիայի եւ Եվրոպայի միջազգային կապի իր դերը կատարել. պարտադիր կերպով պետք է անգործածելի վիճակի մեջ պահի ճանապարհները: Դա են թեկադրում թե՛ Անգլիայի, թե՛ Ռուսաստանի շահերն ու նրանց հակասությունները: Այսպիսով, Թուրքիայի ներկայությունը այնտեղ ավերածուծության կամ մահվան հոմանիչ պետք է համարել:

Տնտեսական – հաղորդակցական շահագրգռություններ

Պոլսի եւ նեղուցների հարցի լուծմանը պիտի հավատանք այնքանով, որքանով թեկադրում են բոլոր նրանց շահերը, ովքեր շահագրգռված են միայն նրա հաղորդակցական նշանակությամբ:

Դա հնարավոր կլինի, երբ այս գոտին ապասպառագինվի եւ հույս չկապվի այն բանի հետ, որ նրա գինումով կարելի է բախումների առաջն առնել: Լինի բոլորովին ազատ, առանց այս կամ այն պետութայն հետ միանալու իրավունքի, կամ որեւէ մեկ այլ պետութայն հովանավորությունը վայելելու, եւ երբ նրա միակ հովանավորը լինի Ազգերի Դաշնակցությունը: Երբ այդ փոքրիկ եւ անզեն շրջանը գոյություն ունենա իբրեւ անկախ եւ չեզոք պետություն, ավելի քիչ առիթ կտա աշխարհակալ պետությունների ախորժակները իր վրա հրավիրելու, իսկ եթե ունեցան, դա ավելի հստակ կդարձնի նրանց պատերազմի պատճառ լինելը, քան այն վիճակը, որը երաշխավորված է ներկա դաշնագրերով, որոնք խաբկանք են միայն: Այս միջոցով է, որ բոլոր ժողովուրդները կկարողանան օգտվել այդ միջազգային ուղիներից, եւ նրանք հարություն կառնեն ու աշխարհակալ ցանկությունները ավելի նվազ կդառնան, ինչպես եւ նրանց հետեւող պատերազմները:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՓՈՔՐ ԱՍԻԱՅԻ ՃԱՆԱՊԱՐ ՀՆԵՐԸ

Պոլսի պատերի տակից է սկսում Անատոլիան, որն ընկած է Պոլիս-Արեւելք տանող առաջին հատվածի վրա: Փոքր Ասիայի այս մասը երեք կողմից շրջապատված է ծովերով, իսկ մյուս կողմից խցանված է Հայաստանի եւ Կիլիկիայի լեռներով: Ֆրանսիայի չափ տարածություն ունի, նրանից ավելի հարուստ է, սակայն բնակչությամբ հինգ անգամ պակաս: Բնակեցված է հիմնականում թուրքերով, կամ ավելի ճիշտ՝ թուրքացած տեղացիներով: Այդ երկրամասը ունի 1000 կմ երկարություն եւ 450 կմ լայնք: Թուրքիայի 40.000 կմ երկարությամբ խճուղիները եւ երկաթգծերը, երկու մայր գիծ ունեն որպէս առանցք, որոնցից մեկը Հյուսիսից ուղղված է դեպի Եփրատ, մյուսը՝ հարավից դեպի Ջեյհան գետը՝ Կիլիկիա:

Հյուսիսից գնացող ճանապարհը սկիզբ է առնում Պոլսից եւ անցնում Անգարա-Սվազի վրայով: Այն դեպի էրզրում գնացող ամենակարճ ճանապարհն է, որն անցնում է հարթավայրերի, սարահարթերի միջով եւ ոչ մի դժվարության չի հանդիպում: Այդ նույն ճանապարհը, 1000 կմ երկարություն կտրելով, հասնում է Եփրատ:

Հիշյալ ճանապարհը, այն երջանիկ հատվածն է, որը հուսալիորեն պաշտպանված է իր 1000 կմ երկարության վրա: Սկիզբ առնելով Պոլսից՝ վերջանում է Եփրատի վրա: Հյուսիսից զբաղված է իրեն զուգահեռ ձգված Պոնտական լեռնաշղթայով, որն էլ իր հերթին պաշտպանված է Սեւ ծովի ափերով: Հարավից զուգահեռ ձգվում է Տավրոսյան անանցանելի լեռնաշղթան: Անատոլիայի երկրորդ մայր ճանապարհը նորից սկսվում է Պոլսից եւ դեպի հարավ-արեւելք ընթանալով, հասնում է Տավրոսյան լեռնաշղթային, որի անցքերը պատռելով հասնում է Ջեյհան գետին: Այս ճանապարհի երկարությունը ուղիղ գծով նույնպէս 1000 կմ է:

Այս երկու ճանապարհների վերջին հանգրվանները նույնանում են Թեհրանում եւ Հնդկաստանում, բայց այն տարբերությամբ, որ առաջինը կարճ եւ զինվորական ուղի է, իսկ մյուսը՝ մի քիչ ավելի երկար է, բայց Մերձավոր Արեւելքում հանդիպում է տարբեր հարուստ շրջանների: Երկրորդը առաջինի լրացումը կարելի է համարել, իսկ առաջինը՝ երկրորդի ապահովության միջոցը:

Արեւելքի հիշյալ մայր ճանապարհները Անատոլիայում իրար հետ կապված են շուրջ 40.000 կմ երկարություն ունեցող, խաչաձեւվող տարբեր տիպի ճանապարհներով՝ երկաթուղային, խճուղային եւ

գետնուղային: Մյուս կողմից՝ Բոսֆորից նավերը անցնելով բազմաթիվ նավահանգիստներով, գուգահեռ գնում են մինչև Տրապիզոն՝ կտրելով 1500 կմ: Այդ ծովային ճանապարհը, Պոլիս - էրզրում ցամաքային ճանապարհին գուգահեռ լինելով, մեծ կարեւորութիւն է ստանում: Իսկ մյուսը՝ Դարդանելից 1500 կմ ծովային ճանապարհ կտրելով, ընթանում է Պոլիս - Ջեյհան ցամաքային ճանապարհին գուգահեռ: Վերոհիշյալ երկու ճանապարհները միասնաբար հզորացնում ու ամբողջացնում են Փոքր Ասիան:

Համառոտ ակնարկից կարելի է եզրակացնել, որ Պոլիս - Հեռավոր Արեւելք կամ Հնդկաստան ճանապարհի վրա, Անատոլիան իր 1000 կմ երկարութեամբ, ամբողջական աշխարհագրական մի միավոր է: Այդ միավորը երեք կողմից շրջապատված է ծովերով եւ բազմաթիվ նավահանգիստներով: 500.000 քառ. կմ տարածութեամբ, բարեխառն կլիմայով, բարեբեր հողերով, ներքին հաղորդակցութեան միջոցներով, նոսր բնակչութեամբ (չուրջ 15-20 մարդ քառ կմ վրա) այնպիսի մի անկյուն է, ուր ապահովութեան եւ զարգացման ամեն հնարավորութիւններ կան՝ որպէս միջնորդ ծառայելու Արեւմուտքի եւ Արեւելքի միջեւ:

Կապաղովկիայի տիրապետութեան ժամանակ Անատոլիայի սահմանները երեք ծովերն էին եւ Տավրոսը: Այդպէս էր ե՛լ հռոմիացիներին, ե՛լ նրանց հաջորդած բյուզանդացիներին ժամանակ: Արեւելքից Եփրատն էր սահմանը, իսկ մյուս կողմերից՝ երեք ծովերը: Այդպէս էր եւ Իկոնիայի Սուլթանութեան ժամանակաշրջանում: Բայց երբ գերիշխող դարձան պանսլավիզմի, պանթուրանիզմի գաղափարները, քան աշխարհագրական ըմբռնումները, սահմանները խեղաթյուրվեցին՝ աշխարհակալ միտումներով: Անվերջ արյունահեղ մրցակցութիւնները ոչ միայն Անատոլիայի շրջակա երկրները մահվան դատապարտեցին, այլեւ նրա քայքայման պատճառը դարձան: Ինչո՞ւ Մուստաֆա Քեմալը կղզիացման ենթարկեց Պոլիսը եւ նպաստեց Անկարայի զարգացմանը: Նրա պայքարը անիմաստ կլիներ, եթէ իր ուխտի մեջ չամփոփեր ո՛չ ձեռքի տակ եղած Արեւելյան նահանգները, ո՛չ Անտիոք-Մոսուլ շրջանները, այլ սահմանափակվեր Անատոլիայի աշխարհագրական սահմաններով եւ նպատակ դարձներ այդ շրջանները այնպիսի կարգավիճակի մեջ դնել, որ հնարավոր լիներ Անատոլիայի ամբողջականութիւնը պահելով հանդերձ, այն ծառայեցնել Մերձավոր Արեւելքի զարգացմանն ու հզորացմանը՝ միասնաբար Արեւելքի ճանապարհները բացելու եւ միջազգային մրցակցութիւնները վերացնելու մտադրութեամբ: Այդպէս չեղավ եւ դրա համար այդ ճանապարհը հիվանդ է եւ անգործածելի: Այն իր

պատմական դերը կարող է կատարել, երբ միջազգային մրցակցությունները չեզոքանան:

**Փոքր Ասիայի ճանապարհների խտացման վայրերը
Էրզրում- Ալեքսանդրեթ**

Փոքր Ասիայի աշխարհագրական սահմանը վերջանում է Անդի-Տավրոս լեռնաշղթայով, որ բաժանում է Փոքր Ասիայի գետերի ջրբաժանը Եփրատի եւ Ջեյհանի ջրբաժաններից:

Անդի-Տավրոս, Տավրոս եւ Պոնտոս լեռնաշղթաները, որոնք իրենց երկայնքով խցանում են Փոքր Ասիան Արեւելքից, ամեն տեղ չէ որ անցանելի են: Այդ դժվարությունը պատճառ է, որ Փոքր Ասիայի բոլոր ցամաքային ուղիները՝ իրենց 6000 կմ երկաթգծերով, 40.000 կմ երկարությամբ խճուղիներով եւ այլ ճանապարհներով՝ խտանան Եփրատի եւ Ջեյհանի արեւմտյան ափերին, ինչպես լուսի ճառագայթներն են խտանում ապակյա ոսպնյակի միջոցով:

Ճանապարհների խտացումը կատարվում է Փոքր Ասիայի սահմաններից դուրս, Արեւելյան նահանգների երկու կետերի միջոցով, մեկը՝ հյուսիսից մինչեւ Էրզրում, մյուսը՝ հարավից Ալեքսանդրեթ, Ամանոս լեռան ստորոտը: Այս երկու կետերը այն հանգուցային կետորոններն են, որտեղով կամա թե ակամա պիտի անցնեն փոքր Ասիայի բոլոր ցամաքային ճանապարհները:

Փոքր Ասիայի ծովային ճանապարհների բախտն էլ նույն է: Փոքր Ասիայի համար Միջերկրականը վերջանում է Ալեքսանդրեթի ծոցով, իսկ Սեւ ծովը՝ Տրապիզոն նավահանգստով: Դրանք ծովային հաղորդակցության վերջնակետերն են: Դրանցից այն, որ մտնում է Ալեքսանդրեթի ծոցը, հարկադրաբար պիտի դատարկվի եւ լրացվի Ամանոսից եկող եւ կամ այնտեղ ավարտվող Ասիայի ճանապարհներով: Այն, որ հասնում է Տրապիզոն, հարկադրաբար ցամաքով պիտի շարունակի իր ճանապարհը, կտրելով Պոնտոսի միակ ճանապարհը, որն անցնում է Էրզրումի միջով:

Վերոհիշյալները նկատի ունենալով՝ հասկանալի է դառնում այդ երկու կետերի նշանակությունը ոչ միայն Փոքր Ասիայի, այլեւ միջազգային տեսակետից:

Արեւելյան նահանգները, որտեղ գտնվում է ճանապարհների հանգուցը, շուրջ 250.000 քառակուսի կմ տարածություն ունեն: Այն բաժանված է երկու տարբեր աշխարհագրական միավորների թե ազգագրական, թե հաղորդակցության տեսակետից, ուստի նրանց քննությունը պետք է կատարել առանձին-առանձին, մեկը՝ Հայաստան, մյուսը՝ Քրդստան անվան տակ:

Հայաստանի աշխարհագրական բնութագիրը

Երբ Փոքր Ասիայից մտնում եք Եփրատի հովիտը, մտնում եք լեռնաշղթաների մի բավիղի մեջ, որը քայլ առ քայլ բարձրանում է երկինք՝ ձյունապատ գագաթներով, անդնդախոր ձորերով, անտառապատ լանջերով, կամ բարձրադիր սարահարթերով: Այստեղի բնությունը նման չէ Փոքր Ասիայի բնությանը: Տարբերվում է Շվեցարիայի բնությունից, գուցե ավելի նման է Աֆղանստանի կամ Պամիրի բնությանը, որը համարվում է աշխարհի առաստաղը: Հայաստանն իր բարձրությամբ Մերձավոր Արեւելքի առաստաղն է, որի գմբեթը Բարձր Հայքն է՝ մայրաքաղաք էրզրումով, որտեղ կենտրոնանում են ինչպես Արեւմուտքի, այնպես էլ Արեւելքի բոլոր ճանապարհային հանգույցները:

Ըստ Աստվածաշնչյան վկայության՝ Աստված դրախտը հիմնել է հենց այս երկրում: Արդարեւ է, որովհետեւ ամառվա եղանակին ոչ շատ տաք է, ոչ շատ ցուրտ: Բազմատեսակ թռչուններ են երգում այստեղ: Լեռներն ու ձորերը պատված են երփներանգ ու չտեսնված ծաղիկներով: Ամեն ժայռի տակից քչքչան բյուրեղյա աղբյուրներ են վազում. պտուղն ու հացահատիկը առատ են, եւ որպես զարդ այդ բոլորի՝ լեռան գագաթները հավերժական ձյունով են պատված: Զմեռն ու աշունն էլ են տարբեր: Երկիրը կատարյալ դժոխք է դառնում ձմռանը: Սառույցով պատված գառիթափ, անդնդախոր ձորեր, բարձրադիր կածաններ, որոնք վայրի այծերի ու գայլերի արահետներն են: Ցուրտ՝ բեւեռային աստիճանին հավասար, ձյուն ու ցեխ՝ իրար քարացած, բուք ու բորան, որին ոչ միայն թույլ մարդը չի կարող դիմանալ, այլ նույնիսկ վայրի կենդանիները, որոնք թաքնվում են սառցե բներում: Բնությունը, Օ-ից ցածր աստիճան ցրտով, խեղդիչ բորանով՝ «մահ շնչավորաց» է գոռում, եւ մարդիկ կծկված իրենց տներում, իրենց գոյության մասին վկայում են ձյան մեջ թաղված ծխնելույզներով: Վեստյան կռատան նման օրն ի բուն վառվում են թոնիրները՝ դրսի ցրտի դեմ անընդհատ կռվելով: Հայաստանի կենտրոնը, նրա սիրտը՝ էրզրումն է՝ դժոխքի եւ արքայության մեջ կառուցված:

Երկրներ կան, որոնց հարստությունը միաժամանակ եւ՝ երջանկություն, եւ՝ դժբախտություն է բերում, եւ հաճախ ավելի վնաս է տալիս, քան օգուտ: Շատ անգամ անհնար է ազատվել այդ հարստությունից, որովհետեւ երկրի ամբողջ կյանքն ու գոյությունը կախված է դրանցից: Մենք արդեն տեսանք, որ թեեւ Թուրքիան Դարդանելի տերն է, բայց նրանից ուրիշները ավելի շատ են օգտվում, քան ինքը: Նրան են պատկանում նեղուցների գլխացավանքները, բայց որոնցից ո՛չ բաժանվել կարող է, ո՛չ էլ սեփականացնել: Նույնն է Սուեզը

եզիպտացիների համար, որից Եզիպտոսը ավելի քիչ է օգտվում, քան ուրիշները: Իր ստացած օգուտի դիմաց նա իր շահերի ու վեհապետության մի մասն է կորցնում: Իրանի եւ Իրաքի նավթային հարստությունները, որոնք եթե բերում են նյութական բարեկցություն, բերում են նաեւ ստրկություն եւ նույնիսկ վտանգում են երկրի անկախությունը: Այս օրինակների շարանը երկար է: Սրանք ապացուցում են, թե ինչքան այդ հարստությունները մեծ են, նույնքան էլ մեծ են նրանց բերած վտանգները:

Ասում են՝ անգլիսի եւ ամենամեծ ադամանդները սեփականատիրոջ մահվան պատճառ են դառնում, իսկ նոր տիրոջը կարճատեւ երջանկություն են բերում:

Այդ ադամանդներից է Հայաստանը:

Իրավացիորեն շատերին կզարմացնի վերը նշված համեմատությունները, որովհետեւ Հայաստանի գեղեցկության, նրա ժողովրդի մարտիրոսության, բարեմասնությունների կամ նրա խաշնարածության եւ բարիքների մասին շատ բան է գրված, բայց շատ բան չի գրված նրա բուն հարստությունների մասին, որոնք մահաբեր կամ երջանկաբեր ադամանդի արժեք են տալիս նրան: Հայաստանը ո՛չ Դարդանել, ո՛չ Սուեզ, ո՛չ էլ ծով ունի. չունի գրավիչ նավթի պաշարներ կամ հարուստ, այլ հանքեր, եթե նույնիսկ կան էլ՝ հայտնաբերված չեն: Նրա նյութական կարողությունը միջակից ցածր է: Ուրեմն ո՞րն է նրա հարստությունը եւ որտե՞ղ է պահված:

Հայաստանի առաջին եւ ամենաարժեքավոր գանձը նրա աշխարհագրական նպաստավոր դիրքն է եւ հրամայական կեցվածքը՝ իրեն շրջապատող երկրների վրա: Ընկած լինելով Սեւ, Կասպից, Միջերկրական, Պարսից ծովերի, Փոքր Ասիայի, Արաբական երկրների, Իրանի եւ Կովկասյան լեռների միջեւ, փաստորեն իրենից ներկայացնում է բարձրադիր մի կամուրջ՝ աշխարհի չորս կողմերի, ծովերի եւ երկրների համար: Նրա վրայով Եվրոպան կարող է կապվել Ասիայի հետ եւ փոխադարձաբար: Նրա վրայով կարող են Կովկասը եւ Ռուսաստանը կապվել Հարավի հետ եւ փոխադարձաբար: Տրանզիտ ճանապարհ է Եվրոպայի եւ Ասիայի, Ռուսաստանի եւ Աֆրիկայի միջեւ:

Հայաստանի երկրորդ հարստությունը իր լեռնային ամրություններն են, որոնք Մերձավոր Արեւելքում նրան տալիս են ընդարձակ մի բերդի կերպարանք: Շատ լեռնային երկրներ կան՝ ինչպես Տիբեթը, Հիմալայները, Կովկասը, որոնք իրենց բարձրաբերձ շղթաներով՝ ամուր են եւ անմատչելի մարդկանց, կենդանիների, անգամ բուսականության համար: Նման լեռները անհասանելի անջրպետներ են,

որոնց առաջ կյանքը կանգ է առնում: Նրանց հովանու տակ լճացած կենդանական մի կյանք է սկսվում ու մեռնում՝ առանց շրջապատի հետ հաղորդակցութեան հնարավորութիւն ունենալու: Հայաստանը ամբողջ ջական լեռ է, չունի նրանց անմերձենալիութիւնը, եւ երկրներն իրարից կղզիացնելու հատկութիւնը: Ամրացնում է երկիրն առանց հաղորդակցութիւնը խոչընդոտելու: Լեռներ էլ կան՝ Ուրալը, Ալթայը եւ այլոք, որոնք այնքան ցածր են ու մաշված, որ ո՛չ պատնեշ են կովկասի նման, ո՛չ ամրութիւն՝ Հայաստանի նման: Ավելի նման են Ալպյան եւ Աֆղանստանի լեռներին, որոնք եւ՛ ամուր են, եւ՛ անցանելի: Հայաստանի դիրքը ունի բարձր պարսպապատ ամրոցի կերպարանք՝ 150.000-ից ավելի քառակուսի կիլոմետր տարածութիւն: Հարավային պատը՝ Հայկական Տավրոս լեռնաշղթան է, իր Բիթլիս եւ էլ՝ Ագիզ դռներով: Ոտքերի տակ են փռված Քրդստանը եւ ամբողջ Արաբական աշխարհը, որոնց վրա Հայաստանը իշխում է 2500-4000 մետր բարձրութիւնից:

Արեւմտյան պարիսպն է Անդիտավրոսը, 2500-3500 մետր բարձրութեամբ՝ Մալաթիա, Կեամախ դռներով, իշխում է Փոքր Ասիայի եւ Միջերկրականի մուտքերի վրա: Հյուսիսային սահմանն է Պոնտոս եւ Փոքր Կովկաս լեռնաշղթան, 3000-4000 մետր բարձրութեամբ, եւ Տրապիզոն, Ճորոխ, Բուռջալու, Ղարաբ դռներով: Այդ շղթան իշխում է Սեւ ծովի, Վրաստանի, Ադրբեջանի վրա՝ մինչեւ Մեծ Կովկաս:

Արեւելքից պարիսպն են Արարատը եւ Զագռոշյան լեռները՝ 3500-5000 մետր բարձրութեամբ: Նրա դռներն են Մակուն, Զուղան, Շահթախտը, որոնք իշխում են Իրանի վրա: Սրանք լինելով միայն գլխավոր դռները եւ նրանց պարիսպների բարձրութիւնները, այդ երկրին տալիս են ռազմական այնպիսի կարեւորութիւն, որ կարող է միջազգային վճռական դեր կատարել, թույլ դեր աշխարհակալութեան, բայց բավական վճռական՝ ինքն իրեն պահելու համար, երբ այդ երկիրը գտնվի որեւէ աշխարհակալ պետութեան ձեռքին: Այն կարող է դյուրութեամբ խոչընդոտ դառնալ արտաքին ոտնձգութիւնների դեմ, եւ որպէս պատվար կամ չեզոք մի վայր դառնալ՝ աշխարհակալութիւնների դեմ:

Այս դիրքն էլ նրան վերածում է մեծ ադամանդի (միջազգային շուկայի համար), որ ցանկալի է բոլորի համար, մեկին բերելով մահ, մյուսին՝ ժամանակավոր երջանկութիւն:

Էրպրումը (Կարին) Հայաստանի միջնաբերդ

Ամեն մի բերդաքաղաք իր միջնաբերդն ունի: Գրավված միջնաբերդը համազոր է այդ բերդաքաղաքի կործանմանը: Հայաստանի

միջնաբերդը էրզրումն է իր շրջակայքով: էրզրումը վաղուց հայության ձեռքում չէ, եւ այդ պատճառով հայությունը կորցրել է իր պետականությունը, քանի որ միջնաբերդը իր կենտրոնը չէ:

Եթե ուզում եք հասկանալ Թուրքիայի հայաջինջ քաղաքակա- նության բուն պատճառը, որոնք էրզրումի մեջ:

Եթե ուզում եք հասկանալ Ռուսաստանի շահախնդրության բուն պատճառը Հայկական Հարցի վերաբերյալ եւ կամ նրա Լոբանովյան, կամ Չիչերինյան քաղաքականության հիասթափեցուցիչ քայլերը, պատճառները որոնք էրզրումի մեջ:

Եթե ուզում եք հասկանալ, էրզրումի՝ այլ աշխարհակալ պետու- թյունների ձեռքն անցնելու Անգլիայի կամ Կենտրոնական Եվրոպայի ընդդիմանալու պատճառը, կա՛մ Թուրքիայի ամբողջականության տեսակետները, կամ Անկախ Հայաստան ստեղծելու նրանց շահա- գրգռությունը, ինչպես եղավ Սեւրում, նորից պատճառները փնտրեք էրզրումի մեջ:

Եթե ուզում եք հասկանալ հայկական դյուցազներգությունը, մարտիրոսությունը, ձախորդությունը եւ հաջողությունը, մի որոնեք այլ տեղ, բացի էրզրումից:

Հասկանալու համար մի փոքրիկ հայացք նետենք էրզրումի վրա, քանի որ էրզրումի հարցի լուծումից է կախված Հայկական Հարցի լուծումը, Հայաստանի գոյությունը եւ հայ ժողովրդի կյանքն ու մահը:

Ճամփորդը երկյուղածությամբ է մոտենում հումեացիների, բյուզանդացիների, արաբների կողմից շատ ցանկացած եւ հայերի կողմից շատ սիրված Կարինին, բայց հասնելուց հետո՝ ճնշիչ հիաս- թափություն է ապրում. մեծ բաներ են երեւակայում, բայց քիչ՝ տեսնում: Հինավուրց փառքերից ոչինչ համարյա չի մնացել, իսկ նորը՝ հետամնաց մի վայր է, որին եվրոպական իմաստով, քաղաք անվանելը շատ դժվար է:

էրզրում քաղաքն ունի 30.000 ազգաբնակչություն՝ պահակազորն էլ հետը հաշված: Զորանոցի նման է՝ միահարկ, անշուք տներով, ցեխոտ փողոցներով: Փոքրիկ կրպակների մեջ մանրավաճառները կամ արհեստավորները իրենց դժվարին ապրուստն են վաստակում. ծխով լի սրճարաններում պաշտոնյաները պարապությունից նարգիլա են ծխում եւ սուրճ խմում: Ո՛չ մի հաճելի վայր, ո՛չ մի գործարան: Ծուռումուռ, նեղլիկ փողոցներ, որտեղից ուզում ես ժամ առաջ դուրս փախչել: Դուրս կարող ես գալ միայն բարձրաբերձ պարիսպների երկաթե դռներով, ուր թուրք ասկյարը քեզ է սպասում՝ սվինը ձեռքին: Դրսում՝ բնության մեջ, իրար հեծած, բարձր ձյունոտ գագաթներն են:

Ահա ձեզ էրզրումը, որից հիասթափված բանաստեղծ Ա. Իսահակյանը ժամանակին ասել է. «Եվ ահա քեզ՝ Երկիրը դարձնում էր «Երկիրը»...»

էրզրումը կառուցված է 2000 մետր բարձրության վրա իր շուրջը գտնվող լեռների գրկում, որոնք 3000-3500 մետր բարձրություն ունեն։ Այդ, անմիջականորեն շրջապատող լեռներն էլ իրենց հերթին, շրջապատված են ավելի բարձր լեռնագոտիներով՝ 3500-5000 մետր բարձրությամբ։ Այս լեռնագոտիները իրար մեջ խրված չեն, ընդհակառակը, իրենց միջոցները ընդարձակ սարահարթերն են ու դաշտերը, որոնք որպես լայն եւ հանգիստ պողոտաներ էրզրումի արեւմուտքից՝ Աշկալայից սկսած մտնում են Բասեն-Կարսի, Շիրակի լայնանիստ սարահարթերը, որոնք զուգահեռված են բարձրադիր լեռնաշղթաներով։ Ավելի ռազմադաշտի են նմանվում, քան թե միջնադարյան հասկացողությամբ սեպածեւ ժայռերի, որոնցից ամբողջություններ էին կառուցում։ էրզրումի անձեռնմխելիության գաղտնիքը ոչ թե ժայռերն են, այլ կլիմայական պայմանները։ Ձմեռը տեւում է 6-10 ամիս, 0-ից ցածր մինչեւ 30 աստիճան ցուրտը, բուքը, եւ մի քանի մետր խորությամբ ձյունը անմատչելի են դարձնում այն։ Առաջին գծի վրա է գալիս նախ ճանապարհի պաշտպանությունը՝ ձյունից, երկրորդ՝ պատսպարանների պատրաստությունը եւ երրորդ՝ առատ ուտելիքը։ Այս կլիմայական պայմանները բոլորովին երկրորդական պլան են մղում ռազմական արվեստը, քաջությունը, թիվը, որակը, գեներերի կատարելագործումը եւ լավ մտածված ծրագրերը։ Բոլորը տեղի են տալիս փոխադրական միջոցների եւ ձմռան ցրտի ստեղծած դժվարությունների առջեւ։ Վերջինիս կողմից մի փոքրիկ թերացում՝ ապարդյուն են դառնում մնացածները։ Մի փոքրիկ հապաղում սառնամանիքի մեջ, կամ մի ձախորդ քամի՝ մահաբեր թիփիով, եւ ամեն ինչ առանց պատերազմի՝ կորած է։ Այդպես չէ՞ր, որ էնվերի 300.000 բանակը սառած մոմ դարձավ Սարիղամիշում եւ ոչնչացավ՝ իր դեմ ունենալով ընդամենը մեկ՝ երկու հազար միայն։ Նվազ, բայց ցրտին հարմարված ուժերը կարող են մեծ բանակների պարտության մատնել, եւ ընդհակառակը, մեծ բանակներով կարելի է գրավել այդ երկիրը, եթե այդ բանակը օտոված է արագ եւ լավ հաղորդակցությամբ եւ վարժված է ձմռան ցրտին։ Դրա պատճառով է, որ էրզրումը ռուսները միշտ գրավել են առանց զոհերի, որովհետեւ փոխանակ կռվեն, ճանապարհների շինարարությանը զուգահեռ առաջ էին շարժվում նույնիսկ ձմռանը, եւ դեռ էրզրում չհասած, քաղաքի 1000-ից ավելի թնդանոթներ դերի էին ընկնում՝ առանց կրակելու։ Յուրեղանիների հաջողությունը թիկունքի 800.000 աշխատողների կառուցած ճանապարհների մեջ էր։ Այստեղից ձեւավորվում է երկու

տարբեր քաղաքական մոտեցում. պաշտպանողների համար ձեռնտու է, որ էրզրումը մնա մի ավերակ՝ առանց ճանապարհի, առանց ազգաբնակչութան, եւ ընդհակառակը, հարձակվողների համար այն պետք է ունենա լավ հաղորդակցություն եւ բնակելի բազմաթիվ վայրեր:

էրզրումի էական գանձը կլիման չէ միայն, այլ հաղորդակցության տված առավելություններն ու գետերը:

էրզրումը, կենտրոն ունենալով, 50կմ շառավղով շրջագծի մեջ կգտնեք Մերձավոր Արեւելքի հետեւյալ գլխավոր գետերի ակունքները. ձորոխ՝ 368 կմ երկարությամբ, Եփրատ՝ 2800 կմ, Արաքս՝ 920 կմ, Կուր՝ 1000 կմ: Բացի դրանից, Եփրատի արեւելյան ճյուղը, որ սկիզբ է առնում էրզրումի նահանգից, Արարատի փեշերից՝ Մուրադը (Արածանին) 600կմ, իր ներքին հոսանքով մոտենում է Տիգրիսի ակունքներին, որն ունի 1900 կմ երկարություն: Այս գետերից, որոնք սկիզբ են առնում էրզրումի նահանգից, իրենց ամբողջ հոսանքով միայն Մուրադն ու Արաքսն են ամբողջությամբ հոսում Հայաստանի տարածքով, իսկ մնացածները՝ միայն իրենց վերին հոսանքներով: Նրանցից ձորոխը թափվում է Սեւ ծով եւ սնուցում է Արեւմտյան Վրաստանը, Աջարիան, Գուրիան: Կուրը հոսում է դեպի Վրաստան, որը կտրելով մտնում է հին Աղվանք եւ թափվում է Կասպից ծով: Արաքսը հոսում է արեւելք, ողողում Հայաստանը, մյուս ափով Իրանը եւ թափվում է Կասպից ծով: Մուրադը հոսում է դեպի արեւմուտք՝ ամբողջ Հարավային Հայաստանով եւ թափվում է Եփրատի մեջ՝ մի քիչ հեռու Տիգրիսի ակունքներից: Եփրատը անցնելով Հայաստանով, մտնում է Քրդստան, մոտենում է Ալեքսանդրեթի ծոցին՝ 160 կմ, մտնում է Սիրիա, Իրաք եւ Պարսից ծոց: Տիգրիսը ողողում է Քրդստանը, Միջագետքը, Իրաքը եւ Պարսից ծոցը: Այս բոլոր գետերը, հիշյալ երկրների համարյա միակ ջրային հարստություններն են, որոնք արյան երակների նման նրանց համար կյանքի երաշխիք են դառնում: Եվ այդ գետերի սիրտը գտնվում է էրզրումի բարձունքների վրա:

էականը միայն այն չէ, որ Մերձավոր Արեւելքի ջրային կարողությունները գտնվում են էրզրումում, այլ այդ գետերը, որ իրար հակառակ ուղղությամբ են ընթանում՝ բնական ճանապարհներ բացելով աշխարհի չորս ծագերի համար: Գլխավոր ուղիները հովիտներն են, որոնք ունեն թե՛ մեղմ կլիմա, թե՛ նվազ զառիթափեր ու ելեւէջներ, եւ որ էականն է, բարձրաբերձ լեռնաշղթաների լաբիրինթոսով ճամփորդելու դյուրություն՝ խուսափելով լեռնանցքներից եւ առանց մեծածախս թունելներ կառուցելու հարկադրանքի: Հայաս-

տանի ճանապարհների հատակագծի գլխավոր աշխատանքը կատարում են գետերը, մնացած երկրորդական աշխատանքները՝ հարդարումը, կամուրջները եւ այլն, նոր միայն լրացվում է մարդկային քրտինքով: Այս բոլոր ջրային եւ հաղորդակցական հարստությունների վրա էլ նստած է էրզրումը՝ որպէս հրամանատար, որն ի գորու է բացել այդ ուղին եւ փակել մյուսը՝ ըստ իր հայեցողության. եւ սրա մեջ է նրա կարողությունը:

Նկատի պետք է առնել մի ուրիշ հանգամանք եւս. նստած լինելով գետերի բացած ճանապարհների գլխին, պաշտպանները երկու անգամ ավելի արագ կարող են շարժվել դեպի ներքեւ, դեպի տափաստանները, քան թե տափաստաններից դեպի վեր՝ դեպի ակունքները բարձրանալ ցանկացող թշնամիները. ինչը որ առավելություն է տալիս նրանց, ովքեր նստած են էրզրումում եւ թուլություն՝ դրսից արշավողների համար: «էրզրում են վերջ, ամեն ինչ դյուրին է» ասացվածքը, իրական արժեք ունի արագության տեսակետից:

Էրզրումի միջապային ուղիները

Սուեզի ջրանցքը, Զիբրալթարը, Դարդանելը ծովային միաջագոյալին ամենակարճ, ամենադյուրին ճանապարհներն են եւ ամենաքիչ ծախս ու ժամանակ պահանջողները:

Եվրոպայի եւ Ասիայի ցամաքային ճանապարհների համար էրզրումը նույն դերն ունի, ինչ որ Սուեզի ջրանցքը, Դարդանելն ու Զիբրալթարը ծովային ճանապարհների համար:

Եվրոպայի ցամաքային ճանապարհները խտանալով Պոլսում՝ մտնում են Փոքր Ասիա, ուր դարձյալ խտանալով, հանգույց են կազմում էրզրումում: Տրապիզոնի եւ Ալեքսանդրեթի մոտ ծովային ճանապարհները նույնպէս խտանում են եւ ապա ցամաքային ուղիներով հարկադրաբար անցնում են էրզրումի պարիսպների միջով: Այսպիսով, էրզրումը ցամաքային մի նեղուց է կամ կապող օղակ Արեւմուտքի համար:

Այդ ցամաքային նեղուցը մի փակուղի պիտի դառնար Տիբեթի նման, եթե կարճ եւ ձեռնտու ճանապարհ չլիներ Կենտրոնական, Հարավային եւ Հեռավոր Ասիական երկրների համար: էրզրումը ասիական բոլոր երկրների ամենակարճ ճանապարհն է: Սա հասկանալու համար պետք է որոշել այն կետերը, որոնք հանդիսանում են ասիական բոլոր երկրամասերի դուռը եւ ճանապարհների հանգույցը:

Թեհրանը, ընկած լինելով Կասպից ծովի, Մազանդարանի լեռների եւ Դաշտե Կավիր ու Դաշտե Լիվտ անապատների միջեւ, նույն դերն ունի Ասիայի համար, ինչ որ Պոլիսը՝ Եվրոպայի: Կարելի է ասել բուն

Ասիան սկսվում է Թեհրանից, որտեղից կարելի է կարճ, ցամաքային ճանապարհներով Ասիայի բոլոր մասերը հասնել:

Թեհրանից դեպի հարավ երկաթգիծը գնում է դեպի Բենդեր Շահպուր, այսինքն Պարսից ծոցի սկիզբը: Ռեզա շահի գլուխգործոցն է այս ճանապարհը, որը գոյություն ուներ դեռ Սելեկյանների, Սասանյանների եւ արաբների ժամանակներից սկսած:

Թեհրանից մեկ այլ ճանապարհ էլ զուգահեռաբար անցնում է Սպահանով Բուշեր մինչեւ Պարսից ծոց: Այս ճանապարհը Շահ Աբասի սիրած ուղին էր:

Թեհրանից մեկ այլ գլխավոր ճանապարհ էլ անցնում է Իռազ եւ Կավիր անապատների հարավով՝ գնում դեպի Քերման: Մի ճյուղը ավարտվում է Բանդար Աբբասում, որ մուտքն է Օմանի եւ Հնդկական ծովերի, մյուսը՝ ցամաքով ուղիղ գնում է պարսկական եւ հնդկական Բելուջիստան՝ հասնելով Արեւելյան Հնդկաստան:

Թեհրանից հյուսիս անցնում է մի երկաթգիծ, որը վերջանում է Կասպից ծովի ափին՝ Բանդար Շահում, միանալով Անդրկասպյան ճանապարհներին: Սա հին քուշանների, պարթեւների, թուրքմենների ճանապարհն էր: Երեւի այդ ճանապարհով են խուժել նաեւ հին մեդիացիք, որոնք մի վարկածի համաձայն, այժմյան քրդերն են:

Նրան զուգահեռ երկաթուղին անցնում է Թեհրանից Մեշեդ, որը հասնում է Մերվ, Սամարղանդ, Տաշքենդ, բուն Կենտրոնական Ասիա: Սա է Հեռավոր եւ Կենտրոնական Ասիայի բուն ճանապարհը: Այս ճանապարհով էր, որ Արեւմուտքից եկած Սելեկյանները հաստատեցին Բակտրիական իշխանությունը: Այս ճանապարհով էր, որ տարածվեց նեստորականությունը, տարածվեց մինչեւ Չինաստան, եւ Աքեմենյան Պարթեւներն ու Սասանյան իշխանությունները հասան մինչեւ Ասիայի խորքերը: Նաեւ այդ ճանապարհով էր, որ Հեռավոր Արեւելքից եկան մոնղոլները, թաթարները եւ թուրքերը:

Թեհրան-Մեշեդ ճանապարհը երկու այլ ճյուղավորումներով մտնում է Աֆղանստան: Մեկը Հերաթի վրայով բարձրանում է լեռները եւ իջնում Միջին Հնդկաստան, մյուսը Միստանով նորից գնում է Հնդկաստան՝ միանալով վերին Փենջաբի ափերին: Այս ճանապարհներով էր, որ Չինգիզ խանը հետապնդում էր Խորեզմի եւ պարսիկ իշխանավորների մնացորդներին, մինչեւ Փենջաբի ափերը: Սրանք Նադիր շահի՝ Հնդկաստանի մայրաքաղաք Դելի հասնելու սիրելի ճանապարհներն են:

Այս հիշեցումները բավական են ապացուցելու, որ Ասիայի դուռը Թեհրանն է եւ, եթե նստած եք Թեհրանում՝ այն ժամանակ միայն կարող եք Ասիայի լայնքն ու երկայնքը չափել: Ուրեմն Թեհրան

հասնել, նշանակում է հասնել Ասիայի դռներին: Ո՞րն է Եվրոպայից աշնտեղ հասնելու կարճ ճանապարհը :

Թեհրան կարելի է հասնել երեք գլխավոր կայարաններով.

ա. Բաղդադի

բ. Մոսուլի

գ. Թավրիզի

Ճանապարհներն էլ պետք է բաժանել երեք խմբերի: Այդ ճանապարհներն են.

Ա.-Եվրոպա-Բաղդադ-Թեհրան խմբավորում.

կայարաններ	երկ. խճուղի անապատ ընդհ. կմ			
Հայֆա-Ամման-Բաղդադ-Թեհրան	350	600	1000	1950
Բեյրութ-Դամասկոս	450	500	800	1750
Ալեքսանդրեթ-Մոսուլ	1500	500	-	2000
էրզրում-Բիթլիս-Մոսուլ	750	950	-	1700

Բ.-Եվրոպա- Մոսուլ- Թեհրան խմբավորում

Ալեքսանդրեթ-Մոսուլ-Թեհրան	1350	500	-	1850
էրզրում- Բիթլիս	550	1000	-	1550

Գ.-Եվրոպա-էրզրում-Թավրիզ-Թեհրան

Ալեքս.-էրզ.-Թավրիզ-Թեհրան	1950	-	-	1950
Ալեքսանդրեթ-Մալ-Մուր.	1050	600	-	1650
Բաթում- Լենինական	1450	-	-	1450
էրզրում- Լենինական	1200	-	-	1200
էրզրում- Շահթախտի	750	350	-	1100

Այդ տասնմեկ ճանապարհներից երկուսը՝ Բեյրութ- Թեհրան եւ Հայֆա-Թեհրան, նախապես մահվան դատապարտված պետք է համարել, քանի որ նրանք թե ամենից երկարն են եւ թե անցնելով անապատներով, անմարդաբնակ տարածուլթյուններով՝ անհարմար են երկաթուղիների, խճուղիների կառուցման համար: Նրանք կարող են ապրել այնքան, որքան փակված կմնան մյուս ճանապարհները: Սրանից կարելի է հետեւուլթյուն անել, որ Բեյրութն ու Հայֆան չեն կարող համարվել Թեհրանի եւ առհասարակ, Ասիայի համար բնական

նավահանգիստներ: Ասիայի մուտքը Միջերկրականի վրա Ալեքսանդրեթի ծոցն է, իսկ Սեւ ծովի վրա՝ Տրապիզոնը, Բաթումը:

Դեպի Թեհրան գնացող ամենակարճ ճանապարհը սկսվում է էրզրումից: Էրզրումը, գտնվելով մի կողմից Պոլսի եւ Թեհրանի ճանապարհի կենտրոնում, իսկ մյուս կողմից՝ Տրապիզոնի ու Ալեքսանդրեթի միջեւ, ներկայացնում է ոչ միայն Փոքր Ասիայի ցամաքային ճանապարհների, այլեւ Միջերկրական եւ Սեւ ծովերի նավահանգիստների խտացման վայրը:

Էրզրումը Թեհրանից 1100 կմ հեռավորության վրա է գտնվում, ինչը նշանակում է, որ այն երկու անգամ կարճ է Թեհրան Ալեքսանդրեթ ճանապարհից, որն անցնում է Բեյրութի կամ Հայֆայի, Բաղդադի կամ Մոսուլի վրայով: Ուրեմն՝ ինչպես Սուեզի ջրանցքը կարողացավ փոխել օվկիանոսների ու ծովերի ճանապարհները՝ դուրս մղելով Բարեհուսո հրվանդանի ճանապարհը՝ երկու անգամ ավելի կարճ լինելու պատճառով, այդպես էլ էրզրումը դուրս կմղի մյուս ճանապարհները, եթե էրզրումի ճանապարհը արգելքի տակ չլինի:

Երկրորդ ուշագրավ կետն այն է, որ Միջերկրականի բերան Ալեքսանդրեթից դեպի Թեհրան գնացող ցամաքային ուղին անցնում է Հայաստանի վրայով, Մուրադ գետի հովտով եւ ունի 1650 կմ երկարություն: Այն 400 կմ ավելի կարճ է, քան Բաղդադի վրայով դեպի Թեհրան գնացող ճանապարհը: Ուրեմն՝ Միջերկրականի ցամաքային ուղիներն էլ հարկադրաբար պիտի անցնեն Հայաստանի վրայով, Մուրադ (Արածանի) գետի հովտով:

Երրորդ, կարեւոր մի կետից էլ՝ Սեւ ծովի ավազանից (որը վերջանում է Տրապիզոնում՝ էրզրումից հեռու միայն 250 կմ), նախընտրելի պիտի լիներ էրզրումով դեպի Թեհրան գնացող ճանապարհը, իբրեւ ամենակարճը, կամ էլ Բաթումով գնացողը, որը հարկադրաբար նորից պիտի անցնի էրզրումի ազդեցության գոտիով, Հայաստանով:

Էրզրումի այս առավելությունների վրա ավելացնենք նաեւ, որ այն գտնվում է Կովկասյան լեռների անցքերի (Դերբենդ, Վլադիկավկազ) եւ Բաղդադի մեջտեղում, այսինքն Ռուսաստանի եւ արաբական երկրների միջեւ: Ունենալով միայն 850 կմ հեռավորություն Բաղդադից, էրզրումը Բաղդադին 300 կմ-ով ավելի մոտ է, քան Ալեքսանդրեթը, Հայֆան ու նույնիսկ Բեյրութը:

Էրզրումի ճանապարհների հիշյալ առավելությունները բարձրացնում են նրա միջազգային արժեքը՝ նեղուցներին, Պոլսին կամ Սուեզին հավասար: Նրա լեռնային ամուր գիրքը, նրա տիրապետությունը Մերձավոր Արեւելքի բոլոր ջրային, հաղորդակցական, ռազմական

կետերի վրա, միջազգային շահագրգռության, նրա անորոշ ճակատագրի եւ խիստ դառը վիճակի պատճառ է դարձել: Այն մնում է դեռեւս այն հարցերից մեկը, որով շահագրգռված են ամենքը, եւ որը անլուծելի կմնա, ինչպես անլուծելի է մնացել նեղուցների հարցը: Դրանից կախված է նաեւ Հայկական Հարցի լուծումը, այն համազոր է էրզրումի հարցի դժվարին լուծմանը:

Էրզրումին տիրողը կարող է իր կամքը պարտադրել մինչեւ Կովկասի դռները, մինչեւ Իրանի խորքերը եւ Կենտրոնական Ասիա, ինչը վտանգավոր է Ռուսաստանի համար:

Էրզրումին տիրողը իր կամքը կարող է թելադրել Փոքր Ասիայից մինչեւ Միջերկրական ու Արաբիայի խորքերը, որը վնասակար է Բրիտանական կայսրության եւ նորանկախ արաբական երկրների համար:

Էրզրումում նստած Թուրքիան իր պանթուրանիզմով, պանիսլամիզմով եւ իր հիվանդ վիճակով, եթե շարունակի իրեն այդպես պահել, կդառնա իմպերիալիստական ինտրիզների, երկրի կործանման եւ իր շուրջը գտնվողների խռովությունների աղբյուր:

Իսկ եթե նա դառնա միջազգայնորեն չեզոք երկիր, ինչպես Շվեյցարիան, այդ պարագայում նա կդառնա այն, ինչ եղել է անցյալում: Այսինքն՝ անկախ մի երկիր՝ միջազգային հավասարակշռությանը եւ խաղաղությանը ծառայող, Եվրոպայի եւ Ասիայի մեջ ընկած միջցամաքային կապի մի օղակ:

Էրզրումի ճանապարհները ունեն իրենց անցյալը: Երբ Թուրքը այնտեղ չէր, դրանք էին Ասիայի միակ ճանապարհները: Հռոմիացիների, բյուզանդացիների եւ Կիլիկյան հարստության ժամանակներում Ալեքսանդրեթի ծոցից, Այասից քարավանները բարձրանում էին դեպի Սվազ կամ Մալաթիա, մտնում էին Արածանիի գեղածիծաղ հովիտը, Ալաշկերտով անցնում էին Արարատի ստորոտը, մտնում Թավրիզ-Թեհրան, այնտեղից էլ Չինաստան, Հնդկաստան: Սա վենետիկցիների, ճենովացիների եւ այլոց սիրելի ճանապարհն էր:

Սեւ ծովից դեպի Հնդկաստան - Չինաստան ճանապարհով էրզրումի վրայով էր անցնում հին ու նոր մարդկությունը: Ազգերի գաղթը, արմեններից սկսած, այս ճանապարհով էր կատարվում: Վասակ Մամիկոնյանի խոսքերը ուղղված պարսից արքային. «Երբ ես աջ ոտքս սեղմում էի Հռոմի վրա, այն խոնարհվում էր, այդ ժամանակ ես առյուծ էի: Երբ ձախ ոտքով ճնշում էի Տրապիզոնի վրա՝ ես առյուծ էի: Այժմ, որ գերի եմ՝ աղվես դարձա՞», - Հայաստանի միջազգային կշռի արտահայտությունն է այս խոսքը, որը մինչեւ այսօր շարունակվում է. թեպետ երկրի տերերը գերի, բայց երկիրն իր միջազգային դերը

չարունակում է կատարել:

Քաղաքական եւ ուսումնական բախումներ

Հայաստանի եւ նրա միջնաբերդ՝ էրզրումի շուրջ հակամարտող կողմերը բաժանվում են չորս գլխավոր խմբերի.

1. Հայեր, որոնք թեեւ տարբեր ժամանակներում ու պայմաններում տարբեր անվան տակ նշանաբաններ են ունեցել, բայց բոլորն էլ խորքում նույն նպատակն են հետապնդում եւ արյունահեղ պայքարով ցանկացում են իրագործել.

- Տարբեր պետութժյունների մեջ բաժանված հողերի միավորումը եւ միջազգային երաշխավորութժյամբ՝ Միացյալ Հայաստանի ստեղծումը:

- Միացյալ Հայաստանի անկախացումը եւ աշխարհասփյուռ հայութժյան միավորումը՝ նրա հարկի տակ: Աշխատավոր ժողովրդի ազատ կամքի վրա հիմնված՝ ժողովրդավարական սկզբունքներով իշխանութժյան հաստատում:

- Անկախ, ազատ, Միացյալ Հայաստանի դաշինք իր անմիջական հարեւան անկախ պետութժյունների հետ, որոնք շահագրգռված են Հայաստանի եւ նրա միջազգային դիրքով: (Տես՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութժյան ծրագիրը):

2. Թուրքիան, որը գրավել է Հայաստանի մեծ մասը, թշնամական վերաբերմունք ունի հայերի հանդեպ:

Հայաստանի ստեղծումը ոչ միայն իր սահմանների կրճատումն է, այլեւ իր աշխարհակալական կամ ազդեցութժյան եւ պանթուրանական երազների վերացումն է:

Ստեղծել մի Հայաստան, մանավանդ նրա մեջ ընդգրկելով էրզրումը իր շրջակայքով, համազոր է Թուրքիայի պաշտպանութժյան գոտին տալ անվստահելի կամ թույլ մի ուժի ձեռքը, որը կարող է Ռուսաստանի առաջապահը դառնալ, եւ կամ լինել երկրորդ Բուլղարիա՝ Թուրքիայի համար:

Հայաստանի պաշտպանութժյան գոտին քանի ավերակ, անմարդաբնակ մնա, քանի զուրկ լինի ճանապարհներից, այնքան պիտի Թուրքիան պաշտպանվի ռուսական առաջխաղացումից: Անկախ Հայաստանը, միջազգային հսկողութժյան սահմանումը եւ շահագրգռութժյուն այդ երկրի միջազգային ճանապարհների վրա, Թուրքիայի ամբողջականութժյունը վտանգելու պատճառ պիտի դառնա:

3. Ռուսաստանը, որն ամենամեծ շահագրգռութժյունը ունի Հայաստանի վերաբերյալ, ունի եւ ունեցել է հետեւյալ ուղղութժյունները.

Անկախ եւ միացյալ Հայաստանի ստեղծումը նախ իր շահերի դեմ է, քանի որ ինքն էլ նրանից գրաված տարածքներ ունի: Միջազգայնորեն

ճանաչված ու երաշխավորված, թեկուզ թույլ մի պետութիւն, կարող է ավելի մեծ արդեւք դառնալ իր նպատակները իրագործմանը, քան հիվանդ թուրքիան: Այսպիսով՝ Հայաստանի ստեղծման գաղափարին նա էլ, ինչպէս թուրքիան՝ համաձայն է:

Հայաստանի միջազգային ճանապարհների անգործածութիւնը, նրանց ավերմանը, երկրի քանդմանը ինքը չի առարկում, որովհետեւ Ասիայի ցամաքային ուղիները իր ձեռքում են արդեն, եւ նրանց մրցակիցը կդառնան Հայաստանի ճանապարհները, եթէ սրանք չնորհիվ երկրի բարենորոգումների, օգտագործվեն Հայաստանի կամ միջազգային ուժերի կողմից: Այս հարցում էլ լուռ համաձայնութիւն կա թուրքիայի եւ Ռուսաստանի միջեւ:

Անհրաժեշտութիւն է համարվում Հայաստանը միացնել Ռուսաստանին՝ հայ զինվորներին եւ հաղորդակցական դիրքերը իր ձեռքում պահելու եւ Ասիայի վերջին ցամաքային ուղիները իր հայացողութեամբ օգտագործելու համար, առանց միջազգային հակակշիռի, առանց անկախ պետութիւն խոչընդոտների: Հայաստանը անհրաժեշտ է իրեն իբրեւ իր մի մասը եւ ոչ թէ որպէս անկախ միավոր: Այս կետի մեջ է թուրքիայի եւ Ռուսաստանի բուն թշնամութիւնը:

4. Եվրոպան, թեեւ բաժանված երկու գլխավոր խմբավորումների, մեկը կենտրոնական Եվրոպան՝ Գերմանիայի գլխավորութեամբ, մյուսը՝ Արեւմտյան Եվրոպան՝ Անգլիայի գլխավորութեամբ, բայց նրանց տեսակետների մեջ կան նույնութիւններ, որոնք կարելի է ամփոփել հետեւյալ կետերի շուրջ.

Հայաստանն իր ուղիներով եւ դիրքով, եթէ ընկնի Ռուսաստանի ձեռքը, Արեւմտյան Եվրոպան կկտրվի Առաջավոր Ասիայի ուղիներից: Եթէ այն չի պատկանելու իրեն, ուրեմն թող չպատկանի նաեւ Ռուսաստանին:

Հայաստանի բարենորոգումը, անկախութիւնը, եթէ հնարավորութիւն կտա պաշտպանել իրենց շահերը Ասիայում, եւ ուղիները գործածելի դարձնել, ընդունելի է, բայց եթէ այն պիտի նպաստի ռուսների առաջխաղացմանը, այդ պարագայում գերադասելի է հին վիճակը (թուրքիայի ներկայութիւնը), թեկուզ այդ ուղիները անգործածութեան մատնվեն, եւ հայերը չհասնեն իրենց նպատակներին:

Ռուսաստանի կողմից հայկական նահանգների, մասնավորապէս Էրզրումի գրավումը, համազոր է Բեռլին - Բարդաղ երկաթգիծը, Կիլիկիան, Արաբական երկրները, Սուեզը եւ Հնդկաստանը վտանգվելուն, ուստի նրա անկախութիւնը, չեզոքացումը ինչ որ կերպ, կամ թուրքիայի ձեռքում մնալը, գերադասելի է, քան Ռուսաստանի

ներկայությունը այդ տարածքներում:

Այս իրար հակառակ, նույնիսկ թշնամի տեսակետները դար ու կեսից ավել է, որ գոյություն ունեն Հայաստանի շուրջ: Այս հակամարտությունները, որոնց հետեւանքով տեղի են ունեցել բազմաթիվ ապստամբություններ, պատերազմներ, քաղաքական, տնտեսական պայքարներ, մինչեւ այսօր էլ շարունակվում են: Մոլոտովի կամ Բեվիլինի ներկայիս հայտարարությունները Արեւելյան նահանգների մասին, դեռեւս լուծում չեն ստացել: Այդ նահանգները մնում են որպես պատերազմի ասպարեզ, ուր արդեն Քյազիմ Կարաբեքիրը, իր սուրը հանած, սպառնում է արյուն թափել: Իսկ մյուս կողմից հայերն էլ համառ են իրենց պահանջներում: Էրզրումի, Հայաստանի հարցը այսօր նույնքան այժմեական է, որքան սրանից մեկ ու կես դար առաջ: Խնդիրը ավելի պարզելու համար մի փոքրիկ ակնարկ նետենք այս չորս հակամարտությունների պատմության վրա:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ (1800-1946)

Եթե ցանկանում եք հասկանալ արդարության եւ հավատքի համառությունը, թեկուզ այն լինի կույր եւ սնանկ, պետք է Հայաստան գնալ:

Եթե ցանկանում եք տեսնել Ստի, Պատրանքի եւ Ոճիրի աղբյուրը մի՛ գնացեք դահլճների կամ գլխավորական հրամանատարների բնակարանները, այլ ներս մտեք մեղրաշուրթ դիվանագետների գրասենյակները:

Եթե ձեզ թվում է, թե Ձրադաշտը մեռել է, չարաչար սխալվում եք: Գնացեք նրա հայրենիքը ու կտեսնեք, թե Չար Ահրիմանը ինչպես է ոտքերի տակ գցել Արամազդին, բայց անկարող է խեղդամահ անել նրան:

Այս մտորումները կունենաք անպայման, եթե թերթեք Հայոց Հարցի վերջին կեսդարյա պատմությունը, որ ողբերգության նման, տասը արարներով, կանցնի ձեր աչքերի առջեւով:

ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐ

19-րդ դարի սկիզբը շրջադարձային պետք է համարել Անդրկովկասի, Հայաստանի, Քրդստանի կյանքում: Մինչեւ 1800 թվականը այդ երկրները բաժանված էին Պարսից եւ Օսմանյան կայսրությունների միջեւ, երկու հակամարտ դավանանքով՝ շիա եւ սուննի, երկու ավատատիրական, տարամերժ եւ այլակրոն պետությունների միջեւ: Այս պետությունները, իրար թշնամի լինելով հանդերձ, իրարից չէին տարբերվում խեղճ ու հպատակ քրիստոնյա եւ բնիկ ժողովուրդների հանդեպ իրենց վերաբերմունքով: Քրիստոնյան համարվում էր անհավատ, որին վերացնելու նշանները՝ երկնքի արքայությանը հասնել էր նշանակում: Հպատակ լինելը համազոր էր ստրուկ լինելուն. նրա գույքը, պատիվը, աշխատանքը, կյանքը պատկանում էր իր ավատատեր իշխանավորին, իսկ ավատատեր իշխանավորն էլ իր հերթին պատկանում էր շահին կամ սուլթանին: Ամեն մի նման վիճակից ազատատվելու փորձ՝ հաստատ բնաջնջման վտանգ էր իր մեջ պարունակում: Ամեն մի ազգային, մշակութային ինքնորոշման փորձ՝ համազոր էր դավաճանության: Հպատակ ժողովուրդները պարտավոր էին տալ այն ամենը ինչ ունեին, իսկ եթե ոչինչ ունեին տալու, իբրեւ հարկ պիտի տային իրենց մանուկներին՝ «ենիչերի» կամ հարեմի զարդարձնելու համար:

Այս հոռի վարչարարութեանը ավելանում էր մի չարիք եւս: Այդ երեք երկրները դիտվում էին որպէս պատերազմների թատերաբեմ կամ չեզոք գոտի: Իսկ չեզոք գոտի դարձնելու միակ միջոցը այդ երկրները ամայացնելն ու բնակչութեանը տեղահանելն էր, որպէսզի այն ոչ մի կողմի համար ռազմական հենարան չկարողանա դառնալ: Բնիկ ժողովուրդները հարյուր հազարներով տեղահանվում էին: Քրդերը դեպի Քուշանի լեռները եւ Աֆղանստանի սահմանները, վրացիները դեպի Գուրան եւ այլ շրջաններ, հայերը դեպի Սպահան, Բախտիար եւ այլն, որոնց չնչին մնացորդները մինչեւ այսօր ապրում են այնտեղ, որպէս անցյալի չարիքների վկաներ:

Դատապարտված այս ժողովուրդների փոխվրեժը պիտի իրականանար, երբ վրացական Կախեթիայի, Քարթվելիայի, Իմերեթիայի եւ այլ թագավորներ, հայ մելիքները եւ կաթողիկոսը նախաձեռնեցին հյուսիսում ուժեղացող Ռուսաստանի հետ կապվելու եւ համաձայնելու ծրագիրը: Նրանք խոստացան ընդունել ռուսական կայսրութեան հովանավորութիւնը, օգնել ռուսական բանակի առաջխաղացմանը՝ գործով, գույքով եւ մարդուժով, եթե Ռուսաստանը խոստանա իրենց երկրներից դուրս քշել օսմանյան եւ պարսկական իշխանութիւններին, եւ վրացական ու հայկական երկրամասերում հաստատի վրացական եւ հայկական իշխանութիւններ: Այս հիմունքներով դաշինքներ կնքվեցին Վրաստանի թագավորների հետ եւ խոստումներ տրվեցին հայերին: Այս հիմունքներով վրացական գործերը գործի անցան: Հայ կաթողիկոսները եւս գործի անցան եւ ստեղծեցին հայկական ջոկատներ: Ռուսական գործը Կովկասյան դժվարանցանելի լեռներով հասավ Վրաստան, եւ պարսկական ու Օսմանյան կայսրութեան բանակները սկսեցին նահանջել: Հյուսիսային Հայաստանը ազատագրվեց թե՛ պարսկական, թե՛ թուրքական բանակներից:

Վրացի եւ հայ գորավարները շնորհիվ Անդրկովկասում նոր դարաշրջանի սկիզբ էր դրվել: Ստեղծվել էին վրացական եւ հայկական շրջաններ, ուր այլեւս չէին ծածանվում ո՛չ թուրքական, ո՛չ պարսկական դրոշները. դրանց փոխարեն ամենուր ռուսական դրոշներ էին ծածանվում: Չէին ծածանվում նաեւ հայկական, վրացական դրոշները: Երբ այդ օրերին ամբողջ Եվրոպան կլանված էր Բոնապարտի գլխին թագ դնելու գործով, Անդրկովկասում վրացական թագերը զարդարանք էին դառնում ռուս ցարերի համար, իսկ նրանց թագավորները եւ գալխոսնակիր մելիքները՝ վրացի թե՛ հայ, աքսորի եւ պանդխտութեան ցուպը առած դեպի օտար մայրաքաղաքներ էին գնում: 1801-ին այլեւս չկային վրացական, հայկական անկախ պետութիւններ, եւ նրանց երկրները դարձել էին ռուսական սովորական

նահանգներ:

Ռուսական այս դյուրերին նվաճումները պետք է վերագրել արտաքին աշխարհի նպաստավոր իրավիճակին: Ավստրիայի, Գերմանիայի, Անգլիայի վեհապետները, ի տես հեղափոխական Ֆրանսիայի, միապետական Ռուսաստանի մեջ իրենց փրկության խարխախն էին տեսնում, եւ Ռուսաստանը օգտվում էր իր դիրքից ու ազատություն ունենալու Պետրոս Մեծի գծած ուղիով դեպի Պարսկաստան, դեպի Թուրքիա: Եկատերինա Բ ռուսական կայսրուհին համաձայնություն ունենալով Ավստրիայի Ժոզեֆ Բ կայսեր հետ՝ Պարսկաստանում եւ Թուրքիայում իր ուզածն անելու համար: Նրա հաջորդները՝ Պավել եւ Ալեքսանդր ռուս կայսրերը, գենքով իրագործեցին Պետրոս Մեծի երազանքները: Դուրս քեցին պարսկական եւ թուրքական բանակները Վրաստանից եւ Հյուսիսային Հայաստանից, որոնք խեղդվում էին իսլամական ծովի մեջ: Ազատվեցին, բայց ընկան ռուսական ճանկերի մեջ: Տվեցին նրանց կյանքի, պատվի, գույքի ապահովություն, բայց խլեցին նրանցից ազատության, անկախության երազները: Այս պատմական դրվագը վերջանում է հայազգի վրաց մայր թագուհի Մարիամի մի սխրագործությամբ: Նա դաշույնը խրեց հայազգի գեներալ Լազարեւի կուրծքը, երբ նա կայսեր հրամանն էր կատարում՝ աքսոր առաջնորդելով «անկախ» Վրաստանի թագուհուն: Այդ սխրագործությունը ոչինչ չփոխեց: Վրաստանին եւ Հայաստանին տրված անկախության խոստումները շոգիացան, եւ ռուսական վարագույրը իջավ այդ գրաված երկրների վրա՝ մի նոր չարիք եւ մի նոր բարիք բերելով նրանց համար:

ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐ

1801-29 թվականներին, մինչեւ Անդրիանապոլսի դաշինքը, երկրորդ արարն է սկսվում Անդրկովկասի համար:

Այդ թվականներին Եվրոպայում Ալեքսանդր կայսեր գլխավորությամբ՝ Անգլիայի, Ավստրիայի եւ Գերմանիայի թագավորների միջեւ «Սուրբ Դաշնակցություն» ստեղծվեց: Եվրոպան կախում ունի Ռուսաստանից՝ հեղափոխական Ֆրանսիայից եւ նրա անպարտելի Բոնապարտից ազատվելու համար: Չնայած Փիթեր համոզված է, որ Ռուսաստանին պետք չէ ազատություն տալ, որպեսզի նա սկսի նվաճումներ անել Հնդկաստանի ճանապարհների վրա, բայց հարկադրված է այդ ազատությունը տալ: 1807-ից հետո ռուսական զորքերը սկսում են Վրաստանով առաջանալ դեպի Ախալքալաք, Ախալցխա եւ դեպի էրզրումի առաջապահ մարտկոցները, իսկ 1813-ին դեպի պարսկական հողերը, մյուս կողմից էլ դեպի Բալկաններ:

Ռուսաստանը իբրեւ գենք ունի «ազգերի ազատութեան, հեղափոխութեան, իսլամական մենատիրութեան ոչնչացում, հավասարութեան» եւ այլ նշանաբաններ, որոնց ամենամեծ հակառակորդը ինքն է: Անդրկովկասյան ժողովուրդները հասցրել էին հիասթափվել ռուսական խոստումներից, մասնավորապես վրացիները, որոնց թագավորները, իշխանները աքսորի մեջ էին, կամ էլ դարձել էին կայսրական պալատի զարդեր: Նրանք դառնացած էին: Շատերը դարձան Ռուսաստանի թշնամիներ եւ գենքը ձեռքին կանգնեցին պարսիկների կողքին: Հայերը, որոնց երկրի միայն մի մասն էր անցել ռուսներին, իսկ մեծագույն մասը գտնվում էր Թուրքիայի ձեռքում, ուր բնաջնջման մղձավանջն էր տիրում, վրացիների նման թշնամական դիրք չբռնեցին ռուսական նոր արշավանքների հանդեպ, ավելին՝ եղան ձեռնապահ, դիտող: Այդ հոգեբանութեան պատճառով էր, որ 1807-13 թվականների ռուսական արշավանքները դեպի Թուրքիա եւ Պարսկաստան մնային զուտ ռուսական գործ, առանց տեղական ժողովուրդների մեծ աջակցութեան:

Այդ թվականներին Անդրկովկասում Ռուսաստանի գրաված տարածքները համեստ էին, եւ արշավանքները կանգ առան Բոնապարտի՝ դեպի Մոսկվա արշավանքի հետեւանքով, որոնք վերսկսվեցին Ալեքսանդրի մահից հետո, Նիկոլայ կայսեր օրոք՝ 1827 թվականին:

1827 թվականին Հոնաստանի, Սերբիայի ապստամբութեանները, Բալկաններում ռուսական բանակի առաջխաղացումը, կայսեր կողմից տրված խոստումները, Անդրկովկասում կարողացան մոռացնել տալ նախորդ հոսախաբութեանները, եւ Հովսեփ ու Ներսես Աշտարակեցու գլխավորութեամբ հայութեանն էլ ընկավ ռուսական աշխարհակալական հոսանքի մեջ: Ռուսական բանակը մտավ Պարսկաստան: Գրավվեցին Ղազվինը, Թավրիզը, իսկ Թուրքիայում հասան Տավրոսի լեռնաշղթա, էրզրում, Մուշ եւ այլն: Համարյա ամբողջ Հայաստանը Պասկեւիչի ձեռքում էր, որի հրամանատարական կազմի մեջ կարեւոր կշիռ ունեին հայ զորավարները եւ զինվորները: Հայերն իրենց մխիթարում էին, որ գոնե հայկական հողերը ազատագրեցին Թուրքիայից, թեկուզ Վրաստանի նման ընկան Ռուսաստանի ձեռքը: Բայց այդ ուրախութեանը երկար չտեւեց: Եվրոպան վերագտավ իրեն: Անգլիան հավատարիմ է Փիթի դավանաքին. «Ռուսաստանին թողնել Թուրքիայից իսկված բոլոր նվաճումները՝ նշանակում է, թե մենք շահագրգռված չենք դրանով: Մերօրում եմ այդպիսիների հետ վիճել»: Անգլիան շահագրգռված էր, որ Ռուսաստանը հեռանա Հնդկաստանի ճանապարհներից: Նույն դրդապատճառով Պրուսիան, Ավստրիան եւ Գերմանիան կնքեցին Ադրիանապոլսի պայմանագիրը, ըստ որի,

Ռուսաստանը հետ քշվեց եւ դատարկեց ամբողջ Հայաստանը: Հայու-
թյունն այս անգամ էլ հիասթափվեց եւ հետեւելով ռուսներին, դա-
տարկեցին Պարսկահայքը, Բարձր Հայքը, եւ գաղթականությունը,
ավելի քան մի քանի հարյուր հազար, լցվեցին Վրաստան ու
Անդրկովկաս:

Ըստ Անդրիանապոլսի դաշինքի Անդրկովկասում Ռուսաստանի
սահմանները դարձան Արաքսն ու Արփաչայը, ներկա Խորհրդային
Հայաստանի սահմանները, իսկ մյուս մասը մնաց Թուրքիային:

Ռուսաստանը կարողացավ այդ պատերազմում իրավունքներ ձեռք
բերել Պոլսի եւ Դարդանեղի մեջ, որն այսօր ջանում է անել Մոլոտովը:
Այսինքն, Դարդանեղը բաց լինի Ռուսաստանի եւ փակ՝ բոլորի առջեւ,
բայց դա էլ պիտի կորցնեն հետագայում: Պատմական այս շրջանի
վարագույրն էլ իջնում է 1830 թվականին, որի վրա նկարված է մնալու
Պասկեւիչը՝ Ներսես Աշտարակեցու հետ՝ Թուրքահայաստանի
ազատագրման երազներով լցված, ձեռք ձեռքի տված առաջնում են
կայսեր փառքը բարձրացնելու, բայց վարագույրի տակ հայության
հիասթափությունն ու նրա երազների ոչնչացումն է եւ մի քանի
հարյուր հազար հայության տեղահանությունն իր բնօրրանից:

Վարագույրի նկարի տակ պիտի գրվեր.

-1829 թվականը պիտի կրկնվի 1946 թվին: Իրականում այն այսօր
չատ նման է Պասկեւիչի ժամանակներին, երբ ձգտում են նույն
նպատակներն իրականություն դարձնել: Կարող էին իրագործվել, եթե
աշխարհում ռուսական աշխարհակալությունը միակը լիներ, որը
իրականությանը չի համապատասխանում:

ԵՐՐՈՐԴ ԱՐԱՐ

1830-40 թվականները հետաքրքրական են, որովհետեւ խիստ նման են
1920-28-ի ռուս - թուրքական հարաբերություններին:

Այդ թվականների գլխավոր դերակատարներն են Ֆրանսիան եւ
Ռուսաստանը, իսկ մյուս կողմից՝ Եգիպտոսի Մեհմեդ Ալին՝ Թուրք-
քիայի Վասալը ու սուլթան Մահմուդը: Եգիպտոսը ոչ միայն ապստամ-
բում է Թուրքիայի դեմ, այլեւ Մեհմեդ Ալիի բանակները հասնում են
մինչեւ Պոլսի դռների մոտ եւ սպառնում գրավել քաղաքը: Մեհմետ
Ալիի թիկունքում կանգնած է Ֆրանսիան: Նիկոլայ կայսրը նկատում է
Պոլսին սպառնացող վտանգը եւ Մահմուդ սուլթանին փրկելու համար
15.000-անոց զորք է ցամաք հանում՝ եգիպտացիների մոտքը Պոլիս
արգելելու համար: Ունկերում՝ 1833 թվականին, դաշինք է կնքում
Թուրքիայի հետ՝ պարտավորվելով պահել նրա տարածքային
ամբողջականությունը եւ պաշտպանել իր բանակներով, պայմանով, որ

Դարդանելով, դեպի Սեւ ծով արգելվի օտար նավերի մուտքը, իսկ ռուսական նավերը անարգել մտնեն Միջերկրական ծով: Դա համազոր էր Թուրքիային Ռուսաստանի հովանու տակ վերցնելուն:

Անգլիան վնասակար էր համարում Ֆրանսիային, որի ազդեցության տակ էր Եգիպտոսը եւ, միաժամանակ, վնասակար էր համարում Ռուսաստանի ազդեցությունը նեղուցներում եւ Թուրքիայում: Վճռել էր երկուսին էլ դուրս վանել այնտեղից: 1840-ին Լոզոնում կայանում է ժողովը: Ռուսաստանը, Անգլիան, Պրուսիան, Ավստրիան համաձայնության են գալիս Թուրքիայի ամբողջականությունը պահելու տեսակետի շուրջ, որով Եգիպտոսը հարկադրված էր դատարկել իր գրաված Սիրիան եւ Կիլիկիան, որը մեծ հարված էր Ֆրանսիայի համար: Իսկ մյուս կողմից՝ Անգլիան, Ֆրանսիան, Ավստրիան համաձայնության են գալիս նեղուցների պաշտպանության հարցում եւ համաձայնվում են նեղուցները վերցնել միջազգային պաշտպանության տակ, որով Ռուսաստանը կորցնում է Ունկերի մեջ ձեռք բերած իրավունքները: Սա նման չէ՞ Մոնթրոյի ներկա դաշինքին: Այդ թվերին օգտվողը միայն Անգլիան եղավ: Նա Թուրքիայից, իբրեւ վարձատրություն, վերցրեց Ադենը եւ բացի դրանից, իր ճանապարհների վրա կղզիացրեց Ֆրանսիային ու Ռուսաստանին:

Այս շրջանում հայկական եւ այլ հարցեր անհույս թաղվեցին: Թուրքիայի հետ համագործակցության եւ նրա ամբողջականության ռահվիրան էր Ռուսաստանը, ինչպես 1923 թվականին Լոզանում Ձիչերինն էր: Այդ ժամանակահատվածի անգլիական հերոսը Պալմեոսոնն էր, ով հաղթելով բոլորին կարողացավ իրագործել իր ծրագրերը՝ առանց արյուն թափելու:

ՉՈՐՐՈՐԴ ԱՐԱՐ

1840-60 թվականները նոր շրջան են Թուրքիայի եւ Հայաստանի համար: Ռուսաստանը, իր համառ կայսր Նիկոլայով, հազիվ կարողացավ ըմբռնել, թե ինչպիսի խաղ են խաղացել իր գլխին Լոնդոնի ժողովում, պնդելով, որ ի հեճուկս Ֆրանսիայի եւ Եգիպտոսի, պահպանվի Թուրքիայի ամբողջականությունը: Հասկացան, որ դրանից շահողը եղել էր միայն Պալմեոսոնը: 1830-ին Նիկոլայը առաջարկում էր Թուրքիան բաժանել Ռուսաստանի եւ Անգլիայի միջեւ, որից այս անգամ խուսափում էր Անգլիան: Ռուսաստանը որդեգրեց մի նոր ուղղություն: 1840-ից հետո, այն պահանջում է Սուլթան Վայրեթի եւ օրթոդոքսների պաշտպանությունը, ի հեճուկս Ֆրանսիայի, որը ստանձնել էր կաթոլիկ եկեղեցու պաշտպանությունը, ճիշտ այսօրվա նման, երբ բուլղերիկները օրթոդոքս եկեղեցու պաշտպանն են

դարձել: Մենչիկովը պահանջ ներկայացրեց սուլթանին, որ Թուրքիայի բոլոր օրթոդոքսների պաշտպանութունը իրեն հանձնելու պայմանագիր կնքեն, որին Թուրքիան հակառակվեց՝ Անգլիայի ու Ֆրանսիայի պահանջով: Ռուսաստանի դեսպանը՝ Մենչիկովը հեռացավ Պոլսից: 1853 թվականին ռուսական նավատորմը Սինոպի մեջ ոչնչացրեց Թուրքական նավատորմը եւ հիմք դրվեց նոր պատերազմի՝ «Քրիստոնեութան ազատում» նշանաբանով: Ռուսները արշավեցին Կովկասյան եւ Բալկանյան ճակատներում, գրավեցին Տաճկահայաստանը եւ Բալկաններում հասան մինչեւ Վառնա, բայց Անգլո-Ֆրանսիական զորքերը օգնության հասան Թուրքիային: Նրանց միացավ Կենտրոնական Եվրոպան՝ հանձինս Ավստրիայի, որը ցանկանում էր ձեռք բերել Դանուբի ազատութունը: Ռուսաստանը նահանջելով հասավ Սեւաստոպոլ, որտեղ երկար տարիներ պատերազմելուց հետո ստիպված եղավ զիջել բոլոր այն իրավունքները, որ ձեռք էր բերել Քյոլչուկ-Պայնարջիկի, Ադրիանապոլսի եւ Ունկերի դաշինքներով: Ռուսաստանը դուրս էր նետված ոչ միայն Բալկաններից ու Թուրքահայաստանից, այլեւ Սեւ ծովից: Հարկադրված եղավ ընդունել.

ա. Ծովերի ու նեղուցների չեզոք դառնալը

բ. Ռումինիայի ազատութունը

գ. Դանուբի միջազգայնացումը

դ. Թուրքիայի ամբողջականության երաշխավորումը բոլորի կողմից, եւ քրիստոնյաների համար բարենորոգումներ՝ Թուրքիայի միջոցով:

Այս վերջին կետը, որ ձգտում էին իրագործել Անգլիան ու Ֆրանսիան Ռաշիդ Ֆուատ եւ Ալի փաշաների (վարչապետներ) միջոցով՝ անիրական դարձավ, եւ շարունակվեցին հին կարգերը՝ հակառակ դեկավարների կամքի, որը սպառվեց՝ ավարտվելով Մարիոնետների ջարդերով, եւ որի պատճառով Ֆրանսիացիները միջամտեցին, ու արդյունքում Թուրքիայի երդիկի տակ ծնունդ առավ Լիբանանի ինքնավարութունը:

Այս պատերազմները Հայաստանի համար դարձան այն լեռը, որը մոռկ է ծնում միայն:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՐԱՐ

1860-70 թվականներին, իբրեւ հետեւանք Անգլո-Ֆրանսիական ընդդիմության, Ռուսաստանը փոխում է դեպի Պոլիս իր ծավալապաշտական քաղաքականության ընթացքը եւ շարժվում դեպի Կենտրոնական Ասիա: Հաստատվում է Բուխարայում, Խիվայում, Տաշքենդում

եւ այլն, ուր իր առաջխաղացման դեմ միացյալ ճակատ չկա, ուր միակ ընդդիմացողը Անգլիան պետք է լիներ:

Նույն ժամանակամիջոցում Ֆրանսիան, Անգլիան, Ավստրիան ամեն կերպ աշխատում էին Ղրիմի հաջողությամբ ձեռք բերած իրավունքները Լոնդոնի ու Փարիզի խորհրդաժողովներում իրական դարձնել, եւ Թուրքիան ոտքի կանգնեցնել ու ամրացել: Եվ դա հնարավոր են համարում միայն իրագործել բարենորոգումների եւ ռեֆորմի փոփոխության միջոցով: Վարչապետները իրար են հաջորդում: Անպակաս են սահմանադրական ծրագրերը, մշակութային իրավունքների նախագծերը, տնտեսության, բանակի կազմակերպման ջանքերը, բայց այդ ամենը մնում է երեւութական: Թուրքը ստեղծված չէր այս բոլորը մարսելու համար: Բարենորոգումների ծրագրերը Թուրքը ավելի վտանգավոր էր համարում իր գոյության համար, քան իր հողերի բաժանման սպառնալիքները: Իրեն փրկել ցանկացող Անգլոֆրանսիական միությունը իրեն ավելի թշնամական էր համարվում, քան Ռուսաստանի կողմից սպառնացող վտանգը: Հալածանքները, ջարդերը առաջվա նման շարունակում են, որովհետեւ իր ամբողջականությունը ապահովված էր տեսնում:

Այս շրջանում Հայաստանը ստացավ իր ազգային սահմանադրությունը, նրա զավակներին շատերը բարձր պաշտոններ ստացան, բայց այդ բոլորը լուկ երեսի փոշի էին՝ իրականությունը թաքցնող: Հայ ժողովուրդը դատապարտված էր հալածանքի եւ ոչնչացման: Նրա կյանքը շարունակում էր մնալ անասելի դժվար:

Այդ շրջանում Հայաստանը հուլյսի ու հիասթափության մի ժամանակահատված էր ապրում, եւ նրա հուլյսի ապավենը Թուրքական բարենորոգումներն էին եւ Եվրոպան:

ՎԵՑԵՐՈՐԴ ԱՐԱՐ

1870-80 թվականները նոր շրջան են Հայաստանի համար: Նրանք, ովքեր հուլյս ունեին բարենորոգումների միջոցով բարեկամել հայերի կյանքը, հիասթափվեցին: Ֆրանսիան, որը համարվում էր բարենորոգումների դրդիչն ու Թուրքիային ճնշողը՝ պարտվեց Գերմանիային: Ֆրանսիան այլեւս ազդակ չէր: Մյուս կողմից Ռուսաստանը, օգտվելով Ֆրանսիայի պարտությունից, դեմքը կենտրոնական Ասիայից շրջեց դեպի Բալկաններ եւ Տաճկահայաստան: Մինչեւ 1870 թվականը Ռուսաստանը բարեկամ էր Թուրքիային, բայց այդ թվականին չեղյալ հայտարարեց Լոնդոնի ու Փարիզի դաշինքները, որոնք պարտադրված էին Ղրիմի պարտությունից հետո եւ այնպիսի դիրք գրավեց, ինչպիսի դիրք գրավեցին բոլշևիկները 1945 թվականին, երբ

չեղյալ հայտարարեցին 1925 թվականի թուրք-ռուսական դաշինքը: Համաձայնության եկավ Ավստրիայի հետ՝ Բալկանները եւ Հայաստանը Թուրքիայից անջատելու հարցում: 1876 թվականին Ռուսաստանը կարողացավ համաձայնության դալ Անգլիայի հետ, որ առանց Նեղոցներին, Սուեզին եւ Պարսից ծոցին մոտենալու, ազատ գործելու իրավունք ունենա Տաճկահայաստանում եւ Բալկաններում, իսկ Ավստրիան պայման դրեց, որ Արեւմտյան Բալկանները լինեն իր ազդեցության տակ:

Ամեն ինչ նպաստավոր էր Ռուսաստանի համար: 1877 թվականի հունիսին պատերազմ սկսվեց թե՛ Բալկաններում եւ թե՛ Կովկասում, իսկ Ավստրիան մտավ Բոսնիա:

Ռուսաստանը շուտով հասավ Սան-Ստեֆանո մի կողմից, իսկ մյուս կողմից՝ Կարս, Էրզրում եւ ավելի հեռուներ: Նորից Տաճկահայաստանը ազատագրված էր, այս անգամ բացառապես հայ գորավարների առաջնորդութամբ՝ Լոռիս Մելիքով, Լազարեւ, Տեր-Ղուկասյան, Շելկովնիկով եւ այլն: Երբ Սան-Ստեֆանոյում գումարվում էր թուրք-ռուսական խաղաղության ժողովը, հայերը հույս ունեին, որ այնտեղ կդրվի նաեւ Հայաստանի ամբողջականության վերականգնման եւ ինքնավարության հարցը: Սան-Ստեֆանոյում անկախություն ստացան Բուլղարիան, Ռումինիան, Սերբիան, բայց Հայաստանի անկախության մասին ոչ մի խոսք չեղավ: Մերը պետք է լիներ գոնե Հայաստանի ռուսական հատվածը, բայց դա էլ չիրականացավ երկու պատճառով:

Գերմանիան, հանձինս Բիսմարկի հայտարարում էր, որ պետք է Սան-Ստեֆանոյի դաշինքը վերաքննվի միջազգային խորհրդաժողովում: Նրան է միանում նաեւ Դիզրայելին, որը իր չեզոքության համար արդեն 1878 թվականին Թուրքիայից ստացել էր Կիպրոսը, որպեսզի մոտիկից կարողանա պաշտպանել ասիական Թուրքիան, եթե Ռուսաստանը շատ առաջանա: Պատերազմի ժամանակ նա չեզոք դիրք էր գրավել՝ խոստում տալով, որ չի մոտենալու ո՛չ Սուեզին, ո՛չ Նեղոցներին եւ ո՛չ էլ Պարսից ծոցին: Ռուսաստանը մոտեցել էր Պոլսին, ուրեմն իրավունք ունեւր վերաքննություն պահանջելու:

Ժողովը գումարվեց Բեռլինում, որի գլխավոր ղեկավարն է Բիսմարկը: Ավստրիան Արեւմտյան Բալկաններով մղվում է դեպի Սալոնիկ, իսկ Ռուսաստանը՝ դեպի հյուսիս՝ պարտադրելով հետ քաշվել թե Կովկասյան ճակատի իր գրաված տարածքներից եւ թե Բալկաններից: Շուվալով-Դիզրայելի գաղտնի համաձայնությամբ վեհաժողովը գտնում է հարցի լուծման միջին տարբերակ: Ռուսները դատարկում են Տաճկահայաստանը՝ պահելով Կարսն ու Բաթումը:

Տաճկահայաստանն ու Մակեդոնիան տվեցին Թուրքիային՝ պայմանով, որ բարենորոգումներ կատարի: Ռուսներին, Սերբերին եւ Բուլղարիայի մի մասը անկախացան: Ռուսներին տրվեց ինքնավարութիւն՝ թողնելով Թուրքիայի տիրապետութեան տակ: Նովի Բազար, Սանջակ, Բոսնիա-Հերցեգովինա երկրները վրա սահմանվեց Ավստրո-թուրքական հսկողութիւն: Կրետեում պետք է իրականացվեն բարենորոգումներ:

Հայերը, որ ներկա էին վեհաժողովին իրենց կղերականներով, վերադարձան դատարկ պայուսակներով ու խորտակված հույսերով եւ այն եզրակացութեան հանգեցին, որ միայն «կռվով հնարավոր է ազատութիւն ձեռք բերել»:

Այսօր Սովետական պետութեան նպատակն է վերականգնել 1878 թվականի սահմանները, այն տարածքներով, որոնք նվիրել էին Թուրքիային, Ունկերի պայմանագրով, Սեւ ծովի համար: Կհաջողվի արդյո՞ք, ցույց կտա մոտ ապագան:

Այս թվականից հետո Հայաստանի վիճակը ավելի վատթարացավ:

ՅՈՒԹԵՐՈՐԴ ԱՐԱՐ

1880-1904 թվականները Հայաստանի համար պետք է համարել «Աղետի Շրջան»:

Բեռլինի ժողովում ծերունի Դիզրայելին հարցնում էր ծերունի Գորչակովին.

- Ձեմ հասկանում Բիսմարկին, ի՞նչ է որոնում նա Արեւելյան Հարցի մեջ, երբ, ըստ էութեան, անշահախնդիր պետք է լիներ:

Այդ հարցի պատասխանը հետո ստացան, երբ Գերմանիան Ավստրիական կայսրութիւնը դարձրեց իր արբանյակը եւ առաջ քշեց դեպի Բալկաններ, դրանով ոչ միայն հօգուտ Անգլիայի ռուսական ազդեցութեան առաջն առավ այդ տարածքներում, այլեւ Ավստրիայի միջոցով ամուր հաստատվեց այդտեղ՝ սպառնալիք դառնալով Լոնդոնի համար: Գերմանիան հող էր նախապատրաստում Բեռլին-Բասրա երկաթգծի համար, եւ շուտով կարողանալու էր ամբողջ Թուրքիան ու իսլամական աշխարհը իր արբանյակը դարձնել: Նա կարողացավ Բալկաններում ու Հայաստանում այնպիսի իրավիճակ ստեղծել, որ ոչ մեկը հանգստութիւն չունենա, այլ ամենքը իրար դեմ լինեն, իսկ ինքը՝ իրավարար: Եւ որ հակասն է՝ Ֆրանսիան կղզիանա, իսկ Անգլիան ու Ռուսաստանը մնան որպէս թշնամի. բոլորը բաժան, իսկ ինքը նրանց դեմ՝ Եռյակ գինակցութեամբ:

Այդ թվականները Բիսմարկի դիկտատուրայի շրջանն էին, երբ Ֆրանսիան չեզոքացված էր բոլորի կողմից եւ սպառնալիքի տակ էր

Գերմանիայի նոր արչավանքների երկյուղից, երկյուղ, որի պատճառով կարող էր կորցնել Սուեզում իր դիրքը եւ ազդեցութիւնը Եգիպտոսի վրա: Արաբի փաշայի ապստամբութեան շրջանն է, որի առաջն առնելու համար Անգլիան Ֆրանսիային առաջարկում է՝ իրենց շահերը պաշտպանելու համար միասնաբար դուրս գալ Ալեքսանդրիա ու Սուեզ: Խորհրդարանը մերժեց յոթ միլիոն ֆրանկ տրամադրել Եգիպտոս ցամաքահաման ծրագրին, իսկ Անգլիան այդ նպատակի համար հիսունյոթ միլիոն ստեռլինգ տրամադրեց: Անգլիան միայնակ ափ դուրս եկավ՝ Սուեզը եւ Եգիպտոսը իր ազդեցութեան տակ գցելով, ինչն էլ շարունակվում է մինչեւ այսօր: Սա դարձավ գլխավոր պատճառը, որպէսզի սրվեն, եթէ չասենք դառնան թշնամանան, անգլոֆրանսիական հարաբերութիւնները: Դրան ավելանում էր նաեւ Ֆաշո-դայի հարցը: Այս հակամարտութիւնները Գերմանիայի ջրաղացին ջուր են ավելացնում: Մյուս կողմից անգլո-ուսական հարաբերութիւնները Մերվի, Աֆղանստանի վեճերի պատճառով դարձել էին թշնամական: Ռուսաստանը նույնպէս կղզիացած էր թե՛ Կենտրոնական, թե՛ Արեւմտյան Եվրոպայի պետութիւնների կողմից: Եվրոպան բաժան-բաժան էր եղել, եւ ասպարեզը մնացել էր Եռյակ գինակցութեանը, որն էլ ծրագրել էր Արեւելքի բաժանում ու ազգերի բնաջնջում՝ իսլամական կամ թրքական ազատագրութեան պատրվակով:

Ընդհանուր կացութեան մեջ ի՞նչ էր անում Թուրքիան եւ ի՞նչ վիճակում էին գտնվում այն ժողովուրդները, որոնց մասին Բեռլինի ժողովը որոշում էր կայացրել՝ կա՛մ ազատագրել, կա՛մ մարդկային պայմաններ ստեղծել ապրելու համար:

Թուրքիայի քրիստոնյա ժողովուրդները ոգեւորված Հունաստանի, Սերբիայի, Ռումիանիայի, Բուլղարիայի ազատագրական շարժումներով, իրենք եւս սկսեցին կազմակերպվել, հեղափոխութեան միջոցով իրենց ազատութիւնը ձեռք բերելու համար: Միջազգային հանրութեան ուշադրութիւնը հրավիրեցին իրենց անտանելի կացութեան վրա, մանավանդ որ Բեռլինի վեհաժողովը վեց պետութիւնների երաշխավորութեամբ պայմանավորվել էր Մակեդոնիայում, հայկական վեց վիլայեթներում եւ Կրետեում բարենորոգումներ կատարել: Այդ երեք ազգերի կուսակցութիւնները երկարամյա պարտիզանական կռիվ սկսեցին Թուրքիայի դեմ: Բազմաթիվ հերոսամարտեր տեղի ունեցան, բայց դրանք միշտ մատնվեցին անհաջողութեան եւ ավարտվեցին արյունոտ ջարդերով: Այդ հուսահատ եւ անհավասար կռիվ գլխավոր շարժառիթը վեց պետութիւնների կողմից տրված բարենորոգումների խոստումներն էին: Թուրքական պետութիւնը իր խորիմաստ Սուլթան Համիդով գիտեր, որ վեց պետութիւնների

երաշխավորութիւնը արժեք չունի, որովհետեւ դրանցից երեքը՝ Գերմանիան, Ավստրիան, Իտալիան, հետաքրքրված չեն բարենորոգումները խնդրով եւ նույնիսկ հակառակը, իրենց նպատակների մեջ չէր մտնում Մակեդոնիայի ազատագրումով նոր արգելքներ ստեղծելը Սալոնիկի շուրջ, որի տիրապետութեան էին ձգտում: Նրանք չէին ցանկանում Սերբիայի միացումով ուժեղացնել Սլավոններին, դեմ էին նույնիսկ Կրետեի ազատագրմանը կամ միացմանը Հունաստանին, որովհետեւ գտնում էին, որ դա կհզորացնի ծովային հակառակորդ Անգլիային: Դեմ էին նաեւ Հայաստանի բարենորոգումների ծրագրին, որովհետեւ Թուրքիան՝ իրենց աջակցութիւնն ունենալով, ավելի մեծ խոչընդոտ պետք է դառնար Ռուսաստանի դեմ, քան թե բարենորոգված Հայաստանը, որը կգերադասեր աջակցել Անգլիային կամ Ռուսաստանին, քան՝ իրենց: Ուրեմն Թուրքիան վստահ էր, որ այդ երեք պետութիւններից ոչ մեկը արգելք չի լինի իրեն՝ նպատակների իրագործման ճանապարհին:

Անդրադառնալով Ռուսաստանին, Թուրքիայի համար պարզ էր, որ Մոսկովան ուզում է տեր դառնալ «Տաճկահայաստանին, բայց առանց հայերի», որը հրապարակավ հայտարարել էր Լոբանով Ռաստովսկին: Դա պատահական խոսք չէր. այն բխում էր Ռուսաստանի հիմնական հաշիվներից. նախ՝ Տաճկահայաստանի ազատագրումը, նրա անկախութիւնը կամ պարզ բարենորոգումները բավական էին, որ նրա սահմանակից ռուսահայ Հայաստանն էլ ցանկանար ունենալ իր ազատութիւնը, բարենորոգումը կամ անկախութիւնը: Ուրեմն, պաշտպանելով Հայոց Դատը Թուրքիայում, փաստորեն Կովկասում գործելու է իր շահերի դեմ, որն անընդունելի էին համարում փոխարքա Գոլիցինները եւ Վորոնցովները: Երկրորդ՝ հայերից հետո, Վրաստանը, թաթարները, լեռնականներն էլ հայերի օրինակով պիտի վարակվեին եւ անջատողականութեան ձգտեին Անդկովկասում: Այսպիսով՝ Տաճկահայաստանի ստեղծումը իր շահերին դեմ էր, իսկ նրա ոչնչացումը թուրքերի ձեռքով, իր շահերին համապատասխան:

Հետո Ռուսաստանը հիմնավոր տնտեսական, ռազմական պատճառներ ունէր Տաճկահայաստանի բարենորոգումներին դեմ լինելու: Այն իր ձեռքում էր պահում Ասիայի բոլոր ցամաքային ճանապարհները, որոնք բնականաբար անցնելու էին Հայաստանին: Երբ միջազգային երաշխավորութեամբ Հայաստան ստեղծվեր անկախ, ինքնավար կամ բարենորոգված, այդ պարագայում էրզրում մտող բոլոր ճանապարհները Փոքր Ասիայից պիտի շարունակվեին մինչեւ Անդրկովկաս, Իրան, Կենտրոնական Ասիա: Այդ ճանապարհներից օգտվելու էր Կենտրոնական Եվրոպան, որը դեպի Ասիա տանող ճանապարհ չունէր եւ կուներար,

եթե միջազգային երաշխավորությամբ Հայաստան ստեղծվեր: Ճանապարհ էր ունենալու նաեւ Անգլիան, որն արդեն պատերազմում էր Աֆղանստանում: Փաստորեն այդ երկրի բարեկարգումը, ճանապարհների բացելը՝ իր թե տնտեսական, թե ռազմական շահերին դեմ էր: Սա գիտեք նաեւ Սուլթան Համիդը եւ հասկանում էր, որ իրականում Ռուսաստանը իր բնական դաշնակիցն է, որը դեմ է անկախ կամ բարենորոգված Հայաստանին:

Ֆրանսիայի համար Հայկական Հարցը մարդասիրական հարց էր, մանավանդ որ արդեն հեռացել էր Եգիպտոսից: Մարդասիրության համար նա մատը մատին չէր տա՝ վնասելով իր տնտեսական, քաղաքական շահերը Թուրքիայում, որոնք շատ ավելի կենսական էին, քան հայկականը: Սա հայտնի էր Թուրքիային եւ մամուլի ողբն ու աղաղակը չէին կարող փոխել կացությունը: Հայկական Հարցը դարձել էր Ֆրանսիայի համար առեւտրի նյութ՝ վաստակելու այս կամ այն երկաթուղու, հանքի կամ առեւտրի մենաշնորհը:

Մնում էր Անգլիան, որը երբեք մարդասիրական ակնոցով չի մոտեցել քաղաքական հարցերի լուծմանը, թեեւ հայկական, մակեդոնական եւ կրետական հարցերի ժամանակ միշտ շուսյել է մարդասիրական նշանաբաններ՝ քողարկելու համար իր բուն շահախնդրությունը եւ չեզոքացնելու Ռուսաստանի միջամտությունը: Դրա համար համառորեն հետապնդել է Մակեդոնիայի, Կրետեի, Հայաստանի բարենորոգումների ծրագիրը, այն նպատակով, որ նրանք պատճառ չդառնան Ռուսաստանի առաջխաղացման համար: Կայսրության շահերից էր բխում նրա վարքը, նախ նրա համար, որ Ռուսաստանը ասիական ցամաքային ճամփաների մենատեր չդառնար, եւ եթե բացվեին Փոքր Ասիա-էրզրում-Կենտրոնական Ասիա ճանապարհները՝ որպես մեկ միջազգային ուղի, այդ պարագայում ինքն էլ հնարավորություն էր ունենալու դրանցից օգտվելու, Արեւմուտքից դեպի Կենտրոնական Ասիա շարժվելու՝ ուր Պամիրի ստորոտներում հաստատվում էր Ռուսաստանը, սպառնալիք դառնալով Հնդկաստանի համար: Երկրորդ՝ Թուրքիայի անկանոն վիճակը միշտ առիթ պիտի տար, որ Ռուսաստանը դա պատրվակ բռնելով, իջնի դեպի էրզրում, որով կվտանգվեին Իրանի, Պարսից ծոցի, Նեղոսյանների եւ Ալեքսանդրեթի ռազմական հենակետերը:

Թուրքիայի կողքին, միջազգային երաշխավորությամբ հաստատված, անկախ, ազատ, ինքնավար կամ բարենորոգված Հայաստանի առկայությունը ոչ միայն թույլ չէր տալու, որ Ռուսաստանը առիթներ փնտրի հանուն քրիստոնեության պաշտպանության աշխարհակալ քայլեր անի, այլեւ պատճառ էր դառնալու, որ բռնակալ Ռուսաստանում

եւս ազատութեան ձգտումներ արթնանան, եւ Անդրկովկասի ժողովուրդները փոխանակ նայելու հյուսիս, իրենց աչքերը հառեն հարավ՝ այնտեղ փնտրելով իրենց փրկութիւնը:

Նույն վարքագիծն ունէր Անգլիան նաեւ Կրետեի եւ Մակեդոնիայի հարցի շուրջ՝ հուլիսի պահանջի վերաբերյալ, կասեցնելու համար ոչ միայն Ռուսաստանի, այլ նաեւ Կենտրոնական Եվրոպայի առաջխաղացումը դեպի Միջերկրական:

Անգլիայի կայսրապաշտութեան հետեւանքով առաջացած այս «թրքասիրութիւնը, հայասիրութիւնը, բալկանասիրութիւնը» նպաստավոր էր միայն Օսմանյան Կայսրութեան եւ նրա հպատակ ժողովուրդների կամ ծնունդ առած Բալկանյան պետութիւնների համար: Բայց կային անհաղթահարելի դժվարութիւններ այդ նպատակները իրագործելու համար:

Ռուսաստանը դեմ էր, քանի որ իր դեմ էին ուղղված թե բարենորոգումները եւ թե թուրքիայի առողջացումը: Ռուսաստանին հարկավոր էր մի պետութիւն, որը ո՛չ ապրի, ո՛չ էլ մեռնի:

Կենտրոնական Եվրոպան, եթե նույնիսկ համամիտ լինէր Հայաստանի հարցում, սակայն Մակեդոնիայի եւ Կրետեի պարագայում չէր կարող կողմ լինել, իր առաջխաղացմանը դա խոչընդոտ նկատելով:

Ֆրանսիան դեռ քեն էր պահում Անգլիայի դեմ՝ Եգիպտոսի եւ Ֆաշոյի հարցով եւ տարված էր կղզիացումից դուրս գալու մտահոգութիւններով:

Տեսականորեն թուրքիան պիտի կողմնակից լինէր անգլիական հայեցակետերին: Սաբահեդդինի նմանները դեռեւս թուրքիա չէին: Թուրքիան ներկայանում էր Սուլթան Համիդի պանիսլամիզմով, նախորդների աշխարհակալ նկրտումներով, Օսմանյան տան ավանդուցութիւններով, մենատիրութեամբ, կենտրոնաձիգ կարգերով եւ հպատակեցման ու մահվան վճիռներով:

Փոքր ազգերը պիտի կողմնակից լինեին, բայց նրանք դեռ զգացական էին, նրանց վարքը որոշվում էր անուշ խոսքերի ու քաղցր ժպիտների ազդեցութեամբ եւ ոչ թե սառը դատողութեամբ եւ հաշիվներով: Նրանց ղեկավարութիւնը գտնվում էր Բալկաններում՝ զերմանական թագավորական տներին ձեռքում: Հայաստանի ղեկավարները էջմիածնում ու Թիֆլիսում էին, որոնք պաշտոնյա էին ոչ միայն Հայոց, այլեւ Ռուսական Կայսրութեան:

Ամեն ինչ նպաստավոր էր թուրքիայի համար՝ Բեռլինի վեհաժողովի բոլոր կետերը փոքր ազգերի վերաբերյալ մեռած համարելու տեսանկյունից:

Թուրքիայի մենիշխան ղեկավար Սուլթան Համիդի (գահ բարձրա-

ցած երիտասարդ թուրքերի միջոցով) առաջին քայլը եղավ իրեն գահ բարձրացնողներին արյան մեջ թաղելը: Իր երեսուներեք տարվա կառավարման տարիներին նա դարձավ մի մասնագիտացած բռնակալ եւ նուրբ դիվանագետ, որից Հայաստանը ոչ մի լավ բան չստացավ, թեպետ նրա երակներում հոսում էր նաեւ հայի արյուն: Նա հայոթյանը բերեց եւ անպատվություն, ե՛լ մահ: Նրա հիմնական ուղղությունը Հայաստանում եղավ:

Ոչ մի ճանապարհ, ոչ մի երկաթուղի չկառուցել Հայաստանում եւ չտալ ոչ մի արտոնություն: Դա պետք է գոհացնեի Ռուսաստանին: Հայաստանը պատերազմի դաշտ է եւ ինչքան ավերակ մնա, այնքան նպաստավոր է պաշտպանության համար:

Ճանապարհներ կառուցել միայն Անատոլիայում եւ այնտեղ մենաշնորհներ տալ Ֆրանսիային եւ շահագրգռել նրան նյութականով:

Ճանապարհների արտոնություններ տալ Հայաստանի հարավում՝ Բեռլին-Բյուզանդիա-Բաղդադ գծի վրա եւ Կենտրոնական Եվրոպային, որպեսզի նա թե՛ Անգլիային, թե՛ Ռուսաստանին հակակշիռ լինի:

Հայաստանի մեջ ո՛չ մի հանք չպետք է շահագործվի եւ ո՛չ էլ գիտությունը զարգանա: Այն անհատները, ովքեր կփորձեն նման բան անել՝ համարել օտար ուժերի համար խայծ հայթայթողներ եւ իբրեւ հայրենիքի դավաճաններ՝ պատժել:

Իսլամիզմն է կայսրության հիմքը, եւ իբրեւ նվազագույն չարիք՝ թուրքիզմը: Ուրեմն ուժեղացնել իսլամադավան քրդերին, հայերին հակակշռելու համար կազմակերպել մահմեդական չեքքեզների ներդաղթ դեպի Հայաստան: Նրանք «համիդիե» են, հայերը՝ «գյավուր»:

Հայկական Հարցը կարող է լուծվել միայն հայերին բնաջնջելու միջոցով: Դրան դեմ է Ռուսաստանը, եւ եթե նույնիսկ այդ քաղաքականությանը հակառակորդներ լինեն, նրանք անկարող են որեւէ քայլ ձեռնարկել հօգուդ հայերի, քանի որ բոլորն էլ իրար դեմ են:

Համիդի այս սկզբունքները դարձան իրական գործ: Նրա իշխանության ժամանակ Հայաստանում հաղորդակցության ոչ մի միջոց, գիտության ո՛չ մի ճյուղ, ո՛չ մի հանք, տնտեսություն ո՛չ մի ոլորտ չզարգացավ: Ազգամիջյան կռիվները բազմապատկեցին, հայերն ու քրդերը իրար դեմ լարվեցին, սկսվեցին պարտիզանական կռիվներ, անապահովություն, ջարդ, եւ երկիրը դարձավ դժոխք: Համիդը չմեռած, շուտով հասնելու էր իր երազի իրագործմանը՝ Լոբանով Ռոստովսկու ցանկության համաձայն «Հայաստանը տեսնել առանց հայոթյան»:

Անգլիան, ի տես այս բարբարոսության եւ Բեռլինի 1878 թվականի

Ժողովի հանձնառնությունները՝ Հայաստանի կացութեան վերաբերյալ, նախաձեռնեց ստորագրող պետությունների միջամտությունը: Նրա առաջարկները ապարդյուն անցան 1880-ին, 1892-ին, 1893-ին եւ 1896-ին, որովհետեւ Գերմանիայի համար, ըստ Բիսմարկի հայտարարութեան, «Հայկական կոտորածները պոմերացի գինվորի մի կոշիկն անգամ չարժեն», մանավանդ որ Բաղդադ գծի շինարարութեան իրավունքը ապահովել էր իր համար: Ֆրանսիան Գերմանիայի ահից մտել էր Ռուսաստանի փեշի տակ, եւ այնքան կարող էր միջամտել, որքան Ռուսաստանը կցանկանար: Ռուսաստանը դեմ էր բարենորոգումներին, այն համարելով «անգլիական իմպերիալիզմ»: Այստրիան, իտալիան ցանկանում էին Սալոնիկը, իսկ բարենորոգումներով այդ ցանկութեանը հօդս կցնդեին: Երբ 1896-ին անգլիական նավատորմը մտավ Մարմարա, պահանջելով բարենորոգումներ, այդ ժամանակ ռուսական բանակը պատրաստվեց մտնել Պոլիս՝ ի պաշտպանութեան սուլթանի եւ նրա ռեժիմի: Ընդհանուր պատերազմը անխուսափելի էր դառնում, եթէ չլինէր Ֆրանսիայի միջամտությունը՝ հօգուտ խաղաղութեան: Բայց դա էլ՝ հայութեան զոհաբերութեան գնով:

Սալթիկոբի նավատորմը հետ քաշվեց Պոլսից, Մարմարայից, որովհետեւ այլեւս «չէր կարող Արարատը բարձրանալ», որտեղ խռոված էին ռուսական բանակները՝ ի պաշտպանութեան թուրքիայի:

Անգլիային իբրեւ դաս, Կրետեում 1897 թվականին ջարդ եղավ: Մակեդոնիայի խառնակութեանը եւ դրանից հետո եղած «Մայիսյան ծրագրերը», Մուստեֆի (Մուստեկ) եւ այլ դաշինքները մնացին անգործ թղթի կտորներ: Զարդերն ու բռնություններն անարգել շարունակվեցին մինչեւ 1904 թվականը, որը ինչպէս թուրքիայի եւ Հայաստանի, այնպէս էլ միջազգային հարթութեան վրա պետք է համարել մի նոր շրջան:

Ութերորդ ԱՐԱՐ

1904-16 թվականները պետք է համարել Բեռլինի վեհաժողովից հետո ստեղծված իրադրութեան հիմնական փոփոխութեանները շրջան: Վերջացած պետք է համարել Բիսմարկյան մենատիրութեան եւ Եռյակ Զինակցութեան խաղաղութեան պարտադրելու շրջանը:

Ֆրանսիան, որ մինչեւ 1904 թվականը հարկադրված մտել էր Ռուսաստանի հովանու տակ, որպէսզի նրա միջոցով կարողանա ազատվել Գերմանիայի սպառնալիքից, սկսել էր տատանվել Ռուսաստանի վրա հենվելու նպատակահարմարութեան հարցում: Ռուս-ճապոնական պատերազմի ընթացքում Ֆրանսիան նկատեց նրա ռազմական եւ ներքին թուլութեանը: Հարկադրված էր ուրիշ ավելի ամուր հենարան

որոնել եւ գտալ՝ իր հակառակորդ Անգլիան: Գփտվել էին Եգիպտոսի եւ Սուդանի հարցերի ժամանակ: Նրա բարեկամությունը շահելու համար, համակերպվեց, եւ փոխարենը Անգլիայից ստացալ ազատություն՝ հաստատվելու Մարոկկոյում, Թունիսում եւ նպաստավոր պայմաններով իշխանություն ձեռք բերեց Մադագասկարում, Հնդկահինում եւ այլուր: Անգլիան դարձալ Ֆրանսիայի հենարանը:

Մյուս կողմից Իտալիան, որ Եռյակ Զինակցության անդամ էր, նկատելով, որ Ավստրիան համառորեն իջնում է Ադրիատիկի ափերը, դեպի Սալոնիկ, սկսեց մերձենալ Անգլիայի հետ, որը թույլ տվեց նրան Թուրքիայից գրավել Տրիպոլիտենը (Տրիպոլիտանիա), Բենգալը եւ Երկոտասան (Դողեկանեսյան) կղզիները:

Ռուսաստանը, մի կողմից Անգլիայի, մյուս կողմից Գերմանիայի եւ Ավստրիայի ընդդիմանալու պատճառով հույս չուներ իջնելու Միջերկրականի ափեր եւ իր սլաքները ուղղել էր դեպի կենտրոնական Ասիա՝ Անգլիայի եւ դեպի Հեռավոր Արեւելք՝ Զինաստանի ու Ճապոնիայի դեմ: Բայց այնտեղ եւս, իր առջեւ, նորից կանգնած էր Անգլիան, որ 1902 թվականից դաշնակցում էր Ճապոնիայի հետ: Ճապոնիայի դեմ ձախողված իր պատերազմից խրատված եւ հաշվի առնելով իր ներքին թուլությունը, լսեց իր դաշնակից Ֆրանսիային՝ լեզու գտնել Անգլիայի հետ: 1904 թվականից հետո այս տերությունները բարեկամացան՝ համաձայնության գալով Աֆղանստանի, Իրանի, Բալկանների եւ այլ հարցերի շուրջ եւ համաձայնվեցին իրար մեջ բաժանել դրանք կամ ճշտել ազդեցության գոտիները:

Անգլիան ճշտել էր իր դիրքը եւ այլեւս դիտողի դերում չէր, եւ անթույլատրելի էր համարում, որ Բեռլին-Բաղդադ գիծը վտանգի ենթարկի իր Կայսրությանը: Եռյակ Զինակցության առանցքի դեմ նա դարձել էր մի նոր առանցք՝ իր կողքին ունենալով Ֆրանսիան ու Ռուսաստանը, դաշնակցելով Ճապոնիայի հետ եւ հոգեպես իր հետ ունենալով Իտալիան:

Ստեղծված այս դրությունը հեղաշրջում էր նախքան 1904 թվականը: Այժմ Գերմանիան կղզիացման վտանգի տակ էր, եւ հետեւաբար նրա կամքը պարտադիր չէր կարող լինել: Մեծ պետությունների հետ կատարված այս փոփոխությունները անդրադառնալու էին փոքր պետությունների վրա:

Գերմանիայի փորձերը, որ նպատակ ունեին քայքայելու Եռյակ Հանաձայնությունը եւ կազմելու ցամաքային պետությունների դաշնակցություն՝ Գերմանիա-Ֆրանսիա-Ռուսաստան, գայթակղեցին Նիկոլայ կայսրին եւ կայսրուհուն. բայց նրանք մենակ մնացին: Ոչ վիճելի դերասանական ճամփորդությունը Դանժե (Տանժեր) եւ

իսմալական երկրներ եւ ոչ էլ Ազադերի, Ալժիրի սպառնալից կեցվացքը եւ ցուլցերը, որոնք ավելի սերտացրին Եռյակ Համաձայնութեան հիմքերը, արդյունքներ չտվեցին, չնորհիվ Կլեմանսոյի, Պուանֆաբեի, Լորդ Ջորջի եւ ուրիշների համառ կեցվացքի:

Նոր իրավիճակը անմիջապէս իր արդյունքը տվեց, մանավանդ Թուրքիայի վերաբերյալ:

Համիդի իշխանութունը, որն իր ուժը գտնում էր Գերմանիայի կամքի եւ Եվրոպայում առկա հակամարտությունների մեջ, այլեւս չկար, հետեւաբար իր իշխանութունն էլ երեւում էր:

Թուրք հեղափոխական կուսակցությունները եւ ռեժիմի հակառակորդները զգում էին վտանգը եւ գիտակցում Կայսրութեան անկման մոտալուտ լինելը: Վտանգը զգում էին նաեւ քրիստոնյա փոքրամասնությունները: Սերբերը զգում էին, որ ոչ միայն Թուրքիայի, այլեւ Ավստրիական կայսրութեան կողմից դատապարտված են ոչնչացման: Հայերը գիտեին, որ դատապարտված են ոչ միայն Թուրքիայի, այլեւ Ռուսաստանի կողմից: Բուլղարները, մակեդոնացիները նույն ձեւով էին մտածում Սանտանսկիների գլխավորութեամբ: Արաբները մտածում էին, որ մոտ է վերջին ժամը: Ռեժիմի անկումը ճանապարհ կբացի դեպի անկախություն եւ ազատություն:

1907 թվականին Թուրքիային հակառակորդ կուսակցությունները եւ ազգերը հաջողեցին Փարիզում համագումար հրավիրել՝ Ակնունու նախաձեռնութեամբ: Այդ համագումարը Սաբահետդինի, Ակնունու եւ Ահմետ Ռիզայի նախաձեռնութեամբ որոշում է՝ գահընկեց անել սուլթանին, հաստատել Սահմանադրություն ու ազգերի ինքնավարություն: Այս որոշումից մեկ տարի չանցած՝ 1908 թվականին, Թուրքիայի ընդհանուր հեղափոխությունը իրականություն դարձավ, եւ սուլթանը գահընկեց արվեց: Սակայն Սահմանադրութեան համար հիմք դարձան Միթհատ փաշայի սկզբունքները եւ ազգերի ինքնավարությունը մի կողմ դրվեց: Սա պատճառ էր, որ հին անտազոնիզմը շարունակվի հետագայում:

Նույն թվականին Ավստրիան գրավեց Բոսնիա՝ Հերցեգովինան եւ նպատակ դարձրեց Սերբիայի ոչնչացումը եւ Սալոնիկի գրավումը: Բայց ընկրկեց Եռյակ Համաձայնութեան եւ Գերմանիայի տված չափավորութեան խորհուրդների առջեւ:

Նույն թվականին Բուլղարիան իբրեւ պատասխան Ավստրիայի քայլերի՝ ինքն իրեն անկախ հայտարարեց, իսկ Ռումելը՝ իրեն կցված: Համաձայնական Բլուկը այս քայլին համամիտ էր:

1911 թվականին ասպարեզ իջավ Խտալիան եւ համաձայն Անգլիայի տված խոստումի գրավեց Տրիպոլին, Բենգազին եւ Տոտեկանեզի կղզիները՝ ապահար թողնելով ինչպես Թուրքիային, այնպես էլ Ավստրիային ու Գերմանիային, որոնց հաշիվները բոլորովին ուրիշ էին:

Դեռ Տրիպոլիում պատերազմը չվերջացած՝ 1912-ին ստեղծվեց Բալկանյան պետությունների համաձայնությունը «Բալկանները՝ բալկանցիներին» նշանաբանով: Դրդիչներից էր Ռուսաստանը:

Պարտերազմ սկսվեց Թուրքիայի դեմ: Թուրքիան դուրս քշվեց Բալկաններից, իսկ Պոլիսը՝ վտանգվեց: Այդպիսով Կենտրոնական Եվրոպայի բոլոր ձգտումներն ու ծրագրերը խանգարված էին՝ ի ուրախություն Ռուսաստանի ու Անգլիայի: Բայց Ռուսաստանի այդ ուրախությունը երկար չտևեց, որովհետև Բալկանները դարձել էին մի արգելք ոչ միայն Կենտրոնական Եվրոպայի, այլև հենց իր առաջխաղացման համար, ինչը Անգլիայի ծրագրերն էր: Այդ հիասթափությունը պատճառ դարձավ, որ 1913 թվականին սկսվի երկրորդ Բալկանյան պատերազմը. մի կողմում Բուլղարիան էր, մյուս կողմում՝ Սերբիան, Հունաստանը, Ռումինիան, Թուրքիան: Հետեւանքը եղավ Բուլղարիայի պարտությունը եւ Ադրիանապոլսի վերադարձը Թուրքիային:

1908-13 թվականներն են: Ալբանիայի ապստամբությունները, գերմանական իշխանությունների հեղինակած ինքնավարության ու անկախության ծրագրերը, իբրև հակաթույն էին պանսլավիզմի եւ Սերբիայի դեմ: Ծրագրեր, որոնք առաջ էին մղվում նաև Ավստրիայի կողմից, ի գոհունակություն Անգլիայի եւ Գերմանիայի, եւ տհաճություն պատճառելով Ռուսաստանին եւ Խտալիային:

Ի՞նչ էր կատարվում Ասիական Թուրքիայում: Սիրիայում՝ Սեյիդ Իտրիսը, Եմենում՝ Իմամ Յահեան, բռնել էին լիակատար անկախության ճանապարհը: Սանա բերդը գերեզմանոց էր դարձել Թուրքական բանակների համար: Բահրեյն, Քուվեյթ, Հադրամուտ (Հազրամաուտ), Օման Արաբական շրջանները փաստորեն բաժանվել էին Թուրքիայից եւ որտեղ ոչ պաշտոնապես իշխում էին անգլիացիները: Միջին Արաբիան ապստամբել էր, եւ ոչ ոք այնտեղ մուտք չունեց, իսկ Հաշեմիտները, թեեւ չէին ապստամբել, բայց նրանց հպատակությունը ձեւական էր:

1904 թվականին Եվրոպան բաժանվեց երկու առանցքի՝ անգլիական եւ գերմանական, որոնց շուրջն էլ թավալվում էին մնացած բոլոր մեծ ու փոքր պետությունները: Թուրքիան նույնպես բաժանված էր երկու թշնամի առանցքների միջեւ ոչ թե համաձայնությամբ, այլ իրար

բախեց լու միտումով:

Ի՞նչ էր կատարվում Հայաստանում, որը նույնքան զգալուն կետ էր, որքան Բալկաններն ու Նեղոսցիները:

1908 թվականից հետո հայուլթյան ղեկավարութունը գտնվում էր Դաշնակցության ձեռքում, որը թուրքական հեղափոխության նախաձեռնողներից մեկն էր: Այդ թվերին նա այն համոզմանն էր եկել, որ եթե Մակեդոնիան դատապարված է Ավստրիայի կողմից ստրկության, Հայաստանն էլ՝ Ռուսաստանի, որ եթե թուրքը ջարդարարն է, ապա այդ ջարդի ներշնչողն ու թուլյատրողը Ռուսաստանն ու կենտրոնական Եվրոպան են:

Դաշնակցութունը հարցի լուծման մեկ այլ ելք գտավ՝ ազգերի ինքնորոշում եւ դաշնակցութուն՝ Օսմանյան հարկի տակ: Այս հիմունքներով էր, որ Հայ Յեղափոխութունը շարունակվում էր 1904 թվականից սկսած մինչեւ Մահմանդրութուն՝ 1908 թվականը եւ դրանից հետո էլ մինչեւ 1914 թիվը: Հայկական շարժումը հիմքում ավելի թուրքիայի վերակառուցման, բարենորոգումների շարժում էր, քան անջատողական, եւ այս կամ այն պետությանը կցման ձգտում, ինչպիսին էին Բալկանյան շարժումները, բացառությամբ ալբանական եւ մակեդոնական, եւ Ասիայում՝ արաբական շարժումների: Այս ընթացքի մեջ էր Հայաստանը, նույնիսկ նվաճումներ կատարած, երբ արտաքին միջամտությունները եկան ամեն ինչ տակնուվրա անելու:

1911-12 թվականներին Բեռլինի վեհաժողովի մասնակիցներից՝ Ավստրիայի նախաձեռնությամբ եւ Գերմանիայի լուռ համաձայնությամբ, սկսեց արժարժվել Հայաստանի բարենորոգումների հարցը: Իհարկե բարի չէին նրանց մտադրությունները, քանի որ, Ռուսաստանից հետո, մինչ այդ իրենք էին եղել նրա չգործադրվելու պատճառը: Այդ քայլով պատասխանում էին Բալկաններում Ռուսաստանի միջամտություններին: Անգլիան, Ֆրանսիան, որոնք իրական շահեր ունեին բարենորոգումների մեջ, օգտվեցին եւ չհակառակվեցին: Ռուսաստանը իր դաշնակիցներին միացավ ակամա: Մեծ պետությունները, իրենց ներքին հաշիվները նկատի առնելով, ծրագրեր են կազմում՝ յուրաքանչյուրն իր շահերն ապահովելու միտումներով եւ ի վերջո հանգում են այն եզրակացության, որ Հայաստանը պետք է բաժանել երկու գոտու: Տրապիզոն, էրզրում, Վան, Բիթլիս նահանգները եւ հարավային մնացած վիլայեթները բաժանել երկու գոտու ու բարենորոգումներ իրականացնել միջազգային հսկողությամբ, երկու չեզոք եվրոպացիների ղեկավարությամբ՝ Հոֆի ու Վեստենենգի: Այս ծրագրերը մշակվեցին հայուլթյան կամքից անկախ, թեեւ Ռուսաստանի կողմից ներկայացված էր էլ միաձնի կաթողիկոսարանը,

որի պատվիրակ նշանակված էր Պողոս Նուբար Փաշան: Բայց նրանց դերը երկրորդական էր լինելու: Մեծ պետությունների հիշյալ որոշումը, որն ընդունվեց Թուրքիայի կողմից 1913 թվականին, մի քանի ամիս անց չեղյալ համարվեց: Հոֆի ու Վեստենեդի ծրագրերը գերեզման դարձավ հայության համար:

1914 թվականն է: Պատերազմ է գերմանական ու անգլիական առանցքների միջև՝ իրենց արբանյակներով: Կովոդ յուրաքանչյուր կողմի համար արդեն ուվագծված էր պատերազմի նպատակը: Գերմանիան իր զինակիցներով՝ հովանու տակ առած Թուրքիան եւ Բուլղարիան, Ֆրանսիայի եւ Բելգիայի ջախջախումից հետո ձգտում է Մերձավոր Արեւելքի վրայով հարվածել Բրիտանական Կայսրությանը եւ վերջ տալ նրա գոյությանը: Վերջինս ճշտել էր իր անելիքը. Մերձավոր Արեւելքից, մանավանդ Բեռլին-Բաղդադ գծից, հեռացնել Գերմանիային: Բաժանել Թուրքիան: Ազատել Արաբիան եւ Արեւելյան Թուրքիայի նահանգները՝ ստեղծելով Հայաստան եւ Քրդստան, բայց պայմանով, որ նրանք լինեն միջազգային հակակշռի տակ եւ հենարան չդառնան ո՛չ Գերմանիայի, ո՛չ էլ Ռուսաստանի համար, կամ էլ ալյալիսի մի ուժի, որը կարող է վտանգավոր դառնալ: Մեծացնել Հունաստանը ի հաշիվ Թուրքիայի, ապահովել Բալկանների անկախությունը, որպեսզի հենարան չդառնա ո՛չ կենտրոնական Եվրոպայի, ո՛չ էլ Ռուսաստանի համար, եւ այս բոլորը իր կամ չեզոք հովանու ներքո՝ թեկուզ Ամերիկայի, կամ Թույլ մրցակից Ֆրանսիայի:

Հայերը հույսերով լի էին, երբ նախքան պատերազմը, պատրաստվում էին Հայաստանի ինքնավարության նախագծերը: Տրապիզոն, էրզրում, Բիթլիս եւ Վան նահանգների միջազգային հսկիչ է նշանակվում Հոֆը: Ուրեմն, եթե լինեն պատերազմի ժամանակ դաշնակիցների հետ, անպայման ստանալու են ավելին, քան ինքնավարությունը, բարենորոգումը, առնվազն՝ հայոց հողերի ամբողջացում եւ հայոց պետության ստեղծում: Գունդ-գունդ մտնում են դաշնակից բանակների մեջ. 250.000-ից ավելի հայ զինվոր է կռվում եւ «փոքրիկ դաշնակից» լինելու պատվին արժանանում դաշնակից պետությունների կողմից:

1914-16 թվականներին Ռուսաստանը թույլ է: Նրա բանակները շոգիանում են Մազուրյան լճերում, Կարպատներում: Ռուսաստանը հայության օգնության կարիքն ուներ Կովկասյան ճակատում: Աքսորից վերադարձվում են «անհիծյալ մառզեբրիստները», քաղաքական բանտարկյալները: Ոչ պաշտոնական շնջում են հայերի ականջներին՝ «Հայաստանը՝ հայությանը», եւ ողջ հայությանը մղում դեպի պատերազմ: Հայության շնորհիվ Կովկասյան ճակատը կայունանում

է: Փրկված էր Կովկասյան ճակատը, Չախջախված էին էնվերի բանակները, բայց Չախջախված էր նաեւ հայուլթյունը: Մեկ միլիոնից ավելի հայուլթյուն էր կոտորվել. եւ իրականացել էր Համիդի ու Լոբանով Ռասսովսկու երազանքը... Ի՞նչ հոգ այդ հսկա կորուստը. հայերն իրենց երջանիկ էին զգում՝ դիակների կուլտերի մեջ: Զարդված էր Թուրքիան եւ ազատված էր Հայաստանը իր բոլոր հողերով: Միացյալ Հայաստան էր ստեղծված: Պատերազմի այդ եռուն շրջանում, երբ հայուլթյունը ողբերգուլթյան ու հուլսի շրջան էր ապրում, ուլթերորդ արարի վարագուլթյուն իջնում է Հայաստանի վրա եւ մի նոր արար է սկսվում՝ կյանքի ու մահվան ելեւէջներով:

ԻՆՆԵՐՈՐԴ ԱՐԱՐ

1916 թիվն է: Պատերազմ է: Դաշնակիցների հաղթանակի ուրվականը արդեն երեւում է Վերդոնի(Վերդեն), Առասի, Իգերի ափերին: Սուեզում թուրքերը պարտվել են, Կովկասյան ճակատում ուռաներն են հաղթող, թեեւ գերմանական սահմանների վրա դեռ վտանգ կա: Գերմանիան ուժգին հարվածներ է տալիս՝ Ռուսաստանին անջատ հաշտուլթյուն պարտադրելու համար: Անջատ հաշտուլթյան հեռանկարը լուրջ կողմնակիցներ ունի ինչպես կայսերական պալատում, այնպես էլ նախարարների շրջանում: Այս դրուլթյունը նպաստավոր ձեւով շահարկվեց Ռուսաստանի կողմից՝ առաջ մղելով հաշվեհարդարի իր առաջարկները: Ռուսաստանը պահանջում էր վերջնականորեն պարզել Նեղուցների, էրզրումի ու Հայաստանի խնդիրները:

1916 թվականին արդեն պարզ էին Ռուսաստանի մտադրուլթյունները Հայաստանի վերաբերյալ: Իր ձեռքին էր Հայաստանի բանալին՝ էրզրումը, բայց հայերը իբրեւ «փոքրիկ դաշնակից» հավակնուլթյուններ ունեին նրա նկատմամբ, մանավանդ որ միջազգայնորեն՝ 1913 թվականին, այն խոստացել էին հայերին, չնայած այն այժմ հայազուրկ էր դարձել: Այդ դրուլթյունը ծնունդ տվեց «Եփրատյան կողակուլթյան» ծրագրին... Հայաստանը բնակեցնել ուսս գաղթականներով: Նույն թվականին կազմալուծվեցին հայկական բանակները, իբրեւ «բանդիտներ»: Մեջտեղից վերացվեց Հայաստանի ինքնավարուլթյան մասին կաթողիկոսին ուղղված Վորոնցով-Դաշկովի նամակը: Եվ այդ թվականից սկսվեց հայատյաց մի ուղղուլթյուն ու թրքասեր քաղաքականուլթյուն:

Դաշնակիցների առջեւ մի կողմից պաշտոնապես դրված էր Հայաստանի ու Նեղուցների հարցը, մյուս կողմից՝ ազատ հաշտուլթյան հեռանկարը: Նախընտրեցին ընդառաջել Ռուսաստանի ցանկուլթյուններին: Այդ թվականին Ռուսաստանին խոստացան Պոլիսը, նեղուցները, նույնիսկ Սալքս - Պիկոյի համաձայնուլթյամբ, մինչեւ

Տավրոս ընկած հայկական նահանգները: Ֆրանսիային խոստացան Տավրոսից հարավ մինչև Միջերկրական ընկած տարածքները, Անգլիային՝ Արաբական երկրները:

Հայուլթյան գլխին սառը ջուր մաղվեց:

1917 թվականն է: Թեև ռուսական հեղափոխությունը սկսեց Բուռլիեվիչներով, Ռասպուտինների դերակատարությամբ, բայց հանգեց Գուչկովների եւ Կերենսկիների իշխանությանը: Այդ կարճ ժամանակամիջոցում հայուլթյունը կարողացավ սրբագրել ցարի մեկ անարդարությունը: «Եփրատյան կողակուլթյուն» ծրագիրը ջուրը գցելով եւ ստեղծելով «գրաված երկրամասերի» (Հայաստանի) վարչություն՝ դոկտոր Ջավրիեւի գլխավորությամբ: Դա հաջողվեց, որովհետեւ նոր ռեժիմը խիստ թույլ էր:

Հեղափոխության ալիքների մեջ մի հսկա ուժ ծնվեց՝ Լենինը, որն ի լուր ամենքի հայտնեց ամենամեծ ճշմարտությունը. «Հեղափոխական Ռուսաստանը մայրն է հետադիմության: Այն մահաբեր է աշխատավոր դասի եւ ազգությունների համար: Նրա պարտությունից է կախված նրանց ազատությունը»: Սա ամբոխավարությունն էր միայն, այլ մերկ ճշմարտություն: Եւ «դեպի տուն» նշանաբանով ռուսական բանակները ամբոխ դարձան եւ ճակատները մերկացան:

1918 թիվն է: Ռուսաստանը լքել է ճակատը: «Դեպի տուն» ասելով Ռուսաստանը պարպում է ոչ միայն Տաճկահայաստանը, այլեւ Անդրկովկասը: Սրան հետեւում է Լենին-Ստալին Դեկրետը՝ Տաճկահայաստանի անկախության եւ ազգերի ինքնորոշման մասին: Ամեն ինչ արտաքնապես լավ, բայց իրականում դժբախտություն է, որ պատրաստվում է այդ մեղրածոր խոսքերի միջոցով: Ռուսների հեռանալուն քայլ առ քայլ հետեւում էին թուրքերը, որոնք մեկ այլ նշանաբան ունեն. «Մենք պիտի կանգ առնենք այնտեղ, որտեղ ռուսական զորքը կանգ կառնի: Մենք չենք ճանաչում ո՛չ անկախություն, եւ ո՛չ էլ ինքնորոշում»:

1917-18 թվականներին հայերը եւ վրացիները պարտավորված են միայնակ կանգնել արշավող թուրքական բանակի դեմ: Բրեստ-Լիտովսկի դաշինքով զոհաբերված են թե՛ Հայաստանը եւ թե՛ Անդրկովկասի մասերը: Թուրքերն ու բոլշևեիկները պահանջում են հարգել Բրեստ-Լիտովսկի պայմանագրի կետերը: Այն մերժվում է հայերի ու վրացիների կողմից: Անհավասար կռիվի միջոցով այդ դաշինքը պարտադրվում է հայուլթյանն ու վրացիներին:

1918 թվական: Մայիս ամիսն է: Ստեղծվել է կրճատված Վրաստան, ստեղծվել է մեծ Ադրբեջան՝ ի հաշիվ հայկական գավառների եւ փոքրիկ Հայաստան՝ 11.000 քառ. կմ տարածությամբ: Այդ երեւույթները

կատարվում են թնդանոթների համազարկների ներքո՝ գերմանական եւ թուրքական բանակների ներկայութեամբ: Մայիսի 28-ին Հայաստանի անկախութեանը, որը կորցված էր տասնմեկերորդ դարից, նորից հարութեան է առնում, բայց նրա հողերի ու ազգաբնակչութեան մեծագույն մասը ջարդված է:

Հայոց խորհրդարանում ձայներ են լսվում. «Մի՛ հուսահատվեք, սահմանները քարացած չեն», «Շղթաները պիտի փշրվեն»: Եւ փշրվեցին շղթաները՝ թուրք-գերմանական պարտութեամբ:

1918 թվականի վերջերին անգլիական փոքրաթիվ զորքեր երեւացին հեռացնելով թուրքական բանակները Բաթումից ու տվեցին Վրաստանին: Նրանք պարպեցին Կարսն ու Արդահանը եւ փշրելով Բրեստ-Լիտովսկի շղթաները՝ վերադարձրին հայերին Արարատյան դաշտի գրաված մասերը, այդպիսով վերականգնելով Բագրատունյաց իշխանութեան սահմանները՝ շուրջ 50.000 քառ. կմ տարածութեամբ: Բայց դա չէր միայն Անկախ Հայաստանի իրեակը: Այն դարձել էր տաճկահայ գաղթականների մնացորդների ժամադրավայրը: Առանց Տաճկահայաստանի, մտածում էր նա, չկա Անկախ Հայաստան:

1919 թվականն է: Հայաստանը իր խորհրդարանով, կուսակցութեաններով եւ հայրենակցական միութեաններով վճռապես կանգնում է Միացյալ ու Անկախ Հայաստանի տեսակետի վրա: «Առանց էրզրումի, առանց Տաճկահայաստանի՝ Հայաստան չկա»: Այս տեսակետը պիտի իրականանար մեկ տարի հետո:

1920 թվականն է: Սեւրում Թուրքիայի հետ հաշվեհարդար են տեսնում: Մեծ պետութեանների կողքին՝ այնտեղ հրավիրված են Թուրքիան ու Հայաստանը: Այնտեղ են մեծ ու փոքր հաղթական պետութեանները, որոնք որոշելու են Միացյալ ու Անկախ Հայաստանի սկզբունքը՝ Տաճկահայաստանի միացումը փաստացի Հայաստանի հետ, նկատի չառնելով, որ այն դատարկված է հայութեանից: Հայ մեռելներն էլ էին ցնծում ողջ հայութեան հետ միասին: Հայութեանը Սեւրում հասել էր իր նպատակներին: Վերջակետ էր դրվել հայ ու թուրք հակամարտութեանը, քանի որ այն պաշտոնապես ընդունել էր հայի իրավունքը: Այս երջանիկ օրերի վրա վարագույր է իջնում՝ վրան Արամի նկարը դաշույնը ձեռքին եւ Ահարոնյանի նկարը՝ գրիչը ձեռքին:

1920-ին սկսվում է մի նոր ժամանակաշրջան:

ՏԱՄՆԵՐՈՐԴ ԱՐԱՐ

1920 թվականի աշնանը, Սեւրի դաշնագրի ստորագրումից հետո, կարծես աշխարհի վերքերից մեկը բուժվեց: Արդարութեանը

Հաղթանակեց եւ ճնշված ժողովուրդները՝ հույները, քրդերը, հայերը, արաբերը, ինքնորոշումն ու ազատությունը իրականություն դարձավ: Հաղթական եւ ոչ հաղթական պետությունների խիղճը Հանգստացավ: Թվում էր, թե Մերձավոր Արեւելքում երկար ժամանակով խաղաղություն է հաստատվելու: Այդպես էր մտածում Թուրքիայի այդ ժամանակվա կառավարությունը, որը ստորագրեց Սեւրի դաշնագիրը: Այդպես էր մտածում հեղափոխական Թուրքիան, որը թեեւ ըմբոստացել էր իր իշխանության դեմ՝ ապաստանելով Անատոլիայում, բայց իր ղեկավարների, Ռուսֆ Բեյի նախաձեռնությամբ մեկընդմիջտ ազատեց թուրք ժողովրդին պահակի կարգավիճակից՝ միջազգային ուղիների պաշտպանությունը հանձնելով միջազգային ուժերին: Նա վերջնական խաղաղություն հաստատելու նպատակով ծրագրում էր Թուրքիայի մանդատը հանձնել Ամերիկային: Այս ծրագրի դեմ հետին թվով բողոքում էր միայն Մուստաֆա Քեմալը, ամբաստանելով Ռուսֆ Բեյին, հակառակ այն իրողության, որ 1920 թվականին նա համամիտ էր կամ համամտություն էր ցույց տալիս Ամերիկային (Տես Քեմալի ճառը):

Դժգոհ էին միայն թուրք իթթիհատականները՝ Թալիաթը, Բեհաեդդին Շաքիրը, էնվերը եվ մյուսները, որոնք ապաստանել էին Բեռլինում ու Մոսկվայում եւ որոնց առանձին խնամքով պաշտպանում էր արտաքին գործերի վարիչներից՝ Կարախանը: Նրանք զենք էին համարվում Թուրքիայի ղեկավարների վրա ազդելու եւ միաժամանակ զենքեր էին համաշխարհային հեղափոխություն սկսելու համար, ինչի մասին երազում էր Զինովեւը՝ Բաքվում:

Սեւրի պայմանագրին դեմ էր Ռուսաստանը, թեեւ այդ դաշինքը իր դեմ չէր ուղղված, այլ Թուրքիայի ամբողջականության: Այն ստեղծվել էր ազգերի ինքնորոշման սկզբունքով՝ ճնշված հայ, քուրդ, արաբ, հույն եւ բուլղար ժողովուրդների ազատագրման համար: Այդ ազգերին Ռուսաստանը համարում էր իմպերիալիստներ, անգլիական գործակալներ, որովհետեւ դեմ էին Թուրքիայի ամբողջականությանը: Իսկ Թուրքիան համարվում էր իմպերիալիզմի դավերի զոհ: Նրա ամբողջականությունը դարձել էր Ռուսաստանի շահը, որովհետեւ նա հույս ուներ Թուրքիայի միջոցով հուզել ու քայքայել Մերձավոր Արեւելքը եւ ի վերջո այդ ավերակների վրա իր դրոշը ծածանել: Այդ նպատակին հասնելու համար նա հետեւյալ քայլերը ձեռնարկեց.

1919-20 թվականներին Ռուսաստանն արդեն դաշնակցում էր Թուրք ընդդիմադիրներին հետ, մի կողմից թուրքական հեղափոխությունը կազմակերպած Թալիաթի, էնվերի, դոկտոր Նազիմի, իսկ մյուս կողմից՝ Բեքիր Սամի, դոկտոր Ռիզա Նուրիի, Յուսուֆ Քեմալի

միջոցով՝ Մուստաֆա Քեմալի հետ:

1920 թվականին թուրք զորիները Ռուսաստանում զինվում են եւ խալիլ փաշայի ղեկավարութեամբ ուղեւորվում Թուրքիա՝ օգնելու «հեղափոխական Քեմալին»: Հինգ միլիոն հնչուն ոսկի են տանում Թուրքիա, որը ցնդեց ճանապարհին՝ Հայաստանն անցնելու ժամանակ...

1920 թվականին Նուրի փաշայի զորքերը լքում են Ադրբեջանը, եւ Թուրքիայի ճնշման տակ Ադրբեջանը կամովին խորհրդայնանում է՝ հրաժարվելով իր անկախությունից հօգուտ Ռուսաստանի, եւ որի փոխարեն Ռուսաստանը համաձայնվում է կանգնել Բրեստ-Լիտովսկի որոշած սահմանների վրա:

Նույն թվականին Բաքվի իսլամական համագումարում Զինովեւի եւ Էնվերի նախագահութեամբ կռոււմ էին, իմիջայլոց, Վրաստանի ու Հայաստանի հետագա ճակատագիրը:

Նույն թվականին Հայաստանի ու Վրաստանի սահմաններին համախմբվում են կարմիր բանակները, եւ Կիրովը՝ Թիֆլիսում, Լեզրանը՝ Հայաստանում, պահանջում են Բրեստ-Լիտովսկի որոշած սահմաններն ընդունել եւ հրաժարվել Սեւրի դաշնագրից:

Հյուսիսից արշավում են ռուսական, հարավից՝ թուրքական զորքերը, եւ փոքրիկ երկու հանրապետությունները, որոնք շանում էին սոցիալիստական կարգեր հաստատել, չքացան եւ նրանց փոխարեն Բրեստ-Լիտովսկում ճշտված սահմանների վրա հաստատվեցին խորհրդային Հայաստանն ու Վրաստանը: Թուրքիային, իբրեւ հավելյալ վարձ օգնութեան համար, իբրեւ սեփականություն եւ ազդեցութեան գոտի, նվեր տրվեցին Սուրմալուն եւ Նախիջևանի գավառները:

1920-21 թվականների Մոսկվայի ու Կարսի պայմանագրերը՝ թուրք-կովկասյան սահմանների մասին, 1925 թվականին ծառայեցին իբրեւ խարխուս՝ թուրք-ռուսական բարեկամութեան: Այդ դաշինքը քսան տարի՝ մինչեւ 1945 թվականը, անխախտ պահվեց:

Այս տասներորդ ժամանակաշրջանը խիստ նման է Եգիպտոսի Մեհմեդ Ալիի եւ Սուլթան Մահմուդի ժամանակաշրջանին, երբ Թուրքիան ազատագրվեց վտանգից՝ շնորհիվ ռուսական բանակների: Այս ամենը նման է նաեւ 1896 թվականներին, երբ Ռուսաստանը ազատեց Թուրքիան անգլիական արշավանքից: Ուշագրավ է այն, որ քանի Ռուսաստանը իրեն թույլ է զգում միջազգային մրցակցութեան մեջ, նա միշտ Թուրքիայի կողքին է՝ իբրեւ բարերար եւ ամբողջականութեան կողմնակից: Միաժամանակ, երբ ինքն իրեն հզոր զգա, այդ պարագայում նա առաջինը կփորձի գրավել Թուրքիան: Ինչպես տեսանք, նրա մեկուկեսդարյա փորձերը ճախողվեցին իր

սխալ հաշվարկներին, իր արժեքի ու կշռի գերազնահատման հետեւանքով: Մյուս կողմից, բնական է, որ Թուրքիան միշտ ցանկանալու է, որ Ռուսաստանը տկարանա: Այդ պատճառով էլ միշտ եղել է բոլոր այն ուժերի կողքին, որոնք Ռուսաստանի տկարացման կողմնակից են: Միաժամանակ վստահ է, որ տկարացած Ռուսաստանը միշտ կլինի իր հետ՝ առանց իր թշնամուկ թյունների համար հաշիվ պահանջելու:

Այսքանը բավական համարելով պատմական անցյալի մասին, տեսնենք ներկա դրուկ թյունը 1945 թվականից սկսած, երբ այդ դաշինքը չեղյալ հայտարարվեց Ռուսաստանի կողմից:

ԱՍԻԱՅԻ ԵՐԵՔ ՃԱՆԱՊԱՐ ՀՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ 1945 ԹՎԱԿԱՆԻՑ ՀԵՏՈ

Պոլիս-Արեւելք մայր ճանապարհի ճակատագիրը պայմանավորված է Լոնդոն-Արեւելք եւ Մոսկվա-Արեւելք ճանապարհների վրա տիրող իրավիճակով:

Հիշյալ ճանապարհների վրա է ընկած Հայաստանը, որն ասես մի թնջուկ լինի, որի լուծումը կարելի է գտնել միայն երեք ճանապարհները իրար կապելով: Նախքան Հայաստանի մասին խոսելը, պետք է խոսել երեք մեծ պետութային շրջանների՝ Մեծ Բրիտանիայի, Խորհրդային Միության եւ Միացյալ Նահանգների փոխհարաբերությունների մասին, ծանոթ ուղիների առնչությամբ, քանի որ նրանց ճակատագիրը գտնվում է հիշյալ պետությունների ձեռքում:

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ

Պատերազմը վերջացել է: Առանցքային կայսրությունները ջախջախված են: Դեռ Խաղաղություն ժողովը* չի սկսվել, բայց հաղթանակած դաշնակիցներից յուրաքանչյուրը իր հերթին իր դիրքերն է ճշտում եւ առանց սպասելու ընդհանուր համաձայնությունը՝ պաշտպանողական եւ հարձակողական դասավորումներ է անում: Այսօր երկրագնդի թելադրողները Երեք Մեծերն են՝ Խորհրդային Միությունը, Անգլիան եւ Միացյալ Նահանգները: Եվ այդ երեքը շտապում են անել այն, ինչը կարող են անել ապագայում ստեծվելիք մեծերը, որպեսզի ամեն ինչ արդեն արված լինի:

Այս պատերազմի առաջին հերոսը պետք է համարել Անգլիային: Պատերազմի առաջին օրից մենակ մնաց եւ շուրջ երկու տարի միայնակ պատերազմեց: Մահվան երկունքներ ապրեց առավելապես Մերձավոր Արեւելքում: Իր հաղորդակցություն Ջիբրալթար-Սուեզ-Միդեպոլիս գիծը վտանգված էր: Նրա առաջին գործը եղավ ապահովել այդ գծի անվտանգությունը հեռվից եւ մոտիկից:

Նրա գլխավոր հրամանատարները՝ Վեյլը, Մոնթգոմերին, Քյոնինգը, հաջողեցին իտալական բանակներից մաքրել Հաբեշտանը, Սոմալի

* Ներկա հատորի մեջ մշակված տեսությունները, ընդհանրապես հիմնված են Սան Ֆրանցիսկոյի ժողովից առաջ տեղի ունեցած քաղաքական իրադարձությունների վրա:

էրիթրեան եւ օր առաջ գահին հաստատեցին Հայիլե Սելասիէին իբրեւ կայսր, որն իր չեզոքութեամբ եւ անկարողութեամբ՝ ռազմական տեսակետից, չէր կարող վտանգել ո՛չ Կարմիր ծովը իր «Բաբ էլ Մանդեբով», ո՛չ Եգիպտոսը՝ իր Սուեզով, ո՛չ էլ Հնդկական օվկիանոսը՝ Հնդկաստանով եւ Սինգապուրով:

Այս պատերազմից առաջինն ազատվեց Հաբեշտանը՝ իր աշխարհագրական նպաստովոր դիրքի շնորհիվ: Նրա անկախութեամբ Սուեզ-Սինգապուր գիծը ապահով դարձավ:

Մնում էր ապահովել Սուեզ-Ջիբրալթար գիծը, որտեղ միայն Ալեքսանդրիա, Հայֆա, Կիպրոս անկյունն էր անվտանգ մնացել Անգլիայի համար: Էլ Ալամեյնի ճակատամարտից հետո գերմանա-իտալական վտանգը վերացավ ամբողջ Հյուսիսային Աֆրիկայից՝ Անգլիական կայսրութեան առանցքի հարավից, եւ ամբողջ Հարավային Եվրոպայի Միջերկրականի ափերը անցան Անգլիայի ձեռքը: Փաստորեն այսօր Միջերկրականը Անգլիայի ներքին լիճն է դարձել:

Այդ ներքին լիճը ապահով դարձնելու եւ կայսրութեան առանցքը ամրացնելու համար՝ նրա քաղաքականութիւնը արդեն ուրվագծված է:

Միջերկրականի արեւելյան ափին են գտնվում Արաբական պետութիւնները, որոնք պատերազմի ընթացքում չեզոք դիրք էին գրավել եւ ընդհանուր առմամբ, ի հեճուկս Անգլիայի, բարյացկամ էին Գերմանիայի հաջողութիւնների հանդեպ: Գեյլանիները շարժումը իրաքում, Ալի Մահմեդները՝ Եգիպտոսում եւ այլն, ապացույցն էին Անգլիայի վարկանիշի պակասի եւ չբավարարված արաբական իղձերի: Խեղդե՞լ այդ իղձերը, թե՞ բավարարելով՝ իրեն կապել: Անգլիան ընտրել է վերջինը: Բացարձակ անկախութիւնն արաբական երկրներին, իսկ եթե ցանկանան միանալ իրար, ապա փոխադարձ համաձայնութեան պիտի գան Անգլիայի հետ: Ազատութեան այս շուայութիւնը խոսքեր չեն եւ ոչ էլ ազգերի ազատագրման գաղափարներից են թելադրված, այլ ավելի շատ իր կայսրական շահերից, որովհետեւ հետաքրքրութեան հիմնական առարկան միայն կայսրութեան ճանապարհների ապահովութիւնն է այդ երկրներում: Բացարձակ անկախ պետութիւններ, թեկուզ դա լինի պանարաբական՝ անկարող է վնասել իր ուղիներին եւ կայսրութեան առանցքին: Նրանք բավարարելով իրենց երազանքը, այլեւս հարկադրված չեն լինելու այլ ուժեր որոնելու: Քանի Արաբիային շահավետ է իր ազատութիւնը, ուրեմն պետք է գերադասի Բրիտանական կայսրութեան ապահովութիւնը, ինչպէս գերադասում են Չեյանդիան, Ավստրալիան եւ ապստամբ Բուրերը՝ Հարավային Աֆրիկայում: Իրենց անկախութեան համար այդ քաղաքականութեանն են պարտական արաբական մի շարք պետութիւններ՝ Եգիպտոսը, Եմենը, Հիջազը, Իրաքը, Անդրհորդանանը,

Սառուղիան Արաբիան:

Արեւելյան Միջերկրականի արաբական երկրների շրջանում աններդաշնակութուն էր ստեղծում Ֆրանսիայի ներկայութունը Լիբանանում եւ Սիրիայում: Դա վտանգ էր ներկայացնում Կայսրութեան առանցքի համար: Այդ վտանգը նկատելի դարձավ, երբ վեշիտական իշխանութունը հենարան դարձավ Գերմանիայի առանցքին՝ վտանգելով Սուեզը՝ Նյուսիսից, Պարսից ծոցը՝ Արեւելքից: Այդ վտանգը չեզոքացվեց գենքով: Բայց հետագայի համար դեռեւս վտանգը մնում էր, մանավանդ, երբ դը Գոլը առաջնութուն տալով ռուս - Ֆրանսիական դաշինքին՝ վազեց Մոսկվա այն ժամանակ, երբ անգլիական բանակներն էին, որ ազատագրում էին Ֆրանսիան: Այդ օրերին մի խորիմաստ արաբ գործիչ ասում էր. «Երբ այսօր դը Գոլը գտնվում է Մոսկվայում, հաստատ պետք է համարել, որ Լիբանանն ու Սիրիան կազատագրվեն, եւ Ֆրանսիացիները վերջնականորեն կհեռանան՝ «իրենց վալիզներն առած»: Այդ կանխատեսումն արդեն իրական է: Լիբանանի եւ Սիրիայի հանրապետութունները արդեն անկախ են այնքանով, որքան մնացած արաբ պետութունները, եւ մյուս կողմից էլ Բրիտանական կայսրութունը ապահովված է թե ներկայի, թե ապագայի համար:

Այս պատերազմում Անգլիայի վիճակը ավելի շատ վտանգավոր էր իտալական ջրերում: Գերմանական եւ իտալական ուժերը գրավել էին Հունաստանը, Կրետեն, Տոտեկանեզը (Դոդեկանես), Սիցիլիան, Բենգալին, Տրիպոլին եւ փոքրիկ Մալթան էր այդ շղթայում, որը հաղորդակցութունն ապահովող հենարանն էր:

Այս բոլոր վտանգավոր կետերի վրա այժմ նստած է Անգլիան: Նրա առանցք հիմա ավելի քան հաստատուն է դարձել:

Ի՞նչ մտադրութուններ ունի այդ երկրների ապագայի հետ կապված. դժվար չէ նկատել Անգլիայի ծրագրերը: Արդեն մշտնջի միջից ուրվագծվում են Բենգալի ու Տրիպոլիի հեռանկարները, որոնք նմանվում են Սիրիայում ու Լիբանանում կատարվածին: Եգիպտական պահանջները, Արաբական լիգայի ցանկութունները, Սինուսիի անվան հաճախակի հոլովումները մասնում են Անգլիայի մտադրութունները: Ուզում է արաբական հիշյալ երկրները անկախացնել մյուսների նման: Հստակ են թվում նաեւ Կրետեի, Տոտեգանեզի (Դոդեկանես), Հունաստանի վերաբերյալ նրա գործողութունները: Ուժեղ եւ միացյալ Հունաստանը Տոտեգանեզով (Դոդեկանես) պատվար կդառնա Բալկաններից եկող ապագա վտանգների դեմ: Դեռեւս պարզ չեն Սիցիլիայի սեպարատիստական շարժումները բուն նպատակը, որոնք սերտ առնչութուն ունեն Մալթան ուժեղացնելու տեսակետից:

Սրանք են լինելու Անգլիայի ձգտումները: Արդյո՞ք կկարողանա

վավերացնել այն Ազգերի ժողովների կողմից. կասկածելի է, որովհետեւ:-

Կայսրութեան առանցքի վերջնամասում՝ Զիբրալթարում, նստած է նա: Ներկա է Հանդիպակաց աֆրիկյան ափին եւս, ուր մթութեան մեջ ինչ որ բաներ են կատարվում, որոնք սերտ առնչութուն ունեն իսպանական հարցի հետ: Արդյոք Ֆաշիզմի տապալման համարն է, որ ներկայումս հուզում է աշխարհին, թե այդ գաղափարապաշտութունը մի քող է՝ այլ նպատակներ հետապնդելու համար: Արդյոք Անգլիայի տատանողական դիրք բռնելը Ֆրանկոյի հանդեպ՝ պետք է բացատրել միայն նրա հետադիմութեամբ, թե մտահոգութեամբ, որ կարողանա Զիբրալթարի պաշտպանութունը ընդլայնել նաեւ աֆրիկյան ափերին: Այս հարցերի մասին դժվար է որոշակի պատասխան գտնել առանց տվյալների: Բայց մի բան հաստատ է, որ այդ կողմից կայսրութեան առանցքը նույնքան ամուր է, որքան պատերազմից առաջ: Այս պատերազմը նախորդի նման եկավ ավելի հզորացնելու Կայսրութեան ուղիները: Այդպես է տեսականորեն, բայց այդպես չէ իրականում: Թեպետ գերմանական եւ իտալական բանակները ջախջախված են, թեպետ նրանց ձեռքում են բոլոր ռազմավարական կարեւոր կետերը, բայց այսօր Անգլիան նույնքան մտահոգ է, որքան գերմանական բլիցները ժամանակ: Նա իրեն վտանգված է զգում Միջերկրականի մեջ: Վտանգը զգում է նաեւ Արաբական երկրների եւ Պարսից ծոցի մեջ: Այդ տագնապը գալիս է Ռուսաստանի վախից, որի դեմ նախապատրաստվում է եւ ուժերի համապատասխան դասավորում է կատարում՝ այդ վտանգի առաջն առնելու համար: Ո՞րն է այդ վտանգը, որո՞նք են Անգլիայի ձեռնարկած կանխամիջոցները:

Բալկաններում, որն առաջ Գերմանիայի ազդեցութեան տակ էր եւ վտանգավոր Անգլիայի համար, ապա այժմ այնտեղ լրիվ ռուսական ազդեցութունն է, բացառութեամբ Հունաստանի:

Առաջ նացիզմն էր վտանգը, այսօր նրան փոխարինում է ավելի ազդու սլավոնիզմը, որ որդեգրել է Ռուսաստանը:

Առաջ Գերմանիայի ազգային սոցիալիզմն էր վտանգը, այժմ բուլղեղիզմը՝ նրանից ավելի հզոր:

Առաջ կրոնը զենք էր, այժմ օրթոդոքսութունը զենք է բուլղեղիկների ձեռքում:

Առաջ միայն Գերմանիան էր իր 70 միլիոն ազգաբնակչութեամբ, այժմ Խորհրդային Միութունը՝ կրկնակի ավելի:

Առաջ Կենտրոնական Եվրոպան էր միայնակ, այժմ Կենտրոնական Եվրոպան Խորհրդային Միութուն հետ միասնաբար Անգլիայի դեմ կանգնած:

Առաջ «գերմարդ» Հիտլերն էր, այսօր «աստվածացյալ» Ստալինն է՝ հենված ոչ միայն Խորհրդային Միության ժողովուրդներին, այլև բոլոր կոմունիստների վրա:

Այս ուժը նույնքան պատկառելի է, նույնքան հզոր, որքան նրա տապալած Ֆաշիզմը, նացիզմը: Այս ուժը արջի քայլերով իջնում է դեպի Բալկաններ եւ կանգնած է Հունաստանի սահմաններին վրա: Այն իջնում է դեպի Թուրքիա՝ Պոլսի վրայով: Ուզում է իջնել Կարսով, էրզրումով մինչեւ Միջերկրական եւ գոցե՝ Սուեզ: Ուզում է Իրանի վրայով, Թավրիզ, Թեհրանով մինչեւ Պարսից ծոց հասնել: Ի՞նչ նպատակներ ունի Աֆղանստանի ճամփաների վերաբերյալ՝ անհայտ է, բայց այս բոլորը խիստ մտահոգիչ է Անգլիայի համար:

Ռուսաստանի միտումներին հակազդելու համար նա այսօր ձեռնարկել է հետեւյալ սկզբունքների կիրառումը.

Ա. Ըստ Բեվիլինի հայտարարությունների Հունաստանից իր զորքերը կարող են հետ քաշվել, երբ Խորհրդային Միությունը իր բանակները հետ քաշի Բալկաններից եւ Կենտրոնական Եվրոպայից:

Բ. Թուրքիայի հետ դաշինք, Թուրքիայի ամբողջականություն եւ անձեռնմխելիություն:

Գ. Իրանի ամբողջականություն եւ օտար բանակների հեռացում:

Այս երեք շրջաններից Անգլիան վտանգ է սպասում: Իր դեմ ելած նոր ուժը նա պետք է կասեցնի կա՛մ համաձայնությամբ, կա՛մ պատերազմով:

Այժմ տեսնենք, թե ինչ կացության մեջ է Խորհրդային Միությունը եւ ինչ նպատակներ է հետապնդում:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

1939 թվականի վերջերին Ռուսաստանը Լեհաստանը բաժանելու համար դաշնակցում էր Գերմանիայի հետ: Այդ օրվանից պարզ են դառնում Ռուսաստանի նպատակները: Նա չեզոքություն պահելու գնով՝ Հիտլերի հետ համաձայնեցրած, վերականգնեց 1914 թվականի ցարական Ռուսաստանի սահմանները: Վերանում էին Բրեստ-Լիտովսկի դաշինքով պարտադրված սահմանները: Նա առանց արյունահեղության ստացավ Բեսարաբիան, Ռուսական Լեհաստանը, անկախ պետություններ՝ Էստոնիան, Լատվիան եւ Լիտվան:

Այդ երկրամասերը տիրելուց հետո պարզվեց նրա երկրորդ նպատակը, որը հայտնի դարձավ Նյուրենբերգյան դատավարությունից. Ռուսաստանը պահանջում էր Առանցքի պետություններից, որպես զին պատերազմին իր մասնակցության, Պոլիսը, նեղուցները եւ

Պարսից ծոցը: Այդ պայմանը ոչ միայն Բրիտանական կայսրության հաշվին էր, այլև Գերմանիայի, քանի որ նա էլ էր ցանկանում այդ կետերը՝ իր համաշխարհային զերակայությունը հաստատելու համար: Դա չափազանց էր, եւ 1941-ի կեսերին տեղի ունեցավ Հիտլեր-Ստալինյան «պապահարգանք»: Իբրեւ հետեւանք Ռուսաստանը կորցրեց ոչ միայն ձեռքբերածը, այլև Եվրոպական Ռուսաստանը, Բելոռուսիան, Ուկրաինան, մինչեւ Ստալինգրադ ու Մոսկվա:

1941-ի ամռանը սկսվեց հիտլերյան արշավանքը, եւ կայացավ Ստալին-Չերչիլ զինակցությունը Հիտլերի դեմ: Ճգնաժամային օրեր երկու զինակիցների համար եւ ամերիկյան վճռական միջամտություն ու Կենտրոնական Եվրոպայի ջախջախում՝ Ճապոնիայի հետ միասին:

Թեհրանի, Յալթայի, Կահիրեի, Պոդգորայի եւ այլ հանդիպումների արդյունքում, Երեք Մեծերից Խորհրդային Միությունը ստացավ այն, ինչը երբեւէ ցարական Ռուսաստանը չէր կարող երազել: Նախ նրա պատուհասը արեւելքից՝ Ճապոնիան, այլևս գոյություն չուներ որպես վտանգ, եւ այն երկրամասերը, որ զիջել էր նրան 1905-ի պատերազմից հետո, հետ էր ստանում: Այսպես թե այնպես նա հաստատվել է Խաղաղ օվկիանոսի ափերին եւ մրցակից չունի, բացի Չինաստանից, որի հետ բարեկամական դաշինք ունի: Արեւմուտքում նա վերականգնել է 1914 թվականի սահմանները, դեռ մի բան էլ ավելի: Դրանք մտնում են Խորհրդային Միության կազմի մեջ՝ իբրեւ նրա անբաժանելի մաս: Այլևս չկա Գերմանիայի ահը, քանի որ իր ազդեցության տակ են Լեհաստանը, Հունգարիան, Չեխիան եւ համարյա Ավստրիան եւ Գերմանիան, մինչեւ Էյբրա եւ Օդեր գետերը՝ մայրաքաղաք Բեռլինով եւ ամբողջ Բալկանները՝ բացառությամբ փոքրիկ Հունաստանի:

Այսքանը բավական չէ՞ ասելու, որ երբեւէ Ռուսաստանը այսքան մեծ չի եղել: Այն ավելին է, քան երազում էին կայսրերը: Իրականության մեջ այն արտաքնապես հսկա ուժ է իրենից ներկայացնում, ավելի հսկա, քան Հին Հռոմը, քան Մակեդոնիան, գուցե նույնքան, որքան մոնղոլականն էր: Եվ քիչ է մնում, որ նա հասնի Բրիտանական կայսրությանը: Խորհրդային Միության արտաքին դրությունը չափից ավելի կայուն եւ տոկուն է թվում:

Կայուն եւ տոկուն է արդյո՞ք նրա ներքին վիճակը, որ կարողանա այս հսկա երկրամասերը իբրեւ գրահ կրել իր մարմնի վրա: Ոչ ոք չգիտի, քանի որ արտաքին աշխարհը չի կարող դա չափել, քանի որ աշխարհի մեկ վեցերորդը արգելված գոտի է դրսի աշխարհի համար: Այդ մշուշի մեջ ցցվում է Խորհրդային Միության տիրական մեկ դեմք, որին երկրպագում են ավելի քան Մոսկովիցի իտալիայում, կամ Հիտլերին՝ Գերմանիայում: Նրա փառքի եւ ամենակարողության

առջեւ նսեմանում է նույնիսկ Միկադոնների աստվածային կարողութունը, որը երեկ կար, իսկ այսօր չկա: Դա Ստալինն է. Խորհրդային Միությունը շատ բանով պարտական է նրան, որի գիտնականները գործի են լծվել Ստալինի կյանքը հարատեւ դարձնելու համար: Եթե դա երախտագիտության նշան է, ապա նաեւ կարելի է անկայունություն համարել, բայց ինչ էլ լինի, այսօր ամեն ինչ կայուն է թվում:

Իմաստուն մի սովորություն ունեին աշխարհակալ սուլթանները, երբ հաղթանակած վերադառնում էին արշավանքներից, մի խեղկատակ իր վեհապետի երեսին գոռում էր. «Փաղիշահ, չոք տուլամա, սենթեն բեիք Ալլահ վար» (Թագավորս շատ մի տրտուար, քեզնից մեծ Աստված կա): Այս խեղկատակի պահանջ է զգացվում Խորհրդային Միությունում եւ գուցե հենց դրանից էլ խավարի նրա ճակատագիրը, ինչպես որ խավարեց շատերի համար:

Ռուսաստանը գիտակցում է, որ իր շուրջը ստեղծվել են նպաստավոր պայմաններ. գիտակցում է իր հզորությունը եւ ցանկանում է օր առաջ ապահովել թե իր պաշտպանությունը, եւ թե իր ներքին մղումներից առաջացած միտիան, որ երագել են ցարերն ու հեղափոխական առաջնորդները՝ «մի հոտ, մի հովիվ» ստեղծելու միտումով, ինչը նշանակում է աշխարհակալություն, կամ էլ՝ համաշխարհային հեղափոխություն:

Դժվար է հասկանալ նրա պաշտպանողական կամ հարձակողական պահանջների սահմանները: Նրա ներկա պահանջները հետեւյալն են.

1. Միջերկրականում՝

ա. Մարոկկոյի, Ալժիրի, Թանժե(Թունիսի) հարցերում համահավասար իրավունքներ ունենալ, որպեսզի անուղղակի կերպով հակակշիռի տակ առնի Զիբրալթարը:

բ. Տրիպոլի եւ Բենգազի վրա ուզում է փոխարինել իտալացիներին, որը համազոր է Միջին Միջերկրականի եւ Մալթայի վրա հակակշիռ հաստատելուն:

գ. Սուեզի վրա նյութական եւ քաղաքական մասնակցություն ունենալ, որը անգլիական գերակայության հակակշիռն է համազոր է:

դ. Կարմիր ծովում՝ էրիթրեան եւ մյուսներին, իր ազդեցության տակ առնել, որը համազոր է Իտալիայի փոխարեն իր հակակշիռը հաստատել Բրիտանական ճանապարհների վրա:

ե. Տոտեկանեզի (Դոդեկանես) վրա իր հովանավորությունը տարածել եւ դեմ լինելով Հունաստանին այն վերադարձնելուն, որը նշանակում է Բրիտանական կայսրության ճանապարհները վտանգել Արեւելյան Միջերկրականում:

զ. Հունաստանից անգլիական զորքերի հեռացումը, առանց

Բալկաններինց ռուսական զորքի դուրսբերման, որը համազոր է Բալկաններում մենատիրություն հաստատելուն եւ անգլիական ճանապարհները վտանգելուն:

է. Տրիեստեն հանձնել Հարավսլավիային, որը համազոր է Բալկանների միջով Միջին Միջերկրականը վտանգելուն՝ ի վնաս Բրիտանական ճանապարհների:

ը. Բոլոր արաբական երկրներից անգլիական ուժերի հեռացում եւ այդ երկրներում բացարձակ վեհապետության հաստատում: Այս ազատամիտ պահանջը թեեւ հակասում է իր նեկայությանը մի շարք երկրներում, բայց կասկածի տակ է դնում ազատարարի իր կերպարը՝ փորձելով ծածկել բուն նպատակը, որն է՝ թուլացնել Բրիտանական կայսրության ազդեցությունը Միջերկրականի մնացած ճանապարհների վրա:

Սրանք են Ռուսաստանի գլխավոր պահանջները Միջերկրականի ավազանում: Դժվար չէ եզրակացնել, որ այս պահանջները ապացույց են, որ խորտակված Հիտլեր-Մուսոլինյան առանցքի փոխարեն, կազմվել է մի նոր, գուցե շատ ավելի ամուր առանցք՝ Բալկաններից ու Կենտրոնական Եվրոպայից, Խորհրդային Միության միջոցով եւ գլխավորությամբ, որի նպատակն է խորտակել Բրիտանական կայսրության Զիբրալթար-Սուեզ-Սինգապուր առանցքը: Բայց միայն այս չէ:

2. Իրանն է դարձել իր հրատապ հարցը, որ կարելու է թե՛ պաշտպանողական, թե՛ հարձակողական նպատակների համար: Այդ երկիրը լինելով պաշտպանողական մեկ խցան Անդրկովկասի, Կենտրոնական Ասիայի համար եւ միաժամանակ միջոց Պարսից ծոցին եւ Հնդկաստանին անմիջապես մոտենալու, իրականում հետապնդում է միայն մեկ նպատակ՝ Իրանի «դեմոկրատացումը» եւ օտար ուժերի հեռացումը:

Այս ամենը հաջողացնելու համար առաջ է մղում Ադրբեջանի, Քրդստանի, Մազանդարանի, Գիլանի, Մաշադի եւ այլ հարցեր: Առաջադրված այս խնդիրները՝ հիմնված ազգերի ինքնորոշման սկզբունքի վրա, օգտագործվում են Ռուսաստանի կողմից ոչ այնքան այդ ժողովուրդների ազատագրումը նկատի առնելով, այլ ավելի շատ Իրանի կենտրոնական կառավարության վրա ճնշում գործադրելու համար, որպեսզի հարկադրված որդեգրի իր «օրինտացիան», որից հետո երկրորդական են դառնալու ազգերի ազատագրման սկզբունքները:

Բնական է, որ այս քայլերին դեմ պետք է լինի Անգլիան:

3. Թուրքիան- Չնայած որ 1945 թվականին ռուս-թուրքական

դաշնագիրը վերանորոգված չէ, հակառակ այն բանի, որ ռուս եւ թուրք պաշտոնյաները իրար շատ կծու խոսքեր են ասել ու սովետական եւ այլ թերթեր շարունակ զբաղված են ռուս-թուրքական կնճռոտ հարցով եւ ամեն մեկն իր հաշվին ենթադրուլթյուններ է անում ու նախատեսում է մեծ բարդուլթյուններ, բայց եւ այնպէս թուրք-ռուսական հարաբերուլթյունները մնում են չափից ավելի զուսպ եւ վերապահ:

Հակառակ այն բանի, որ բոլորը սպասում էին, Ռուսաստանի կողմից Հայկական Հարցի արծարծմանը, ինչպէս միշտ արծարծել է էրզրում հասնելու եւ Հայաստանը տիրելու համար, սակայն այսօր Ռուսաստանի համար նման հարց գոյուլթյուն չունի:

Չնայած որ նա կազմակերպում է քրդական շարժում իրանում, իրաքում, այդուհանգեւրձ թուրքիայի սահմաններից ներս նման հարց Ռուսաստանի համար գոյուլթյուն չունի:

Չնայած որ 1916 թվականի համաձայնուլթյամբ թուրքահայաստան ու Պոլիսը նրան էր խոստացված, բայց նա հետամուտ չէ այդ պահանջների իրագործմանը:

Թուրքերը Հասան Սաքայի բերանով հայտարարում են, որ ռուս-թուրքական հարց գոյուլթյուն չունի, իսկ ռուսները հայտարարում են, թէ 1945 թվականի դաշինքը վերանորոգելու համար, երկուստեք գլուխ գլխի տված, նոր համաձայնուլթյամբ, իրար հետ լեզու պիտի գտնեն:

Այս «գլուխ գլխի տված» համաձայնուլթյան գալու հեռանկարը սարսափեցնում է թուրքիային, թեպէտ, գուցէ սարսափելու կարիք չկա: Դա սարսափեցնում է շահագրգիռ մյուս կողմերին էլ: Անգլիան ու Ամերիկան կուզեն, որ այդ համաձայնուլթյունը իրենց կամքով եւ ի շահ իրենց լինի, թուրքիան իրենց գրկում պահելու նպատակով: Այսօր թուրքիայի հետ կապված հրապարակի վրա մի կողմից անգլո-թուրքական դաշինքն է՝ նրա ամբողջականուլթյան երաշխավորուլթյամբ, մյուս կողմից ռուս-թուրքական 1945 թվականի դաշինքը՝ կրկին տարածքային ամբողջականուլթյան երաշխավորուլթյամբ, որը մինչեւ նրա վերանորոգումը, հայտարարվում է անվավեր: Որոնք են վերանորոգելու պայմանները: Ոչ պաշտոնական հայտարարուլթյունները ասում են, թէ չորս նախապայման է Ռուսաստանը դրել թուրքիայի առջեւ՝ 1945 թվականին ավարտված բարեկամական դաշինքը վերանորոգելու համար:

1. Նեղուցների մասին պայմանագրերը վերաքննել:
2. Վերաքննել բուլղար-թուրքական սահմանների հարցը:
3. Ռուսական Կարս, Արդահան, Արդվին գավառները, որոնք նվիրաբերվել են Ռուսաստանի կողմից 1921-ին՝ վերադարձնել Ռուսաստանին:

4. Թուրքիայում հաստատել «դեմոկրատական» իշխանություն:

Այս չորս պայմաններին միայն վերջինն է, որ ամենից ուշագրավն է եւ որով շահագրգռված է Ռուսաստանը: Մնացած երեքը կարելի է համարել երկրորդական, իբրեւ երաշխիք «դեմոկրատական» կարգերը հաստատելու համար: «Դեմոկրատական» կարգ ասելով այն չպետք է բառիս բուն իմաստով հասկանալ, այլ պետք է հասկանալ, ինչպես «սովետներն են հասկանում, իրենց հատուկ ձեւով»:

Դեմոկրատական է այն կառավարությունը, որը կողմնակից է մեկ կուսակցության, մեկ դասակարգի կամ մեկ անհատի ղեկատարային՝ պայմանով, որ այն լինի սովետների կողքին՝ ընդդեմ իմպերիալիստական, կապիտալիստական եւ մնացած բոլոր ուժերի: Այսպես օրինակ՝ դեմոկրատական իշխանություն էր Մուսթաֆա Քեմալի իշխանությունը վարչապետ Իսմեթ Ինենյունով, երբ այն սովետների կողքին էր ընդդեմ Անգլիայի, Ֆրանսիայի եւ մյուսների: Այն հեղափոխական, աշխատավորական էր համարվում, թեկուզ նավերով կոմունիստներ թափեր ծովը, կամ կոտորեր հողին, քուրդ, հայ ճնշված ժողովուրդներին եւ կեղեքեր աշխատավոր գյուղացիությունը: Էականը իր մրցակից պետությունների դեմ պայքարի մեջ լինելն էր, որի համար իբրեւ վարձատրություն նվիրաբերել էր Հայաստանի անկախությունը, Սեւրի դաշնագրը ոչնչացումը, Կարսի, Արդահանի, Արզվինի գիշումը թուրքին, հույների դուրս չպրտելը Անատոլիայից, Խալիլ եւ Քյազիմ փաշաների զինումը, պարենավումը եւ այլն: Այն օրվանից, երբ Թուրքիան սկսեց ազատվել սովետական խնամակալությունից եւ Չիչերինի պաշտպանած Լոզանից ու միացավ Մոնթրոյի դաշինքին, սառնություն առաջացավ եւ ծնունդ առան նեղուցների, բուլղարական սահմանների սրբազրություն հարցերը: Այն օրվանից, երբ կնքվեց անգլո-թուրքական դաշինքը, Կարս-Արդահանի գոհաբերությունը ապարդյուն համարվեց եւ նրա վերադարձի հարցը նորից սկսվեց վերարծարծվել: Այն օրվանից, երբ Իսմեթ Ինենյուն սովետները հավասար մակարդակի վրա դրեց այլ պետությունների կողքին, այն դադարեց «դեմոկրատական» լինել եւ դարձավ ֆաշիստական, հետադիմական, ինչպիսին էր 1920-ից սկսած:

Ռուսաստանի համար Թուրքիան՝ անկախ իր ռեժիմից, խիստ հետաքրքիր է իբրեւ մեկ ամբողջական միավոր՝ առանց մասնատվելու, եթե այն «դեմոկրատական» վարքագիծ ունենա, ինչպիսին ուներ Մուսթաֆա Քեմալը, ինչպես ուներ անցյալում Իսմեթ Ինենյուն, երբ զինակցում էր Ռուսաստանի հետ՝ Եվրոպայի դեմ: Թուրքիան նրան անհրաժեշտ է իբրեւ առողջապահական գոտի՝ Մերձավոր Արեւելքում միջազգային հակակշիռները չեզոքացնելու համար:

Անհրաժեշտ է նաեւ Եվրոպայի եւ Ասիայի ճանապարհները փակ պահելու եւ իր մենատիրութիւնը այդ ճանապարհներին անմրցակից թողնելու համար:

Անհրաժեշտ է նույնպէս իր մրցակից Անգլիային Մերձավոր Արեւելքում, Թուրքիայի վրայով եւ միջոցով, վտանգելու համար:

Այդ հիմնական նպատակներին հասնելու միակ ճանապարհը Թուրքիայի եւ Իրանի «դեմոկրատացումն է»՝ իր հասկացած ձեւով: Եթէ Իրանում Ղափամ Սալթանէն եւ Թուրքիան ըմբռնում են իր ներքին ձգտումները, այդ պարագայում Իրանի ամբողջականութիւնը կլինի «դեմոկրատական» կարգերով, իսկ եթէ Թուրքիայում Իսմիթ Ինենյուն չըմբռնի դա, «ինչը առաջ ըմբռնում էր», հարկ կլինի նրան փոխարինել մեկ ուրիշով, թեկուզ մեկ Բայարով, Ռուշտի Արասով, որոնք կզնան Մուստաֆա Քեմալի շավիղով: Այդ պարագայում հօդս կցնդեն ինչպէս վրացիների, քուրդերի ցնորքները, այնպէս էլ հայերի երազները իրենց հողերի վերագրամամն մասին, եւ Թուրքիան կդառնա ամբողջական եւ գուցե մեծացած՝ ի հաշիվ Իրանի եւ ուրիշ երկրների, ու կծառայի իբրեւ մի ազդակ Մերձավոր Արեւելքում՝ ընդդէմ Անգլիայի եւ Ամերիկայի ներկայութեան:

Խանդավառվելուց, երազելուց առաջ նախ պետք էր տեսնել եւ այս հաշիվը, որը թելադրում է Ռուսաստանը այս մրցակցութեան մեջ: Իրականութիւնը պետք է տեսնել այնպէս, ինչպէս կա, եւ ոչ թէ առաջնորդվել ցանկութիւններով:

Մինչեւ այս վայրկյանը դեռեւս Թուրքիայում ո՛չ վրացական, ո՛չ քրդական, ո՛չ էլ հայկական հարցեր հարուցված չեն:

Ի՞նչ դիրք կբռնի Ամերիկան, որը մեծ կշիռ ունի Երեք Մեծերի մեջ:

ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

Այս երկիրը, որ ճակատագրական դեր ունեցավ երկու պատերազմների ժամանակ, իր դիրքը հստակեցրել է նախագահ Տրումենի միջոցով, որն ասում է.

«Մերձավոր եւ Միջին Արեւելքը ծանր հարցեր են պարունակում: Այս շրջանները բնական մեծ հարստութիւններ ունեն: Մերձավոր Արեւելքը զետեղված է ցամաքային, օդային, ծովային հաղորդակցութիւնների ճանապարհների մեջտեղում: Հետեւաբար տնտեսական եւ ռազմագիտական մեծ կարեւորութիւն ներկայացնող մի շրջան է»:

Ուրեմն, սա ցույց է տալիս, որ հակառակ Մոնրոյի վարդապետութեան, Ամերիկան մեծ կարեւորութիւն է տալիս Մերձավոր ու Միջին Արեւելքին եւ անցած պատերազմի նման անտարբեր չի մնալու:

ինչպես ցույց տվեցինք այդ կարեւոր կենտրոններից պետք է համարել նեղուցները, էրզրումը եւ Թավրիզ-Թեհրանը:

«Այնտեղ ապրող ազգերի հավաքական եւ անհատական ուժը բավականաչափ գորավոր չէ՝ հարձակողներից պաշտպանվելու համար: Դյուրին է ըմբռնել, որ Մերձավոր Արեւելքը կարող է օտար տերութիւնների միջեւ մրցակցութեան ասպարեզ դառնալ եւ այս մրցակցութեանն էլ կարող է կռվի վերածվել»: Այս ամենը կանխելու համար է գուցե, որ խոսքից գործի անցնելով, Միսսուրի նավը ցուցադրաբար հայտնվեց Պոլսի մոտ՝ Թուրքիային սիրտ տալու եւ Ռուսաստանին նախազգուշացնելու համար:

«Մեծ կամ փոքր որեւէ երկիր Մերձավոր եւ Միջին Արեւելքում չունի այնպիսի արդար շահեր, որ անկարելի լինի հաշտեցնել ազգերի շահերի հետ՝ Միացյալ ազգերի միջնորդութեամբ»: Ուրեմն Ամերիկան չի ընդունում, որ Մերձավոր եւ Միջին Արեւելքի հարցերը կարող են լուծվել միակողմանիորեն կամ «գլուխ գլխի» երկուսի կամ մի քանիսի միջեւ, այլ միջազգայնորեն, ինչը հակասում է Ռուսաստանի նպատակներին:

«Միացյալ Ազգերը իրավունք ունեն պնդելու, որ ներթափանցման կամ խափանման միջոցով Մերձավոր Արեւելքի երկրների հողային ամբողջականութունը եւ գերիշխանութունը չվտանգվի»: Այլ խոսքով նա դեմ է Թուրքիի միջոցով ռուսների ներթափանցմանը Իրան կամ հայերի, վրացիների միջոցով ռուսական տիրապետութեան տարածմանը Թուրքիայում, կամ նեղուցների կարգավիճակի փոփոխութեանը՝ Թուրք-ռուսական համաձայնութեամբ:

«Եթե խաղաղութունը պիտի պահպանվի եւ գորացվի աշխարհի այս կարեւոր մասում, չենք կարող գոհանալ պարզապես երաշխավորելով ինքնավարութունը եւ անկախութունը: Մերձավոր եւ Միջին Արեւելքի ժողովուրդները փափագում են զարգացնել իրենց տնտեսական աղբյուրները, բարձրացնել կրթութեան եւ կյանքի մակարդակը»: Ուրեմն Ամերիկան խաղաղութուն հաստատելուց հետո էլ շարունակելու է հանուն խաղաղութեան հետաքրքրվել Մերձավոր եւ Միջին Արեւելքի կացութեամբ:

Եթե հիմք ընդունենք Ամերիկայի նախագահի հայտարարութեանները եւ նրա կառավարութեան վարած քաղաքականութունը Մերձավոր Արեւելքում, անսխալ պետք է համարել, որ նախորդ պատերազմից մինչեւ այս պատերազմը հիմնովին փոխվել է Միացյալ Նահանգների քաղաքական ուղղութեանը: Այն այլեւս կղզիացած մնալու քաղաքականութուն չի վարում եւ դիտողի դերում չէ, այլ կենսապես շահագրգռված է Մերձավոր Արեւելքով: Այդ շա-

Հագրագույն թյունը նոր երեւոյթ է, որը պետք է իր ծանրութեամբ հակադէպ ինչպէս Ռուսաստանի, այնպէս էլ Անգլիայի քայլերը, եւ իր հետեւանքները կունենա Մերձավոր Արեւելքի բոլոր ազգերի ճակատագրի վրա:

Ամերիկայի շահագրգռութիւնը Միջին եւ Կենտրոնական Արեւելքում տարբեր բնույթ ունի, քան անգլիականն ու ռուսականը: Անգլիան իր կայսրութեան ուղիները պաշտպանելու համար բարենորոգումներ իր անկախ միավորներ ստեղծելու կամ նվաճումներ անելու միջոցով ձգտում է Ռուսաստանին հեռու պահել Մերձավոր Արեւելքում հաստատվելուց:

Եթէ Ռուսաստանը Մերձավոր Արեւելքում ստրկութիւնը հավերժացնելու, խռովութիւնները հարատեւ դարձնելու ճանապարհով, ներթափանցումի ու գրավումի միջոցով ձգտում է թե՛ պաշտպանողական, եւ թե՛ հարձակողական դիրքեր ունենալ իր մրցակից Անգլիան ջախջախելու համար, ապա այլ է Ամերիկայի շահագրգռութիւնը:

Ամերիկայի նպատակը «Մերձավոր Արեւելքի երկրների տարածքային ամբողջականութեան եւ նրանց ինքնիշխանութեան ապահովումն է: Ներթափանցման ու այդ երկրներում խափանարար գործունեութեան կասեցումն է՝ Միացյալ Ազգերի վերահսկողութեան ներքո: Մերձավոր Արեւելքի խաղաղութեան ապահովումն է եւ տնտեսութեան թռիչքային զարգացումը»:

Այս գործընթացը, եթէ խոսքից գործ դառնա, ապա դեպի հյուսիս ուղղված անգլիական իմպերիալիզմի առաջը կառնի, որը նպաստավոր է Ռուսաստանի համար: Միաժամանակ ռուսական ծավալապաշտ իմպերիալիզմի առաջը կառնվի, որը նպաստավոր է Անգլիայի համար: Արդյունքում շահելու են Մերձավոր Արեւելքի ժողովուրդները:

Սրանք են ներկայիս երեք գլխավոր ազդակները. ինչպիսի՞ն կլինի Մերձավոր Արեւելքի ժողովուրդների ընթացքը եւ բռնած ուղին:

Բայց նախքան այդ չպետք է անտեսել եւս մեկ այլ երեւոյթ. ինչպէս քաղաքական, աշխարհակալական տեսակետից աշխարհը բաժանվում է երեք գլխավոր առանցքների, այդպէս էլ մարդկութիւնը բաժանված է երեք գլխավոր հատվածների՝ իրենց ընկերային եւ գաղափարական հասկացողութիւններով: Այս վերջին բաժանումը կապ չունի պետական սահմանների հետ եւ ոչ էլ կապված է երեք մեծ պետութիւնների կամքից ու ցանկութիւնից. այն կախված է անձի գաղափարից եւ ընկերային հասկացողութիւնից: Այդ երեք գլխավոր բաժանումներն են.

ա. Բուլճերիզմ, որը գլխավորապէս ընդգրկում է Խորհրդային

Մի ության սահմանները եւ աշխարհի ազգային փոքրամասնութիւնները՝ առավել կամ նվազ չափով:

բ. Ընկերվարութիւն, որ ընդգրկում է գլխավորապէս Անգլիան եւ առավել կամ նվազ չափով աշխարհի մնացած մասերը:

գ. Պահպանողականութիւն կամ կապիտալիստական աշխարհ, որը գլխավորապէս ընդգրկում է Ամերիկաները, եւ աշխարհի բոլոր մասերը առավել կամ նվազ չափով:

Այդ երեք ուժերը իրար դեմ են եւ ավելի շատ իրար հակառակ, քան Երեք Մեծերը՝ իրենց աշխարհակալական կամ ազդեցութեան գոտիները բաժանելու մոլուցքի մեջ:

Այս երեքը, եթէ հաճախ իրար հետ լինեն՝ կդաշնակցեն, ինչպէս Չերչիլ-Ստալին-Ռուզվելտ դաշնակցութիւնն էր: Այդպէս էլ կարող են ընկերային այս տարբեր հասկացողութիւնները երբեմն իրար միանալ, բայց միշտ բաժան մնալով, ինչպէս մեկ բաժակի մեջ խառնված ջուրն ու յուղը, որոնք իրարից միշտ էլ բաժանված կմնան:

Երբ այս է մարդկութեան ու պետութիւններին ընթացքը, որն է մեր տեղը եւ ինչպէս հասնել մեր նպատակներին այս քաոսի մեջ, որի ծանրութեան մի կենտրոնը Էրզրումն է, մյուսը՝ մեր պատկերացրած ընկերային հասկացողութիւնները:

ՀԱՅԱՍՏԱՆԸ, ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԻՐ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Պետք է տարբերել աշխարհագրական միավոր երկրի քաղաքական ուղղութիւնը այդ երկրում բնակող ազգութեան ուղղութիւնից: Մի ազգութիւնը՝ կազմված մարդկային բազմութիւնից եւ ենթակա ժամանակի եւ՝ արտաքին, եւ՝ ներքին ազդեցութիւններին, ենթակա փոփոխական գաղափարների եւ իդեալների թելադրանքին, կարող է իր քաղաքական ուղղութիւնը հարմարեցնել իր ազգային կամքին՝ առանց նկատի ունենալու իր հայրենիքի քաղաքական ուղղութիւնը: Այդ պարագայում, այդ ազգը նմանվում է այն անմիտներին, որոնք փորձում են մեծ ճիգերով գետի հոսանքին հակառակ լողալ, բայց անարդյունք: Այդ ազգերը դժբախտ ազգեր են, իրենց խելքի գերին եւ վաղ թե ուշ դատապարտված են հոգնելու եւ մահանալու:

Կան ազգեր էլ, որոնք գերի չեն իրենց ցնորքներին: Նրանց ցանկութիւնները, վարքագիծը, քաղաքական ուղին որոշվում է միմիայն իրենց հայրենիքի աշխարհագրական պայմաններով եւ նրա բնական ընթացքով: Այդ ազգերը նվազագույն ջանքերով կրկնակի արդյունքի կհասնեն, ինչպես գետի հոսանքով ընթացող լաստերը: Այդ ազգերն են, որ պետք է ունենան հարատեւութիւն եւ երջանկութիւն:

Մենք տեսնք, որ Հայաստան երկիրը մեկ աշխարհագրական միավոր է: Հայաստանի ժողովուրդը հայութիւնն է:

Որո՞նք են Հայաստանի աշխարհագրական պայմանները, որ կերտում են այդ աշխարհի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականութեան ուղիները:

Որո՞նք են հայութեան ուղիները:

– Երկիրը կարող է ունենալ քաղաքական վարքագիծ:

Այս հարցը նման է մեկ այլ հարցի.

- Հա՞վն է հավկիթից ստեղծվել, թե՞ հավկիթը հավից: Այս հարցը կարող է մի քանի պատասխան ունենալ՝ նայած թե ինչ խորութեամբ ենք մտտենում հարցի պատասխանին: Կարծիքների ինչպիսի տարբերութիւն էլ լինի, անփխտելի է այն իրականութիւնը, որ դեռեւս ոչ մի աքլոր կամ հավ աշխարհ չի եկել առանց հավկիթի եւ սրանով է կանխորոշված նրա էութիւնն ու բնութիւնը եւ նրա

հետագա ընթացքը:

Հայրենիքը ազգության օրրանն է, ազգությունն ստեղծողը նա է: Առանց հայրենիքի ազգությունն չկա: Հայրենիքից դուրս շարտված ազգությունը օվկիանոսից դուրս նետված ձկան է նման, որը եթե երկկենցաղ չի՝ մահվան է դատապարտված: Հայրենիքն է ազգության միտքը, սիրտը եւ նրա բովանդակ էությունը կերտողը: Հայրենիքն է որոշողը ազգության ուժն ու բովանդակ կարողությունները:

Հայրենիքը ազգության անցյալի շտեմարանն է, որտեղից ծիլ է տալիս նրա ներկան: Ազգության ներկան թույլատրելի է իր հայրենիքի կամքով եւ սահմանած շրջագծով: Նրա ապագան որոշված է իր հայրենիքի օրենքներով, որ իբրեւ կողմնացույց առաջնորդում է ազգին՝ անկախ ազգության կամքից ու ցանկություններից:

Որո՞նք են հայության հայրենիք Հայաստանի հիմնական օրենքները, որից չի կարող խուսափել հայությունը, որին ընդմիջտ պիտի ենթակա լինի, որից կախված է իր էությունն ու ուղղությունը: Մենք արդեն այդ տեսանք, երբ ընդհանուր գծերով նկարագրեցինք Հայաստանի կլիման, բնությունը, ջրերի ընթացքն ու ուղիները, որոնք կարելի է ամփոփել հետեւյալ կետերի մեջ.

Առաջին կետը գլխավորապես վերաբերում է բուսական, կենդանական եւ մարդկային տեսակների ընտրությանը:

ԿԼԻՄԱՆ

Տարվա ընթացքում եղանակը Հայաստանում տատանվում է զրոյից ցածր 30 աստիճանից մինչեւ զրոյից բարձր 35 աստիճան եւ ավել: Երկու ամիս գարունն է, երեք ամիս ամառ, երկու ամիս աշուն եւ հինգ ամիս ձմեռ, որոնցից երեք ամիսը՝ բեւեռային ձմեռ է:

Եղանակի այս խիստ բաժանումը պահանջում է հատուկ բուսականություն, կենդանական եւ մարդկային տեսակներ, որ ունենան միաժամանակ, օրինակ՝ էսկիմոսների ցրտին եւ սուդանցիների տաքին դիմանալու հատկություններ, ինչը ամեն ժողովրդի տրված չէ: Այս է պատճառներից գլխավորը, որ թեեւ դարեր շարունակ Հայաստանը եղել է Ասորեստանի, Հռոմի, արաբների, պարսիկների, Բյուզանդիայի, սելջուկների, մոնղոլների, թուրքերի, ռուսների եւ նույնիսկ փոքրիկ հարեւան՝ Վրաստանի լծի տակ, բայց, այդ եւ մնացած բոլորի համար եղել է ամառանոց, կա՛մ ձմեռանոց, կա՛մ զորանոց: Այդ ժողովուրդներին եւ ոչ մեկը արմատ չի գցել Հայաստանում, ինչպես արմատ չեն գցել նրանց ձիթենիներն ու արմավենիները: Այս երկիրը մաղում է իրենն ոչ հարազատ տարրերը՝ նրանց հեռացնելով իր խստապահանջությամբ եւ պահում է միայն այն տարրերին, որոնց հաճույք է

պատճառում այս ցուրտը, տաքը, բուքն ու գեփյուռը, որոնք մըջյունի նման կարող են կրկնակի եւ արագ աշխատել ու պաշար ամբարել՝ ձմեռվա հաճույքի համար: Այդ ժրաջան, դիմացկուն եւ բնության հարմարվող տարրն է հայությունը, որ անհիշելի ժամանակներից բուսել է այս դաժան երկրի վրա, եւ միայն նա է հարագատ գավակը Հայաստանի, որը սիրում է թե նրա արեւը, թե նրա ձյունը:

Հայաստանի բարձրությունը նույնպես դաժան է: Նրա ամենացածրադիր վայրը 1000 մետրից պակաս է ծովի մակերեւոյթից, իսկ ամենաբարձրը՝ 5000 մետր: Այդ բարձրությունը փորձաքար է ինչպես բուսականության, այնպես էլ մարդկանց համար:

Թույլ սիրտ ունեցողները պիտի մահանան, նեղ կուրծք եւ փոքր ծավալով թոքեր ունեցողները պիտի շնչահեղձ լինեն: Անսովոր օտարականի «գլուխը պիտի մաղե» եւ հաճախ քթից արյուն պիտի հոսի: Արեւի փայլը, ձյան սպիտակությունը կարող է կուրացնել, արեւի շողքը մաշկը կարող է այրել: Փուքսի նման թոքեր, լայն, թիկնեղ կուրծք, պողպատի նման սիրտ, լաստիկի պես երակներն են, որ կարող են տոկալ այդ բարձրություններում, ինչը ամեն մարդ ու ամեն ժողովուրդը չունի, որը սակայն ունի հայությունը՝ ժառանգած անհիշելի ժամանակներից: Հայը այդ բարձրությունների վրա է գտնում իր կյանքի երջանկուլթյունն ու թեթեւությունը՝ երգելով իր հորովելը:

Հայաստանի հողը միատարր ու միապաղաղ է: Նրա ամեն մի կտորը իր բնույթը, բաղադրությունն ու կերպարանքն ունի: Մի չափանիշով այն ոչ կարելի է կշռել, ոչ էլ չափել: Հողի յուրաքանչյուր կտոր պահանջում է համապատասխան մոտեցում եւ նախաձեռնություն: Տարրական գիտելիքներ ունեցող գյուղատնտեսը կձախողվի, եթե գործի առանց դարերի փորձառությունը, թողած ժառանգությունը եւ հողի այդ կտորը ուսումնասիրելու: «Ծմակի արտը գոմեջին բաժին, պառոտի արտը՝ մեծին պատիկին», - ասում է գյուղացին: Եթե արեւի չափը այդքան ազդում է Հայաստանի հողի վրա, դրանից ավելի ազդում է հողի բաղադրության վրա, որը պետք է ճանաչել կտոր առ կտոր: Եթե երկիրը մի մեքենա է մարդկության պահպանման համար, Հայաստանը այն բարդ մեքենան է, որի գործածումը ամեն մարդու չի տրված: Այդ մեքենան ժառանգել է հայը եւ գիտի նրա ուժն ու լեզուն:

Հայաստանը, երբեմն հանդիպող լեռնադաշտերով, անդունդների, կիրճերի, ծերպերի, ձորերի եւ հովիտների մի խառնարան է: Այն շարունակվող իր ելեւէջներով փոթորկված ծովի ալիքների է նման: Այդ ելեւէջները տառապանք եւ տաղտուկ են անսովոր դաշտային ժողովուրդների համար: Այն հոգնեցուցիչ եւ սպանիչ է, երբ

անդունդից բարձրանում ես 4000 մետր՝ նորից ելնելու ու իջնելու համար եւ այդպես անընդհատ: Անվարժ մարդու համար, որը չի ժառանգել լեռների բնությունը, որի մկանները չեն հարմարեցված այդ ելեւէջներին՝ սիրտը սկսում է թնդալ մուրճի հարվածի նման, մկանները դողում են, կուրծքը պայթում է նեղությունից, քրտինքը հոսում է աղբյուրի նման եւ կատարին չհասած՝ աչքերը մթնում են եւ հոգեպես այնպես է ընկճվում լեռան բիրտությունից, որ ինքն իրեն զգում է մի չնչին էակ այդ անիծյալ բարձրությունների եւ անդունդների առջեւ:

Այդպես չէ լեռնեցու համար: Դար ու փոսը, երկրի փոթորկված մակերեսը, անդունդն ու կատարը, եւ բոլոր ելեւէջները նրա համար դաշնամուրի ստեղներ են, որոնց վրա թռչկոտում է թիթեռի նման: Նրա մկանները վարժ են: Առանց հոգնելու նա մագլցում է բարձր, եւ երբ կատարին է հասնում, ինքնիրեն զգում է բնության եւ մարդկության տերը: Նա հպարտ է, լի եռանդով. ոչ մի դժվարություն անհաղթահարելի չէ. ինքն է հաղթականը, ինքն է ամենքին կարգավորողը: Անհատականությունը, նախաձեռնությունը եւ ժրջանությունը նրա հատկանիշներն են: Ժայռեր է գլորում եւ պարտեզ դարձնում, հողը՝ ցանում է, ձյունը՝ հալեցնում, արտը հերկում է, լեռը՝ ծակում ու ճանապարհ կառուցում, անդունդի վրա կամուրջ է գցում եւ իր օջախը մըջյունի առատ բույն դարձնում: Այն ինչը դժոխք է այլոց համար, նա դարձնում է նախանձ շարժող եղեմ՝ Ադամի ու Եվայի համար՝ Աստվածաշնչի վկայության համաձայն:

Հայաստանը այսօր դրախտ չէ: Անմարդաբնակ է, լցված լոկ վաչկատուն թափառաչըջիկներով, վայրի կենդանիներով: Նրա բնակիչները արտաքսված են Հայաստանից դեպի Խորհրդային Միության սահմանները. մեկուկես միլիոնն է, որ կարողացել է կառչել Երեւանի շուրջբոլորը՝ որպես հույսի ապավեն:

Ի՞նչ է լինելու Հայաստանի վիճակը, որը մնացել է թափուր, վայրենացած: Այդպես անմարդաբնակ, խռովությունների ասպարեզ պիտի մնա, ինչպես ահա մնացել է 30 տարիների ընթացքում, քանի որ այդ երկիրը բնակելի չէ ոչ մի ժողովրդի համար, բացի իր ստեղծած ժողովրդից՝ որը հայն է: Ի՞նչ է լինելու թափառական հայության վիճակը, որն արտաքսված է իր հայրենիքից: Քանի դեռ Շահ Աբասի կամ էլ բյուզանդացիների կողմից տեղահան արված հայությունը՝ իր լեզուն կորցրած, բարձրը խաթարված, դեռեւս իր սրտում պահում է Հայաստան վերադառնալու գաղափարը, քանի դեռ հայությունը պահում է Մասիսի հպարտությունը եւ դեռ մուրացիկ չունի, քանի դեռ ամենուրեք կարող է ցուցադրել իր աշխատանքը եւ իր բազուկները

չարժեւ Հայաստանի շղթաները փշրելու համար, եւ քանի դեռ այդ միլիոնների հասնող բազմությունը պահուում է Հայաստանի ազատագրման եւ ամբողջացման տեսակետը, ոչ մի կասկած չկա, որ վաղ թե ուշ հայությունը գնալու է իր ազատ հայրենիքը, որի համար ստեղծված է ինքը, որը կարող է նորից եղեմի վերածվել միայն հայի ձեռքերով:

Բայց կպահ՞ հայությունը Հայաստանի ամբողջականության գաղափարը...

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստան երկիրը աշխարհագրական մի միավոր է՝ փոքր Արարատի շուրջը Փոքր Կովկասի շղթայից սկսած մինչեւ Տավրոսի լեռնաշղթան, Զազրոչից մինչեւ Փոքր Ասիայի սահմանները:

Աշխարհագրական այս միավորի սահմանները ճշտված են Սեւրի դաշնագրով: Այդ միավորը, միջնաբերդ ունենալով էրզրումը, մի բնական բերդ է Մերձավոր Արեւելքում:

Այդ բերդի հյուսիսային եւ հյուսիսարեւմտյան պարիսպը կազմում է Գուգարքի լեռնաշղթան՝ Ախալքալաք գավառով, 120.000 ազգաբնակչությամբ եւ 2400 քառ. կմ տարածությամբ: Այդ գավառի 75 տոկոսը հայեր են, իսկ մնացածը՝ ղուխաբոր, վրացի, մահմեդական եւ այլն: Այս գավառը, լինելով Հայաստանի պարիսպը եւ ունենալով հայ ազգաբնակչություն, բաժանել են Հայաստանից եւ տվել Վրաստանին:

Հայաստանի հյուսիսային պարիսպը Լեռնային Գանձակն է իր 5000 քառ. կմ տարածությամբ եւ 80.000 ազգաբնակչությամբ, որի 88 տոկոսը հայեր են, իսկ մնացածը՝ ալլազգի: Այս գավառն էլ չնայած Հայաստանի հյուսիսային պարիսպն է եւ ազգաբնակչությամբ՝ հայ, բայց սա էլ է բաժանված Հայաստանից ու տրված Ադրբեջանին:

Հայաստանի հյուսիսարեւելյան պարիսպն է Լեռնային Ղարաբաղը 4600 քառ կմ տարածությամբ եւ 165.000 ազգաբնակչությամբ, որի 95.6 տոկոսը հայեր են, իսկ մնացածը՝ թաթարներ եւ այլն: Այս գավառը հին Արցախն է:

Նախիջևանի գավառը, որը Հայաստանի հարավարեւելյան սահմանն է եւ որն ունի 5400 քառ կմ տրածություն, ռուս-թուրքական 1921 թվականի դաշինքով (Մոսկովայի եւ Կարսի) անջատ է մնում Հայաստանից, թեեւ այն շրջապատված է Հայաստանով: Այն ինքնավար հանրապետություն է Ադրբեջանի կազմում, թեեւ չունի Ադրբեջանի հետ անմիջական սահման: Նրա ազգաբնակչության մեծամասնությունը, մինչեւ նախորդ պատերազմը, հայեր էին:

Հայերն արտաքսպեցին թուրքերի կողմից: Թվով 100.000 Հայեր թափառում են Խորհրդային Միության սահմանների մեջ՝ զրկված լինելով վերադարձի իրավունքից, թեպետ այդ գավառը այսօր ենթակա է Խորհրդային Միությանը, եւ 1945 թվականից էլ թուրք-ռուսական դաշինքը գոյություն չունի: Այսօր այդ գավառի ազգաբնակչության թիվը 100.000 է, որի 15 տոկոսն են Հայեր, իսկ մնացածը թաթարներ են, ռուսներ, քրդեր եւ այլ ազգեր: Այս գավառը, որը արեւելքից Հայաստանի դուռն է, չի գտնվում Հայաստանի սահմաններում, այլ պատկանում է Ադրբեջանին:

Խորհրդային Հայաստանը, իբրեւ առանձին Հանրապետություն, ունի 30.000 քառ կմ տարածություն, որի մեջ մտնում է նախկին Արարատի եւ Շիրակի նահանգների մի մասը: Նրա ազգաբնակչությունը 1.280.000 է, որի 87 տոկոսը Հայեր են, իսկ 13 տոկոսը՝ մնացած ազգերը միասին վերցրած: Հայաստանի միայն այս գավառներում է, որ հայկական կառավարություն կա եւ ինքնավարություն՝ Խորհրդային Միության կազմում: Խորհրդային Հայաստանը Ռուսաստանի ծայրամասն է: Արաքսի ափերին է ավարտվում այսպես ասած ռուսական Հայաստանը եւ սկսվում թուրքահայաստանը: Ինչպես վերեւում տեսանք, ռուսական, ավելի ճիշտ Հյուսիսային Հայաստանը պատառ - պատառ է արված, եւ Հայաստանի ամբողջականությունը խաթարված է: Նրա պարիսպներն ու աշտարակները, դեպի արտաքին աշխարհ նրա դռները, բաժանված են Ադրբեջանի ու Վրաստանի միջեւ: Ախալքալաքը, Լեռնային Գանձակը, Ղարաբաղը, Նախիջևանը Խորհրդային Հայաստանի մաս չեն կազմում այլևս: Հայ ժողովուրդն էլ կոտորակված է Հյուսիսային Հայաստանի մեջ՝ հայկական գավառների կոտորակվելու պատճառով:

Խորհրդային Հայաստանը, որը պիտի ունենար վերոհիշյալ պոկված գավառների հետ միասին 47.400 քառ կմ տարածք, ներկայումս ունի ընդամենը 30.000 քառ կմ տարածություն, այսինքն երկրի 37 տոկոսը խլված է Խորհրդային Հայաստանից: Իսկ ազգաբնակչությամբ, որ պիտի լիներ վերոհիշյալ խլված գավառների հետ 1.751.000, ունի միայն 1.280.000, այսինքն ազգաբնակչության 27 տոկոսը գտնվում է օտար լծի տակ:

Ի՞նչ պիտի լինի Հայաստանի վիճակը այս հոշոտումից հետո: Ինչպիսի՞ դիրքորոշում պետք է ունենա հայությունը իր երկրի ու ժողովրդի այս կոտորակման հանդեպ: Նախքան այս հարցերին պատասխանելը, շարունակենք վերհիշել Հայաստանի ու հայության կոտորակումները:

Խորհրդային Հայաստանի հարավային եւ արեւմտյան կողմում են

գտնվում Սուրմալուի եւ Կարսի նահանգները: Նրանցից առաջինը 1828 թվականից Պարսկաստանից գրաված ռուսական մի գավառ էր, իսկ երկրորդը՝ 1878-ից սկսած ռուսական մի նահանգ էր՝ Թուրքիայից գրաված: Երկուսն էլ Հայաստանի աշխարհագրական մասերն են, առաջինը՝ Արարատյան աշխարհի մի գավառը, իսկ երկրորդը՝ Վանանդն իր Կարս ամրույթյամբ, երբեմն մայրաքաղաք, երբեմն բերդաքաղաք իր շրջանում գտնվող Անիի հետ միասին: Նախորդ պատերազմի ժամանակ, 1918-ին, Բրեստ-Լիտովսկի դաշինքով, Կարսը գիջվեց Խորհրդային Միության կամ ռուսների կողմից՝ Թուրքիային: Իզուր էին հայերը ջանք թափում պատերազմով կասեցնել թուրքական բանակին: Պատերազմեցին, բայց պարտվեցին, եւ այդ շրջանները գրավեցին թուրքերը: Շուտով Թուրքիան իր հերթին պիտի պարտվեր Դաշնակից բանակների կողմից: Անգլիական զորքերի ճշման տակ Թուրքիան դատարկեց Կարսը եւ հարակից շրջանները եւ այն տվեց Հայաստանի Հանրապետությանը: Փաստորեն հանրապետական Հայաստանը արդեն իր իշխանությունը տարածում էր ամբողջ Ռուսական Հայաստանի վրա շուրջ 60.000 քառ. կմ տարածությամբ: Բավական չհամարելով ձեռք բերածը, 1919-ին հայտարարեց Միացյալ Հայաստան ծրագրի իրագործման մասին, որն ընդունվեց Սեւրում՝ Դաշնակիցների կողմից: Այս իրողությունը անտարբեր չթողեց բոլշևեիկյան ղեկավարությունը: Անկախ Հայաստանը նրանք իրենց համար խոչընդոտ էին տեսնում: Հայաստանը Կարսով նկատեցին որպես խոչընդոտ թուրք-ռուսական բարեկամությանը:

Սեւրի դաշնագիրը դիտվեց որպես իմպերալիզի խաղ, իսկ Հայաստանի Հարապետության նշանաբանը՝ «Միացյալ, Ազատ, Անկախ Հայաստան», դիտվեց որպես անգլիական դավ: 1919 թվականից սկսած թուրք-ռուսական բարեկամությունը հանգեցրեց Մոսկվայի դաշինքին, որով թուրք-ռուսական բանակները միասնաբար պիտի վերացնեին Անդրկովկասյան հանրապետությունների անկախությունը: Սեւրի դաշինքը ոչնչացվեց եւ ըստ Բրեստ-Լիտովսկի դաշինքի Կարսը պիտի խլվեր Հայաստանից եւ տրվեր Թուրքիային՝ ավելացնելով նաեւ Սուրմալու նահանգը:

Եվ եղավ անկարելին: Երկու կայսրությունները հարավից ու հյուսիսից ընկան մանուկ Հայաստանի վրա: Նա դիմադրեց, բայց պարտվեց: Ռուսական ուժերը ընկճեցին Լեռնային Գանձակը, Ղարաբաղը, Սյունիքի մասերը եւ մտան Նախիջևան, եւ այդ բոլորը միացրեցին նոր ստեղծված Սովետական Ադրբեջանին: Նրանց դաշնակից թուրքական ուժերը մտան Սուրմալու, Արդահան եւ Կարս: Այդ բոլորը կատարվեց համաձայն Մոսկվայի դաշինքի, որը շուտով

պետք է վավերացվե՞ր Կարսի դաշինքով՝ արդեն խորհրդայնացված Հայաստանի, Վրաստանի եւ Ադրբեջանի կողմից՝ Մոսկվայի բարձր վավերացումով:

Կարսի նահանգը եւ Սուրմալուն, երբ անցան թուրքերին, այնտեղի ողջ ազգաբնակչութիւնը, որը մոտ 150.000-ի էր հասնում՝ գաղթեց, ցրվեց Խորհրդային Միութեան սահմանների մեջ՝ զրկված լինելով բնօրրան վերադառնալու իրավունքից:

1945 թվականին Խորհրդային Միութիւնը չեղյալ համարեց 1920-ին թուրքիայի հետ կնքած դաշինքը: Ըստ եղած ոչ պաշտոնական տեղեկութիւնների հայտնում են, թե նախապայմանի համաձայն Ռուսաստանին էին վերադարձվելու իր նախկին հողերը՝ 1914 թվականի սահմաններով՝ նրա մեջ մտցնելով Կարսը, Արդահանը եւ Սուրմալուն:

Ինչո՞ւ 1878-ին նրանք գրավեցին այդ գավառները:

Պարզ է, ռուս աշխարհակալական նպատակներով:

Ինչո՞ւ չհանդուրժեց, որ այդ գավառները լինեն Հայաստանինը, այլ վերադարձրեց թուրքիային՝ հրաժարվելով իր իրավունքներից եւ պարտադրելով, որ Խորհրդային Հայաստանը նույնպես հրաժարվի նրանցից: Կասկած չկա, որ այն թեւադրված էր կայսերական շահերով:

Լո՞ւրջ են տարաձայնութիւնները, որ Ռուսաստանը մտադիր է վերագրավել Կարսը, Արդահանը եւ հարակից գավառները: Ի՞նչ նպատակներով եւ ինչի՞ համար: Արդյո՞ք այդ տարաձայնութիւնները նպատակ չունեն ճնշման տակ դնելու թուրքիային, նրան կանգնեցնելու այն գծի վրա, ուր կանգնած էր Մուստաֆա Քեմալի օրոք: Գուցե նա կվերադառնա այդ տարաձայնութիւններով ցարերի վարած քաղաքականութեանը, այսինքն մաս առ մաս տիրապետել Հայաստանին, լրացնել նրա ամբողջականութիւնը, որը մի թեւադրող բերդ է Միջին Արեւելքում Ռուսաստանի համար: Բայց այդ բոլորը քիչ է հետաքրքրում Հայաստանին: Նրա համար առաջին հետաքրքրութիւնը Հայաստանի ամբողջացումն է եւ հայկական հողերի վերադարձը հայութիւնը: Նա միամիտ երեխայի նման հավատում է արդարութեանը եւ կարծում է, թե Խորհրդային Միութիւնը այդ արդարութեանը իրագործելու համար է, որ առաջ է մղում եկեղեցականներին ոչ պաշտոնական ձեւով եւ իր գործակալներին աղմկել է տալիս Կարս, Արդահան, Լազիստան եւ այլ հարցերի շուրջ՝ մոռանալով, որ ցարական Ռուսաստանն էլ քանիցս դնացել է նման ճանապարհով՝ առաջ քշելով ավելի անվանի կաթողիկոսների՝ Աշտարակեցիների, ավելի անվանի զորավարների՝ Լուսիս-Մելիքովների եւ Լազարեւների, որոնց արյունով առնվեցին Հայկական

նահանգները, բայց որոնց ջանքերը ծառայեցին լոկ Հայաստանի մասնատմանը եւ նրա ազատութեան թաղմանը: Դա համարվում էր ցարական իմպերիալիզմ: Ներկան անցյալից չի տարբերվում, քանի որ եթե Ռուսաստանը դեմ է Հայաստանի անկախութեանը եւ կողմ է Հայաստանի խորհրդայնացմանը, գոնե նա հայկական հողերի ամբողջացումը պիտի կատարեր Հայաստանի Խորհրդային կառավարութեան միջոցով: Եթե Ռուսաստանի նպատակը լիներ Հայաստանի մասնատված հողերի ամբողջացումը, այդ պարագայում Հայաստանը իր աթոռը պիտի ունենար Ազգաժողովներում եւ պիտի պահանջատեր լիներ Կարսի, Արդահանի եւ այլ հողերի, ինչպես Ուկրաինան, Բելոռուսիան, որոնք իբր իրավատեր տիրացան իրենցից խլված հողերին: Թեեւ ամեն աղմուկ, ամեն հույս տենչում է հայկական հողերի ամբողջացումը, բայց այդ ամենը ապացույցն է այն բանի, որ Խորհրդային Միութեան նպատակների մեջ չի մտնում Խորհրդային Հայաստանի ամբողջացումը, այլ ընդհակառակը, ձգտում է Հայաստանի մասնատմանը՝ հօգուտ ռուսական իմպերիալիզմի:

Այդ ավելի ակներեւ է դառնում բուն Հայկական Հարցը նկատի առնելով, Տաճկահայաստանի խնդրիւր հաշվի առնելով, որից կախված է հայութեան ճակատագիրը:

Տաճկահայաստանը բնավ էլ ռուսական տիրապետութեան տակ չէ, իբրեւ նրա ներքին գավառ, բայց նրա կողմից գրավվել է 1828-ին, 54-ին, 78-ին եւ 1916-ին: Այս չորս գրավումներն էլ ապարդյուն են անցել եւ մեծ տերութեանների կողմից Ռուսաստանը դուրս է քշվել գրաված տարածքներից եւ Տաճկահայաստանի հարցը առկախ մնալով՝ թողնվել է Թուրքիային: Այդ երկրամասը ողջ Հայաստանի կեսից ավելին է, չուրջ 90.000 քառ կմ տարածութեամբ:

Նրա մեջ են մտնում նախկին Էրզրումի վիլայեթը, Վանի վիլայեթ առանց Հաքարիի, Բիթլիսի վիլայեթը՝ առանց Սղերդի: Ըստ Թուրքիայի վարչական բաժանման, ներկայիս Էրզրումի նահանգը զբաղեցնում է 28.970 քառ կմ տարածք, ազգաբնակչութեան խտութեանը քառ կմ-ի վրա 13 մարդ է: Ակրի տարածութեանը 13.300 քառ. կմ է, խտութեանը՝ 8 մարդ., Վանը՝ 20.000 քառ կմ, խտութեանը՝ 4 մարդ: Մուշի նահանգ՝ 16.200 քառ կմ տարածութեանը, խտութեանը՝ 9 մարդ: Երզնկան՝ 13.000 քառ կմ, խտութեանը՝ 12 մարդ: Այս տարածութեանները ձգվում են Տավրոս, Չաբրոշ, Անդիտավրոս լեռնաշղթաներով եւ այդ լեռնաշղթաները եզերելով Հայաստանի արեւմուտքը, հարավը եւ արեւելքը Ռուսական Հայաստանի հետ կազմում են մեկ ամբողջականութեանը, մեկ բնական բերդ՝ Մերձավոր Արեւելքի հավասարակշռութեանը պահող, խաղաղութեանը հաստատող

եւ հաղորդակցությունները կանոնավորող: Ինչպես տեսանք, Հայաստանի այդ ամբողջականությունը գոյություն չունի, այն բաժանված է երկու կայսրությունների միջև եւ դրա համար էլ ո՛չ խաղաղությունը, ո՛չ հավասարակշռությունը եւ ո՛չ էլ միջազգային հաղորդակցությունն է ապահովված:

Վերեւում մենք տեսանք, որ թուրքական վերջին վիճակագրական տվյալներով ազգաբնակչության խտությունը քառակուսի կիրամետրի վրա կազմում է 4-13 մարդ: Այս թիվն էլ չափազանցություն պետք է համարել: Կան նահանգներ, որտեղ մեկ քառ կմ²-ի վրա խտությունը ավելին չէ, քան մեկ եւ ամենախիտը՝ 7 մարդ: Եթե ընդունելի լինի անգամ թուրքական վիճակագրությունը, պարզ է, որ երկիրը համարյա դատարկ է: Վիտալ Քինեի ժամանակների վիճակագրությունը քառակուսի կիրամետրի վրա 20 մարդուց ավելին էր ցույց տալիս քառ. կմ վրա: Նախորդ պատերազմի ժամանակ այդ թիվը կազմում էր 25-35 մարդ: Ո՛ւր են այդ բազմությունները, եւ ովքե՞ր էին նրանք:

Առավելապես հայեր էին, որոնց մի խոշոր մասը կոտորվել էին թուրքերի կողմից, բայց այդ բազմությունից եւ նրանց մնացորդներին, որոնք պատկառելի թիվ եւ որակ են ներկայացնում, ցրված են աշխարհի չորս կողմերը: Նրանց թիվը, որոնք լքել են այդ երկիրը, մեկուկես միլիոնի է հասնում. նրանք գլխավորապես գտնվում են Խորհրդային Միությունում եւ արտասահմանյան գաղութներում: Այդ հայության մուտքը իր բնօրրան արգելված է մահվան սպառնալիքով:

Հայաստանը բաժանված է Վրաստանի, Ադրբեջանի եւ Թուրքիայի միջև: Նրա մասերը՝ Ախալքալաքը, Լեռնային Գանձակը, Ղարաբաղը, Նախիջևանը, Սուրմալուն, Կարսի նահանգը եւ Տաճկահայաստանը գտնվում են օտար պետությունների, օտար կառավարությունների իշխանության ներքո: Միայն Խորհրդային Հայաստանը, որը հազիվ Հայաստանի մեկ հինգերորդ մասն է կազմում, գտնվում է հայկական իշխանության ներքո: Ինչպիսի՞ն է Հայաստանի աշխարհագրական ներկա վիճակը:

Հասկանալի է, որ եթե նա աշխարհագրական մի միավոր է, ներկա իրավիճակում ավելի շատ կոտորակ է եւ ոչ թե միավոր: Եթե նրա ամբողջությունը պարսպապատ մի ամրոց է, այդ ամրոցի բոլոր աշտարակները դարձել են Արշակավան՝ օտար ուժերի համար: Եթե Հայաստանը իր ամբողջության մեջ միջազգային ճանապարհների հանգույցն է, քաղաքակրթության եւ առեւտրի տարածման ազդակ, ապա այլեւս դադարել է այդպիսին լինելուց: Նրա ճանապարհները

փակված են տարատեսակ ուժերով, նրա կամուրջները դարձել են ավազակաբներ:

Եթե նրա ամբողջականութունը խաղաղության, ազգերի հավասարակշռության ազդակ է, ապա նրա մասնատումները պատճառ են, ընդհակառակը, խռովության եւ անվերջ պայքարների եւ խախտված է Մերձավոր Արեւելքի հավասարակշռությունը: Եթե Հայաստանի ամբողջականութունը մի արգանդ է, որը ծնում ու կերտում է հային, այսօր այդ արգանդը չորս կողմից փշրված, կտտորակված մի կուժ է դարձել, որը ո՛չ կարող է կերտել, ո՛չ էլ ամբարել հայությանը, քանի այն միավորված չէ:

Զգո՞ւմ է հայությունը, որ իր հայրենիքի մասնատումը համազոր է ոչ միայն հայրենիքի, այլ իր մահվանը:

Այս հարցին հայ ժողովրդի ենթագիտակցությունն ու ներքին բնազդն ավելի հստակ պատասխան են տալիս: Կանգնեցրեք Երեւանի փողոցներում պատահական որեւէ մեկին, ինչ սեռի եւ հասակի ուզում եք, ինչ հոսանքի ու կրթության էլ պատկանի եւ հարցրեք՝ ո՞ւր է Հայաստանը: Նա անվարան կերպով ձեռքը կողդի դեպի Արարատ, Վան, Մուշ, էրզրում: Թեեւ ինքը Հայաստանի մայրաքաղաքում է, բայց իրեն Հայաստանից դուրս է համարում: Նույն հարցը տվեք մի մշեցու, էրզրումցու, որը գտնվում է իր երկրում կամ երկրից դուրս, նա անվարան ձեռքը կողդի դեպի էջմիածին՝ Հայաստանի ուղղությունը որոշելով: Հայր բնագրով միակամ է Հայաստանի ամբողջականության հարցում եւ նրա մեջ է գտնում իր պահպանումն ու զարգացումը:

Այս բնագրական ենթագիտակցությունն էր պատճառը, որ մի թույլ Հայաստանի իշխանություն, առանց նկատի առնելու թուրքոսական չկամությունները, չունենալով ոչ մի արտաքին նեցուկ, չունենալով բավարար ուժ, հայտարարեց «Միացյալ Հայաստան» նշանաբանը, որ նշանակում էր ձեռնոց նետել երկու կայսրություններին եւ վտանգել իր իսկ գոյությունը: Այս բնագրական ենթագիտակցությունն էր, որը մղում էր ռուսական մասի Հայաստանից «դեպի երկիր» նշանաբանով հանուն Հայաստանի, խումբ - խումբ Ֆիդայիները գոհաբերել, իսկ մյուս կողմից, Տաճկահայաստանից ռուսահայաստան անցնելով, մասնակցել հայ-թաթարական կռիվներին, կամ էլ փրկել եկեղեցական կալվածքները ռուսական բռնազրավումից: Հայի այդ ենթագիտակցությունն է, որ ահա մեկ ու կես դարից ավելի է, որ հայ ժողովրդին մղում է ամեն տեսակ գոհաբերությունների հանուն Հայաստանի ազատագրման դժվարին գործի, թեպետ միշտ անհաջող, բայց միշտ հարատեւ, ինչպես հրաբուխի մեջ անթեղված կրակը:

Եթե հայու թյունը իր ենթագիտակցությամբ միակամ է Հայաստանի ամբողջացման, ազատագրման հարցում, նույնպես միակամ է իր հոսանքներով, քաղաքական, մտավորական, կրոնական կազմակերպություններով եւ իր գիտակցական աշխարհով:

ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՀԱՅ ՀՈՍԱՆՔՆԵՐԸ

Բոլոր հայ հոսանքները կարելի է բաժանել երեք գլխավոր խմբերի.

Ա. – Արտասահմանյան Ապագային հոսանք

Արտասահմանյան Ապագային Հոսանքը ընդհանրապես աջակողմյան է: Այս հոսանքին պետք է դասել հայ կղերականությանը, եկեղեցականությանը, բուրժուազիային եւ չարչի դասը, որ հաճախ համախմբվում է Ռամկավար Կուսակցության անվան տակ, եւ բոլոր այն տարրերը, որ լեւանդինանալու վրա են, որոնց համար «յան» ազգանվան վերջավորությունը բեռ է, եւ որոնք պահում են լոկ ազգային եկեղեցու հիշատակը:

Հայու թյան այս աջ թեւը ամենաներկայանալին է: Նրան են ենթարկվում հայ եկեղեցիները, նրա ազդեցության տակ են հայկական դպրոցները, այնտեղից են ծնունդ առնում մեծ առեւտրականները, դրամատերերը, պաշտոնյանները, այս կամ այն տերության ազդեցիկ դեմքերը, աղաները, տիտղոսավոր մարդիկ: Նրանք կշիռ ունեն նաեւ մշակույթի բնագավառում:

Հայու թյան այս թեւում կան տարբեր տարրեր, որոնց համար հայ լինելը բեռ է եւ ոմանք, որոնք իրենց համարում են «Ֆրանկ» «բողոքական» կամ «լուսավորչական», իրենց ազգանուններին կցում են «Ուլ», «Իչ» եւ այլ օտար մասնիկներ, բայց ընդհանրապես ազգասեր եւ եկեղեցասեր հայեր են:

Հայու թյան այս հատվածը դարեր շարունակ կորցրած լինելով իր անկախությունը, գտնվելով օտարի լծի տակ, ապրելով հայրենիքի սահմաններից հեռու՝ օտար տիրապետության ներքո, գրկված հայրենի հողից, գութան-մաճկալից, ձեռք է բերել հատկություններ, որոնք անհարիր են Հայաստանի բնությանը եւ հայ ժողովրդի հոգեբանությանը:

«Որտեղ հաց, այնտեղ կաց» հասկացողությունը արմատացել է նրա մեջ, եւ նա դարձել է աշխարհաքաղաքացի: Նրա մեջ անհույս երազ է դարձել հայրենիքի գաղափարը, լոկ մի հեռավոր ցնորք:

Հայրենիքի գաղափարը թեեւ իր երազն է, բայց այն կորցրել է իր շոշափելիութունը. ո՛չ սկիզբ ունի, ո՛չ էլ սահման. հայրենիքը Հայ Եկեղեցին է: Եկեղեցին մարմնացումն է հայրենիքի եւ նրա միջոցով է, որ հայը հայ պիտի մնա: Դավանանքը, լեզուն եւ ավանդությունները հայության փրկության միակ խարխիւններն են: Այդպիսով այդ տարրը նույնանում է հակասիոնական այն տարրի հետ, որը սինագոգով, թալմուտով է բավարարվում եւ լաց լինելով պատերն է լիզում՝ առանց բռնն ցանկության եւ նրան տիրապետելու գիտակցության:

Ազատության եւ անկախության մասին են խորհրդակցում. «Եթե բոշախից փաշա չի լինի, հայից էլ փաղիչահոլթյուն չի լինի»: Անհույս է համարում ազատագրական պայքարը, նույնիսկ դեմ է նրան: Չէ՞ որ հայկական պետականությունը գահագուրկ կանի Հայոց Եկեղեցուն՝ զրկելով նրան հայ ժողովրդի ներկայացուցչական մենատիրությունից: Չէ՞ որ սահմանափակ մի փոքրիկ Հայաստան պիտի սահմանավորեր իր աշխարհաքաղաքացիական շահագործումները եւ իրավունքները՝ ամենուրեք դյուրին հաց ձարելու համար: Այս տեսակետներն են, որ հայ եկեղեցականությունը եւ նրա հետ կապված պահպանողական բուրժուազազ մղում են սերտ համագործակցության Գ. Միջազգայնականի հետ, թեկուզ այն գլխատելու լինի չհամակերպվող կաթողիկոսներին եւ «կուլակներին»:

Վարչակարգերի մասին իմաստասիրում են. «Հեզ գառը, յոթը մոր կաթ կուտի», կամ «Այն ձեռքը, որ հզոր է, համբուրի եւ գլխիդ գիրը»: Այսպիսով նա դառնում է անողնաշար մի սողուն, մի շողոքորթ ստրուկ բռնավորի առջեւ եւ բռնակալ՝ ընկածի համար: Նա հլու-հպատակ է բոլոր ղեկավարների առջեւ, քանի նրանք հզոր են, բայց լքում է նրանց, եթե ավելի հզոր ուժ է տեսնում:

Այս բոլոր այլասերումները, որ չեն վերաբերվում հայությանը, այլ նրա «գիտակից» մի թույլ հատվածին, ներելի են այնքանով, որ այս տարրը՝ հայրենագուրկ, իշխանագուրկ, հայության մեջ գորավիդ է հայկական ավանդություններին ու լեզվի պահպանմանը եւ միայն այս սահմանների մեջ պետք է որոնել նրա դրական արժեքը: Իսկ եթե փորձենք նրա մեջ գտնել քաղաքական ազատության, հայրենիքի ամբողջացման եւ ազատության ազդակ, այդ պարագայում չարաչար հուսախաբվելու ենք: Հայության այդ թեւը կարող է ծախել Հայաստանի եւ հայության ազատությունը՝ իր եկեղեցու իրավունքները ապահովելով եւ մի պնակ ոսպով, ինչպես օրինակ կրոնական մի թերթի, մի դպրոցի բացման թույլտվությունն է:

Ունի՞ այս թեւն իր նման մի այլ հատված: Դժբախտաբար ունի, եւ այդ հատվածը պետք է փնտրել հայության ձախ թեւում:

Բ. Արտասահմանյան միջազգային հոսանք կամ ձախեր

Այդ հոսանքին ընդհանրապես պատկանում է ռուսական դաստիարակությունը ստացած մտավորական դասը, որը տոգորված է ռուսական եւ համամարդկային գաղափարներով, որի համար հայությունը եւ Հայաստանը թվում են նեղ, խեղդիչ մի շրջագիծ, որի համար Հայաստանը մի հետին գավառն է Ռուսաստանի՝ իրենց ընդհանուր հայրենիքի: Իսկ այդ հսկա հայրենիքը հանդիսանում է մի կամուրջ՝ համաշխարհային հայրենիք ստեղծելու համար: Այս ձախ հոսանքի կենտրոնական ուժն է կոմունիստական կուսակցությունը, նրանց տեսակին մոտ են էսսենները եւ դեմոկրատները:

Այս մտավորական հոսանքի ղեկավարությունը՝ սնված ռուս հեղափոխական իդեալներով, համաշխարհային հեղափոխության տենչերով, անհաղորդ է հայության թե՛ տառապանքին եւ թե՛ նրա բացառիկ շահերին:

Այն ավելի գերադասում է ընկերային իդեալները, քան հայության իդեալները, որոնք մեկ կատարյալ կրոն են դարձել, որին պիտի զոհաբերվեն հայության շահերը: Այս նոր կրոնին հայությունը տվել եւ տալիս է շնորհալի առաքյալներ՝ մոլեռանդ ու դաժան, որոնք պատիվ կարող են բերել իրենց կուսակցություններին, բայց վնասում են թե՛ Հայաստանի ամբողջացմանը եւ թե՛ հայությանը: Ուստի այս կուսակցությունները, թեեւ նրանցից բոլշեւիկները այսօր Հայաստանում իշխանության են եկել, բայց հայության համար անհարազատ են, չեն կարող արտահայտել հայության իղձերն ու նպատակները:

Այս ձախ հոսանքը թեեւ կրոնը համարում է թույն եւ իրեն համարում է կրոնական նախապաշարումներից ձերբազատված, բայց ձեւի մեջ տարբեր, իսկ էությամբ շատ հարազատ է աջակողմյան կղերականությանը:

Այսպես օրինակ՝ աջակողմյան թեւի համար Աստված անքննելի, ամենակարող, ամենատես է: Զախակողմյան թեւի համար Մարքսը, Լենինը, Մտալինը ամենակարող, անքննելի, ամենատես են:

Առաջինի համար եկեղեցին եւ հավատացյալները գերադասելի են Հայաստանի եւ հայության շահերից, իսկ երկրորդի համար գերադասելի են Խորհրդային Միության կոմիտեռնի շահերը:

Առաջինի համար եկեղեցու մենատիրությունը գերադասելի է, քան ժողովրդի կամքը:

Երկրորդի համար գերադասելի են դասակարգի եւ կուսակցության կամքը:

Առաջինի համար ազատությունը, ժողովրդավար իշխանությունը

խոչընդոտ են եկեղեցու մենատիրութեանը, իսկ երկրորդի համար՝ կուսակցական մենատիրութեանը: Առաջինի համար հայրենիքի ամբողջացումը, անկախութեանը երկրորդական հարց է, իսկ երկրորդի համար՝ հայրենիք հասկացողութեանը շովինիզմ է, խոչընդոտ մեծ հայրենիքի՝ Խորհրդային Միութեան նպատակների եւ պատճառ ազգամիջյան բախումների համար: Հայրենիքի, ազգային խնդիրների ընդառաջումը մի տակտիկական միջոց է հայրենիքի եւ ազգութեան նախապաշարումները ոչնչացնելու, իսկ նրանց խորացումը՝ արգելք բոլշեւիկյան նպատակների իրագործման համար:

Վերը նշվածները բավական են ցույց տալու համար, որ այս իրար հակառակ, իրար թշնամի հոսանքները ունեն համանման վերջնական նպատակներ, որոնք ձուլվում են իրար եւ նույնանում Հայաստանի ամբողջացման, նրա անկախութեան, նրա ազատութեան, նրա վարչական ժողովրդավարութեան հարցերին հակառակ: «Երկու ծայրերը միայն իրար կմիանան» ասացվածքը իրականութեան է, եւ զարմանալի է, որ Խորհրդային Միութեանում օրթոդոքսութեանը եւ բոլշեւիզմը, կամ պանսլավոնիզմն ու կոմունիզմը ձեռք ձեռքի են տվել ընդդեմ ժողովրդավար հոսանքների: Մեր կյանքում նույնպես ծայրահեղ աջակողմյան հոսանքները՝ կաթողիկոսներից սկսած, ձեռք ձեռքի քայլում են ձախ կոմունիստ հոսանքի հետ՝ իրենք իրենց մկրտելով «առաջադիմական» անունով:

Սա ոչ ծիծաղելի է, ոչ էլ անբնական: Անբնական պետք է համարել այն միամտութեանը, ըստ որի շատերը կարծում են, թե պետք է ընդլայնել «Տառաջադիմականներին» շրջագիծը՝ ներառելով նաեւ կենտրոնի կուսակցութեանները: Դա կորստաբեր է եւ անհնարին, քանի Հայաստանի ամբողջականութեանը, նրա ազատութեանը, ժողովրդավարութեանը մնում է հայութեան բնազդական եւ գիտակցական նպատակը:

Գ. Հայութեանը եւ Հ.Ս.Յ. Դաշնակցութեանը

Հայութեան թշնամի թալիթները բնորոշում են.

- Դաշնակցութեանը սպանել՝ համազոր է հայութեանը սպանելուն եւ փոխադարձաբար:

Այդպես էին մտածում գոլիցիներն ու դաշկովները: Մեր հակառակորդ ձախ կուսակցութեանները բնորոշում են.

- Դաշնակցութեանը այն քաղցկեղն է հայութեան սրտին բուսած, որի վերահաստումից հայութեանը կմեռնի:

Հայութեան թշնամիների որակումներով ուրեմն դժվար է որոշել դաշնակցութեան եւ հայութեան սահմանները: Այդ կուսակցութեանը

լինի չարիք թե բարիք՝ երկրորդական հարց է դառնում: Նա հայու-
թյան հարազատ զավակն է եւ միացած է նրան: Նա ով ցանկանում է
սպանել Դաշնակցությունը, թշնամի է հայությանը եւ, փոխադար-
ձաբար, հայության թշնամին թշնամի է Դաշնակցությանը: Բուլչեւիկ-
ները արդեն քառորդ դարից ավելի է, իսկ այսօր էլ իրենց
«առաջադիմականներով», ցանկանում են սպանել Դաշնակցությանը-
ուրեմն թշնամի են հայությանը:

Դաշնակցությունը կենտրոնի կուսակցությունն է: Նրան կուսակ-
ցություն անվանելը սխալ է, որովհետեւ այն ներկայացնում է հայ
ժողովրդին: Այն ավելի շատ հայ ազգի կազմակերպությունն է: «Հայր
Աբրահամը» ասում էր. «Դաշնակցության ուժը իր խորհրդավորու-
թյան մեջ է»: Կողբի այդ խոսքը ճշտել այսպես, որն ավելի իրական է՝
Դաշնակցության ուժը հայության բնազդի եւ ենթագիտակցության
մեջ է: Այն չունի տեսական մեծ գրականություն՝ ծրագրերի եւ
նախագծերի շուրջ, բայց ունի մի քանի նախադասություններից
կազմված նպատակներ, որոնց սեփականատերը ավելի շատ
հայությունն է, քան ինքը:

«Միացյալ, Անկախ, Ազատ, Ժողովրդավար, Ընկերվարական
Հայաստան» խոսքերի մեջ կարելի է սկսել եւ վերջացնել նրա
տեսությունը: Այս սկզբունքներն ունենալով նա դեմ չէ աջակողմյան
հոսանքներին: Նա նույնիսկ նրանց գոյությունը անհրաժեշտություն է
համարում՝ բյուրեղացնելու համար հայ միտքը՝ պայմանով, որ
եկեղեցին, դավանանքը խղճի գործ համարվի եւ չպարտադրվի
ժողովրդին:

Դաշնակցությունը ձախ հոսանքների մուտքին նույնպես դեմ չէ,
միայն թե նրանք իրենց թվին ու որակին համապատասխան տեղ
ունենան ժողովրդական ուղղության մեջ, եւ նրանց ուժը չարժեքավոր
օտար սվիններով եւ 200 միլիոն համարվող Սովետական Միության
սպառնալիքներով:

Մենք համամիտ ենք ձախ հոսանքների հետ, որ ո՛չ անգլիական եւ ո՛չ
էլ այլ իմպերիալիստական ուժեր չպետք է միջամտեն Հայաստանի
գործերին, բայց միաժամանակ անհրաժեշտ է, որ դեմ լինենք Սովե-
տական Միության միջամտություններին: Նրա ներկայությունը եւ
ձգտումները մեր հայրենիքում ոչ տարածքների ամբողջացմանը
կնպաստեն եւ ոչ էլ նրա ազատությանը: Այն պիտի բերի միջազգային
եւ ազգային հարատեւ պայքարների եւ «բաժանիր, որ տիրես»
քաղաքականությանը, ինչպես որ նեկայումս բաժանված է
Հյուսիսային Հայաստանը Հարավային Հայաստանից: Եթե կան
հավատացյալներ, «Առաջադիմականներ» նման, որոնք կարծում են,

Թե միայն Ռուսաստանի, սովետների միջոցով պիտի իրականանա Հայաստանի հողերի ամբողջացումը, որին կարող է հավատալ նաեւ ինձ նման թերահավատն էլ, ապա Խորհրդային Միությունը բացառապես իր կամքով պետք է միացնէր Ախալքալաքը, Լեռնային Գանձակը, Ղարաբաղը, Նախիջևեանը ներկայիս Խորհրդային Հայաստանին, կամ երբ Խորհրդային Հայաստանի կառավարութիւնը իբրեւ իրավատէրը Հայաստանի, կարողանար իրեն ճանաչել տալ Ազգաժողովներում եւ նստեր Ուկրաինայի ու Բելոռուսիայի կողքին եւ որպէս պահանջատէր ներկայանար Տաճկահայաստանի՝ Կարս - Արդահանի: Բայց երբ ոչ առաջինն է արված եւ ոչ էլ երկրորդը, ուրեմն ավելորդ են լավատեսութիւնները եւ անհիմն՝ հուսերը: Եվ պետք էր, որ հայ ժողովուրդը իր գլխի ճարը իր ձեռքով տեսներ, փոխանակ ուրիշ, օտար ուժերի հետ հուսեր կապելով՝ իր արդար եւ վճռված դատը քամիներին տար:

Հայութեան նպատակը պիտի մնա - Միացյալ Հայաստան, եւ Միացյալ Հայաստանը՝ միայն հայութեանը:

Ինչպէ՞ս կարելի է հասնել այդ նպատակին:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԻՐ ՀԱՐԵՎԱՆՆԵՐԸ

Մենք ցույց տվեցինք, որ Հայաստան երկիրը իր ամբողջականութեան մեջ մի բնական բերդի է նման: Բերդը արժեք ունի, երբ այն իրեն չըջապատող երկիր ունի: Հայկական բերդը չըջապատված է անմիջականորեն Քրդստանով, Վրաստանով, Աղվանաց աշխարհով (ներկա Ադրբեջանով), Լազիստանով: Այս երկրներն էլ իրենց հերթին սահմանակից են Փոքր Ասիային, Իրանին եւ Արաբական երկրներին: Հայաստան բերդը այսպիսով շահագրգիռ է ոչ միայն հայութեան, այլեւ այդ երկրների համար: Բերդը կարող է իր չըջապատի համար ապահովութեան պատնէչ դառնալ, բայց այն կարող է նաեւ չըջապատի ժողովուրդների համար դառնալ վտանգի եւ փորձանքի աղբյուր: Եթե սա անփխտելի է, ապա Հայաստանը իր հայութեամբ, իբրեւ բերդատէր, հստակ ու որոշակի ուղղութիւն պիտի ունենա, իսկ մյուս կողմից այդպիսի որոշակի ուղղութիւն պիտի ունենան նաեւ հարեւան ազգերը: Եթե բերդի հարեւան ժողովուրդները նրա մեջ են տեսնում իրենց ապահովութեան գրավականը, եւ եթե բերդի ներքնաշխարհը գիտակցում է իր դերը, այսինքն՝ իր չըջապատին ապահովութեան պատվար լինելը, այդ պարագայում Հայաստանը մի կողմից եւ դրացի երկրները մյուս կողմից, պետք է իրենց արտաքին քաղաքա-

կանուխութիւնը ներդաշնակեն եւ մշակեն մեկ ներքին եւ արտաքին քաղաքականութիւն:

Հասկանալի է, որ եթէ Ադրբեջանը եւ Վրաստանը օգտվելով թուրքի եւ ռուսի բարյացկամութիւնից՝ հենված նրանց սվինների վրա, բռնագրաված պահէն Հայաստանի Ախալքալաք, Լեռնային Գանձակ, Ղարաբաղ, Նախիջևեան գավառները, ապա դա համագոր է, որ նրանք չեն գիտակցում Հայաստանի ամբողջականութեան եւ նրան պատվար լինելու արժեքը՝ հօգուտ իրենց: Նրանք անտեսում են հայութեան կենսական շահերը: Սա պատճառ պիտի դառնա Հայաստանի արդար դժգոհութեան:

Հասկանալի է, որ քանի թուրքիան չի լքել Կարսը, Սուրմալուն եւ Արդահանը, երբ նա ի օգուտ Հայաստանի չի լքել Տաճկահայաստանը, դա պետք է համարել թշնամութիւն Հայաստանի եւ հայութեան հանդեպ, ուրեմն պայքարը երկու ազգերի միջեւ պիտի շարունակվի:

Եթէ քրդերը անտեսեն Հայաստանի ամբողջականութիւնը եւ հենվեն թուրքիայի եւ այլոց վրա, զանազան ծրագրեր ունենան ի վնաս Հայաստանի ամբողջականութեան, ապա հայութիւնը իրավունք կունենա անտեսել քրդական շահերը եւ խուսափի նրանց հետ գործակցելուց:

Հասկանալի պետք է համարել, որ քանի Ռուսաստանը, հակառակ ազգերի ազատ ինքնորոշման սկզբունքի, մնա Հայաստանում եւ իրեն շրջապատող երկրների մեջ՝ դիտվելու է իր հզորութիւնը չարաշահող մի ուժ եւ թուլյերի իրավունքները բռնագրավող տարր:

Հասկանալի է նաեւ այն, որ եթէ հայութիւնը, օգտվելով իր աշխարհագրական դիրքից, ցանկանա փոխարինել ռուսական կամ թուրքական տիրապետութիւնները մեկ այլ իմպերիալիստ պետութեան տիրապետութիւնով, արդարորեն վաստակելու է ռուսական եւ թուրքական իշխանութիւնների թշնամութիւնը:

Եթէ նա դառնա առաջապահը թուրքական եւ ռուսական իշխանութիւնների եւ իր երկրում ցանկանա տեսնել այդ իշխանութիւնների վերջնական հաստատումը, փոխանակ ձգտելու տեք կանգնել իր իրավունքներին, նա դրանով իսկ վաստակելու է մրցակից իմպերիալիստ պետութիւնների թշնամութիւնը:

Եթէ նա Ռուսաստանի առաջապահը դառնա, առանց համամտութիւնը ունենալու Վրաստանի, Ադրբեջանի եւ Քրդստանի, այդ պարագայում դեմ գնացած կլինի այս ժողովուրդների ձգտումներին՝ նրանց իրավացի դժգոհութիւնը վաստակելով:

Եթէ Հայաստանը առանձին, կամ էլ իր անմիջական հարեւանների հետ միասնաբար առաջապահը դառնա ռուսական իմպերիալիզմի,

ապա նրանք վտանգելու են ամբողջ Մերձավոր Արեւելքը, եւ Փոքր Ասիան, Իրանը, Արաբական երկրները զգալով վտանգը, արդարորեն իրենց վտանգված կզգան, կթշնամանան եւ իրենց հետեւից քաշելով այլ կայսրապաշտ պետութիւններ՝ միջազգային բարդութիւնները պատճառ կդառնան:

Վերոհիշյալ առարկայական կացութիւնները հարկադրաբար ստեղծված են երկրի աշխարհագրական դիրքից թելադրված:

Ուրեմն ո՞րն է լինելու հայութեան ուղղութիւնը:

- Ազգերի, երկրների ինքնորոշման սկզբունքը, որոնք անկեղծորեն կամ կեղծ ընդունել են բոլոր մեծ ու փոքր ազգերը, պիտի լինի Հայաստանի եւ հարեւան երկրների հիմնական սկզբունքը:

Հայաստանի, ինչպէս նաեւ հարեւան երկրների անկախութիւնը եւ նրանց դաշնակցութիւնը միմյանց հետ, պետք է ունենա մեկ նպատակ՝ հեռացնել բոլոր տեսակի աշխարհակալ պետութիւններին:

Մերձավոր Արեւելքի պետութիւնները հետ հասկացողութիւնը, նշանակում է իրենց շահերի ներդաշնակութիւնը եւ ջանքը՝ Մերձավոր Արեւելքի անկախութեան եւ նրա չեզոքութեան, պայմանով, որ նա փոխադարձաբար հարգի Հայաստանի եւ դրացի երկրների անկախութիւնը եւ ձեռք քաշի կորստաբեր Սատապատի դաշինքները եւ բռնադրաման ընթացքից, ինչպիսին որդեգրել է Թուրքիան Հայաստանի, Քրդստանի վերաբերյալ:

Գործիք չդառնալ այս կամ այն մեծ պետութեան ձեռքին՝ ի վնաս այս կամ այլ մեծ պետութիւնների: Դա օգուտ տալու փոխարեն կարող է միայն վնասել, եւ եթէ օգուտ կա, դա կլինի ժամանակավոր, որն էլ կարող է նաեւ ներդաշնակութեան վերացման պատճառ դառնալ:

Այս կամ այն մեծ պետութեան ազդեցութիւնը, տիրապետութիւնը հիշյալ շրջաններից մեկի կամ մի քանիսի նկատմամբ նկատվում է որպէս պարտադրանք եւ ոչ թե նպատակ: Ազգերի ժողովի հակակշիռը եւ ազդեցութիւնը կարող է բաղձանք լինել, երբ նա հավասար անդամ լինի այդ ստեղծվելիք միջազգային կազմակերպութեան:

Այս է թելադրում երկրի քաղաքական վիճակը, որը վաղ թե ուշ պիտի դառնա պարտադիր ամենքի համար: Ներկա վիճակում, այդ երկրների բնակչութիւնը արդէ՞ք կընթանա իրենց երկրների քաղաքական ընթացքին համապատասխան:

Պատասխանը ոչ է, որովհետեւ Անդրկովկասյան ժողովուրդները ակամա դարձել են ռուսական իմպերիալիզմի առաջապահները:

Որովհետեւ.

- Սատապատի ուխտերը մի կողմից անգլիական իմպերիալիզմի առաջապահներն են, իսկ մյուս կողմից՝ նպատակ ունեն հայ, քուրդ

ազգերի եւ նրանց երկրների բռնագրավումը եւ ստրկության հավերժացումը:

- Իրենց ազատագրական պայքարի մեջ հայը, քուրդը, վրացին ու ադրբեջանցին պանսլավոնական, պանթուրանական եւ Բրիտանական աշխարհակալական ջրաղացին ավելի շատ ջուր են ավելացնում, փոխանակ այդ ուժերը ծառայեցնելու բացառապես իրենց շահերին՝ մնալով հաստատ իրենց անկախության տեսակետի վրա:

Հայերի ներկա ընթացքը, գայթակղված այն անհիմն ենթադրություններով, որ Ռուսաստանը պիտի իրականացնի հայության բաղձանքները, եւ ռուսական սահմանների ընդարձակումով հայությունը կարող է իր երկրի ամբողջականությունը իրականություն դարձնել, շեղում է նրան ընթացքից. շեղում է այն վարքագծից, որ ունեցել է մինչ այսօր՝ մի դրոշի տակ համախմբելու անդրկովկասյան եւ քուրդ ժողովուրդներին, իրենց անկախ դրոշակների ներքո գնալու այն ներդաշնակությանը, որը պիտի տաներ Մերձավոր Արեւելքի խաղաղությանն ու ազատությանը:

Սեւրի դաշնագիրը, որի հիմքը ազգերի ինքնորոշումն ու անկախությունն է՝ իրենց պատմական, ազգագրական եւ աշխարհագրական սահմանների մեջ, պիտի տաներ անկախ ազգերի ներդաշնակության. ինչպես անում են Արաբական երկրները՝ նույն դաշնագրի հիմունքներով ազատագրված:

Հայ ժողովրդի կենտրոնական ուժը՝ Դաշնակցությունը, որի նպատակը Հայաստանի անկախությունն ու հարեւան երկրների հետ ներդաշնակությունն է, զարկ էր տալիս իրանի, Թուրքիայի, Արաբիայի ազատագրական պայքարին եւ կազմակերպելով քրդական շարժումը ձգտում էր Մերձավոր Արեւելքի ազատությանը, համերաշխությանն ու խաղաղությանը:

Բայց ներկայիս ընթացքը «Խորհրդային Հայաստանի սահմանների ընդարձակում», որը համազոր է Ռուսաստանի սահմանների ընդարձակմանը, Ռուսաստանի թեղադրությամբ, հայ աջ եւ ձախ թեւերի գլխավորությամբ, կարող է Մերձավոր Արեւելքում միջագային բարդություններ ստեղծել, որից առաջին հերթին կարող են տուժել փոքր ազգերը:

Բայց ո՞րն է Հայաստանի միջազգային կացությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՆՃԻՌԸ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Ոմանք համոզված են, թե միա՛յն ուժն է, որ քաղաքականութ՛յան եւ նոր կարգերի ազդակ է ծառայում: Այդ կարծիքը ճշմարիտ է կարճ ժամանակի եւ պատերազմի շրջանի համար: Նոր կարգը եւ քաղաքական նոր կացութ՛յունը այնքանով են հարատեւ, որքանով համապատասխանում են աշխարհագրական տվյալներին: Հակառակ պարագայում աշխարհագրական տվյալներն ընդդիմանում են ձեռք բերված հաջողութ՛յուններին, քայքայում են սվինների բազմութ՛յունը եւ թույլ չեն տալիս բնականոն կացութ՛յուն ստեղծել: Մոռվութ՛յունը, ապստամբութ՛յունը հարատեւ են այնքան ժամանակ, մինչեւ որ ուժով ստեղծված նոր կարգը փոխարինվի աշխարհագրութ՛յամբ հրամայված հին կարգով: Այս եզրակացութ՛յանը պետք է հանգել հետեւելով Հայաստանի մի քանի հազար տարվա պատմութ՛յանը եւ Հայկական Հարցի չլուծված կնճիռը աչքի տակ ունենալով:

Երբ քննեցինք Հայաստանի եւ էրզրումի աշխարհագրական պայմանները, մենք տեսանք որ.

1. Հին աշխարհի միակ ցամաքային ճանապարհի կենտրոնում, իբրեւ մի կողպեք, ընկած է Հայաստանը՝ էրզրում միջնաբերդով: Եւ երբ այդ կողպեքը բաց է, Եվրոպան եւ Ասիան կարող են իրենց բնական հաղորդակցութ՛յունը կանոնավորել: Երբ կողպեքը փակ է, այդ պարագայում մեծապես տուժում են Հին Աշխարհը, Մերձավոր Արեւելքը եւ Հայաստանը:

2. Տեսանք, որ այս կողպեքը նման է մի ընդարձակ բերդի եւ հանդիսանում է Միջին Ասիայի ազգերի ապահովութ՛յան գրավականը, որպես արգելք իմպերիալիստական շարժումների եւ ազդակ՝ տարացեղ ժողովուրդների ազատութ՛յան եւ համակեցութ՛յան :

3. Այդ երկիրը միջնորմ է դարձել ներկայիս ռուս եւ անգլիական իմպերիալիստական աշխարհների միջեւ: Ռուսաստանը, ոտնակոխ անելով անդրկովկասյան ժողովուրդներին, պատռել է Հայաստան բերդի հյուսիսայի պատը եւ կանգնել է արդեն Արաքսի, էրզրումի տակ: Մյուս կողմից Բրիտանական Կայսրութ՛յունը ձեռք էլ է օվկիանոսները՝ հասնելու համար Տիգրիս եւ Մոսուլ՝ Վան:

4. Հայկական բերդի մնացած մասը եւ մեծ մասը գտնվում է թուրքերի ձեռքին իբրեւ ավանդ, ոչ տիրութ՛յուն: Տիրութ՛յան համար մի նոր պետութ՛յուն՝ Ամերիկան է եւս ասպարեզ եկել:

5. Այդ երկիրը իր հատուկ ընդունակութ՛յամբ ժողովուրդ է ստեղծել, որ կարողանա հարմարվել եւ դառնալ նրա բանալին՝ սառցապատ կողպեքը բանալու եւ փակելու համար: Այդ ժողովուրդը

անհիշելի ժամանակներից կա եւ կմնա՝ հակառակ ծնող ու մեռնող ուժերի: Եվ այդ հատուկ մարդկային բազմությունը՝ հայն է:

Ահա սրանք են գլխավոր եւ հիմնական դրուժյունները, որոնք թելադրված են աշխարհագրական պայմաններով եւ այդ պայմաններն են, որ ուղղություն են տալիս քաղաքական, ռազմական, տնտեսական եւ հարակից բոլոր ձեռնարկներին՝ Ասիայի եւ Եվրոպայի միջեւ:

Դժվար չէ վերոհիշյալ դրուժյուններից եզրակացնել, որ Մերձավոր Արեւելքի ճակատագիրը կախված է միջազգային համադրություններից եւ հակադրություններից, ոչ թե այս կամ այն պետութայան կամ քրից: Ավելի դյուրին է դրական կամ բացասական կերպով լուծել Բալթյան պետությունների կամ մի Ֆրանսիայի, Գերմանիայի ճակատագիրը, ուր շահագրգիռ պետությունների թիվը փոքր է՝ սահմանափակված առավելագույնը Եվրոպայով, քան Միջին Ասիայի ճակատագիրը, ուր շահագրգռությունը տարածվում է Եվրոպայից սկսած մինչեւ Հեռավոր Արեւելք, մինչեւ ԱՖրիկա:

Ուրեմն Մերձավոր Արեւելքի, ինչպես եւ նրա առանցքներից կարեւորագույնի՝ Հայաստանի հարցի լուծումը կախված չէ ո՛չ հայերի բաղձանքներից, ո՛չ թուրքերի կամ քրից, ո՛չ ռուսական բանակներից, ո՛չ էլ բրիտանական նավատորմից: Ամերիկայի ոսկու դեզերը նույնպես միակողմանի կերպով անկարող են լուծել այս հարցը:

Լուծման երեք տարբերակ կա.

Ա. Ռուսաստանը, որ Հայաստանն ու Մերձավոր Արեւելքը տիրելու կամ այն ուղղակի իր ազդեցության տակ գցելու երազանքներ ունի, իրեն այնքան հզոր է զգում, որ հակառակ Արեւելքի ժողովուրդների կամ քրի, հակառակ Անգլիայի, Ամերիկայի գործուն ընդդիմության, հակառակ Եվրոպական եւ ասիական պետությունների միաձայն ընդդիմության, գենքի ուժով պարտադրում է իր կամքն ու տիրապետությունը կամ ազդեցությունն է հաստատում Հայաստանի եւ Մերձավոր Արեւելքի վրա:

Բ. Անգլոսաքսոնները, որ Հայաստանը եւ Մերձավոր Արեւելքը խիստ կենսական են համարում իրենց կայսրությունների եւ այլ շահերի պաշտպանության համար, չեն հանդուրժում Ռուսաստանի ներկայությունը այս երկրամասերում եւ Մերձավոր Արեւելքն ու Հայաստանը համարում են այնքան թույլ, որոնք անկարող են պատվար հանդիսանալ Ռուսաստանի եւ իրենց միջեւ: Նրանք իրենց համարում են այնքան ուժեղ, որ գենքի ուժով կարող են հետ մղել Ռուսաստանը եւ իրենց անմիջական կամ ուղղակի ազդեցությունը հաստատել ամբողջ Մերձավոր Արեւելքի եւ Հայաստանի վրա:

Գ. Մերձավոր Արեւելքում, ուր երկու հակադիր կայսրությունները՝

մի կողմից Ռուսաստանը, մյուս կողմից անգլոսաքսոնները, գտնում են, որ ժամանակը հասունացած է, խնդիրները լուծելու հոգուտ իրենց եւ խուսափելու համար իրար հետ բախումներից, կարող են իրար մեջ բաժանել Մերձավոր Արեւելքը, ինչպես պատահեց 1916 թվականին՝ Սայքս Պիկոյի համաձայնությամբ: Կամ էլ համաձայնության գալ, եւ Մերձավոր Արեւելքը թողնել նույն վիճակում եւ ձեւացնել, թե հեռանում են, ինչպես դա եղավ 1922-23 թվականներին, երբ Իրանի ճակատագրի տնօրինումը հանձնվեց Ռեզա շահին:

Բայց այս ելքը կախված է մրցակից ուժերի համաձայնությունից, նրանց ուժերի հավասարությունից եւ բարդություններից խուսափելու ցանկությունից: Բայց սրանք էլ են փոփոխական: Նման կարգադրությունները ժամանակավոր բնույթ ունեն, ինչպես ժամանակավոր բնույթ ունեցան 1916 թվականի եւ այլ համաձայնություններ:

Վերոհիշյալ քաղաքական կացությունը նման է մագնիսի, որը ըստ իր հզորությունն աստիճանի ցրում կամ հավաքում է Մերձավոր Արեւելքի պետությունները եւ ժողովուրդներին: Ըստ էությունն աներկայիս Մերձավոր Արեւելքը կամազուրկ է դարձել եւ նրա կամքը կախված է արտաքին ուժերից, լինի դա ռուս, անգլիացի կամ գերմանացի: Նա դարձել է երկաթի փոշի, որը խտանում է, հավաքվում եւ ուժ է կազմում, երբ նրանցից հզորագույն մեկը մոտենում է: Իսկ երբ նա հեռանում է եւ մեկ այլ ուժ է մոտենում, այն ցրվում է եւ մի նոր կույտ կազմում: Նրա ստրկությունը թաքնված է իր մեջ, եւ դարերի պայքարն ու խռովությունների աղբյուրը, ինչպես նաեւ Մերձավոր Արեւելքում ստեղծվելիք անկայուն վիճակը, սպառնալիք է իր միջազգային բարդություններով ու համաշխարհային պատերազմներով:

Երեկ Թուրքիայի փոխարեն գոյություն ուներ Օսմանյան կայսրությունը, որը տերն էր Մերձավոր Արեւելքի: Այն այսօր չկաներկայիս Թուրքիան սահմանափակ հնարավորություններ ունի՝ տիրապետած երկրներով, բայց տակավին նրա ձեռքում է գտնվում ինչպես Պոլիսն իր ծովային ու ցամաքային ճանապարհներով, այնպես էլ դեռեւս նրան են պատկանում Մերձավոր Ասիայի կողպեքը եւ բերդի մեծ մասը: Էրզրումում եւ Հայաստանում նստած է թուրքական բանակը, որը թեղադրողն է ամբողջ Մերձավոր Ասիայի ու նրա բոլոր ճանապարհների: Թուրքիայի դիրքը եւ նրա վերաբերմունքը վերահիշյալ 4 իրավիճակների հանդեպ վճռական ազդեցություն ունի ողջ Մերձավոր Ասիայի եւ մանավանդ Հայաստանի վրա: Այս կամ այն դիրքից կախված են ազդեցությունները եւ հակազդեցությունները, Մերձավոր Արեւելքի բաղկացուցիչ տարրերի ընթացքը՝ դրական կամ

*բացասական ուղղործյամբ: Ուստի նախ պետք է անդրադառնալ
Թուրքիայի քաղաքական ուղեգծի հարցին:*

ԹՈՒՐՔԻԱՆ ԵՎ ԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Թուրքիան Մերձավոր Արեւելքում առաջինն է իր հզորությամբ եւ վարկով: Միաժամանակ առաջինն է, որ տանում Մերձավոր Արեւելքը ստրկության եւ խառնակության: Թուրքիան, որ 17-րդ դարում արդեն ունէր ութ միլիոն քառակուսի կիլոմետր տարածություն եւ թելադրողն էր աշխարհի, այսօր վերածվել է մի համեստ պետության եւ թելադրվում է աշխարհների կողմից: Այդ մեծությունից մնացել է միայն մեկ հոռի հիշատակ. «Իբրեւ տիրապետող ազգ անտեսել գոյությունը իրեն հպատակ ազգերի եւ բնաջնջել նրանց: Դրանով էլ կհասկերժացնի իր քայքայումը»: Խիստ նախանձախնդիր է իր ներքին գործերի ազատության մեջ, որի համար ունի ամեն տեսակի լիազորություն: Այդ ներքին ազատությունը բնավ չի օգտագործվում երկրի այլատարր դավանանքները, ցեղերը, ազգերը պետական ամուր շաղխի դարձնելու համար: Նա մնում է այլամերժ, որի պատճառով այլադավան, այլացեղ տարրերը մնում են որպես քայքայիչ ուժ Թուրքիայի համար: Այն շարունակում է մնալ հետամնաց երկիր թե՛ կրթությամբ, թե՛ ճարտարվեստով, թե՛ երկրագործությամբ եւ թե՛ գիտությամբ, որի պատճառով էլ երկիրը թույլ է՝ սրբնթաց զարգացող շրջապատող երկրների համար: Ներքին թուլությունը պատճառ է, որ Թուրքիան իր փրկության խարխալը փնտրի շուրջը պայքարող, իրեն տիրանալ ցանկացող օտար մրցակից պետությունների մեջ: Արդեն այն պետությունը, որ օտար պետությունների ուժով փորձում է իր փրկությունը գտնել, վաղ թե ուշ դատապարտված է մահվան: Այն առնվազն անկախ չէ եւ խաղալիք է մրցակից ուժերի ձեռքին: Թուրքիան 17-րդ դարի իր գոյությունը պահում է լոկ արտաքին ուժերի անհամաձայնության եւ ոչ թե իր պետության ուժի ու կամքի շնորհիվ: Մեծ ճանապարհների վրա նստած առանց «կապիտալի» տիրողոսավոր «կուրթի» է դարձել: Մեկին խոստանում է, մյուսից առնում, բայց վերջիվերջո միշտ կորցնում է՝ «Մոնտե Կառլոյի» խաղացողների նման եւ այդ խաղի արդյունքում իր տարածքի ու ազգաբնակչության ինը տասներորդ մասը ձեռքից բաց է թողել:

Թուրք պետական իմաստությունն է համարվում այն, որ պետք է երեք տեսակի պատրաստի դահլիճ ունենալ՝ հարմարեցված արտաքին ուժերի դասավորությանը. մեկը Գերմանիայի եւ Կենտրոնական Եվրոպայի համար, մյուսը՝ Անգլիայի ու Ֆրանսիայի, մյուսը՝ Ռուսաստանի եւ կամ էլ այնպիսի մի դահլիճ, որ երեք լարերի վրա

խաղալու հնարավորութիւնն տա: Բայց իրենց դիմաց ոչ մի դահլիճ չկար, բացի գուցե Միդհատ փաշայի դահլիճից, որը ցանկանում էր, արտաքին ուժերից անկախ, վերակազմել եւ ուժեղացնել Թուրքիան:

Կառավարութիւնները փոխեփոխ հաջորդում էին իրար՝ ըստ պատշաճի բավարարելով Պոլսի այս կամ այն դեսպանին եւ ոչ թէ թուրքական պետութեանը:

Ժամանակին Կենտրոնական Եվրոպայի եւ Գերմանիայի կողմնակից Քյոլչուկ Սայիդի, Սայիդ Հալիմի, Թալիաթ-էնվերի, Իսմիթ-Սարաջօղլուի կառավարութիւններն էին, սուլթան Համիդի եւ «Իթթիհատի» գլխավորութեամբ, որ առաջնորդեցին Թուրքիան Բալկանյան, նախորդ ու ներկա ընդհանուր պատերազմներին: Հետեւանքը պարզ է. չկա Օսմանյան Կայսրութիւնը, փոխարինված է ներկա Թուրքիայով: Այսօր այս կառավարութեան կարիքը չկա, քանի որ Գերմանիան ու Կենտրոնական Եվրոպան չկան:

Երկրորդը դա անգլիական ուղղութիւնն է, որը ձգտում է Թուրքիայի փրկութիւնը գտնել Անգլիայի միջոցով: Այդ ուղղութիւնը ժամանակին մարմնավորվում էր կիպրոսցի Քեմալ Փաշայով, որը միշտ վարչապետութեան թեկնածու էր: Նրան հաջորդեցին Ջավիդը, Ջահիդը, Ռաուֆը, վերջերս Սարաջօղլուն, Իսմեթը եւ այլոք: Օսմանյան Կայսրութեան նախկին տարածքի երկու երրորդը այսօր մտնում է Բրիտանական կայսրութեան մեջ: Սրանից պարզ է դառնում, որ այդ կառավարութիւնները իրենց նպատակին չեն հասել: Ինչ էլ պատահի, ներկայիս պաշտոնական Թուրքիան ունի լոկ անգլոսաքսոնական ուղղութիւն:

Երրորդը՝ ռուսական ուղղութիւնն է: Քյոլչուկ Սայիդի ժամանակ արդեն շեշտվում էր այս ուղղութիւնը, բայց ավելի շեշտվեց նախորդ պատերազմի վերջում՝ Իթթիհատի եւ նրա շրջապատի միջոցով: Յուսուֆ Քեմալ, Ռիզա Նուր, Թալիաթ, էնվեր, Ջեմալ փաշաների եւ այլոց քաղաքական ուղղվածութիւնը ձեւավորվեց Մուստաֆա Քեմալ փաշայի եւ նրա գործակիցների կողմից, մինչեւ բոլշեւիկյան եւ քեմալական դաշինքը, որն ուղղված էր Անգլիայի ու Եվրոպայի դեմ: Այս դաշինքը մեծապէս օգտակար եղավ Թուրքիայի համար: Նա իր ներկա սահմանների համար պարտական է այդ դաշինքին, ինչպէս որ Ռուսաստանն է պարտական այդ դաշինքին՝ Անդրկովկասում հաստատվելու համար: Այս հոսանքը երեւութապէս այսօր չկա, թեպէտ Իսմեթն է այդ հոսանքի շեղինակը, որն այսօր շեղված է եւ ունի անգլիական ուղղվածութիւն: Բայց այդ վարչութեան համար կան թեկնածուներ՝ Ջաքմաքը, Բայարը, Բուշտի Արասը, որոնք պատեհ առիթի դեպքում կարող են ընթանալ Մուստաֆա Քեմալի ճանապարհով:

Վերոհիշյալից պարզ է դառնում, որ Թուրքիան, Գերմանիայի անկումից հետո, իր պետական կազմի, տերուժյան ամբողջականություն, ռազմական, տնտեսական բարգավաճման իբրեւ միակ ճանապարհ, որդեգրել է երկու ճանապարհ. «կամ լինել Անգլիայի հետ եւ դեմ լինել նրա մրցակից Ռուսաստանին, կամ էլ ընդհակառակը, լինել Ռուսաստանի հետ եւ դեմ լինել նրա մրցակից Անգլիային»:

Վերոհիշյալ երկնորանքը ասպարեզ է բացում երկու մրցակից ուժերի առջեւ՝ մի կողմից անգլոսաքսոններին, մյուս կողմից՝ Ռուսաստանին: Նանցից յուրաքանչյուրը ջանում է Թուրքիային իր հովանու տակ առնել, որպեսզի կարողանա նրա կարեւոր կետերը, նրա բովանդակ ուժը օգտագործել ընդդեմ իր հակառակորդներին:

Այսպիսով Թուրքիան, վեհապետության անկախ պիտակի տակ, դադարել է վեհապետական եւ անկախ լինել: Նրա երկիրը նման է կահավորված վարձու տան, նրա բնակիչները նման են վարձու կամավորներին: Նրան վարձում է նա, ով կարող է նպաստավոր պայմաններ առաջարկել:

Ներկայիս Թուրքիայի համար առաջին վարձակալը համարվում է Ռուսաստանը: Այն, ինչպես Մուստաֆա Քեմալի ժամանակ, այժմ էլ ձգտում է «գլուխ գլխի» բանակցել Թուրքիայի հետ եւ կարգավորել նեղուցների եւ գոլցե նաեւ Կարսի հարցերը: Նման մտերմիկ բանակցություններից փորձում է խուսափել Թուրքիայի ներկա կառավարությունը, թեպետ գահազուրկ վարչապետներ՝ Բայարի, Ռուշտի Առասի նման դա համարում են անտեղի:

Երկրորդ վարձակալը Անգլիան է, որը Ալեքսանդրեթի նավահանգիստն է կառուցում, միաժամանակ մերժելով նեղուցների վրա այլ պետությունների ազդեցությունները, եւ Թուրքիային ամբողջականություն խոստումներ է չռայում:

Կարո՞ղ է Թուրքիան այս մրցակից վարձակալներին միջեւ պահել իր ամբողջականությունը: Այդ ամենը կախված է Թուրքիայի ո՛չ ուժից, ո՛չ կամքից եւ ո՛չ էլ ցանկությունից, այլ միմիայն երկու մրցակից կայսրությունների համաձայնությունից եւ նրանց ուժերի գերակայությունից կամ հավասարակշռությունից:

Կարո՞ղ է Թուրքիան իր ներկա ուժերով փոխել երկու մրցակից ուժերի հավասարակշռությունը: Դա համազոր է մեկի հովանավորություն տակ մտնելուն՝ առանց ավելացնելու հովանավորողի կշիռը եւ միեւնույն ժամանակ վաստակել հակառակորդ կողմի թշնամությունը՝ շատ քիչ խոչընդոտ հանդիսանալով նրա առջեւ:

Արդեն մեկուկես դար է, որ Թուրքիան վարում է այս քաղաքականությունը: Նա հենված է Անգլիայի վրա՝ Ռուսաստանից

պաշտպանվելու համար, կամ էլ հենված է Ռուսաստանի վրա, որպեսզի պաշտպանվի Անգլիայից. այս վարքագծի արդյունքը երկու դեպքում էլ աղետաբեր է եղել Թուրքիայի համար: Այն հանգամանքը, որ Օսմանյան Կայսրությունը չորս միլիոն քառակուսի կիլոմետրից ավելի տարածքը ընկած է անգլիական ազդեցությունից տակ, իսկ մնացածը՝ ռուսական եւ Բալկանյան տիրապետությունից տակ եւ նրան մնացել է լոկ 750.000 քառ. կմ, հասկանալի է դառնում, որ նրա վարքագիծը փրկարար չի եղել հենց իր համար: Ուրեմն այն դարձել է մի «մեռոնեա»՝ շքանշաններ վաստակող՝ խեղանդամ դառնալու գնով:

Թուրքիան այսօր էլ հավատարիմ է իր ավանդական վարքագծին: Մտել է անգլոսաքսոնական հովանու ներքո՝ Ռուսաստանից պաշտպանվելու համար, որը կարող է ավելի արագացնել նրա քայքայումը, քան՝ կասեցնել: Եթե պատմական օրենքներ գոյություն ունեն, այդ պարագայում դժվար չէ նախատեսել, որ կարող է մրցակից ուժերից մեկը գերակշիռ դիրք ստեղծել մյուսի հանդեպ, բայց դա կլինի ի վնաս Թուրքիայի: Եթե հաղթի Ռուսաստանը, դա համագոր է Թուրքիայի անդամահատմանը: Եթե պարտվի Ռուսաստանը անգլոսաքսոնների կողմից, նրան կրկին վտանգ է սպառնում, քանի որ նա դադարում է պատվար հանդիսանալ Ռուսաստանի առջեւ, եթե երկու մրցակից կողմերը համաձայնությունից դան: Եթե Ռուսաստանը մի քայլ առաջանա Թուրքիայի մեջ, ապա երկու քայլ դեպի հյուսիս կառաջանան նաեւ անգլոսաքսոնները: Եթե 1878-ին Կարսի փոխարժեքն էր Կիպրոսը, այսօր Սանջակը կարող է լինել: Եթե 1916-ին էրզրումի փոխարժեքն էին Մոսուլն ու Սիրիան, այսօր կարող են լինել Կիլիկիան եւ Քրդստանը: Այս եղած ծրագրերը կարող են կրկնվել, բայց դրանցից եւ ոչ մեկը բարենպաստ չէ Թուրքիայի համար:

Թուրքիայի այս անբարենպաստ վիճակը խոր ազդեցություն ունի այնտեղ ապրող այլացեղ ու այլադավան ժողովուրդների քաղաքական վարքագծի վրա:

ԹՈՒՐԲԻԱՅԻ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՏԱՐԵՐԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ

Ներկայիս Թուրքիայի սահմաններում երեք գլխավոր տարրեր կան, որոնք ազգային առանձնահատուկ պահանջներ ունեն եւ Թուրքիային ներքին եւ արտաքին մտահոգություններ են պատճառում: Այդ ազգերն ու երկրներն են՝ լազերն ու Լազիստանը, քրդերն ու Քրդստանը, հայերն ու Հայաստանը: Սրանց կարելի է ավելացնել Սանջակը եւ սանջակցիներին:

Այս ժողովուրդներին առջեւ չորս ընտրութիւն կա.
ա. Լինել թուրքիայի հետ եւ բաժանել նրա բովանդակ ուղղութիւնը
եւ նրա միջոցով ապահովութիւն գտնել:

բ. Հուսալ, որ իրենց փրկութիւնը կարող է լինել միայն Ռուսաստանի միջոցով, մանավանդ որ, թուրքական կառավարութիւնն էլ հաճախ այդ միջոցով է փորձում գտնել իր ապահովութիւնը:

գ. Հուսալ, որ իրենց փրկութիւնը կարող է լինել լոկ Անգլիայի միջոցով, մանավանդ, որ թուրքական կառավարութիւնն էլ հաճախ այդ միջոցով է փորձում գտնել իր ապահովութիւնը:

դ. Ոչ թուրքիայի, ոչ Ռուսաստանի, ոչ Անգլիայի միջոցով չկա փրկութիւն: Իրենց փրկութիւնը հնարավոր է միայն թուրքիայից անջատվելու եւ իբրեւ անկախ միավոր՝ իրենց անմիջական հարեւանների հետ դաշնակցելու միջոցով:

Ահա այս չորս սկզբունքների շուրջ է, որ միաժամանակ կամ պարբերաբար ծավալվում է թուրքիայի բաղկացուցիչ տարրերի քաղաքական կյանքը:

Վերոհիշյալ չորս քաղաքական վարքագծերից մեկի ընտրութիւնից է կախված այդ ժողովուրդներին կենաց եւ մահու հարցերը, նրանց նպատակներին իրագործումը կամ հուսահատութիւնը: Ուստի այս չորս դրութիւնները առարկայնորեն անհրաժեշտ է վերլուծել:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՂԵՏԸ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ (ՕՐԻԵՆՏԱՑԻԱ)

Միմիայն Թուրքիայի արեւելյան նահանգներում ապրող ժողովուրդները վերաբերմունքի շուրջ սահմանափակելով մեր դիտողությունները, մոտիկ անցյալի պատմությունից տեսնում ենք, որ Լազիստանը, Քրդստանն ու Հայաստանը փորձել են ամեն կերպ համակերպվել Թուրքիայի գերիշխանության հետ, օժանդակել են նրան իբրեւ հավատարիմ քաղաքացի՝ չխանգարելով նրա ծրագրերին, նույնիսկ հրաժարվել են իրենց մարդկային իրավունքներից, միայն թե չվտանգվի իրենց Ֆիզիկական գոյությունը: Բայց այդ ջանքերը ապարդյուն են անցել:

ԼԱԶԵՐԸ

Լազիստանը, որի բնակիչները լազերն են, հույներն ու հայերը, ուրացան կրոնը՝ ընդունելով մահմեդականություն: Այդ ժողովուրդները մոռացան իրենց լեզուն՝ հայրենի հարկի տակ պահելով բարբառները, Ալբանիայի նման դարձան գործիք պետությունների ձեռքին՝ ընդդեմ քրիստոնեության, տվեցին բազմաթիվ պետական գործիչներ, որոնք համարվում են Թուրքիայի փառքն ու պատիվը, բայց դրա փոխարեն վարձատրվեցին անտեսական ճնշումով, տեղահանությամբ եւ ջարդով: Թուրքի հասկացողությամբ ազգային հիշողությունները խանգարում են Թուրքիայի առողջությանը, նրանց արյան տարբեր գնդիկներն անգամ վնասում են Թուրքիայի կենսունակությանը: «Իթթիհատ»-ի գործը գլուխ բերելուց հետո, դեռ Հիտլերի ծնվելուց առաջ էլ Թուրքիան ցեղապաշտ էր, միայն թե այժմ նա «պանիսլամիզմը» փոխարինել է «պանթուրանիզմով»:

Հասկանալի է, որ Լազիստանի ցեղերը պետք է մի բաղձանք ունենան՝ որպես հետեւանք այս գոհաբերությունների եւ այս հոռի վարձատրության. Թուրքիայի կործանումը, իրենց անջատումը եւ գերադասումը ամեն տիրապետության, բացի Թուրքիայից:

ՔՐԴԵՐԸ

Լազիստանից հետո Քրդստանն է, որը գործուն կերպով ջանք է թափել Թուրքիայի մեծացման ու հզորացման համար: Քրդերը «Համիդիե» գնդեր կազմեցին հօգուտ Թուրքիայի, չխնայեցին իրենց ցեղակից, լեզվակից եզդի, գազա, ղզլբաշ քրդերին, հալածեցին նրանց՝ կուրդերն ծառայելով Թուրքական «պետական» շահերին: Նրանք չխնայեցին իրենց բախտակից, արյունակից քրիստոնյա հայերին: Քուրդն ու իր «Համիդիե» գնդերը հայ ազատագրական պայքարի ճանապարհին պատուհաս դարձան: Քուրդը հօգուտ Թուրքիայի իր կուրծքը դեմ ավեց ներխուժող ռուս եւ այլ բանակների առաջ՝ իր կյանքը չխնայելով Թուրքիայի պահպանման ու հզորացման համար: Բայց այս բոլոր անխորհուրդ գոհաբերությունները վարձատրվեցին տարօրինակ ձեւով. նրանց ինքնավարությունները վերացվեցին եւ իշխանական տները մարեցին, արգելվեց նրանց լեզվի գործածու-թյունը, իսկ քրդական լեզվով դաստիարակությունը համարվեց մահացու հանցանք: Հոծ բազմությունները ցրվեցին Անատոլիայով մեկ, քրդական տարածքներն ամայացան: Հայկական Չարդերը ավարտելուց հետո, սկսվեց քրդերի բնաջնջումը: Այսօր քրդերին կոտորում են, որպեսզի ասեն, թե քուրդ ազգ չկա, եւ քուրդը՝ Թուրք է: Բնական է, որ այս գործելակերպի հետեւանքով, քրդի համար այլեւս Թուրքական հովանավորությունն անընդունելի է դառնում:

ՀԱՅԵՐԸ

Քրդերից հետո Թուրքիայում հայերն են եղել հավատարիմ գործոն տարրը. նրա մականունը «Միլլեթի սաղբկան» էր (հավատարիմ ազգ), իսկ օտարները անվանում էին (մոլթկե) «քրիստոնյա թուրք»: Հայերը թեեւ համառորեն պահում են իրենց լեզուն, կրոնը, բայց խիստ հավատարիմ էին պետությանը: Թուրքական մամուլի, թատրոնի, ճարտարվեստի, վաճառականության տերը հայերն էին: Նրանք էին ղեկավարում պետական ֆինանսները եւ տալիս էին պետական գործիչներ: Նրանց ձեռքում էր գտնվում մանածագործության, կերպասի, մետաքսի եւ արեւելյան նահանգների երկրագործության զարգացման գործը: Նա էր բանակի մատակարարը, կազմակերպողը, չնայած այն բանին, որ հայերին զինվորությունը արգելած էր: Նա անջատական չէր, դեմ էր բոլոր Թուրքիայի թշնամիներին՝ պայմանով, որ իր գոյությանը, լեզվին, կրոնին, ազատությանը ձեռք չտրվեր:

Այս հավատարմությունը չգնահատվեց. նրա լեզվի, կրոնի ազատությունը սահմանափակվեց, այն դիտվեց որպես վնասակար տարր եւ պարբերաբար կազմակերպվեցին կոտորածներ՝ նրա աճը կանգնեցնելու համար: Ի վերջո հայը բանջնջվեց եւ իր երկրից արտաքսվեց: Այս վերաբերմունքը բնական հետեւանք պիտի ունենար. հայը պիտի դառնար անջատողական եւ իր փրկության խարխախները որոներ օտար տիրապետությունների ներքո:

Այսպիսով Թուրքիայի բաղկացուցիչ լազ, քուրդ, հայ ժողովուրդների համար Թուրքական համակրության եւ նրա հետ համագործակցության բոլոր հավանականությունները վերացել են, եւ դառը փորձից ելնելով Թուրքի վարքագիծը կրկին փորձել անհնարին է, քանի դեռ Թուրքիայում մտքի հեղաշրջում տեղի չի ունեցել, քանի բռնատիրական ոգին նստած է նրա մեջ: Այս հուսահատ վիճակը վերոհիշյալ ժողովուրդներին մի կողմից գցել է օտար ուժերի գերի, իսկ մյուս կողմից՝ մղել ազգային վերագարթոնքի:

ՌՈՒՍԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ

Մենք տեսանք, որ Թուրքիայի լազ, քուրդ, հայ ազգերի համար այլեւս անհնար եւ շահեկան չէ Թուրքերի հետ նույն պետության սահմաններում ապրելը: Նրանք իրենց հայացքները հառել են դրսի պետությունների աջակցությանը եւ կամ հույսը դրել են սեփական ուժերի վրա:

Մենք տեսանք, որ դրսի պետություններից միայն Ռուսաստանն է, որ գործնականորեն եւ կենսապես շահագրգռված է իր ազդեցությունը տարածելու Թուրքիայի վրա՝ իր պաշտպանողական եւ աշխարհակալական նպատակների եւ իր մրցակից Բրիտանական Կայսրության տապալման համար: Այդ ուժի դեմ Բրիտանական Կայսրությունն է ծառայել եւ կենսականորեն շահագրգռված է Թուրքիայի վիճակով, որպեսզի այն դոյություն ունենա իբրեւ պատվար Ռուսաստանի դեմ՝ իր հսկողության ու հովանու ներքո:

Եվ վերջապես երրորդ դրությունն էլ այն է, որ Թուրքիան իր արտաքին քաղաքականության առանցքն ունի՝ կա մ լինել Անգլիայի հետ եւ դեմ լինել Ռուսաստանին, կա մ լինել Ռուսաստանի հետ՝ դեմ լինելով Անգլիային:

Արդ վերոհիշյալ իրավիճակները նկատի առնելով պետք է քննել, թե որքանով է նպատակահարմար վերոհիշյալ ազգերի համար ռուսական կամ անգլիական կողմնորոշում ունենալը, եւ այդ վարքագծով նրանք

ինչ հնարավորութիւն ունեն իրագործելու իրենց երազանքները, եւ ինչ վտանգներ եւ հավանական հաջողութիւններ կարող են ունենալ:

Պատկերացնենք հետեւյալ վիճակները.

Առաջին - Հայաստանը, Քրդստանը, Լազիստանը միասնաբար ունեն ռուսական կողմնորոշում եւ նրա միջոցով ցանկանում են ազատագրվել կամ ընկնել նրա լծի տակ: Այդ պարագայում չենք կարող անտեսել հետեւյալ հավանականութիւնները.

Ենթադրենք, որ միաժամանակ թուրքական իշխանութիւնն էլ ունի ռուսական կողմնորոշում եւ ապահովութիւնն է փնտրում Ռուսաստանի հետ դաշնակցելով կամ նրա հովանու տակ մտնելով, կամ էլ նրա հետ ձուլվելով՝ իր գոյութիւնը ապահովելու համար:

Այս կողմնորոշումների զուգադիպումը երեւակայական չէ, այն արդեն մի անգամ եղել է Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ 1920-45 թվականներին եւ ներկայումս էլ Մոլոտովի պահանջը ուրիշ բան չէ, եթե ոչ «գլուխ գլխի» լուծել իրենց հաշիվները եւ վերականգնել 1945-ին վերջ գտած ռուս-թուրքական դաշինքը:

Երբ այդպէս է պատահում, հասկանալի է, որ միայն հիմարները կարող են կարծել, թե Ռուսաստանը հանուն արդարութեան կզերտապի նախընտրել թույլ քրդերին, հայերին, լազերին՝ մերժելով թուրքերի բարեկամութիւնն ու աջակցութիւնը, որը դարձել է նրա հիմնական նպատակը: Երբ այդ վիճակը ստեղծվի, պետք է հասկանալ, որ Ռուսաստանը կսկսի զինել եւ աջակցել Թուրքիային, ինչպէս եղավ 1919-45 թվականներին: Նա կսկսի անտեսել ճնշված ազգերի սպասելիքները, եթե նույնիսկ խոստումներ տված լինի, ինչպէս 1917-ի Լենին-Ստալին դեկրետը՝ հայերին տրված, համարվեց ոչինչ, քանի որ այն խանգարում էր թուրք-ռուսական բարեկամութեանը եւ վերոհիշյալները դիտվեցին որպէս անվստահելի ազգեր: Ո՞վ գիտի, թե Թուրքիան նույն ազատութիւնը չի ունենա՝ իրագործելու իր ծրագիրը այդ ժողովուրդների նկատմամբ, ինչպէս ունեցավ 1914-1918 թվականներին Գերմանիայի թույլտվութեամբ եւ աջակցութեամբ: Ո՞վ է ի վիճակի հերքելու, որ Ռուսաստանը, ինչպէս 1919-21 թվականներին, որպէս խրախուսանք «թուրք-ռուս եղբայրութեան», ոչ միայն թաղեց Սեւրի դաշնագիրը, այլեւ կարսն ու այլ շրջաններ նվիրաբերեց «եղբայրական Թուրքիային». այսօր էլ կարող է նոր նվերներով ամրացնել այդ «եղբայրութիւնը»:

Եթե ասվի, որ պատմութիւնը այս անգամ չի կրկնվելու, եւ տրամաբանութիւնը չէ, որ ամեն անգամ կյանքին ընթացք է տալիս, որ այդ մտահոգութիւնները չափազանցված են, այդ պարագայում անկասկած մեկ ուրիշ վտանգ պետք է սպասել:

Երբ անգլոսաքսոնների համար կենսական նպատակ է դարձել Թուրքիայից հեռու պահել ռուսական ազդեցությունը, բայց դրա փոխարեն տեսնում է ռուս-թուրքական դաշնակցությունը, եղբայրությունը, որը նրա կողմից դիտվելու է որպես թշնամություն ուղղված իր դեմ, ապա ուրեմն նրանց նպատակը լինելու է ոչ թե Թուրքիայի ամբողջականություն պահպանումը, այլ նրա քայքայումը եւ մի նոր ուժով փոխարինումը՝ իբրեւ պատնեշ իր եւ Ռուսաստանի միջեւ:

Այս վիճակի պատճառով Թուրքիան կդառնա պայքարի, խռովում-թշնամների եւ գուցե պատերազմի ասպարեզ:

Մյուս կողմից Լազիստանը, Քրդստանը, Հայաստանը, որոնք նույնպես ունեն ռուսական կողմնորոշում, դիտվելու են Ռուսաստանի առաջապահը եւ, բնականաբար, իբրեւ թույլ՝ առաջին հերթին կդառնան քավություն նոխազ: Նրանք վտանգվելու են իրենց երկրի սահմաններից դուրս էլ, առավելապես Մերձավոր Արեւելքում, որտեղ ապրում է շուրջ կես միլիոն հայություն եւ երեք միլիոն քրդեր: Իրաքի, Իրանի, Սիրիայի քրդերը թե՛ քաղաքականապես, թե՛ Ֆիզիկապես կարող են վնասվել, իսկ հայությունը կկորցնի միջազգայնորեն վաստակած դատը եւ հալածական դառնալու ամեն հավանականությունը ունի:

Ահա այն վնասները, որոնք առաջ են գալու Հայաստանի, Քրդստանի, Լազիստանի ռուսական կողմնորոշում ունենալու հետեւանքով: Վնաս եւ վտանգ՝ առանց օգուտի:

Երկրորդ՝ Ենթադրենք, որ թուրքական իշխանությունը դաշնակցում է անգլոսաքսոնների հետ, կամ էլ մտել է նրա հովանու տակ՝ ցանկանալով ապահովել իր գոյությունը: Միաժամանակ ենթադրենք, որ Թուրքիայից դժգոհ ազգերը՝ լազերը, հայերը, քրդերը, հակառակ թուրքերի, ունեն ռուսական կողմնորոշում եւ ձգտում են իրենց գոյությունն ու իրավունքները ապահովել Ռուսաստանի միջոցով:

Այս ենթադրությունները վերացական չեն եւ համարյա համապատասխանում են ներկա իրականությունը: Բայց դա չէ կարեւորը, կարեւորն այն է, թե դրանք ինչ անդրադարձներ ու հետեւանքներ կարող են ունենալ:

1. Պարզ է, որ առաջին հերթին անգլոսաքսոնները ունենալով Թուրքիան, պետք է ձեւացնեն, թե մոռացել են նրա անցյալը եւ փորձելու են տեսնել միայն այս ամենի սպիտակ կողմերը:

2. Թուրքիան, որն ավելի ուժեղ է եւ կարեւոր՝ կայսրություն շահերի համար, ավելի է գերադասելի է լինելու, քան Լազիստանը, Քրդստանը, Հայաստանը, թեկուզ արդարությունն ու իրավունքը այս փոքրերի

կողմը լինի:

3. Թուրք-անգլոսաքսոնական բարեկամությունը չպղտորելու համար չպետք է հարուցեն Հայաստանի, Քրդստանի, Լազիստանի հարցեր, թեպետ նրանց հանդեպ պաշտոնապես պարտավորություններ էին ստանձնել թե միջազգայնորեն, թե իրենց ժողովուրդի առջև՝ սահմանադժեռով անկախ Հայաստանի եւ ինքնավար Քրդստանի սահմանները:

4. Վերոհիշյալ, եթե ոչ իրավական, գոնե բարոյական պարտավորություններից ազատվելու համար, անգլոսաքսոնները պետք է թողնեն այդ հարցերի լուծման մենաշնորհը Ռուսաստանին, տարածայնելով, որ «հայկական, քրդական եւ այլ հարցերը կարող են լուծվել միայն հզոր Ռուսաստանի կամքով, եւ այդ հարցերը նրանց ներքին հարցերն են»: Այս միջոցով նրանք կչոյեն ռուսական ինքնասիրությունը, ու երբ նա սխալվի եւ տեր կանգնի այդ միջազգային հարցերին, Թուրքիան ավելի սերտորեն կփարվի իրենց՝ ինչը որ նրանց նպատակն է: Մյուս կողմից անգլոսաքսոնական հովանու տակ գտնվող Թուրքիան կազատվի միջազգային ճնշումից եւ կընկնի լոկ ռուսական ճնշման տակ, որով հայկական, քրդական հարցերը կդառնան ռուս-թուրքական ներքին վեճ:

5. Եթե պատահի, որ հայ, քուրդ, լազ ժողովուրդները իրենց միջազգայնորեն ճանաչված հարցերը թողնեն եւ համաձայնեն միայն Ռուսաստանի միջոցով գտնել իրենց փրկությունը եւ մտնեն նրա սահմանների մեջ, դրանով իսկ միջազգային շուկայում ինքնուտ-ինքյան այդ հարցերը վերացած կլինեն: Բոլոր նախորդ համաձայնությունները՝ Ազգերի Լիգայի, Սեւրի, Սան Ռեմոյի եւ այլն, կդադարեն գործելուց, իսկ մյուս կողմից եվրոպական հանրային կարծիքները կհանգստանան, որովհետեւ նրանք կհանգեն այն համոզման, «թե այդ ժողովուրդները զուրկ են ինքնորոշման հասունությունից եւ ընդունակ են լոկ ռուս աշխարհակալության եւ բոլշևեիզմի առաջապահը լինելը»:

Վերոհիշյալ իրավիճակներից պարզ է, որ ռուսական կողմնորոշումը Թուրքիայի փոքրամասնություններին (հայ, քուրդ, լազ) ոչ միայն զրկելու է եվրոպական համակրությունից, այլեւ նրանց միջազգայնորեն ընդունած դատերը պետք է մերկացնի եւ դրանք դարձնի թուրք-ռուսական ներքին հարցեր, որոնք, ինչպես վերեւում մատնանշեցինք, կարող են շահեկան լինել Թուրքիայի, Ռուսաստանի եւ Անգլիայի համար, բայց ոչ երբեք հայության, քրդերի եւ լազերի համար:

Գուցե փոքր ազգերի ռուսական կողմնորոշումը եւ իրենց համար ակներեւ վնասների հանձնառումը, պիտի փոխարինվի Ռուսաստանի

կողմից նպաստավոր փոխվճարումով:

Բնական է, քանի թուրքական կառավարութունը ունի անգլիական կողմնորոշում, եւ քանի նա դերադասում է անգլիական հովանու տակ մտնել, Ռուսաստանը պիտի ձգտի թուրք ընդդիմադիրների, թուրքիայի ճնշված փոքրամասնութունների՝ լազերի, քրդերի, հայերի համակրութունն ունենալ: Նա դրանով երկու տեսակի շահ է ապահովում՝ առանց մտնելու որեւէ պարտավորության տակ: Այն կարող է ներկայանալ հաչս փոքրամասնութունների եւ ընդդիմադիր թուրքերի՝ որպէս ազատարար, եւ թուրքիայի ծոցում ունենալով շոշափելի ուժ, կարող է նրանց որպէս ճնշման գործիք ծառայեցնել թուրքական իշխանութունների դեմ, որպէսզի նա լքի անգլոսաքսոնյան կողմնորոշումը եւ մտնի իր հովանու տակ: Երկրորդ, եթե դա չհաջողվի եւ թուրքիան էլ համառորեն մնա իր դիրքերում, նա կարող է իր ուժերը գործածել թուրքիայի քայքայման համար:

Այս երկու շահերը իրական են Ռուսաստանի համար, առանց բարոյական, նյութական, արյան տուրք տալու հարկադրանքի տակ ընկնելու: Վնասվողը թուրքիան է լինելու, նրա ընդդիմադիրները եւ փոքր ազգերը: Որքան այդ վնասը շատ լինի, այնքան իր համար լավ:

Որքան կարող է այս վնասի տեւողութունը երկարել՝ դժվար է ճշտելը: Թուրքիայի ներքին խռովութունները եւ փոքր ազգերի խլրտումները կհարատեւեն, քանի դեռ թուրքիային չի լքել Անգլիան եւ չի ընկել Ռուսաստանի հովանու տակ, քանի շարունակվում է անգլո-ռուսական մրցակցութունը, եւ նրանք իրար հետ համաձայնության չեն եկել, կամ քանի անգլո-ռուսական պատերազմ չի եղել եւ այս գորդյան հանգույցը դանակով չի կտրվել: Հակառակ եղած աղմուկի՝ այս վերջինը դժվար թե պատահի: Այդ դանակը գտնվում է ոչ թե Ռուսաստանի ու Անգլիայի, այլ միջազգային կամքի ձեռքում, որին ուզեն-չուզեն պիտի ենթարկվեն երկու մրցակից ուժերը:

Մենք ակնարկեցինք, որ թուրքիայի փոքրամասնութունները՝ լազ, քուրդ, հայ, ներկայումս համարյա ունեն ռուսական կողմնորոշում: Այսօր սա իրականութուն պէտք է համարել, եւ այդ իրականութունը ծնունդ է ոչ այնքան առարկայական տվյալների, որքան զգացական եւ երեւութական տպավորության: Այդ ազգերի համար վերջնականորեն պարզ է, որ իրենց ազատութունը եւ իրենց իրավունքներին տեր լինել հնարավոր է թուրքիան շարքից հանելու ճանապարհով: Այս համոզումունքը ելակետ ունենալով մտածում են. «Ո՞վ թուրքիայի ամբողջականությանը կողմ է, նրա հետ չեն կարող լինել, ո՞վ թուրքիայի ամբողջականությանը դեմ է՝ նրա հետ պէտք է լինել»:

Այսօր երեւութապէս անգլոսաքսոնները Թուրքիայի ամբողջականութեան կողմնակիցն են, իսկ Ռուսաստանը երեւութապէս նրա դեմ է. ուրեմն՝ պետք է լինել Ռուսաստանի հետ, եւ նա լինելու է իրենց ազատարարը: Այս պարզունակ մտածողութիւնն ավելի ուժեղանում է, քանի որ անգլոսաքսոնները մի կողմից, ռուսական քարոզչութիւնը մյուս կողմից խորախուսում են այդ մտածելակերպը՝ յուրաքանչյուրն իր թաքուն հաշիվներով, որոնք մատնաշեցինք վերեւում:

Այսօր իրականութիւնն է, որ մահմեդական Լազիստանը իր աչքերը հառել է դեպի Մոսկովա եւ Թիֆլիս՝ այնտեղ որոնելով իր ապավենը, թեկուզ հեռավոր իր ազգակիցներից Վրաստանի «պրոֆեսորները» արձագանքեն իրենց բազմաթիւներին:

Այսօր քրդերը, որոնք կրոնով, ընկերային կազմով, ավանդութեամբ առնչութիւնն չեն ունեցել Ռուսաստանի եւ նրա բոլշեւիզմի հետ, աչքերը հառել են դեպի Ռուսաստան՝ Թուրքիայից սկսած մինչեւ Միրիա, Իրաք, Իրան, թեկուզ Ռուսաստանը եւ ո՛չ մի պարտավորութիւն, նույնիսկ ցանկութիւնն չի հայտնել փոխադարձելու այդ հավատին ու հուսին:

Այսօր հայութիւնն իր աջ ու ձախ թեւերով, հոգեւոր առաջնորդների գլխավորութեամբ, պահպանողական հոսանքները, շարժիչ ուժ ունենալով ձախ հոսանքներից կոմունիստներին, հույս ունեն, որ ամենազոր Ռուսաստանը վճռել է անպայմանորեն վերջ տալ հայի տառապանքներին, որ նա անպայման գրավելու է Տաճկահայաստանը՝ հայրենի հողի վրա հավաքելով ցիրուցան եղած համայն հայութեանը:

Այս հավատքը, որ ծնունդն է անկարողութեան եւ հուսահատութեան, այնպիսի թափ է առել, որ վարակել է տնտեսապէս, քաղաքականապէս եւ ֆիզիկապէս տառապող գաղութահայ բազմութիւններին: «Մեր փրկութիւնը միայն Ռուսաստանն է»: Թերահավատ լինել կամ առարկել այս կրոնական հավաստիքին՝ համազոր է դավաճանութեան, հերձվածի, եւ քանի որ Դաշնակցութեան զանգվածը թերահավատ է եւ ուզում է դատել՝ այն արժանի է խարույկի վրա այրվելու:

Ես էլ այդ թերահավատների շարքին եմ պատկանում եւ անմիտ եմ համարում նման կույր հավատքը: Բայց ու՞մ է պետք այս աններդաշնակութիւնը կրոնական խորհրդավոր պահին, երբ վեհափառներն են ծիսակատարները, սարկավազները՝ կոմունիստներ, պնակ պտտեցնողները՝ ռամկավարներ եւ աղաներ: Այս աններդաշնակութիւնը սրբապղծութիւնն է՞:

Ո՛չ, որովհետեւ եղածը պարզ ցնորք ու մոլորութիւնն է, բայց ցնորք ու մոլորութիւն, որ արդիւնք չի տալու: Նվազագույնը փրկելու համար պետք է ջանանք փարատել այդ ցնորքն ու մոլորութիւնը:

Փարատելու համար այս ցնորքն ու մոլորությունը՝ հետեւյալ հարցադրումները պետք է անել եւ գտնել դրանց պատասխանները.

1. Ռուսաստանի ներկա փայլը նույնքան շլացուցիչ է, որքան երեկ նացիզմի փայլն էր: Որքա՞ն կարող է տեւել այդ փայլը, կարո՞ղ է որեւէ մեկը հավաստիքներ տալ: Դա այնքան անորոշ է, որքան որ երկնքի կայծակը, որն իր ուժի ու փայլի մեջ ավելի լավ առաջնորդ չի կարող լինել մթության մեջ, քան մեր ձեռքի աղոտ լապտերը, որը կարող է փրկել ամեն փորձանքից, խորխորատներից, թեկուզ այն լինի աղոտ ու անփայլ մի լույս:

2. Հայկական այդ աղոտ լապտերի վրա գրված է «Դեպի Միացյալ, Անկախ, Ազատ Հայաստան, դաշնակցություն ճնշված հարեւան ազգերի հետ: Պայքարով կվաստակես քո իրավունքը: Անհատի, դավանանքի, ցեղի ազատություն»:

Այս լապտերը հնացած է համարվում «առաջադիմականների» կողմից: Այն արժանի է փշրվելու: Նրա լապտերակիրները Արամներին նախատինքի են ենթարկում եւ հաղթականորեն կանչում են. «Դեպի Խորհրդային Միություն. անկախությունը, ազատությունը, իրավունքը արդեն իրագործված են Խորհրդային Միությունում եւ Սովետական Միությունը անկասկած իրականություն կդարձնի Միացյալ Հայաստան ստեղծելու գաղափարը»:

Անկասկած է, այլ կասկածելի այս նոր նշանաբանը, որովհետեւ մենք է, որ պիտի առնենք, այլ Խորհրդային Միությունը պիտի մեզ տա եւ չգիտենք էլ, թե ինչու պիտի տա: Խորհրդային Միությունը իր հնգամյա ծրագրերում, իր արտաքին պահանջների մեջ չունի առաջադրած «Միացյալ Հայաստան» ստեղծելու հարցը եւ այդ վերագրումը երեւակայական է:

3. Ենթադրենք, թե երեւակայական է եւ իրոք Խորհրդային Միությունը մտադրություն ունի ստեղծել Միացյալ Հայաստան: Եթե ունի, ապա հայության եւ մասնավորապես գաղութահայության դրական կամ բացասական վերաբերմունքը արժեք ու՞նի այդ ծրագրի իրագործման մեջ:

Շատ չնչին արժեք, որից Խորհրդային Միության ուժը ո՛չ պիտի ավելանա, ո՛չ էլ պակասի: Հակառակ մտածողները գոմեջի եղջյուրին նստող այն ճանճերին են նման, որոնց թվում է, թե գութանը իրենք են քաշում:

4. Դիմե՞լ է արդյոք Խորհրդային Միությունը որեւէ պաշտոնական մարմնի՝ լինի դա աշխարհիկ թե հոգեւորական, որ Միացյալ Հայաստանի ստեղծման համար աջակցություն ստանա: Դիմե՞լ է որեւէ հոսանքի, որեւէ կուսակցության: Պետք է ասել, որ ո՛չ, որովհետեւ նա

ո՛չ դրանց կարիք ունի, ո՛չ էլ նման ծրագիր: Մինչ այժմ ոչ մի մարմին չի հայտարարել, որ Խորհրդային Միութիւնը նման ցանկութիւն ունի: Ուրեմն Խորհրդային Միութեան անունով երգում-պատառ տվողները ճրի եւ անպատասխանատու փաստաբաններ են եւ պաշտպանում են հարցեր, որոնք առաջադրված չեն:

5. Եթե Խորհրդային Միութիւնը նման ծրագիր ունենար, ապա ու՞մ միջոցով ու ինչպե՞ս պետք է հետապնդեր: Իհարկե առաջին հերթին Խորհրդային Հայաստանի, որը ըստ Խորհրդային Սահմանադրութեան՝ Միութեան հավասարազոր իրավունքները ունի եւ իրավահանորեն քաղաքական միավոր է եւ հայկական իշխանութիւն: Խորհրդային Հայաստանն է, որ Խորհրդային Միութեան համամտութեամբ պիտի դնէր Խորհրդային Հայաստանի սահմանների ընդլայնման հարցը:

Արդյո՞ք Խորհրդային Հայաստանը իր արտաքին նախարարի միջոցով դիմել է Թուրքիայի, դաշնակիցների եւ Խորհրդային Միութեան կառավարութիւններին Խորհրդային Հայաստանի սահմանները ընդարձակելու համար: Հայտնի է, որ ոչ, կամ էլ սահմանափակվել է շշուկներով:

6. Խորհրդային Հայաստանը, Ուկրաինայի, Բելոռուսիայի նման, իբրեւ հավասարազոր անդամ, մասնակի՞ց է Ազգերի ժողովին՝ վերազրավելու համար հայկական հողերը, ինչպես Ուկրաինան, Բելոռուսիան վերազրավեցին իրենց հողերը: Այդպիսի բան չկա:

Ինչպե՞ս բացատրել Հայաստանի կառավարութեան բացակայութիւնը եւ լուռութիւնը բոլոր ժողովներում, երբ մի քանի անպատասխանատու անձիք աղաղակում են Խորհրդային Հայաստանի սահմանների ընդարձակման բաղձանքների մասին:

Եթե կույր չենք, դժվար չէ տեսնել Խորհրդային Հայաստանի լուռութեան պատճառները: Խորհրդային Միութիւնը վճիռ չունի Միացյալ Հայաստան ստեղծելու մասին եւ հրահանգ չունի Խորհրդային Հայաստանին տված՝ նման գործ նախաձեռնելու: Այդ գործը առայժմ գոնե վաղահաս է եւ կամ էլ վնասակար է համարում՝ ընդհանուր պետական շահերի տեսանկյունից, ինչպես 1920-45 թվականներին, կամ էլ անհնարին է համարում նրա իրագործումը:

7. Եթե Խորհրդային Միութիւնը վճիռ չունի Միացյալ Հայաստան ստեղծելու մասին, եթե Խորհրդային Հայաստանը ոչ մի քայլ չի անում սեփական սահմանները ընդարձակելու համար եւ բերանը ջուր առած լուռութիւն է պահպանում, ապա ովքե՞ր են, որ աղմկում են Երեւանից մինչեւ Սան Ֆրանցիսկո, Փարիզ եւ Պոտսդամ: Ի վերջո աղմկում են ամենուրեք՝ մամուլով եւ հուշագրերով: Միլիոնավոր մարդիկ սպասում են եւ արդեն լուծված են համարում Հայկական Հարցը:

Այս խաբեկանքի սկիզբը դրվեց խորհրդավոր պայմաններում չքացած հանգուցյալ կաթողիկոսի փոխարեն մի նոր կաթողիկոս ընտրելու օրվանից: Եկեղեցական թե ազգային մի համագումար սարքվեց՝ առանց Դաշնակցության, բոլոր աջ ու ձախ հոսանքների եւ հայ հոգեւորականության մասնակցութեամբ: Արտասահմանի պատգամավորները ընտրվեցին անգլիացիների քթի տակ, եւ այն հանգամանքը, որ անգլիական սավառնակներով ու վիզաներով ժամանակին հասան էջմիածնի համագումարին, նշանակում էր, որ նրանք համամիտ էին այդ համագումարին: Այն հանգամանքը, որ անգլիական եպիսկոպոսն էլ էր ներկա այդ համագումարին, ով ողջունեց այն եւ արդարացի համարեց համագումարի կայացրած որոշումը՝ Հայաստանի սահմանների ընդարձակման մասին, ոչ թե նշան է Անգլիայի ոչ պաշտոնական բարյացակամության, սրտացավության դեպի Հայկական Դատը, այլ նշանակում էր անուղղակի կերպով հայութեանը դրդել, որպէսզի փարվի Խորհրդային Միութեանը, ձեռք քաշի իրենից, միջազգային դատից եւ իր դատը դարձնի ռուս-թուրքական վեճ՝ այն միտումներով, որոնք վերեւում բացատրեցինք:

Միաժամանակ, այն հանգամանքը, որ համագումարը գումարվեց էջմիածնում, ուր օձն իր պորտով, ծիտն իր թեւով չէր կարող մտնել, նշան է այն բանի, որ համագումարը կայացել է Խորհրդային Միութեան թուլյալութեամբ:

Այն հանգամանքը, որ համագումարին անպաշտոն կերպով մասնակցում էին մեկ-երկու պետական անձիք, նշանակում է, որ ո՛չ Խորհրդային Հայաստանի եւ ո՛չ էլ Խորհրդային Միութեան իշխանությունների համար համագումարի կայացրած որոշումներն ու բաղձանքները պարտադիր չեն:

Ուրեմն հասկանալի է, որ անգլիացի եպիսկոպոսը այս համագումարին ներկա է աչքի ծարիր քաշելու համար, իսկ Խորհրդային Միութեանն ու Խորհրդային Հայաստանի նեկայացուցիչը՝ ղազանակները կրակից համագումարի ձեռքով հանել տալու համար:

8. Եկեղեցական համագումարը առավելապէս քաղաքական բնույթ ուներ: Կաթողիկոս ընտրելը եկեղեցական գործ է, բայց դիրք ճշտելը՝ հանդեպ պապականութեան եւ դաշնակիցների, զերադասելով նրանցից Ռուսաստանին, կամ էլ հողային պահանջներ արժարծելը՝ հօգուտ Խորհրդային Հայաստանի, եկեղեցական գործ չէ:

Այժմ հարց է առաջանում, թե ինչու Խորհրդային Հայաստանի կառավարութեանը, որն ունի իր խորհուրդը, իր պաշտոնական հիմնարկութեանը, չի ձեւակերպում գոնե իր երկրի սահմանների ընդարձակման խնդիրը: Կարո՞ղ է նա անտարբեր է նման հարցերում:

Իհարկե՝ ոչ: Կարո՞ղ է նա իրավագուրկ է նման հարցեր արծարծելու համար եւ այդ նպատակով է հավաքել համագումարը. իհարկե՝ ոչ, որովհետեւ նա համահավասար անդամ է Խորհրդային մյուս պետութիւններին՝ Ուկրաինայի, Բելոռուսիայի եւ մնացած «անկախ» հանրապետութիւնների հետ: Եթե Ուկրաինան եւ մյուսները կարողացան իրենց հողային պահանջները ձեւակերպել, ուրեմն Հայաստանն էլ նույնը կարող էր անել:

Կարո՞ղ է պատահել, որ Խորհրդային Հայաստանի իշխանութիւնը գուրկ լինի հայրենասիրութիւնից եւ շահագրգռված չլինի իր երկրի սահմանների ընդարձակմամբ. իհարկե՝ ոչ, որովհետեւ նույն իշխանութիւնը ներգաղթի համար իրավունք ստացավ Մոսկվայից եւ գանգատվեց, թե տարագիր հայութեան հազիվ մեկ փոքր մասի համար տեղ ունի իր երկրում:

Ուրեմն, վերոհիշյալներից դժվար չէ կռահել, որ Խորհրդային Հայաստանի իշխանութիւնների լուծթյան համար արգելող պատճառներ լուրջ կան, որոնք հարկադրում են արտաքին գործերի նախարարութեանը Հայաստանում տնկված ծառերի քանակը որոշել, թեպետ դա գլոբալատնտեսութեան նախարարի գործն է: Արտաքին գործերի նախարարը կարող էր զեկուցել միայն միջազգային ժողովների, Հայկական դատի, Հայաստանից բռնագրաված հողերի մասին:

Ինչո՞ւ է ստեղծվել այս ողորմելի վիճակը. դժվար չէ տեսնել: Պատճառը Մոսկվայի կողմից Հայաստանի Խորհրդային կառավարութեան առաջ դրված արգելքն է, որը իրավունք չունի հայկական հարցը իր բովանդակ ծավալով առաջ քաշելու:

Այդ արգելքը բխում է Մոսկվայի հիմնական երկու մտահոգութիւններից: Առաջինն այն է, որ Մոսկվան խիստ շահագրգռված է, որ «գլուխ-գլխի» Թուրքիայի հետ բանակցելով լեզու գտնի Թուրքիայի հետ, որպեսզի վերականգնի 1945 թվականին վերջ գտած ուսա-թուրքական եղբայրութեան դաշինքը: Հայկական Հարցի ամբողջ ծավալով պաշտոնապես արծարծումը իր կամ իրեն ենթակա Խորհրդային Հայաստանի կառավարութեան կողմից, համագործ է թուրք-ուսական բարեկամութեան վերականգնումը անկարելի դարձնելուն: Ուրիշ բան է, երբ Հայկական Հարցը արծարծվի ոչ պաշտոնական համագումարներում՝ խմբակցութիւնների կողմից: Նրանց համար Խորհրդային Միութեան կառավարութիւնները պատասխանատվութիւն չեն կրում, ընդհակառակը, նման դիմումները կարող են զենք ծառայել Թուրքիայի վրա ճնշում գործադրելու, ուսա-թուրքական բարեկամութիւնը արագացնելու եւ առիթ տալու, որ Ռուսաստանը Հայաստան

րարի. «Չնայելով հայ ժողովրդի միահամուռ բաղձանքին, ես պատրաստ եմ զսպելու նրանց, եթե...»

Երկրորդ. Մոսկվայի հիմնական մտահոգությունն այն է, որ Հայկական Դատը չվերարժարծվի այն ձեւով, ինչպես եղավ 1920-ին Սեւրում: Անկախ Հայաստան իր եւ Մերձավոր Արեւելքի մեջ՝ միջազգային երաշխավորությամբ ապահովված, Ռուսաստանը իր տիրական շահերին դեմ է համարում: Դրա համար նա սպանեց Սեւրը եւ առաջ բերեց Լոզանի 1923 թվականի դաշնագիրը: Այսպիսով Խորհրդային Հայաստանը, եթե պահանջի, ըստ 1917 թվականի Լենին-Ստալին դեկրետի կամ Սեւրի դաշինքի Վիլսոնյան սահմանով զօված հայկական հողերի վերադարձը Խորհրդային Հայաստանին, այդ պարագայում պահանջի համար իրավական հիմք է ծառայում եւ այն, որ միջազգային խոստումները տրվել են Անկախ Հայաստանին, եւ ոչ թե Խորհրդային Հայաստանին, որը Ռուսաստանի մի մասն է:

Մեր հիշած բարդություններից խուսափելու համար է, որ ո՛չ Մոսկվան, ո՛չ էլ Երեւանը չեն արժարժում Տաճկահայաստանի, Սեւրի դաշնագրի, Վիլսոնյան սահմանների հարցը: Նրանք միայն խոսում են կարսի, Արդահանի մասին, որոնք իբրեւ ռուսական հողեր նվիրաբերվել են Թուրքիային՝ Ռուսաստանի կողմից:

Ուրիշ է, երբ եկեղեցական համագումարները, հայկական կոմիտեները, անհատները, թերթերը, միություններն են պահանջում Խորհրդային Հայաստանի սահմանների ընդարձակում: Այդ ժողովրդական շարժումը կարող է քարոզչության նյութ ծառայել Խորհրդային Միության հանդեպ համակրանքը բարձրացնելու, միջազգայնորեն Հայկական Դատը միացնելու, հակաանգլիական, հակաամերիկյան քարոզչությունը ուժեղացնելու եւ միաժամանակ Թուրքիայի վրա ճնշում գործադրելու եւ տեւականորեն իրար հետ լեզու գտնելու համար: Դա չի խանգարում իրերի ընթացքին, քանի որ ինքը՝ Մոսկվան, նման հարցեր չի արժարժում, որի մասին վկայում է Հասան Սաքանը՝ Թուրքիայի արտաքին գործերի նախարարը: Նման հարցեր չունի նաեւ Խորհրդային Հայաստանը, որի պատասխանատուն Մոսկվան է:

Այսքանը բավական է հասկանալու համար Խորհրդային Հայաստանի կառավարության լռության ու անգործության պատճառը քաղաքական ասպարեզում:

Բայց ինչու՞ այդ նույն լռությունը չպահեցին Ամենայն Հայոց կաթողիկոսը, Համագումարն ու նրանց հետեւող աջ ու ձախ «առաջադիմականները», որոնց համար ավելի քան պարզ պիտի լիներ Մոսկվայի վերաբերմունքը դեպի Հայկական Դատը:

Այդպիսիները, որոնք տարված են ռուսական մոլուցքով, կարծում են, թե իրենց բռնազբոսիկ սիրո եւ հավատի համար պիտի վարձատրվեն. կասկածելի է այդ սպասումը: Բավական չեղա՞վ, որ 300.000-անոց հայկական բանակը Ռուսաստանի համար ճգնաժամային պահին կանգնեց նրա կողքին, 100.000 եւ ավելի զոհեր տալով ապացուցեց իր հավատարմությունը: Թեեւ հերոս զորավարների կուրծքը զարդարվեց շքանշաններով, բայց ո՞վ գիտե, թե նրանց սիրտը լցված է թախիծով, քանի որ իրենց տարածքները՝ Ղարաբաղը, Նախիջևանը եւ մյուսները դեռեւս օտարի լծի տակ են: Ղարաբաղի, Լեռնային Գանձակի, Նախիջևանի համար մարտնչող Բաղրամ-յանները կարողացան Վելյոն խլել Լեհաստանից եւ տալ նրա բուն տիրոջը՝ Լիտվային, բայց չկարողացան իրենց ծննդավայրը միացնել Խորհրդային Հայաստանին:

Գուցե այդպիսիները կարծում են, որ իրենց այդ կույր հավատով կարող են փոխել կամ ազդել ռուսական քաղաքականության վրա, համոզել նրան, որ Միացյալ Հայաստան ստեղծելը արդար պահանջ է: Համոզել նրան, որ Ռուսաստանի շահը դա է պահանջում՝ ապարդյուն փորձ է, քանի որ Ռուսաստանը լավ գիտի իր կայսրական շահերը, որոնք հենված չեն ո՛չ սիրո, ո՛չ հավատարմության, ո՛չ արդարության վրա, այլ միայն ու միայն պետական հաշիվներին: Այդ հաշիվները պահանջում են, որ Հայաստանը լինի անդամահատված, մերկացված իր միջազգային բնույթից. նա ավելի ստորադաս է, քան Թուրքիայի բարյացակամությունը Ռուսաստանի հանդեպ, թեկուզ այդ թուրքը լինի անարդար, թեկուզ հոգու խորքում լինի Ռուսաստանի թշնամին:

Գուցե կարծում են, թե հայության միակամ ռուսական կողմնորոշումը այնպիսի ծանրակշիռ արժեք ունի, որ կարող է կշեռքի նօսքը թեքել եւ հարկադրել Ռուսաստանին ասպարեզ բերելու Խորհրդային Հայաստանի սահմանները ընդարձակելու հարցը:

Գուցե կարծում են, որ Սեւրի դաշնագիրը ստորագրող պետությունները եւ Ամերիկան, որ հանձինս նախագահ Վիլսոնի գծեց Հայաստանի սահմանները, ընդառաջելու են համագումարի ցանկություններին եւ ընդարձակելու են Խորհրդային Հայաստանի սահմանները՝ ըստ Սեւրի: Բայց նրանց համար Խորհրդային Հայաստանը, որպես անկախ միավոր, գոյություն չունի. այն Ռուսաստանի մի մասն է, ինչպես Բոստոնը Ամերիկայի: Ուրեմն Համագումարում, Սան Ֆրանցիսկոյում եւ այլ վայրերում առաջադրված հայկական պահանջները նրանց համար այլ բան չեն, եթե ոչ Ռուսաստանի սահմանների ընդարձակում եւ որի համար Սեւրի դաշնագրի եւ Ամերիկայի նախագահի ծրագրերում ոչ մի տրամադրություն չկա: Նրանք

պարտավորութիւններ են ստանձնել Անկախ Հայաստանի հանդէպ, բայց քանի որ հայերը անկախութիւն չեն ուզում, այլ ուզում են միանալ Ռուսաստանին, այդ դեպքում թե՛ իրավական, թե՛ բարոյական պարտավորութիւններից նրանք կարող են իրենց ազատված համարել:

Իբրեւ այդ անխոհեմ քաղաքական ուղեգծի հետեւանք, վերոհիշյալներին բացի, ավելի մեծ հրասթափութիւններ ապրելու վտանգներ կան:

Չի՞ կարող պատահել, որ Ռուսաստանը ընդհանրապէս չցանկանա բարձրացնել Տաճկահայաստանի հարցը, մանավանդ որ մինչ այժմ չի հետապնդել:

Չի՞ կարող պատահել, որ նույնիսկ Կարս-Արդահանի հարցը կարող է լուրջ հիմքեր չունենալ, քանի որ ոչ մի հավաստիք չկա այդ մասին:

Չի՞ կարող պատահել, որ Խորհրդային Միութիւնը մի օր հայտարարի, որ անպատասխանատու խմբակցութիւններն են, որ ձրի աղերսանքներ են անում սահմանները ընդարձակելու մասին, որին ինքը անտեղյակ է:

Չի՞ կարող պատահել, որ Խորհրդային Հայաստանը հարկադրված լինի հայտարարել, որ ինքը «Ամենայն Հայոց կառավարութիւնը չէ» եւ սահմանային հարցեր չունի Թուրքիայի հետ, ինչպէս հարկադրված եղավ անել 1921-25 թվականներին:

Դուք պատահե՞լ եք ռուհիճների (կրօնական աղանդ), որոնք չգայթակղվելու համար երկրավոր խայծերից, հանում են իրենց աչքերը, չլսելու եւ չտեսնելու համար՝ խցանում են ականջները: Պատահել եք Ֆանատիկ ռուհիճների, որոնք Աստծո գորութիւնը ավելացնելու համար պատրաստ են իրենց անձը զոհաբերելու, պատրաստ են ամեն ոճիր գործելու, երբ մեկը համարձակվի Աստծո միջամտութիւնը կասկածի տակ առնել:

Ներկայիս եղած իմպերիալիստական կողմնորոշումները եւ այդ դիրքորոշումների համար վատնած զոհաբերութիւններն ու ջանքերը նման են ռուհիճների զոհաբերութիւններին ու գործերին: Ներկայիս ռուսամետ հոսանքները ուրիշ բան չեն, եթե ոչ յուրահատուկ ռուհիճիութիւն՝ առանց լսողութիւն եւ տեսողութիւն, լեցուն հավատով եւ ենթադրութիւնով, բայց գուրկ դատողութիւնից եւ իրականութիւնը հաշիւի առնելու գիտակցութիւնից: «Առաջադիմական» հոսանքը հայութիւն մեջ քաղաքական վարակիչ մի ռուհիճիութիւն է:

Մենք տեսանք, որ ռուսական քաղաքականութիւնը Մերձավոր Արեւելքում դարերի ընթացքում եղել է ծավալապաշտական, իսկ մասնավորապէս Հայաստանի հարցում առաջնորդվել է՝ Հայաստանն առանց հայերի եւ հայերն առանց Հայաստանի կարգախոսով, որը չի

համապատասխանում հայության շահերին: Ուրեմն, այն հայերը, որոնք ցանկանում են Հայաստան ունենալ հայության համար, թող չկարծեն, որ իրենց ռուսասիրությամբ, ռուսատենչությամբ, իրենց զոհաբերությամբ՝ Թամանյան զորագնդերի փառքը հյուսելով եւ Լուիս Մելիքովների փոխարեն Բաղրամյաններ տալով, կարող են ռուսական վերաբերմունքը մազաչափ փոխել: Այդպես նաեւ չպետք է կարծեն մանավանդ նրանք, ովքեր եկեղեցիների բեմերից աղոթում են հօգուտ Ռուսաստանի կամ հեռագրեր ու դիմումներ տեղալով, կարծում են, թե կարող են փոխել ռուսական քաղաքականությունը:

Համոզվելու համար վերցրեք հավասարալծակ մի կշեռք: Կշեռքի ձախ թաթին դրեք 22 միլիոն քառակուսի կիլոմետր տարածությամբ Ռուսաստանը, նրա 200 միլիոն ազգաբնակչությունը, նրա դարերի կայսրապաշտ քաղաքականութունը, նրա սվիդների բազմությունը: Աջ թաթի վրա դրեք ամբողջ Հայաստանը, ողջ 3.5 միլիոնանոց հայությունը, ավելացրեք կաթողիկոսների վեհաժողովների դիմումները, նույնիսկ բարձեք նրա վրա Քենթրբրիի արքեպիսկոպոսի հավաստիքները, նրա վրա ավելացրեք հուսաբեկումն ու ոգեւորությունը, լացն ու աղերսանքը: Բայց ինչ էլ որ անեք կշեռքի ձախ թաթը իր ծանրությամբ անշարժ է մնալու, իսկ աջ թաթը՝ օդի մեջ անընդհատ երերալու է: Ցավոք սրտի սա է դառն իրականությունը, որ փոքր ուժով անհնարին է փոխել մեծ ուժի ընթացքը: Փոքր ուժն է, որ պիտի ջախջախվի մեծ ուժի առջեւ եւ փոքրն էլ պիտի ենթարկվի մեծ ուժին: Այս օրենքը չի փոխվելու ո՛չ աղերսանքով, ո՛չ աղոթքով եւ ո՛չ էլ բարեկամությամբ, թեկուզ այդ բարեկամը լինի ամենակարող Ստալինը եւ իր գործակիցները՝ Միկոյան, Բաղրամյան, Թամանյան գնդերը եւ այլք:

Կասկածի տակ չեմ դնում նրանց բարեմտությունը, քանի որ Ստալինը հայրենասեր վրացի է, իսկ մյունները՝ արյուն են թափել, տրեխներ են մաշել Վասպուրականի, Արարատ լեռների վրա, բայց այդպիսիներն են մեղավոր մեր այս վիճակի համար: Որպեսզի չհայտնվենք Զխեիձիների ողբերգական կացության մեջ, չընկնենք ռուսական ծանր գլանի տակ, ստիպված ենք նստած մնալ այդ գլանի վրա, որն իր ընթացքով ճզմելու է արգելքները: Հոգ չէ, որ այդ արգելքը հանդիսանում է Վրաստանը կամ Հայաստանը՝ վերոհիշյալների սիրեցյալ հայրենիքները: Ստալինը այդ գլանի ղեկավարն էր, որը ճզմեց Վրաստանը, Հայաստանը՝ իրենց երազներով:

Ուրե՞մն. ուրեմն այն, որ ո՛չ աղոթքը, ո՛չ պաղատանքը, ո՛չ ստորաքարչ փառաբանությունը, ո՛չ հավատարիմ ծառայությունը, ո՛չ անհավատարիմ ըմբոստությունը եւ ո՛չ էլ մանավանդ ռուսական

կողմնորոշումը չեն կարող կասեցնել ռուսական ջախջախիչ գլխնը, եւ թեթեւացնել այն ծանրուժյունը, որը մենք դրեցինք կշեռքի ձախ թաթի վրա: Այդ բոլոր ստորացումները եւ զոհաբերությունները, որ անմտորեն կիրառում են շատերը, գալիս են արագացնելու ռուսական գլանի ընթացքը կամ ավելի ծանրացնելու ռուսական բեռը՝ հավասարալուծ կշեռքի թաթի վրա:

Դուք կարծում եք, որ ահաբեկված եմ կամ հասահատված ռուսական այդ հսկա ուժի առջեւ եւ առաջարկում եմ ամեն ինչ ձակատագրին թողնել. երբե ք:

Եկեք վերադառնանք մեր կշեռքի օրինակին:

Մենք վերցրեցինք մի կշեռք, որի ձախ թաթի վրա դրեցինք ռուսական ամբողջ ծանրությունը եւ աջ թաթի վրա դրեցինք հայկական ամբողջ ծանրությունն ու տեսանք, որ հայկականը տասնյակ անգամներ թեթեւ լինելով ռուսականից՝ անկարող է տեղից շարժել ռուսական բեռը: Բայց այդ բեռը կարելի է հեշտությամբ ոչ միայն շարժել, այլեւ փետուրի նման քամուն տալ երկու պարզ միջոցով: Առաջին միջոցը դա կշեռքի ձեւի փոփոխությունն է՝ այն դարձնելով անհավասարալուծ, երկրորդը՝ Լենին - Ստալինի ցույց տված ուղիով՝ ռուսական բեռի շոգիացման եղանակով:

Առաջին ձեւը իրազործելու համար հավասարալուծ կշեռքը պետք է դարձնել անհավասարալուծ: Դրա համար անհրաժեշտ է ամեն բան անփոփոխ թողնել: Թող կշեռքի աջ եւ ձախ թաթերի վրա ռուսական եւ հայկական անհավասար ծանրությունները ծանրացած մնան, բայց երկարացրեք կշեռքի աջակողմյան լուծը եւ երբ այն երկարի մի քանի տասնյակ անգամ, քան ձախակողմյան լուծն էր, այդ ժամանակ ծանր Ռուսաստանը փետուրի նման կճոճվի օդի մեջ, եւ թեթեւ Հայաստանը իբրեւ ծանր արձիճ՝ ծանրացած գետնին կիջնի:

Ուրեմն թեթեւ ուժերով հնարավոր է ծանր ուժերին քամուն տալ, եթե բանեցնենք այն հնարքը, որին պատահում ենք ծանր առարկաներ չափող կշեռքները դիտելիս: Պարզ ֆիզիկական այս օրենքները միշտ նման են քաղաքական, ընկերային օրենքներին:

Ռուսաստանն իր ամբողջ հզորությամբ ծանրանում է Մերձավոր Արեւելքի վրա: Նրա խորտակիչ գլխնը արդեն անցել է Կովկասյան լեռնաշղթան եւ ողջ Անդրկովկասը ճգմել իր հարթիչ գլխնով: Այն շարժվում է առաջ՝ հարթելու ողջ Մերձավոր Արեւելքը, որն ահաբեկված սպասում է իր ճգմվելուն: Նույն վախն ունեն նաեւ ուրիշները. առաջին հերթին անգլոսաքսոնները: Այսպիսով՝ բոլոր ճգմվողները համար միության մեկ ընդհանրական կետ կա, եւ ինչպես բոլոր բոլշեւիկները վտանգի ժամանակ մի նշանաբան ունեն. «Պրոլետարներ,

բոլոր երկրները՝ միացե՛ք», այսօր էլ հասունացել է Մերձավոր Արեւելքում «բոլոր վտանգվածները» միության գաղափարը:

Մենք տեսանք, որ Հայաստանը Մերձավոր Արեւելքի ոչ միայն մի մասն է, այլեւ նրա գրանիտե պատվանդանը:

Այդ գլանից չխորտակվելու համար այն ուզի թե չուզի պիտի ենթարկվի կա՛մ ռուսական գլանի ճնշմանը, կա՛մ էլ պետք է Մերձավոր Արեւելքի ընդդիմացող լծակի մաս կազմի:

Հայաստանը, Քրդստանը առանձին-առանձին կամ միասնաբար իրենցից արժեք չեն ներկայացնում, ավելի շուտ վնասակար արժեքներ են՝ արհամարհված, ատելի, որովհետեւ Մերձավոր Արեւելքում նրանք լծակի անկայուն, բեկման մասեր են կազմում: Բայց եթե այդ երկրները իրենք իրենց արժանի ուշադրության ենթարկեին, եթե այդ երկրները գիտակցեին, որ Մերձավոր Արեւելքի բախտն իրենց ձեռքում է, եւ որ իրենց ու Մերձավոր Արեւելքի ազատ միությամբ պետք է կազմել մի լծակ, որը երկարելով կարող է օդ բարձրացնել ռուսական ծանրությունը, եւ որից նրա գլանի անիվները թավալվելու են օդում՝ չկարողանալով վնասել որեւէ մեկին: Այս պարագայում է, որ առանց խնդրանքի մենք կարող ենք դառնալ խնդիր ընդունողներ, եւ Օսմանյան ու ցարական կայսրությունների անկումը տեսնելուց հետո, կտեսնենք Սովետական ու Բրիտանական կայսրությունների կասեցումը Մերձավոր Արեւելքի սահմանների վրա:

Սրանք ո՛չ երազ են, ո՛չ էլ ցնորք, այլ եղել եւ մնում են հարցեր, որոնք հրամցնում են աշխարհագրական պայմանները, որոնք անփոփոխելի են: Եւ քանի դեռ Մերձավոր Արեւելքը չի հասունացել այդ պայմանները ըմբռնելու համար, նա չի կարող է փոխել հրամայական այդ պայմանները: Այն կարող է միայն հետաձգել, բայց այդ հետաձգումից տուժելու է ինքը՝ Մերձավոր Արեւելքը եւ նրա առանցքը հանդիսացող Հայաստանը: Լալու եւ դժգոհելու կարիքը չկա, քանի որ ներկա դրության պատճառը մեր անհասության մեջ է, որը պետք է հասունացնել:

Կա եւ մի երկրորդ միջոց՝ ռուսական վտանգը չեզոքացնելու եւ նրա խորտակիչ գլանը անվնաս դարձնելու: Այդ մեթոդը կոչենք «Լենինյան»: Մի խումբ հավատացյալ մարքսիստներ, ցարական հսկա ուժին ենթակա՝ անկարող չափվելու նրա եւ ժողովրդական հետամնացության ու բազմության հետ, ընտրեցին. «Միություն շահագործողներին, ազատություն ճնշվածներին, ջարդ շահագործողներին, թալան թալանչիներին, փրկել Ռուսաստանը» նշանաբանը: Այս նշանաբանը քայքայեց եւ գոլորչիացրեց ռուսական ցարական ավանդությունները, նրա ուժն ու կարողությունը: Այսօր Ռուսաստանի բոլոր ազգերը՝

Բալթիկայից սկսած մինչև Մերձավոր Եվրոպա, Ուկրաինա, մինչև Կովկաս, Թուրքեստան եւ Ուրալ, ծարավ են ազատութեան: Այսօր անհատները, անկախ ազգութիւնից, ծարավ են խղճի, մտքի, խոսքի, իրավունքի ազատութեան: Լենինի Ռուսաստանը նույնքան հիվանդ է, որքան ցարականը: Հավատացե՛ք՝ քանի Չեկան կա, կա նաեւ այդ վտանգավոր ծարավը: Եվ հեռու չէ այն օրը, երբ այդ ծարավիները նոր Լենինների կանչով պիտի ելնեն եւ ասեն. «Ինքնորոշում ազգերին, դեմոկրատիա, ազտութիւն՝ խղճի ու մտքի, ազատութիւն՝ աշխատանքի, վերջ դիկտատուրային եւ շահագործմանը: Ընկերավարութիւնն առանց պարտադրանքի եւ ալլիս»: Այդ օրվա համար աշխատանքը սրբազան է եւ մահացու ռուսական գլանի համար, քանի որ այդ գլանը կազմված է ազատութեան ծարավի բազմութիւնից, քանի որ Ռուսաստանի ճնշող մեծամասնութիւնը կազմված է նրանցից:

Այսպիսով՝ մերժելով ռուսասիրական, ռուսական կողմնորոշումները եւ գտնելով, որ այն կորստաբեր է ու անիմաստ, պետք է որդեգրել Մերձավոր Արեւելքի վերակազմութեան սկզբունքը՝ լիակատար, հավասար ազատութիւններ, ինչպէս անհատի, ժողովուրդների, եւ դաշնակցութիւն իրար հետ՝ բոլոր տեսակի իմպերիալիստների դեմ:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ

Այսօր Թուրքիայի փոքր ազգերի մեջ անգլիական կողմնորոշում չկա: Չկա երկու պատճառով: Նախ, որ Անգլիայի համար փոքրամասնութիւնները հետաքրքրական չեն: Նա դերադասում է իր հետ ունենալ մեծամասնութեանը եւ կազմակերպված ուժը: Երկրորդ, որ Թուրքիայի կազմակերպված ուժը՝ Հալքը եւ կառավարութիւնը, կարծում են, թե Անգլիան իրենց հետ է: Մյուս կողմից Թուրքիայի փոքրամասնութիւնները համոզված են, որ Անգլիան կողմնակից է Թուրքիայի ամբողջականութեան, այդ պատճառով այդ ուժը որոնելու շահ չունեն:

Չնայած այդ իրականութեանը, այսօր ամեն մի շարժում, լինի դա ընկերային, կրօնական, քաղաքական, որ կատարվում է Թուրքիայում փոքրամասնութիւնների կողմից, որակվում է որպէս անգլիական ինտրիգ, թեկուզ եւ այն ոչ մի առնչութիւն չունի նրա հետ կամ էլ հակառակը: «Առանց Անգլիայի տերեւ չի շարժվում» արտահայտութիւնը ընդհանրացված է, թեեւ այդ հասկացողութիւնը անհիմն է ընդհանրապէս եւ արդիւնք է ավելի շատ քարոզչութեան, քան՝

իրականության:

Այս թյուր հասկացությունը ավելի զարգացավ բուլղերիկյան տիրապետության քարոզչության շնորհիվ: Բուլղերիկյան քաղաքական ըմբռնողությունը պարզ եւ վճռական է, նրա քարոզչությունն էլ նրա հայելին է:

«Ով անվերապահորեն Սովետների հետ է, բուլղերիկը նրանց հետ է: Ով Սովետներին դեմ է, այն թշնամի է թե Սովետներին, թե բուլղերիկներին: Ով Սովետների հետ չէ՝ նա Սովետների դեմ է: Անգլիան առաջին թշնամին է Սովետների ու բուլղերիկի, ուրեմն ով Սովետների հետ չէ, Անգլիայի հետ է»: Այս հասկացությունը բաց դուռ չի թողնում ոչ մի անկախ մտածողության եւ աշխարհը բաժանում է երկու բանակի՝ կա՛մ ինձ հետ, կա՛մ իմ դեմ: Այսպես՝ իբրեւ օրինակ բերենք Դաշնակցությանը, որը պատերազմի ամենաճգնաժամային վայրկյանին հայտնեց ամենքին եւ Սովետներին. «Առանց հրաժարվելու սեփական տեսակետներից Դաշնակցությունը պատերազմի ընթացքում Սովետների հետ է»: Այն Սովետների կողմից դիտվեց որպես թշնամություն, քանի որ վերապահություն կար՝ «Առանց հրաժարվելու սեփական տեսակետներից»: Սովետների հետ լինելու պայմանը «Դաշնակցության լուծարումն է»:

Ո՞ր տեսակետներն էին, որոնցից է՛ր կարող հրաժարվել Դաշնակցությունը եւ որոնք անհանդուրժելի դարձրին Դաշնակցության գոյությունը սովետների համար:

1. Դաշնակցությունը ընկերվար է եւ դեմոկրատական կարգերի կողմնակից, ինչը անհարիր է բուլղերիկի հետ: Ուրեմն՝ Դաշնակցությունը հետադիմական է, Փաշիստ եւ այլն:

2. Դաշնակցությունը ձգտում է հայկական հողերի ամբողջացմանը, որով նա շովինիստ է եւ Խորհրդային Միության ընդհանուր քաղաքականությանը խանգարող վնասակար տարր:

3. Դաշնակցությունը ձգտում է անհատի եւ հայրենիքի անկախության: Քանի որ այդ ձգտումը կարճ ժամանակով վավերացված էր Սեւրում, ուր անգլիացիներն էին տիրական ուժ, ուրեմն Դաշնակցությունը անգլիական գործակալություն է:

Նույն այս մոտեցումը համընկնում է Դերսիմի կամ Արարատի ըմբոստ քրդերի, Իրանում՝ անկախության կողմնակիցների, Արաբիայում՝ Արաբական Միության կողմնակիցների, Պաղեստինում՝ սիրոնականության հետեւորդների համար, որոնց, իհարկե յուրաքանչյուրին տարբեր պատճառաբանություններով, բայց եզրակացության մեջ նույնացնելով, անգլիական գործակալներ են համարում:

Այս նախաբանը անհրաժեշտ էր հասկանալու համար, որ թեեւ

Թուրքիայում եւ Մերձավոր Արեւելքում շատ է հորովվում «անգլիական մատի ամենակարողութունը» եւ անգլիական կողմնորոշման տարածումը, բայց այդ վերագրումը մեծ մասով արհեստական է, ծնունդ ուսական եւ բուլշեւիկյան քարոզչության: Դրանից էլ օգտվում է անգլիական Ինտիլիջենս Սերվիսը՝ չմերժելով իր շուրջն եղած խորհրդավոր քարոզչությունը եւ հզորացնելով ու տարածելով իր ամենակարողության հմայքը:

Թե այդ հմայքը որքանով է իրական՝ կարելի է չափել այն Պաղեստինում՝ սիրոնականների ուսմբերով, Եգիպտոսում՝ պատերազմի ճգնաժամի ընթացքում Ալի Մահերի վարչության բռնած դիրքով, Իրաքում՝ Գեյլանիի շարժումներով կամ էլ Իրանի եւ Թուրքիայի միջեւ եղած հակամարտության ընթացքով, որոնք առ այսօր շարունակվում են: Մերձավոր Արեւելքում գուցե կա Ֆրանկոֆիլություն, գերմանոֆիլություն, ռուսաֆիլություն, բայց ոչ մի տեղ անգլոֆիլություն չկա: Այդ զգացմունքը ո՛չ Անգլիան է փնտրում եւ ո՛չ էլ ընդունակ է այն շահելու: Այն ավելի նման է անանուն մի ընկերության, մի վաճառական գրասենյակի, ուր բացի հաշիվներից, փոխանակութուններից՝ բոլորը ավելորդութուններ են: Նրա ցուցատախտակի վրա գրված է՝ «Շահել եւ շահեցնել»: Եվ սրանով սահմանափակվում է նրա եւ հաճախորդների կապը: Անժխտելի պետք է համարել, որ Մերձավոր Արեւելքի բոլոր պետութունների, բոլոր ազգերի վրա անգլիական ազդեցութունը մրցակցութունից դուրս է: Նրանք՝ համարյա բոլորը, ատելով հանդերձ պատկառանք են տածում Անգլիայի հանդեպ: Դժգոհելով, ապստամբելով հանդերձ՝ խոնարհվում են: Պատճառը ո՛չ այնքան սվինների բազմութունն է, ո՛չ էլ ոստիկանական շղթաները, այլ այն, որ Անգլիան չարիքների նվազագույնն է համարվում: Եթե շահ ունի, երբեք չի լքի, իսկ երբ շահ չունի՝ ամեն ինչ լքում է:

Մասնավորելով մեր խոսքը Թուրքիայի եւ նրա արեւելյան նահանգների (Ազգիստան, Հայաստան, Քրդստան) մասին, տեսնում ենք, որ Անգլիայի հիմնական շահը մեկն է, իսկ մնացած ամեն ինչը՝ երկրորդական: Անգլիայի շահը պահանջում է, որ այդ երկրների նեղուցների եւ ուզամավարական կետերի վրա իր մրցակից Ռուսաստանը չհաստատվի, որպեսզի կայսրության ճանապարհները չվտանգվեն եւ ասիական իր տիրապետութունը չխորտակվի:

Վերոհիշյալ իր հիմնական շահը ապահովելու համար նա ունի երկու միջոց.

Ա. Երբ Թուրքիան Ռուսաստանի հետ չէ եւ իր վեհապետության, իր երկրի ամբողջականության համար է պայքարում, ուրեմն պետք է ուժ

տալ նրան եւ ապահովել այդ պատվարը Ռուսաստանի դեմ: Սա Դիզրայելի վարած ավանդական քաղաքականությունն է, որն առ այսօր շարունակվում է:

Բ. Երբ Թուրքիան ներքուստ այնքան թույլ է, որ այդ պատվարը ենթակա է դատարկ տարածություն դառնալու եւ վտանգի տակ ընկնելու, կամ երբ Թուրքիան իր մրցակիցների (Ռուսաստան, Գերմանիա) կողմը լինելու հակամետ է, այդ պարագայում ոչ թե անձամբ է գրավելու Թուրքիան Ռուսաստանի դեմ անմիջականորեն պատվար դառնալու համար, այլ այդ դատարկությունը լցնելու է մի երրորդ ուժով, ինչպես օրինակ՝ հուլյաներով 1918-1923 թվականներին, իտալացիներով՝ 1917-1922 թվականներին, Ֆրանսիացիներով՝ 1917-1922 թվականներին, հայերով՝ 1918-1922 թվականներին, քրդերով՝ 1918-1922 թվականներին:

Այս քաղաքականությունը ավանդական է Գլադստոնից սկսած մինչեւ Լորդ Ջորջ եւ շարունակվում է մինչեւ այսօր՝ առաջինին գոգահեռ:

Արդյո՞ք փոքր ազգերը շահ ունեն Անգլիայի այս երկակի քաղաքականությունից:

Վերլուծենք առաջին պարագան, երբ Թուրքիան Անգլիայի վրա է կռթնած, վերջինս էլ կանգնած է Թուրքիայի թիկունքին: Այս պարագայում պարզ է, որ Անգլիան Թուրքիայի ուժն ավելի գերադասելով, քան նրա փոքրամասնություններինը, ոչ թե սիրաշահելու է փոքր ազգերին, այլ զոհաբերելու է նրանց՝ ուժեղացնելով Թուրքիային: Անգլիայի շահը Թուրքիայից ավելի մեծ է, քան լազերից, քրդերից, հայերից: Եվ եթե նրանք փորձեն իրենց անգլիական կողմնորոշումով փոխել Անգլիայի ուղղությունը, երբեք հաջողության չեն հասնի:

Եթե նրանք փորձեն ի հեճուկս Անգլիայի որդեգրել ռուսական կողմնորոշում, այդ պարագայում ավելի կվատթարացնեն իրենց վիճակը. նրանք չեն կարող նույնիսկ իրենց գոյությունն ապահովել՝ ձեռքազատված Թուրքիայի ճնշումից, որի գործողությունները կարդարացվեն Անգլիայի կողմից:

Ուրեմն Անգլիական կողմնորոշումից այդ փոքրամասնությունների համար ոչ մի հույս չկա: Նրանք հարկադրաբար պիտի զինվեն համբերությամբ եւ հենվեն միայն ու միայն իրենց սեփական ուժերի վրա: Նրանք ներքին բարենորոգումներ իրականացնելու ճանապարհով, հեղափոխությամբ, կարող են իրենց իրավունքներին տեր կանգնել:

Բայց երկրորդ պարագայում ավելի հետաքրքիր իրավիճակ է ստեղծվում փոքր ազգերի համար, երբ Թուրքիան ներքուստ այնքան թուլացած լինի, որ Անգլիան նույնիսկ աննպատակահարմար համարի

այն պատենչ դարձնել իր եւ Ռուսաստանի միջեւ, կամ երբ Թուրքիան ցանկանա իր փրկութիւնը գտնել՝ ռուսները վրա հենվելով:

Այս իրավիճակում բնական է, որ Թուրքիան վայելելու է Անգլիայի հակակրանքը, իսկ փոքր ազգերն էլ ունենալու են նրա համակրանքը:

Բայց ի՞նչ արժեք ունի այդ համակրանքը, երբ փոքր ազգերը միաժամանակ վաստակելու են Ռուսաստանի հակակրանքը: Այդ համակրանքի ու հակակրանքի գումարը հավասարվում է զրոյի:

Արժե՞ ուրեմն ունենալ անգլիական կողմնորոշում: Այդ ամենը կարելի է ճշտել պատասխանելով հետեւյալ հարցերին.

Կարո՞ղ են փոքր ազգերը իրենց անգլիական կողմնորոշումով պատճառ դառնալ, որ անգլիական ուժերը դան եւ ազատագրեն իրենց եւ հաստատվեն իրենց երկրներում՝ ի պաշտպանութիւն իրենց ազատագրական դատի: Արդե՞ն վերեւում ասացիւնք, որ ոչ, որովհետեւ Անգլիայում չկա մի հոսանք, որ ցանկանա ընդհանուր սահման ունենալ Ռուսաստանի հետ: Նրա միակ շահը ավանդական ուղղութիւնով է ընթանալն է, որպեսզի իր եւ Ռուսաստանի միջեւ մի անջրպետ ստեղծվի՝ իր եւ միջազգային երաշխավորութիւնով: Ուստի անգլոֆիլութիւնով անհնար է փոխել նրա այդ քաղաքականութիւնը:

Վնասակա՞ր է Անգլիայի այդպիսի պաշտպանողական «անջրպետ» ստեղծելու քաղաքականութիւնը փոքր ազգերի համար:

Վնասակար է, երբ այն գերադասում է Թուրքիային, բայց փրկարար է, երբ հուսահատվում է նրանից եւ ցանկանում է անջրպետ ստեղծել բնիկ տարրերով, փոքրամասնութիւններով, ինչպէս դա եղավ Նախորդ պատերազմների ժամանակ Արաբական երկրների, Հայաստանի, Քրդստանի, Լազիստանի պարագայում:

Եթէ Անգլիայի ձգտումն է բաժանարար ուժեր ստեղծել իր եւ Ռուսաստանի միջեւ՝ անմիջական հարեւանութիւնից խուսափելու համար, այդ դեպքում որոնք են այն իրավիճակները, որ ստիպելու են Անգլիային նոր ուժերից անջրպետ պետութիւններ ստեղծել: Այս հարցին մի անգամ եւս պատասխանենք.

- Երբ Թուրքիան Ռուսաստանի հետ լինի եւ նրա առաջապահը դառնա:

- Երբ Թուրքիան ներքուստ այնքան թույլ լինի, որ պատենչ դառնալու անընդունակ լինի:

-Երբ Թուրքիայի ընդդիմադիր տարրերը եւ փոքրամասնութիւնները այնքան հասունութիւն եւ ուժ ներկայացնեն իրենցից, որ ընդունակ լինեն փոխարինելու Թուրքիային եւ իբրեւ անկախ միավոր պատենչ կանգնել:

4. Երբ միջազգայնորեն երաշխավորվի այդ պանեջի հարատեւու-

Թյունը:

Այս հիմունքներով էր, որ 1918 թվականին կազմալուծվեց Թուրքիան, որի ավերակների վրա նոր ուժեր ստեղծվեցին՝ իբրեւ անջրպետ:

Բավարար է արդյո՞ք անգլոֆիլ կամ անգլիական կողմնորոշում ունենալը, որ Անգլիան արժանի համարի իր կայսրութեան պատնեշ դարձնել այս կամ այն ուժին՝ հարգելով նրա անկախ գոյությունը:

Ինչպես նշեցինք վերեւում՝ ոչ, քանի որ նրան չի հետաքրքրում սերը, որից պատնեշ չի կարելի կանգնեցնել: Նրան հետաքրքրում է միայն մի բան, որքան է այդ պատնեշի թեկնածուն դիմացկուն պատնեշ դառնալու համար, որքան է նա սիրում իր անկախությունը եւ իր երկրի անձեռնմխելիությունը, մանավանդ Ռուսաստանի կողմից, թեկուզ այդ նախանձախնդրությունը իր դեմ էլ ուղղված լինի, եւ ինքն էլ մուտք չունենա այդ պատնեշի մեջ:

Դրանով պետք է պարզել մի շարք երեւութական հակասություններ, որոնք Անգլիայի քաղաքականութեան մեջ կատարվում են: Ինչպես օրինակ՝ Մերձավոր Արեւելքում իր կողքին կռվող հրեաներին նա ավելի քիչ կամ նույնքան է գնահատում, որքան իր դեմ կռվող արաբներին, որոնք ձգտում են լիիրավ անկախութեան: Նույնը կատարվում է Իրաքում, Իրանում, Սիրիայում եւ ողջ Մերձավոր Արեւելքում, որտեղ գործում են բոլոր նրանք, ովքեր ձգտում են լիիրավ անկախութեան եւ օտար ուժերի հեռացման՝ այդ թվում նաեւ՝ անգլիական: Դա այդպես է, որովհետեւ այդ բխում է Անգլիայի շահերից, որովհետեւ Անգլիայի նպատակը Մերձավոր Արեւելքին տիրելը է, այլ նա ցանկանում է այդ աշխարհամասը միջնորմի վերածված տեսնել:

Եթե դա այդպես է, ապա Անգլիան ինչ վերաբերմունք կարող է ունենալ հայկական այն պահանջի հանդեպ, որի նպատակը Խորհրդային Հայաստանի սահմանների ընդարձակումն է: - Պարզ է, որ ինչքան էլ ցանկանա մարդկայնորեն ըմբռնել այս ցանկությունը եւ ընդառաջի այս պահանջին, դավաճանած կլինի իր պետական եւ կայսերական շահերին: Նա չի կարող ընթացք տալ նման պահանջներին, քանի որ իր բուն շահը պահանջում է պատվար կանգնեցնել իր եւ Ռուսաստանի միջեւ, իսկ Խորհրդային Հայաստանի սահմանների ընդարձակումը համազոր է պատվարը քանդելուն՝ ինչը վտանգավոր է իր համար: Ուրիշ խնդիր է, եթե Հայաստանի անկախութեան եւ Միացյալ Հայաստանի հարցը առաջադրվեք այն սկզբունքով, որով ընդունվել եւ վավերացվել էր ժամանակին: Դա կնպաստեր, որպեսզի նա խուսափեր Ռուսաստանի հարեւանությունից: Անկախ եւ Միացյալ Հայաստանը իբրեւ Մերձավոր Արեւելքի մի օղակ ավելի մեծ

հնարավորութիւններ ունի իրականութիւն դառնալու, քան խորհրդային Հայաստանի սահմանների ընդարձակումը՝ համեստ սահմաններով՝ թեկուզ միայն Կարս-Արդահանով:

Վերոհիշյալ գրութիւնի պատճառով է, որ բազմիցս բուլղերիկների կողմից «թաղված» Դաշնակցութեան դէմ ներկայումս նոր արշավանք է սկսվել: Բոլոր այն հայերը եւ Դաշնակցական տարրերը, որոնք հավատարիմ են անկախութեան գաղափարին, դիտվում են որպէս անգլիական գործակալներ, թեկուզեւ նրանք ոչ մի առնչութիւն չունեն անգլիացիների հետ: Բոլոր նրանք, ովքեր թեեւ չեն ձգտում անկախութեան, բայց ձգտում են Մերձավոր Արեւելքի ժողովուրդների անկախութեանը, նույնպէս դիտվում են անգլիական գործակալներ: Եվ այդպէս մտածելու իրավունք ունեն բուլղերիկները, որովհետեւ ազգերի անկախութիւնը եւ Մերձավոր Արեւելքի ժողովուրդների համակեցութիւնն ու գորութիւնը նպաստում է միայն Անգլիայի շահերին, իսկ Սովետական շահը փափագում է նրանց քայքայումը կամ միացումը իր կայսրութեան հետ:

Երբեւէ հանդիպե՞լ եք հին ժամանակներից մնացած դրախտանման ամրոցների, որոնք ըրջապատված են խոր անդունդներով, անանցանելի գետերով, մի կողմից ծովով, մյուս կողմից իրար խառնված քարաժայռերով, կամ մահաբեր անապատներով ու մթին ծմակներով: Ո՛չ մի ճանապարհ, ո՛չ մի քաղաքակրթութիւն: Երջապատը լցված է վայրի որսով ու գայլերի ոհմակներով: Տեղ-տեղ միայն երեւում են քաղաքակրթութեան հետքեր՝ «պեթոն առմեով» (երկաթ-բետոն) կառուցված, որտեղ ցանցեր են լարված զազաններին որսալու ու սաստելու համար: Նման ամրոցներն անմատչելի են կամ դյուրամատչելի չեն: Եվ դա է ամրոցի կառուցման բուն նպատակը: Երջապատի ընդարձակ վայրի բնութիւնը ծառայում է լոկ ամրոցի անմատչելիութեանը:

Պատկերացրե՛ք այդ ամրոցն իբր անգլիական կայսրութեան ճամփաները: Տեղ-տեղ պատահած քաղաքակրթական փոքրիկ կետերի վրա, որտեղ թնդանոթների փողերը կտեսնեք, տնկեք անգլիական ցուցատախտակներով դրոշակներ՝ Լոնդոն, Ջիբրալթար, Մալթա, Կիպրոս, Սուեզ, Ադեն-Հնդկաստան: Իսկ մնացած բոլոր տարածութիւնները համարեք այդ կետերի ցանկապատը՝ Աֆրիկան, նախկին Օսմանյան Կայսրութիւնը, Իրանը, Աֆղանստանը: Վերջիններս ծառայում են իբրեւ ապահովութեան միջոց առաջինների համար:

Եթե վերեւում բերված օրինակը նկատի ունենաք, կտեսնեք, որ ողջ Մերձավոր Արեւելքը Անգլիայի համար միայն մեկ հիմնական նպատակի է ծառայում՝ ապահովել Միջերկրականի իր ճանապարհ-

ները, որոնք տանում են դեպի ասիական, աֆրիկյան իր կալվածքները: Մնացածները կարեւոր չեն նրա համար: Դրանով որոշվում է մի կողմից Անգլիայի բռնած դիրքը եւ վերաբերմունքը Մերձավոր Արեւելքի հանդեպ, իսկ մյուս կողմից Մերձավոր Արեւելքի բռնելիք դիրքը Անգլիայի հանդեպ:

- Նրանք, ովքեր անգլիական կողմնորոշում ունեն եւ ուզում են, որ Անգլիան իբրեւ տիրապետող իշխի Մերձավոր Արեւելքում, այդպիսիք չարաչար սխալվում են, որովհետեւ Անգլիայի հիմնական նպատակները մեջ չի մտնում Մերձավոր Արեւելքին տիրելը, բացի գինվորական մի շարք կետերից: Նրա միակ նպատակն է գրավել, որ ուրիշները չգրավեն:

- Նրանք, ովքեր անգլիական կողմնորոշում ունեն եւ ուզում են անգլիական մշակույթը, լեզուն, կրթութունը մտցնել Մերձավոր Արեւելք, այդպիսիները չարաչար սխալվում են: Անգլիան բնավ չհագրագրված չէ դրանով, եւ հազվադեպ է պատահում, որ նա գոհաբերի կամ էլ ջանք թափի այդ ուղղությամբ: Այդ պատճառով է, որ նրա իշխանության տակ գտնվող Մերձավոր Արեւելքի երկրներում անգլերեն լեզուն, մշակույթը, դպրոցը ավելի ցածր մակարդակի վրա են, քան Ֆրանսիականը, գերմանականը, իտալականը, ամերիկյանը, նույնիսկ հունականը: Անգլիական մշակույթը քրմական է, անմատչելի լայն զանգվածներին, մատչելի միայն մի քանի տասնյակ դեկավարների համար:

- Նրանք, ովքեր անգլիական կողմնորոշում ունեն եւ սպասում են, որ այդ միջոցով պիտի կարողանան Մերձավոր Արեւելքի ճարտարվեստը, տնտեսութունը, ճանապարհային ցանցը զարգացնել, ժողովրդին ճորտութունից փրկել, մոռանում են, որ Մերձավոր Արեւելքը ընդամենը ցանկապատ է Անգլիայի համար ու քանի այն վայրի, քառսի ու հետամնացության մեջ մնա, այնքան ավելի անմատչելի կլինի եւ նվազ հրապուրիչ խայծ՝ իր մրցակիցների համար: Դրա համար է, որ անգլիական բոլոր ձեռնարկները ավելի քիչ արժեք են իրենցից ներկայացնում, քան նույնիսկ փոքրիկ Բելգիայինը:

- Նրանք, ովքեր անգլիական կողմնորոշում ունեն չարաչար սխալվում են, եթե սպասում են, որ Անգլիայի վարչական կարգը, դեմոկրատիզմը, ազատութունը, արդարութունը, որոնցով օժտված է Անգլիան, պիտի կիրառվի նաեւ կիսակիրթ Մերձավոր Արեւելքում: Այդ առաքինությունները արտահանման նյութ չեն: Անգլիան Մերձավոր Արեւելքի ներքին գործերին չի խառնվում: Դա Մերձավոր Արեւելքի ներքին ինդերն է, ու թեոկրատիկ, բռնակալ, միապետական, ավատատիրական, հանրապետական, ֆաշիստական իշխանությունները

խառնիխուռն իրար են հաջորդում, որտեղ մարդը ավելի նվազ արժեքավոր է, քան գրաստը, կամ այլականությունն ավելի գորեղ է, քան օրենքը: Այս բոլորը չի հակասում, այլ ընդհակառակը, նպաստում է Անգլիայի հիմնական շահին: Այսինքն՝ Մերձավոր Արեւելքի քառասյին վիճակը ձեռնտու է Անգլիային, քանի որ այն ավելի դժվարանցանելի է դառնում:

- Նրանք, ովքեր անգլիական կողմնորոշում ունեն եւ հույս ունեն նրա միջոցով ընկերային հեղաշրջում իրականացնել, եւ մարդը մարդուն հավասար դարձնել, մանավանդ նկատի ունենալով, որ Անգլիայում ընկերվարականներն են առաջին պլանում, չպետք է մոռանան, որ ընկերվարությունն էլ արտահանման նյութ չէ ընկերվար Անգլիայի համար: Այդ կազդուրիչ ուժը կարող է քնած բազմություններին արթնացնել, կարող է մի հսկա ուժ դառնալ՝ վտանգելով կայսերական ուղիները:

Այսպիսով՝ Անգլիայի երազանքն է, որ այն տարածվի բոլորի վրա, բացի Մերձավոր Արեւելքից, որպեսզի այն մնա իր ճանապարհների համար, որպես ցանկապատ:

Բայց նրանք, ովքեր անգլիական կողմնորոշում ունեն եւ ջանում են իրենց միջոցով, իրենց համար կամ իրենց պատկանող ժողովուրդի համար անկախություն ձեռք բերել, եւ այդպիսիները ունեն բավարար ուժ ու կարող են Մերձավոր Արեւելքում շոշափելի խոչընդոտ հանդիսանալ Անգլիայի մրցակից ուժերի դիմաց պատենչ դառնալով, այդպիսիներն են, որ վայելում են Անգլիայի բացարձակ օտանդակությունն ու ուշադրությունը: Այդպիսիք քանի ուժեղ են ու նախանձախնդիր իրենց անկախությանը, քանի օտարամերժ են, այնքան հարգի են, իսկ երբ թուլանան եւ ընկնեն՝ Անգլիան նրանց ոտքի չի հանի, այլ կփոխարինի նոր, թարմ ուժով: Երբ նրանք սայթաքեն եւ թեքվեն իր մրցակիցների կողմը, նրանք կտապալվեն իբրեւ հայրենիքի դավաճաններ: Երբ նրանք այնքան հզորանան, որ իրենց ուժերով իսկ սպառնալիք դառնան Անգլիայի համար իր ճանապարհների, նրանք կսաստվեն եւ հավասարակշռության դիրքի կբերվեն:

Ահա այս կետերով կարելի է ամփոփել անգլիական կողմնորոշումը դեպի Մերձավոր Արեւելք, եւ սա նկատի ունենալով այդ սահմանների մեջ էլ համապատասխանաբար պիտի որոշվի Մերձավոր Արեւելքի անգլիական կողմնորոշումը:

Այս փոխադարձ կողմնորոշումների պատճառով Մերձավոր Արեւելքում ստեղծվել են բազմաթիվ մեծ եւ փոքր պետություններ, որոնց վրա թեեւ Անգլիայի աչքը կա, բայց ինքը բացակա է: Բայց սխալ է ասել թե նրանք անգլիական հողեր կամ գաղութներ են: Այդ

տարածքներն են հարավից հյուսիս՝ Եմենը, Օման-Հիջազ-Սաուդիան, Եգիպտոսը, Իրաքը, Անդրհորդանանը, Լիբանանը, Սիրիան: Այդ շարքի մեջ պետք է մտցնել Աֆղանստանը, Իրանը եւ Հունաստանը եւ պետք է մոռանալ նաեւ Թուրքիան, քանի վերջինս հակված է դեպի Անգլիան: Այս Միջին Ասիայի շղթան, որն Անգլիայի համար ապահովության գոտի է, դեռ չի հասել իր կատարելությանը: Նրա ամրացման համար տակավին պետք է Սուդանի, Հադսմուտի, Քովեյթի, Պաղեստինի, Սանջակի, Կիլիկիայի, Դարդանեյի, Քրդստանի, Հայաստանի եւ Իրանի մասերի հարցը շաղկապել, որպեսզի Մերձավոր Արեւելքում իր ապահովության գոտին անվտանգ դառնա:

Այստեղից պարզ է դառնում դեպի անգլիական կողմորոշում հայերի, քրդերի եւ մի շարք ժողովուրդների բռնելիք դիրքը, այն ժողովուրդների, որոնք խարխափում են եւ մանկամտորեն՝ կողմնորոշումների միջոցով, փնտրում են մարդասիրություն, որդրամություն, արդարություն եւ այլն:

Բարոյական այս առաքինությունները գոյություն չունեն ինչպես չարաչահ առեւտրի, այնպես էլ քաղաքականության մեջ: Այս եւ այն կողմնորոշումներին հետամուտ լինելու փոխարեն, պետք է առանց այլեւայլությունների եւ զգացական պատճառաբանությունների, իրենք իրենց պատասխանեն հետեւյալ հարցումներին.

Ա. Իրենց հայրենիքները Մերձավոր Արեւելքում օղակնե՞ր են թե ոչ, եւ մասնավորապես, Հայաստան - Քրդստանը ամբողջ Մերձավոր Արեւելքի ռազմական բանալի՞ն է, թե ոչ: Եթե այո, այդ պարագայում այդ աշխարհագրական կարեւորությունը ոչ մի ուժ չի կարող փոփոխության ենթարկել:

Բ. Եթե այդ բանալիները ցանկանան բաժանվել Մերձավոր Արեւելքից եւ միանալ Ռուսաստանին, այդ քայլը ի՞նչ անդրադարձ կունենա Մերձավոր Արեւելքի ժողովուրդների եւ Անգլիայի կողմից, որը Մերձավոր Արեւելքի ամբողջականության եւ անկախության շղթայի մեջ որոնում է իր շահը: Հասկանալի է, որ այդ պարագայում ողջ Մերձավոր Արեւելքը թշնամի է ճանաչելու Հայաստանը եւ Քրդստանը եւ այդ թշնամությանը թիկունք պիտի կանգնի Անգլիան: Եւ եթե Ռուսաստանը թիկունք կանգնի Հայաստանին ու Քրդստանին՝ պատերազմը անխուսափելի կդառնա, ինչը կորստաբեր է այս ժողովուրդների համար:

Գ. Եթե այդ բանալիները ցանկանան Անգլիայի գրպանը մտնել՝ ինչ կլինի դրա հետեւանքը:

Նախ անգլիացիները նման փշոտ բանալիներ չեն ցանկանա ունենալ իրենց գրպանում, երկրորդ՝ անգլիական բանակները չեն շարժվի

իրենց տեղից հանուճ սիրո կամ այլ հաշիվները, իսկ եթե շարժվեն էլ, իրենք պատճառ կդառնան ռուս-անգլիական բախումները, որից խուսափելը բոլորի համար շահեկան է: Ուրեմն անգլիական կողմնորոշումից բան դուրս չի գա: Բացի գրգռվածություն առաջացնելուց, այն ոչ մի դրական արժեք չունի:

Դ. Մնում է միայն քիչ վտանգավոր, պարզ եւ արդար մի ելք:

Չորոնեւ ո՛չ ռուսական, ո՛չ անգլիական միջամտութիւններ, իրեն զգալ Մերձավոր Արեւելքի անհրաժեշտ մի կռիւն, հավատալ միմիայն սեփական կարողութիւններին ու հետամուտ լինել նպատակների իրագործմանը: Հաստատուն մնալ 50 տարվա ընթացքում ձեռք բերած միջազգային դիրքերի վրա եւ պահանջատեղ դառնալ Սեւրի դաշնագրի հիմունքներով Անկախ Հայաստանի եւ Քրդստանի ստեղծմանը եւ ազգերի ինքնորոշման սկզբունքի կիրառմանը, ինչպէս բոլորի, այնպէս էլ հայերի ու քրդերի համար: Այս ամենից գոհ կմնա Մերձավոր Արեւելքը: Դժգոհելու հիմք չի ունենա Անգլիան: Բարոյական հիմք չի ունենա դժգոհելու նաեւ Ռուսաստանը: Դժգոհ կմնա միայն Թուրքիան, որի դեմ եղած պայքարը պետք է շարունակել այնքան, մինչեւ նա գիջի՝ ի ուրախութիւն եւ հանգստութիւն Մերձավոր Արեւելքի:

ԱՄԵՐԻԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ

Մենք տեսանք, որ Անգլիայի հիմնական շահը մեկն է՝ Մերձավոր Արեւելքի անձեռնմխելիութիւնը, իսկ մնացածները՝ մշակութային, տնտեսական, ընկերային, ներքին քաղաքական, նույնիսկ առեւտրական եւ նյութական այլ տվյալներ, երկրորդական են: Ամերիկյան շահագրգռութիւնը բոլորովին այլ պատճառներ ունի, որոնք եթե ուզում եք իմանալ՝ արհեստական են եւ ոչ թե կենսական, ժամանակավոր են եւ ոչ թե տեւական:

Նրա հետաքրքրութեան առաջին պատճառն այն է, որ նախորդ եւ ներկա համաշխարհային պատերազմներին մասնակցեց ակամա եւ այդ երկու պատերազմների նպատակի ծանրութեան կենտրոնը Մերձավոր Արեւելքն էր (որը դեռ հեռու է իր լուծումը գտնելուց), որը սպառնում է ռուս-անգլիական բախման պատճառ դառնալ, որի դեպքում Ամերիկան անտարբեր չի կարող մնալ:

Երկրորդ պատճառը ավելի շատ անգլիական ցանկութիւններին ընդառաջելն է, ինչպէս նախորդ պատերազմի ժամանակ, երբ նա տրամադրված էր ստանալու Հայաստանի եւ Քրդստանի մանդատը, բայց չհաջողեց՝ նախագահ Վիլսոնի՝ մի քանի քվե պակաս ստանալու

հետեւանքով: Այսօր էլ 1918 թվականի նման Ամերիկան խիստ մեծ շահագրգռություն է ցույց տալիս արաբական, իրանական ու թուրքական երկրներում, այն աստիճանի, որ Թուրքիայի եւ Մերձավոր Արեւելքի անխաթար մնալը եւ նրա «կազմակերպումն ու զարգացումը», ըստ նախագահ Տրումենի հայտարարության, դառնում է իր համար նպատակ: Այս շահագրգռության իմաստը պարզ է: Եթե մի կողմից Անգլիան Ռուսաստանի դեմ իրեն մենակ չզգալու համար Ամերիկային առաջ է քշում, որպեսզի Մերձավոր Արեւելքը իբրեւ պատնեշ կայուն մնա Ռուսաստանի դեմ, մյուս կողմից Ամերիկան շահագրգռված է այդ պատնեշով, որովհետեւ եթե այն փլվի, անգլո-ռուսական բախումը անխուսափելի կդառնա, եւ այդ պարագայում Ամերիկան չի կարող դիտողի դերում մնալ:

Ամերիկայի հետաքրքրության երրորդ պատճառը տնտեսական, առեւտրական, հանքային եւ մանավանդ նավթի պաշարների հանդեպ ցուցաբերած շահագրգռությունն է:

Եթե Անգլիայի համար այդ շահագրգռությունը իր անբավ հարստության կողքին երկրորդ պլանի վրա է, ապա Ամերիկայի համար, իբրեւ հում նավթի շտեմարան, ընդհակառակը, անբավ սպառումների պատճառով Մերձավոր Արեւելքի բնական հարստությունները առաջին հետաքրքրության առարկա են դառնում: Անգլիան, որ ամենուրեք խիստ ժլատ է եւ վեներեւելյալում, Մեքսիկայում եւ այլուր պայքարում է Ամերիկայի դեմ մի քանի տակառ նավթի համար, Մերձավոր Արեւելքում խիստ առատաձեռն է նրա հանդեպ: Անգլիան իր հսկողության տակ եղած շրջանների նավթի եւ այլ օգտակար հանածոների մշակված թե անմշակ հարստություններից բաժին է հանում Ամերիկային՝ սկսած Սաուդյան Արաբիայից մինչեւ Իրաք, Իրան, Սիրիա եւ Թուրքիա, միայն թե նա համն առնի ու հաստատվի Մերձավոր Արեւելքում, ինչն էլ անում է իր իսկ ապահովության պահանջներից ելնելով: Կարծես թե այդ ապահովությունը ձեռք բերելու համար է, որ նա պատրաստակամություն է դրսեւորում Մերձավոր Արեւելքում իր քաղաքական, տնտեսական եւ այլ իրավունքները Ամերիկային փոխանցելու՝ Պաղեստինի մանդատից սկսած մինչեւ Փրանսիացիներից խլված Սիրիական նավթային տարածքները:

1908 թվականից առաջ էլ Ամերիկան տնտեսական շահից դրդված ձգտում էր Մերձավոր Արեւելքում իր հարմար տեղը գրավել: Բայց Չեստերների ծրագրերը, արտաքին եւ ներքին քաղաքական պատճառներով պայմանավորված, հենց սկզբնավորման փուլում ձախողվեցին: Այս անգամ Տրումենի հայտարարությունները որքանով

կիրականանան, ոչ ոք չի կարող երաշխավորել: Դա կախված է նախ Ամերիկայի փոփոխական կոնգրեսից եւ ապա միայն մյուսներին:

«Առանց ջուրը տեսնելու՝ բոբկանալու» ցանկությամբ, պետք է նկատել, որ Ամերիկայի այս հետաքրքրությունը Մերձավոր Արեւելքի ճակատագրով կարող է նոր հեղաշրջումների եւ նոր դասավորումների պատճառ դառնալ: Առաջին հերթին՝ Ռուսաստանի աշխարհածավալ քաղաքական արշավը կսահմանափակվի այս հսկա ուժի առջեւ:

Երկրորդ. Բրիտանական կայսրությունն էլ տեսնելով, որ իր ճանապարհները վտանգից ազատվել են, ավելի բնականոն հարաբերություններ կհաստատի Ռուսաստանի հետ:

Երրորդ. ինքը՝ Ամերիկան, շահագրգռված լինելով Մերձավոր Արեւելքով, ոչ միայն իրեւէ պահակ խաղաղության՝ Ռուսաստանի եւ Անգլիայի միջեւ, այլ նաեւ կենսական նյութական հաշիվներով առաջնորդվելով, չի կարող ո՛չ Անգլիայի եւ ո՛չ էլ Ռուսաստանի նման Մերձավոր Արեւելքի ներքաղաքական կյանքի նկատմամբ անտարբեր մնալ: Այն պետք է «վերակազմի Մերձավոր Արեւելքը» հիմքից՝ ոտքից մինչեւ գլուխ, որովհետեւ նրա նյութական շահագրգռությունը թելադրում է, որ ամենից առաջ հաղորդակցությունը կատարելագործվի եւ մշակվելիք նյութերը արժեւորվեն: Հաղորդակցությունը կատարելագործելու համար անհրաժեշտ է, որ ներկա քարացած պետական սահմանները դառնան թափանցիկ եւ ճանապարհների, մաքսի, հաղորդակցության, արտահանման, ներմուծման, ֆինանսների ու այլ համագործակցությամբ պետական միավորները միանան: Այդ համագործակցությունը հնարավոր կդառնա, երբ ամեն մի ազգ, ամեն մի դավանանք իր ազատությունը, խաղաղությունը եւ ընդհանրական գիտակցությունն ունենա: Նյութի ու շահագործման զարգացումը պահանջում է խաղաղություն, իսկ եթե այն չկա՝ շահագործումը դառնում է թալան: Այս հեռանկարները կարող են երջանկության փարոսներ լինել Մերձավոր Արեւելքի բոլոր ազգերի համար, որտեղ բոլոր ժողովուրդները անխտիր պիտի կարողանան գտնել իրենց շահի ու ազատության բաժինը, եթե «ուրբաթը շաբաթից» առաջ չգա: Ժամանակին Հայաստանը, Քրդստանը ամերիկյան մանդատի հետեւից վազեցին, նույնիսկ Թուրքիան իր վարչապետ Ռաուֆ Բեյով եւ Մուստաֆա Բեմալով ցանկանում էր դեպի այդ փարոսը ուղղել իր ժողովուրդների նավակները: Ամերիկան, իր նախագահ Վիլսոնով, Հայաստանի սահմաններն էր գծում, բայց նա մեռավ ու իր մեռնելուց առաջ տեսավ, որ իր ծրագրերը Կոնգրեսի կողմից քամուն տրվեցին:

Այս հիշեցումներն անհրաժեշտ են մտապահելու համար, որ քամու բերածը՝ քամին էլ տանում է: Բայց կարող է նաեւ հակառակը

պատահել՝ քամու տարածը նույն քամին էլ ետ կբերի: Այսօր Մերձավոր Արեւելքը «քամու տարածը, քամին ետ բերելու ընթացքի մեջ է», ինչը կարեւոր հանգամանք է, որը պետք է անտեսել:

Մերձավոր Արեւելքի ժողովուրդները, իբրեւ քաղաքական ազդակ, մինչ այսօր ամերիկյան կողմնորոշում չեն ունեցել, բացառութեամբ 1918-23 թվականների, երբ առաջին անգամ Հայաստանը գերադասեց ամերիկյան մանդատը, որն ընդունվեց բոլոր ազգերի կողմից: Երկրորդը Թուրքիան էր, որ 1919-21 թվականներին ՌուսՖ բեյի միջոցով աշխատեց Ամերիկային քաղաքականապես շահագրգռել, բայց այդ փորձն էլ ձախողվեց Մոնրոյի վարդապետութեան հետեւանքով: Դրանից հետո գործնականորեն ոչ մի ժողովուրդ չի փորձել ամերիկյան քաղաքական կողմնորոշում ունենալ:

Չնայած որ այդ «հեռավոր ուժի» հանդեպ Մերձավոր Արեւելքում ավելի նվազ քաղաքական հետաքրքրություն կա, բայց այդ «հեռավոր» երկիրը մեծ շահագրգռություն է ցույց տալիս դեպի Մերձավոր Արեւելքը: Կա մի ուժեղ հոսանք, որ անկախ Մերձավոր Արեւելքի դրական կամ բացասական վերաբերմունքից, որդեգրել է հատուկ կողմնորոշում դեպի Մերձավոր Արեւելքը:

Ամերիկայի շահագրգռությունը հիմնովին տարբերվում է թե՛ ռուսականից, թե՛ անգլիականից եւ թե՛ նրանցից առաջ եղած գերմանականից կամ ֆրանսիականից: Նրա վարքագծի տարբերություններն են.

1. Նախկին Գերմանիայի նման չի ձգտում պանիսլամիզմը, պանթուրանիզմը գործիք դարձնելով, եւ Մերձավոր Արեւելքը ռազմական թատերաբեմի վերածելով՝ հարձակողական միտումներ ունենալ մի կողմից Անգլիային, մյուս կողմից Ռուսաստանին հարվածելու համար: Գերմանիան, որպես այդպիսին, ասպարեզից հեռացել է:

2. Նախկին Ֆրանսիայի նման նա մտադիր չէ նստել Սիրիայում եւ Լիբանանում եւ այնտեղից հսկել Հնդկաչինի, Մադագասկարի եւ մնացած ճանապարհները, ոչ էլ Մերձավոր Արեւելքը դիտել որպես գաղութ կամ մրցակցութեան կետ՝ այլ շահագրգիռ կողմերի դեմ: Ֆրանսիացիների հեռանալու պատճառով այսօր Մերձավոր Արեւելքում այլեւս այդ վիճակը չկա:

3. Նախկին եւ ներկա Ռուսաստանի նման նա մտահոգված չէ, որ Մերձավոր Արեւելքով կարող է հարավից պաշարման ենթարկվել: Չունի նաեւ Ռուսաստանի այն նպատակը, որ Մերձավոր Արեւելքը հարձակողական գորեղ կռվանի վերածելով եւ նրան տիրելով մեջտեղից հանի Անգլիային՝ ապահովելով իր մենատիրութունը: Այս

դրույթյունը այժմեական է:

4.Նախկին եւ ներկայիս Անգլիայի նման մտահոգված չէ նախանձախնդրորեն վերահսկել Մերձավոր Արեւելքը, որպեսզի այն կռվան չդառնա իր մրցակիցների՝ մասնավորապես Ռուսաստանի համար, եւ չվտանգվեն կայսերական ճանապարհները:

Զերծ այդ մտահոգույթյուններից՝ Ամերիկան միմիայն մեկ մտահոգույթյուն ու մեկ շահ ունի՝ օգտագործել Մերձավոր Արեւելքի բոլոր տնտեսական հնարավորույթյունները:

Այս նպատակը ուրիշների համար երկրորդական է եւ զոհաբերվում է հիմնական այլ նպատակների: Մինչդեռ Ամերիկայի համար այդ է միակն ու հականը, ինչին զոհաբերվում են քաղաքական ու ռազմական տեսակետները: Այս նոր երեւույթը պիտի նորույթյուններ բերեր Մերձավոր Արեւելքին, որոնք էլ նվազագույն չարիքով հետեւյալ առավելագույն օգուտը կարող են բերել Մերձավոր Արեւելքին:

Ընդարձակ երկրամասերի տնտեսական կարելիությունները օգտագործելու համար անհրաժեշտ է նախ բարձրացնել բնակիչների զարգացման մակարդակը, ունենալ մասնագետներ եւ ղեկավարներ: Դպրոցը առաջին գեներ է դրան հասնելու համար, եւ Ամերիկան է, որ հսկայական գումարներ ծախսելով, այսօր հասել է մի աստիճանի, որ Մերձավոր Արեւելքի մտավորականության մեծ մասը, որը մինչ այդ ստանում էր անմրցելի Ֆրանսիական դաստիարակություն, ամերիկյան դաստիարակություն ունի: Տասնյակ հազարավոր տեղացիներ ամեն տարի ավարտելով ամերիկյան համալսարանները, Ֆորդի մեքենաների նման, ծածկում են ողջ երկիրը բժիշկներով, ուսուցիչներով, այլ մասնագետներով՝ էլ ավելի մեծ փայլ ավելացնելով ամերիկյան հմայքին եւ ծրագրերին:

Ֆրանսիան ու կաթոլիկ եկեղեցին էին, որ հիմք դրեցին այն սկզբունքներին, որ աշխարհներ գրավելու եւ հիմնավորապես հաստատվելու համար նախ պետք է նվաճել այդ աշխարհների հոգին: Ամերիկան աշակերտեց նրանց, եւ աշակերտն արդեն գերազանցել է իր վարպետին: Բողոքական միսիոներությունը իր անհաշիվ դոլարներով նվաճումների է հասել եւ չի կարելի ասել, թե նա իր հոգեւոր, բարեգործական եւ այլ ձեռնարկներով ավելի նվազ արդյունքների է հասել տնտեսական եւ քաղաքական ասպարեզներում: Ոսկին առանց դրամապանակի գրնգուն է եւ խիստ նախանձ գրգռող: Դրամապանակը անհրաժեշտ է նրա քանակն ու որակը ծածկելու համար: Միսիոներությունները դրամապանակի դեր են կատարում:

Ինչ որ երկրի նյութական կարողություններից օգտվելու ամենակարեւոր նախապայմանը հաղորդակցությունն է: Սրանից էլ

սկսեց Ամերիկան եւ ջանաց Չեսթրների միջոցով մեռած ճանապարհներին հարուստ լինելու տալու մենաշնորհը իր ձեռքը վերցնել: Ամերիկան ցանկանում էր ամբողջ Մերձավոր Արեւելքը ճանապարհների ցանցով պատել, բայց այդ ծրագրերը հողս ցնդեցին գերմանաֆրանկոֆոնային պաշտպանական ընդդիմութեան պատճառով: Այժմ, երբ գերմանաֆրանսիական ընդդիմութեանը չկա, երբ Անգլիան կամա թե ակամա ցանկանում է Մերձավոր Արեւելքում տեսնել Ամերիկայի ներկայութիւնը, սա արդոք նշան չի, որ Մերձավոր Արեւելքի հաղորդակցութեանը պիտի բարգաւաճի Ամերիկայի շնորհիվ, որից հետո միայն հնարավոր կդառնա տնտեսական թափանցումը:

Ամերիկայի հիմնական նպատակը նախքան է եւ մյուս օգտակար հանածոները, որոնք անմշակ ցրված են Մերձավոր Արեւելքում: Նրանցից միայն չնչին մասն է մշակվում իրար մրցակից ուժերի կողմից: Այդ մրցակիցների շարքի մեջ է մտել նաեւ Ամերիկան եւ արդեն նրանց հավասար իրավունքներ է ձեռք բերել: Ամերիկային, որին Պարսկաստանից ծարավ հեռացրին, այդ ռազմական ոգելից խմիչքից նախկինում ժլատորեն մի կում անգամ թույլ չէին տալիս անել: Այսօր արդեն Անգլիան իր ձեռքի տակ եղած պահեստների (Մաուդիայում լինի, թե Սիրիայում) դռներն է բացում նրա առջեւ: Ամերիկայի առջեւ տնտեսական նոր եւ լայն ասպարեզներ են բացվում 4-5 միլիոն քառ. կիլոմետր տարածք ունեցող Մերձավոր Արեւելքի կուսական երկրներում: Ամերիկայի ներկայիս նախագահը, ըստ իր հայտարարութեան, ցանկանում է բացել Մերձավոր Արեւելքի ճանապարհները, նրա տնտեսական կարողութեանը օգտագործելի դարձնել, նրա ժողովրդի տնտեսական կարողութեանը մեծացնել, այնտեղ ստեղծել կարգ ու կանոն: Բայց այդ բոլորի իրագործման համար պետք է ներկա լինել Մերձավոր Արեւելքում, պետք է գալ եւ մտնել երկու մրցակից եւ թշնամի՝ ռուսական եւ անգլիական կայսրութեանը միջեւ, պետք է գալ ու հիմքից վերակազմել Մերձավոր Արեւելքը, որպեսզի այնտեղ խաղաղութիւնը հաստատվի, քանի որ առանց խաղաղութեան անհնար է կյանքի կոչել այդ բոլոր ծրագրերը: Կհամարձակվի՞ Ամերիկան այդ քայլն անել եւ մտնել սալի ու մուրճի միջեւ: Եթե այո, այդ պարագայում արժե ամերիկյան կողմնորոշում ունենալ, եթե ոչ՝ դա անօգուտ ժամավաճառութիւն է:

Անդրադառնալով Հայաստանին, Քրդստանին եւ նրանց հարակից շրջաններին, պետք է նկատել, որ պետք է նրանք Ամերիկայի համար դառնան նպատակակետ, եթե նա ցանկանում է Մերձավոր Արեւելքը տնտեսական օգտագործման առարկա դարձնել: Որովհետեւ ինչպես պարզեցինք Հայաստանն է Մերձավոր Արեւելքի ճանապարհների

հանգույցը, նրա վրա իշխող ամբողջը եւ Ամերիկայի որոնած նավթի եւ այլ հանքերի շտեմարանը կամ շտեմարանների ակունքները վերահսկողը:

Հայաստանին սահմանակից Քրդստանը, որը չորս երկրների մեջ է բաժանված (Թուրքիա, Իրաք, Իրան, Սիրիա), տարածվում է մշակվող եւ մշակվելիք նավթահորերի վրա՝ Մերձավոր Արեւելքի գլխավոր ճանապարհների երկայնքով ու լայնքով: Ուրեմն, եթե Ամերիկան իրոք տնտեսական շահագրգռություն ունի, նրա լրջության աստիճանը կարելի է չափել նրանով, թե նա ինչ նախանձախնդրությամբ կմոտենա հայկական, քրդական ազատագրական պայքարին: Եթե ճիշտ է, որ ճարտարվեստի, առեւտրի, հանքերի շահագործման համար անհրաժեշտ է բնականոն իրավիճակ, ապա Հայաստանը, Քրդստանը այսօրվա վիճակով նման են վառոդի տակառների, որտեղ անհնարին է, նամանավանդ, նավթ վերամշակել:

Ահա սա է ամերիկյան կողմնորոշման արժեքը, որից պետք է եզրահանգներ, որ եթե փոքր ազգերի համար անհրաժեշտ է կողմնորոշում ունենալ, միակ նախընտրելին ամերիկյանն է: Բայց, ըստ իս, դա էլ անհրաժեշտ չէ, որովհետեւ եթե Ամերիկյան Ժողովը որոշի հետամուտ լինել Մերձավոր Արեւելքի հարստությունները օգտագործելուն, այդ պարագայում ինքը՝ Ամերիկյան կունենա հայկական ու քրդական Մերձավորարեւելյան կողմնորոշում: Մնում է, որ նրանք հասկանան դրա արժեքը՝ չարիքների նվազագույնը համարելով, եւ իրենց շահերի ապահովությունը ձեռք բերելու գնով ընդառաջեն հայության ձգտումներին:

ԻՐԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՍԻԱՅԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՆԱԼԻ

Հայկական Հարցի լուծման շուրջ եզրակացութիւններ անելուց առաջ անհրաժեշտ ենք գտնում մի քանի էջով անդրադառնալ Իրանի կարեւորութեանը, քանի որ այն գտնվում է էրզրումի ճանապարհի շարունակութեան վրա: Էրզրումը մի կողմից կապված է Պոլսի, իսկ մյուս կողմից Թեհրանի հետ: Էրզրումը վերջակետ չէ, այն լոկ միջակետ է՝ Պոլսի ու Թեհրանի միջեւ: Իրանը ընկած է Հայաստանից հետո՝ Ասիայի դարպասների մոտ: Իրանի հետ համագործակցութեամբ է, որ էրզրումը կդառնա մի հանգույց՝ բացելով Եվրոպայի ու Ասիայի հաղորդակցութեանը ծառայող կարճ եւ հիմնական ճանապարհը:

Հայաստանի ճամփաների նկարագրութեան ժամանակ տեսանք, թե Եվրոպայի ծովային եւ ցամաքային ուղիները խտանալով Պոլսում, ինչպէս են ուղղվում դեպի էրզրում: Միջերկրական ու Սեւ ծովերի ծովային ճանապարհներն էլ հասնելով Տրապիզոն կամ Բաթում եւ կամ Ալեքսանդրեթ ու Այաս, դեպի արեւելք ընթացքը շարունակելու համար ուզեն թե չուզեն, կարճ ճանապարհով նորից պիտի անցնեն էրզրումով, կամ նրա փեշերով: Արեւմուտքի այս խտացման կետից ճանապարհը ուղղվում է դեպի Արարատի փեշերը եւ պատռելով Զագուշը մտնում է Իրանի երկրորդ մայրաքաղաքը՝ Թավրիզ: Ուրեմն Արեւմուտքի համար Թավրիզը հանդիսանում է Հայաստանից հետո երկրորդ կայանը:

Մյուս կողմից արեւելքից՝ Արալի եւ Կասպից ծովերի, Պարսից ծոցի, Փենջաբի ու Հնդկական օվկիանոսի ջրբաժանների, Ամու-Դարիայի ու Սիր-Դարիայի ջրբաժանների բոլոր ճանապարհները գալիս են խտանալու Թեհրանի շուրջը: Այդպիսով Թեհրանը Ասիայի համար ներկայացնում է այն կարեւորութիւնը, ինչ որ արեւմուտքում Պոլիսը՝ Եվրոպայի համար: Եթե Եվրոպայի համար արժանի կայսրանիստ մայրաքաղաք էր Պոլիսը, Թեհրանն էլ իր դիրքով արժանի է Ասիայի մայրաքաղաքը կոչվելու: Եվ այդպէս էլ կա: Այս երկու կետերը միշտ էլ եղել են իրար հետ մրցող, հավասարազոր կենտրոններ: Նույնպէս էրզրումն ու Թավրիզը, որոնք թեեւ երկրորդ դժի վրա են, մեկը՝ Պոլսից, մյուսը՝ Թեհրանից հետո, բայց եւ այնպէս կենտրոններ են եղել մեկը Հայաստանի, մյուսը՝ Ատրպատականի համար:

Թեհրանը Արեւելքի ճանապարհների խտացման կենտրոն է եւ հիմնականում այդ պատճառով էր, որ նախկին Իրանը տիեզերական

կայսրություն ստեղծելու հնարավորություն ուներ: Բայց այժմ այն Պոլսի նման տերեւաթափ է եղել: Կասպից եւ Արալյան լճերի, Սիր-Դարիա եւ Ամու-Դարիա գետերի ջրբաժանները, որ Աքեմենյան, Պարթեւական, Սասանյան իշխանությունների շրջանում մտնում էին Իրանի սահմանների մեջ, այժմ գտնվում են Ռուսաստանի սահմանների մեջ: Այդ երկրների ճանապարհները, որոնք տանում էին Թեհ-րանից մինչեւ Չինական պարիսպները՝ պարսից ազդեցության տակ եղած երկրներով, այժմ կարելի է շարունակել միայն ռուսական իշխանությունների թուլությամբ: Այդ ճանապարհները Ռուսաստանի կողմից կատարելագործված, արդիականացված են եւ լայնքով ու երկայնքով միացված Սիբիրին՝ ռուսական ճանապարհների հետ, որոնք խտանում են Աֆղանստանի ու ներկայիս Իրանի սահմանների վրա:

Ռուսաստանը հաստատվել է Չինգիզ խանի տարածքում՝ Մոնղոլիայում: Հաստատվել է նաեւ Չինգիզ խանի հաջորդներից Լենկ Թեմուրի տարածքում՝ Թուրքեստանում: Նա կանգնել է արդեն Պամիրի ու Աֆղանստանի դռների մոտ՝ մի քանի քայլ հեռու Հնդկաստանի Փենջաբի ջրբաժանից: Կանգնած է Թեհրանի գլխին . մի քանի քայլ առաջ, եւ ամբողջ Իրանը նրա ներքին գավառը կդառնա: Անբնական կլիներ, եթե Ռուսաստանը, որն արդեն արեւելյան մի կայսրություն է դարձել, չմտածեր այդ քայլը անել եւ չձգտեր Չինգիզ խանի, Լենկ Թեմուրի եւ Հուլաղուի ճանապարհներով գնալ Արեւելքից դեպի Արեւմուտք՝ տիրելու Թեհրանը (Ռեյը)՝ Արշակունիների սիրելի վայրերը, Եկբադանը (Համադան)՝ Աքեմենյանների սիրելի կենտրոնը, հասնել Թավրիզ՝ Գագանի (Ղագանխան) ու Աբաղայի սիրած մայրաքաղաքը, եւ այն նվաճումը, որ չկարողացավ անել Պոլսի ու էրզրումի վրայով, իրականացնել արեւելքից՝ Թեհրանի վրայով: Նա ավելի քան ի վիճակի է դա անել, քան իր նախորդ աշխարհակալները. նրանք են Ասիայի ու Եվրոպայի կեսից ավելին: Միջին Ասիան միայն մի պատու է, մի փոքրիկ նախաճաշ նրա հսկա ստամոքսի համար: Այս ախորժակը իմ ցնորքը չէ, այլ Ռուսաստանի, եւ այդ քայլը անելու համար ամեն նախապատրաստություն տեսնված է: Խճուղիները, երկաթուղիները խտանում են դեպի Թեհրան, մյուս կողմից դեպի Հերատ ու Կանդահար: Իրանի ու Թուրանի Անդրկասպյան երկրներում, անկախ ու ազատ սովետական հանրապետությունների անվան տակ, միացյալ ուժ ստեղծելու բարենպաստ հող է նախապատրաստված: Այնտեղ արդեն կան Ղագանխաստանը, Ուզբեկստանը, Տաջիկստանը եւ նրանց առաջապահ՝ Թուրքմենստանը, որի մի կեսը Ռուսաստանին, իսկ մյուս կեսը Իրանին է պատկանում՝ Մաշադ քաղաքով: Միացյալ Թուրքմենստանը

պատրաստի հող է Արեւելյան Իրանը պոկելու համար, որից հետո Թեհրանն արդեն խորտակված կարելի է համարել:

Իրանի ամբողջական անկումը լրիվ դարձնելու համար, նախկին Աղվանից աշխարհը, Շիրվանն ու Շաքին, Բաքուն, այժմ դարձել է Ադրբեջան՝ իբր Խորհրդային Հանրապետութիւն: Այն արեւմուտքից առաջապահ է դեպի Թեհրան սեղմելու համար, ինչպես Թուրքմենստանը՝ Արեւելքից ճնշելու համար: Պատահական չէ, որ նրա անունը Ադրբեջան է, որովհետեւ նրա առաջին նպատակը Իրանի Ատրպատականի գրավումն է, եւ միացյալ Ատրպատական նշանաբանը տեղացի ժողովուրդների համար գրավիչ մի խայծ է, որը կարող է նպաստել ռուս աշխարհակալութեանը:

Իրանի Ատրպատականից հարավ է գտնվում Իրանյան Քրդստանն իր Մուհադաբադ կենտրոնով: Այն եւս անհրաժեշտ է համարվում առաջապահ դարձնել Ադրբեջանի նման: Չէ՞ որ քրդերը բացի Իրանից, որտեղ բնակվում է մոտ մեկ միլիոն քուրդ, տարածված են Իրաքում եւ Թուրքիայում՝ շուրջ երկու միլիոն: Ուրեմն այդ տարրին սիրաշահելը հիշյալ երեք պետութիւնների միացման կետում, մի ուժ է, որը կարող է որպէս ճնշման գործիք ծառայել Իրանի, Իրաքի ու Թուրքիայի վրա:

Իրանի Հյուսիսում գտնվող Քրդստանի, Ատրպատականի, Գիլանի, Մազանդարանի, Թեհրանի ու Մաշաղի շրջանների բոլոր տնտեսական, հաղորդակցութեան, հանքային եւ այլ հարստութիւնների վերահսկողութիւնը վաղուց գտնվում է Ռուսաստանի ձեռքում, որ սրբագրվել էր 1908 թվականի անգլո-ռուսական համաձայնութեամբ, որը ջնջվեց, վերանորոգվեց, նորից ջնջվեց, բայց կարծես այդ բոլորը ժամանակ չահելու եւ չար ժամը հեռացնելու մտքով էր արվում:

Դամոկլյան սուրը Հյուսիսից կախված է Իրանի գլխին, որին ահաբեկված սպասում է ժողովուրդը՝ առանց նրա անկումը տեսնելու: Ավելի ճիշտ Իրանի անցուղարձերը նման են կատվի ու մկան խաղին՝ առանց լափելու հաճույք վայելելու եւ առանց լափելու աղետը տեսնելու: Ահա սրա համար է, որ այս խաղը ավելի դաժան ու ողբերգական է, քան ողբերգութեան իրագործումը: Իբրեւ նմուշ այս ողբերգութեան բավական է վերհիշել 1944-46 թվականների դեպքերը, որը թեեւ երեք տարվա խաղ էր միայն, բայց դաստիարակիչ՝ ռուսական ձգտումները Իրանում, հակազդեցութիւնները դաշնակիցների կողմից եւ տեղական ժողովուրդների անհիմն հույսի եւ հուսախաբուութեան չափերը հասկանալու համար:

Դեռ վերջին պատերզմը չի վերջացել եւ դաշնակիցների հաղթանակը մոտ չէ: Թեհրանի ժողովում Ռուզվելտի, Չեքըրիլի ու Ստալինի միջեւ համաձայնութիւն ձեռք բերվեց: Սրանից ավելի հեղինակավոր

ժողով դեռ տեղի չէր ունեցել, քանի որ Հիշյալ անձիք մարմնացումն էին պատերազմի եւ նրա հաջողութեան:

Այդ ժողովում որոշվում է Իրանի ամբողջականութեան եւ անկախութեան հարցը: Այդ ժողովում որոշում է կայացվում Իրանը ճանաչել պատերազմող, իրենց դաշնակից եւ ի հիշատակ այս իրադարձութեան Ստալինը իր ձեռքով Իրանի շահին թանկագին սուր է նվերում: Սրանից ավելի երջանիկ օր չէր եղել Իրանի Շահի ու ժողովրդի համար: Այն ոչ միայն ազատվել էր Դամոկլյան սրից, այլեւ անկախ եւ ամբողջական պիտի մնա իբրեւ պատերազմող: Այն արդեն երազում էր իր հաղթանակի վարձը ստանալ եւ պարթեւական իր փառքը վերականգնել:

Պատերազմը ավարտված է: Ոմանք Իրանում հույս ունեն վարձատրություն ստանալ իրենց ծառայությունների համար, որ բերել են ի նպաստ հաջողութեան: Վարձատրութեան առաջին քայլը արված է. դաշնակից զորքերը ըստ իրենց խոստումի, քայլ առ քայլ հեռանում են Իրանի սահմաններից եւ կանգնում նրա սահմաններին՝ իբրեւ դիտորդ: Իրանը պարտավորություն ստանձնեց երկիրը մաքրել Ֆաշիստներից՝ մթնոլորտը հստակեցնելու համար: Իրենք գործ չունեն, Իրանը թող ինքը զբաղվի դրանով: Ստեղծվում է անմեղ մի կուսակցություն՝ «Թուղե» դեմոկրատիկ հանրապետական անուսով, նպատակ ունենալով իրագործել ազգերի ինքնորոշումը, նրանց ազատությունը, Իրանի ամբողջականությունը եւ նրա զարգացումը ժողովրդական ճանապարհով եւ այլն, որն ըստ նպատակի ու ծրագրերի համապատասխանում է Իրանի բազմացեղ ազգերի եւ բռնակալութեան տակ ճնշված դասակարգերի պահանջներին: Անառարկելի անմեղ մի կուսակցություն, որի նպատակները, եթե իրականում դրանք լինեին, բոլորի կողմից կարժանանային շնորհավորանքների: «Թուղեի» շարքերը արագորեն խտանում են: Նրա ղեկավարները գալիս են ռուսական Ադրբեջանից եւ առաջին հերթին նպատակ ունեն վերջնականապես արմատախիլ անել Ֆաշիզմը Իրանից: Ֆաշիստ էին համարվում բոլոր նրանք, որոնք կողմնակից էին Իրանի անկախութեանը: Առաջին հերթին բանտարկվեց նախկին վարչապետը՝ հանրապետական Թաբաթաբային (հանրապետական լինելու պատճառով Ռեզա Շահի ահից փախել էր Պաղեստին), որը հանրապետական էր եւ միապետութեան ու բռնապետութեան հակառակորդ: «Թուղեի» երկրորդ քայլն այն էր, որ մեջտեղից վերացրեց բոլոր նրանց, ովքեր դեմ էին Սովետական Ռուսաստանին՝ նրան համարելով տոտալիտար իշխանություն եւ ազատութեան ու խաղաղութեան թշնամի:

Երբ ահաբեկման ու մաքրագործման ճանապարհով քննադատութեան անառն անույն անհատները, եւ ասպարեզը բաց էր ամեն սուտ՝ իրակա- նութեան տեղ ծախելու համար, նա ձեռնակեց երրորդ քայլը՝ «Ազգերի ինքնորոշում, ավատատիրութեան վերացում, հողը գյուղացուն, աշխատավորութեան ազատագրում, բոլոր իմպերիալիստների հեռացում, իշխանութիւնը ժողովրդին, Իրանի ամբողջականութիւն եւ անկախութիւն»։ «Թուրք»-ի նշանաբանները, որոնցով հանդես էին գալիս սովետների եւ նրանց աստվածացած առաջնորդի՝ Ստալինի անունից, նպաստելու էր Թուրքի հեղինակութեան մեծացմանը։ Արդեւն այդ նշանաբանները խոսում էին Իրանի ճնշված ազգերի, դասակարգերի հոգուց։ Այդ նշանաբանների իրագործումով է, որ նա կարող է բուժվել ներքնապես, եւ նրանք, ովքեր կփորձին կասկածի ենթարկել այն, դիտվելու են հակաժողովրդական, հակապետական, հետադիմական։ Այն այնպիսի թափ ստացավ, որի առջեւ իշխանութիւնը անխուսափելիորեն տեղի էր տալու։ Իշխանութիւնը տապալվեց Ատրպատականում եւ Քրդստանում եւ ստեղծվեցին Ատրպատականի եւ Քրդստանի անկախ հանրապետութիւնները, որոնք պահանջում էին, որ Իրանի կենտրոնն էլ տապալվի, իսկ կենտրոնական իշխանութիւնն էլ փոխանցվի Թուրքիին, որն արդեւն մեծ ժողովրդականութիւն էր ձեռք բերել ամբողջ Իրանում եւ մայրաքաղաքում։

1946 թվականն է։ Ատրպատականում՝ Իրանի հարկի տակ, անկախ իշխանութիւն է հաստատվել։ Մուհաբաբում՝ Ադրբեջանին դաշնակից անկախ քրդական իշխանութիւն է ստեղծվել։ Թեհրանում Ղավամ Սուլթանէն է կառավարութեան ղեկավարը, ով միաժամանակ Թուրքի միակ թեկնածուն է։ Ամբողջ Իրանը կարծես Թուրքի ձեռքում է եւ ժողովրդական լայն գանգվածները, բոլոր ճնշված ազգերը, սպասում են իրենց ինքնորոշմանը։ Բոլոր հողազուրկները, բոլոր ճնշվածները սպասում են բարեփոխութիւնների եւ տարված են երջանկութեան երազներով։ Բայց այդ բոլորը երազներ են, իսկ կատարվածները՝ լոկ թատերական ներկայացումներ՝ առանց իրականութեան։

Ատրպատականի Մուհաբաբի ղեկավարները, որոնք դասը առել էին Բաքվի խորհրդաժողովից, ուր հրավիրված էին սովետների կողմից, համոզված էին, որ սովետների միակ նպատակը իրենց երկրներին անկախութիւն տալն է։ Նրանց հետեւող ժողովուրդը, հայրենասի- րական մղումներով եւ Իրանում բարենորոգումներ իրականացնելու հավատով, օրհնելով Ստալինին, զենք վերցրին իրենց ինքնորոշման համար։ Թուրքի մեծամասնութիւնը նույնպէս, միամտորեն ու հավատով, գլուխ բարձրացրեց կենտրոնական իշխանութեան դեմ։

Սակայն նրանք բոլորն էլ հարցի բուն հույսով անտեղյակ էին:

Հարցի հույսով ըմբռնում են միայն սովետների ղեկավարը եւ Անգլիայի ներկայացուցիչը՝ Իրանում: Դա հասկանում է նաեւ Իրանի ղեկավար Ղավամ Սուլթանեն: Սովետների ծրագիրն է.

ա) Թուրքին տալ այնպիսի ծրագիր եւ ուղղվածություն, որն ամբողջ Իրանի սրտով լինի: Քանի որ անհնարին է Իրանը գրավել զենք ու զորքով՝ առանց դաշնակիցների հետ ընդհարվելու, դա անել Թուրքի միջոցով նրան թեւի տակ առնելով:

բ) Երբ առաջին կետը հաջողվի, այդ պարագայում Ատրպատականի, Քրդստանի, Գիլանի, Մազանդարանի, Թուրքմենստանի անկախ հանրապետություններն արդեն առանց վտանգի կձուլվեն Խորհրդային Միության հետ: Մյուս կողմից բոլոր ճանապարհներն իր ձեռքը կանցնեն՝ մինչեւ Բուշեր եւ Հնդկաստան: Ինքը կդառնա թե՛ Իրաքին, թե՛ Թուրքիային թեւաբար, եւ քրդական հարցը մի զենք կդառնա նրանց դեմ: Արդյունքում այս բոլորի պատասխանատուն կդառնա Իրանը՝ իր արյունով ու ջանքով:

գ) Եթե առաջին կետը չհաջողվի, իրեն ոչ մի վտանգ չի սպառնում: Կխորտակվի Թուրքեն եւ իր կառուցած չենքը Ատրպատականի, Քրդստանի եւ այլ հանրապետությունների հետ միասին: Ավելի լավ, որովհետեւ նրանք միամտաբար, թյուրիմացաբար իր հետ էին: Այդքան իմաստուն չեն ո՛չ Իրանը, ո՛չ էլ անգլիացիները, որ կարողանան այդ զենքերը պահել եւ օգտագործել իրենց դեմ: Նրանք պիտի քանդեն, եւ ինքն անմասն լինելով այդ գործում, գոնե նրանց կեսը կմնա այն թյուրիմացության մեջ, որ ինքն ազատարար է, իսկ նրանք բռնակալ ուժ, ինչն էլ զենք է հետագայի համար: Նույնիսկ լքելու պարագայում ունի մեկ կանխիկ շահ. նա կկարողանա հաստատ կերպով իրեն պահել Իրանի հյուսիսի հանքային հարստությունները, որը Իրանը թեւի տակ վերցնելու առաջին նպատակից հետո, նրա երկրորդ նպատակն է:

Սովետների հաշվարկները, ինչպես նախատեսել էին, ճիշտ դուրս եկան: Թուրքեն թեւեւ տիրապետող դարձավ եւ ամբողջ Իրանը նրա տրամադրության տակ ընկավ, բայց այս անգամ գլուխ բարձրացրեց նրա հակառակորդ Անգլիան: Նրա նավատորմը կենտրոնացվեց Պարսից ծոցում: Ռուսաստանը մտադրություն չունի պատերազմելու Անգլիայի հետ, նա արդեն հեռացել է դեպի իր սահմանները, ուրեմն այդ սպառնալիքը ուղղված է Իրանի դեմ: Հարավային Իրանի արաբները ոտքի ելան եւ ուզում են միանալ Արաբիային, ինչը վնասակար չէ Ռուսաստանի, բայց վիրավորական է Իրանի համար: Սա ճնշում է Իրանի վրա, բայց բացասական հետեւանք պիտի ունենա Անգլիայի

համար, ինչը շահավետ է Ռուսաստանին: Երրորդ քայլը թափառաշրջիկ դաշդայինների ապստամբութունն էր, որոնք պահանջում էին Թուրքի անկումը եւ Իրանի ամբողջականության պահպանումը, հակառակ պարագայում սպառնում են անջատվել Թեհրանից:

Հարավի ու հյուսիսի այս պայքարները, որոնք տասնյակ հազարավորների դժբախտության պատճառ էին դառնում, ըստ էության Իրանին չեն վերաբերվում, թեեւ գործողն ու տուժողն Իրանն է: Իրականում սա անգլո-ռուսական մրցակցությունն է, որը մի քանի դար է ինչ շարունակվում է:

Այս երկու ճշումների ընթացքում է, որ ասպարեզ է դալիս Ղավամ Սալթանեն: Նա իր Փիրուզի հետ օդային ճանապարհով գնում է Մոսկվա եւ այնտեղ սովետներին է հանձնում Իրանի նավթային եւ այլ մենաշնորհները: Այնուհետեւ հանգստացած վերադառնում է Իրան, նախաձեռնում է նախ Թուրքեն, հետո Ատրպատականի Հանրապետությունը, Մոհաբադի Քրդական Հանրապետությունը վերացնելու եւ հին կարգերը վերականգնելու գործը: Այժմ, ասում են, Իրանում խաղաղություն է տիրում, թեեւ Թավրիզի փողոցներում դեռեւս շարունակվում են վեճերը անցածի մասին եւ դիակների թիվն էլ բազմապատկվում է: Լեռներում քրդերի ազատագրական պայքարը շարունակվում է. ոմանք օրհնում են Ստալինին, ոմանք՝ անիծում:

Վերջին երեք տարվա պատահածները ո՛չ առաջինը կլինեն, ո՛չ էլ՝ վերջինը, քանի որ այդ երկրում, ինչպես Հայաստանում, մրցակցում են երկու իմպերիալիստական ուժեր: Այդ պատճառով էլ այս երկիրը ո՛չ զարգանալու, ո՛չ էլ կայուն վիճակ ունենալու հնարավորություն կունենա: Իրանում՝ միայն այս վերջին երկու-երեք տարիների ընթացքում կատարված դեպքերը այնքան ցայտուն են, այնքան պարզ իրենց ներքին ծալքերով, որ ուշադրությամբ հետեւողը կհասկանա, որ այդ երկիրը եւ նրա հետ միասին Հայաստանը, Թուրքիան ու Պոլիսը չեն կարողանալու իրենց կյանքով ապրել, քանի որ ենթակա են արտաքին մրցակցությունների ազդեցությանը: Կապված լինելով ռուսական եւ անգլիական կայսրությունների շղթաներով՝ ստիպված են շարժվելու այդ շղթաների քաջըշուկին համապատասխան:

Այդ երկրները Եվրոպան Ասիային կապելու ամենակարճ ցամաքային ուղին են համարվում: Այդ ճանապարհը դարեր շարունակ անգործածելի էր եւ դեռ մնալու է այդպիսին, քանի Մոսկվան նպատակ ունի տիրել այդ ճանապարհներին, քանի դեռ Լոնդոնը հետամուտ է Պոլիս-էրզրում-Թեհրան ճանապարհներից հեռու պահել Մոսկվային:

Պոլիս, էրզրում, Թեհրան եւ այդ կետերի վրա ընկած երկրների

ճակատագիրը միասնաբար կարող է լուծվել, քանի որ դրանք շաղկապված են իրար: Այդ հարցերը չի կարելի լուծել Սատաբազի դաշինքներով, որոնք, գրգռիչ խայթոցի նման, փխրուն արգելքներ են միայն՝ ուղղված Ռուսաստանի դեմ: Լուծումը հնարավոր չէ գտնել Մոնթրենոյի եւ նման դաշինքների միջոցով, որոնք ժամանակ շահելու բնույթ ունեն միայն: Լուծում հնարավոր չէ նաեւ Լոզանի կամ Մոսկվայի դաշնագրերով, որոնք նույնպես ժամանակ շահելու բնույթ ունեն եւ արդեն հնացած են համարվում: Այս ամենը, հիմնված անարդարության ու իրար հոշոտելու խարիսխների վրա, լուծում չեն, այլ խռովությունների ու ավերածությունների աղբյուր:

Լուծման մի եղանակ է մնում միայն՝ երրորդ ուժի ի հայտ գալը, նույնքան հզոր, որքան ռուսական ու անգլիական կայսրությունները, որը կհամարձակվի մտնել այդ երկու կայսրությունների միջեւ՝ արդարության ու քաղաքակրթության նշանաբաններով, մի բան, որը թեեւ հայտարարում է Տրումենը, բայց որը նույնպես կասկածելի է: Եւ կամ, ինչպես ծրագրում է Չերչիլը Եվրոպայում կազմավորել մի Միացյալ Եվրոպա, այդպես էլ ստեղծել մի «Առաջավոր Ասիա»՝ հիմնված արդարության, ազգերի ինքնորոշման, նրանց անկախության եւ զարգացման հիմքի վրա, երաշխավորված Ապահովության եւ Ազգերի լիգայի կողմից: Սա կհաջողվի, եթե նախ եւ առաջ Մերձավոր Ասիայից հեռանան մրցակից երկու կայսրությունները եւ վերանան Օսմանյան կամ այլ գերպետության մանր իմպերիալիստները:

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵԼՔԸ

ԵԶՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Խոսելով Հայաստանի ու հայության ճանապարհի մասին եւ բնորոշելով նրանց դերն ու նշանակութիւնը Ասիայի գլխավոր ճանապարհների հանգույցի վրա, գալիս ենք հետեւյալ եզրակացութեանը, թե քանի Հայաստանը գտնվում է Թուրքիայի ձեռքում եւ մնում է Անգլիայի ու Ռուսաստանի մրցակցութեան առարկան, խաղաղութիւն չի կարող լինել: Այն դատապարտված է մնալ որպէս խռովութիւնների ասպարեզ: Խաղաղութիւն կարող է լինել միայն, եթե նկատի առնվեն հետեւյալ իրավիճակները, որոնք բխում են բնութիւնից եւ ոչ թե ժողովուրդների ցանկութիւններից: Դրանք հետեւյալներն են.

ա. Հայաստան աշխարհի դիրքը որոշակի է եւ անփոփոխ: Նրա նշանակութիւնը եւ դիրքը անհնար է փոփոխութեան ենթարկել պետական ժամանակավոր սահմաններով եւ մասնատումներով: Այն Մերձավոր Արեւելքում կազմում է մի հանգույց՝ ընկած Ասիայի մայր ճանապարհի վրա, իր ամբողջութեան մեջ ներկայանալով որպէս մի բերդ, ապահովութեան մի կովան: Հայաստանի ու Մերձավոր Արեւելքի ճակատագրերը իրար կապված են անկախ իրենց ազգազրական տարբեր հատկանիշներից:

բ. Հայաստանի մարդկային արգասիքը հայն է: Հայը նա չէ, որը բավարարվում է իր եկեղեցին ճանաչելով ու երեսը խաչակնքելով միայն: Հայ չէ նա ով իր հայրենիքի մի մասը օտարների կայան է դարձում եւ օտար սվինների ուժով «Հայաստան է խաղում»: Հայը նա է, որ ուր էլ լինի մի սեւեռուն ձգտում ունի՝ հասնել Հայաստան բերդի ամբողջացմանը, նվաճել հայութեան անկախութիւնը՝ որպէս կովան Մերձավոր Արեւելքի եւ որպէս խարխիւ խաղաղութեան:

գ. Թուրքիայի հեռացումը Հայաստանից եւ նրա փոխարինումը ռուսական իշխանութեամբ, կամ հակառակը, Ռուսաստանի հեռացումը Հայաստանից եւ թուրքական իշխանութեան հաստատումը այնտեղ, չի կարող հայութեան նպատակը լինել: Նրա նպատակն է, որ նրանք երկուսն էլ հեռանան, որ հնարավորութիւն լինի երեք ու կես միլիոն ցրված հայութեանը՝ Ռուսաստանի ու այլ գաղութների, հավաքել Արարատի ու Էրզրումի շուրջ՝ կազմելու համար այն անկախ պետութիւնը, որը Հայաստան բերդի պաշտպանը կդառնա: Նրա վերածնունդը պետք է ազգակ լինի Մերձավոր Արեւելքի խաղաղութեան, այլ ոչ թե ազգակ իմպերիալիստական արյունահեղ

բախումները համար:

դ. Հայաստանի գերազանցողիկ Թուրքիայի կամ այլ օտար ուժի կողմից հարցի լուծումը չէ, այլ սկիզբն է մի նոր խոսակցության ել միջազգային նոր բարդությունների: Հայաստանի ամբողջացումը ել նրա անկախությունը միայն խաղաղության սկիզբն է: Վերջնական խաղաղությունը միայն այն ժամանակ կհաստատվի, երբ Մերձավոր Արեւելքի բոլոր ճնշված ազգերը կանկախանան ու կիրնքնորոշվեն իրենց ազգային սահմանների մեջ ել կդաշնակցեն իրար հետ ինչպես հավասարը հավասարի: Եվ իբրեւ մի գործող ընտանիք նա կներկայանա ամբողջ աշխարհին՝ որպես ազդակ խաղաղության ու արգելք՝ ամեն տեսակ իմպերիալիստների:

ե. Նրանք, ովքեր Մերձավոր Արեւելքում, օգտվելով իրենց թվական, կամ այլ գերակշռությունից, անտեսում են ազգերի ազատ ինքնորոշման սկզբունքը ել ճնշում ու տիրում են հարեւան ազգերին ու նրանց երկրներին, նրանք, որ պանթուրանիզմով, պանխլամիզմով ել այլ «իզմերով» վարակված՝ ոտքի տակ են առնում այլ ժողովուրդներ ու դավանանքներ, նրանք են բուն պատասխանատուն Մերձավոր Արեւելքի ստրկություն ել նրանք են, որ գերեզման են պատրաստում թե՛ իրենց, թե՛ Մերձավոր Արեւելքի անկախություն ել ազատություն համար:

զ. Նրանք, ովքեր դեմ են բոլոր տեսակի իմպերիալիստական ուժերի ներխուժմանը, որոնք աշխատում են բոլոր ժողովուրդների ազատության համար՝ անկախ նրանց թվից ու որակից, ել նպատակ ունեն ստեղծել անկախ ազգերի դաշնակցություն, համակցություն ել իրենց ձեռքում գտնվող միջազգային ճանապարհների ցանցը զարգացնելը, նրանք են, որ առաջնորդում են դեպի խաղաղություն ել ապահովություն: Այս ուղղությունը որքան էլ թվարկածներից թույլ թվա, սակայն նրանն է ապագան, քանի որ այն թելադրված է երկրի տրամադրությունից ել ոչ թե եկող ու գնացող, փայտող ու մարող դրսի խաբուսիկ ուժերից:

Սրանք պետք է լինեն Մերձավոր Արեւելքի հիմնական նպատակները ել նրա առանցքը համարվող Հայաստանին առաջնորդող սկզբունքները: Ու եթե պատահի այնպես, որ ուժերից մեկն ու մեկը այդ նպատակները իրագործելու մեջ իր շահը գտնի ու աջակցի, ապա այդ աջակցությունը կգնահատվի, քանի որ այն հենված կլինի ոչ թե «Առ ել տուրի», այլ «Տուր ել առի» վրա: Բայց դա պիտի գործակցություն լինի ել ոչ թե հիմնական նպատակ:

Այսքան հուսախաբություններից հետո Հայաստանը ուզի թե չուզի այդ ճանապարհով պետք է գնա, որպեսզի կարողանա իր թանկագին էրզրումը շղթայագերծ անել, որպեսզի կարողանա իր միջազգային դերը կատարել:

ԲՅՈՒՋԱՆԴԱԿԱՆ ՀԱՅ ԿԱՅՍՐԵՐԻ ԾԱՆԿԸ

582-1028

- 582-602 Մորիկ
- 610-641 Հերակլիոս Ֆլավիոս
- 641-668 Կոստանդին, երկրորդ ժառանգը Հերակլիոսի
- 668-678 Կոստանդին Պոկոնաթ, ժառանգը Կոստանդին Բ-ի
- 678-685 Մասիսիոս Ուզուրպատոր
- 685-695 Հուստինիոս՝ Պոկոնաթի ժառանգը
- 695-698 Լեոն Ուզուրպատոր
- 698-705 Տիրեո Ե Ուզուրպատոր
- 705-711 Տիրեո Դ եւ հայրը Հուստինիոս Պոկոնաթ (այստեղ վերջանում է Հերակլի սերունդը)
- 711-713 Ֆիլոպեկոս Բարթանես
- 742- Արտավազը
- 813-820 Լեոն Ե
- 842-867 Միշել Գ
- 867-886 Վասիլ
- 886-912 Լեոն Զ՝ Վասիլի ժառանգը
- 912-913 Ալեքսանդր՝ Լեոն Զ-ի ժառանգը
- 913-919 Կոստանդին Ժ՝ Ալեքսանդրի ժառանգը
- 920-944 Ռոմեն Ա
- 944-963 Ռոմեն Բ՝ Կոստանդին կայսեր ժառանգը
- 963-969 Նիկիֆոր Ֆոկաս
- 969-976 Յոհան Զաչկիկ
- 976-1025 Վասիլ Բ՝ Ռոմեն Բ-ի ժառանգը
- 1025-1028 Կոստանդին, որով վերջանում է իրար հաջորդող, օրինական եւ ոչ օրինական 23 հայ կայսրերի գահակալումը Բյուզանդական գահի վրա: Հայ կայսրուհիները եւ հրամանատարները շարունակել են իշխել հունական կայսրերի ժամանակներում էլ:
- Հռոմեական կայսրության մայրաքաղաքը 395 թվականին փոխադրվեց Բյուզանդիա: Այն ղեկավարվել է.
- 395-582 թվականներին՝ 187 տարի, Հռոմեական ծագում ունեցող կայսրերով:
- 582-1028 թվականներին՝ շուրջ 446 տարի, հայկական ծագում ունեցող կայսրերով:
- 1028-1453 թվականներին՝ 425 տարի, հունական ծագում ունեցող կայսրերով:
- 1453-1923 թվականներին՝ 480 տարի, Օսմանյան ծագում ունեցող

կայսրերով:

*1923-1947 թվականներին՝ ընդամենը 24 տարիների ընթացքում, Պոլիսը
դարձավ թուրքական հանրապետության մի նահանգ:*

ԳԼԽԱՎՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Ալիշան Ղ., *Միսուան*:
2. Միրմեհան Ա. Արքեպս., *Սուրիա 1940, Փայմիր 1939*:
3. Մանանդյան Յ., *Հին Հայաստանի եւ Անդրկովկասի քանի մը ճամբաներու մասին*:
4. Michaud, Joseph François, *Histoire des Croisades*.
5. Almanach de Turquie 1943.
6. Pierre Redan-*La Cilicie et le Problemene Ottoman, 1921*.
7. Lt. Colonel Paul Jacquot, *Antioche, 3 volumes, 1931*.
8. *L'Etat des Alaouites, 1928*.
9. Comte R. de Coutaut Biron, *Sur les Routes de Syrie*.
10. Jacques de Morgan, *Histoire du Peuple Armenénien*.
11. *Extrait du Bulletin de l'Enseignement, 1939*.
12. *La Chaine de l'Amanus*.
13. Von Dr. I Erhorn, *Kaukasien*.
14. K.H. Kiernan, *L'Exploration de l'Arabie*.

ՌՈՒԲԵՆ ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԻՋՑԱՄԱՔԱՅԻՆ
ՈՒՂԻՆԵՐԻ ՎՐԱ

Խմբագիր՝
Համակարգչային շարվածքը՝
Տեխնիկական խմբագիր՝

Գազիկ Սարգսյան
Աննա Գաբրիելյանի
Նարինե Հարությունյան

«Նամե» տպագրատուն